ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ) 2018Թ ԶԵԿՈՒՅՑ

ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative



2020 Երևան

EY
Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

EITI

Հարգելի՛ բարեկամներ,

Ձեզ եմ ներկայացնում Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ազգային երկրորդ զեկույցը, որն ընդգրկում է 2018թ. ֆինանսական տարին: Այն արտահայտում է Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության բովանդակային և թվային պատկերը:

Ուզում եմ ընդգծել, որ ՀՀ կառավարությունը ԱՃԹՆ-ի պահանջների կիրարկումը դիտարկում է որպես հանքարդյունաբերության ոլորտում Բաց կառավարման սկզբունքների տարածման գործուն միջոց, որի օգնությամբ խթանվում է պետական կառավարման թափանցիկությունը, քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, կոռուպցիայի դեմ պայքարը:

Մեր նպատակն է ԱՃԹՆ-ի տեղեկատվության հանրային հասանելիության շնորհիվ մեծացնել ոլորտի վերահսկելիությունը, խթանել ոլորտի վերաբերյալ հանրային իրազեկ բանավեճը, արագացնել անհրաժեշտ իրավական բարեփոխումները, նպաստել բնական ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը:

Այս առումով, հատուկ հիշատակման են արժանի ԱՃԹՆ-ի հայաստանյան Բազմաշահառու խմբի (ԲՇԽ)՝ որպես եռակողմ քննարկման հարթակի արդյունավետ աշխատանքը և այդ հարթակի հնարավորությունները՝ շահագրգիռ կողմերին հուզող հարցերի առաջքաշման, ազատ քննարկման և կոնսենսուսային որոշումների կայացման համար:

Նշեմ, որ ՀՀ կառավարությունը և ԲՇԽ-ն որդեգրել են ԱՃԹՆ-ի ներդրման դինամիկ և հետևողական քաղաքականություն, որի շրջանակներում մշակվում են նաև ԱՃԹՆ-ի պահանջները գերազանցող մոտեցումներ: Ընթանում են իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման աշխատանքները, ինչն առանցքային նշանակություն ունի Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտումների շրջանակն ընդլայնելու գործում:

Հայաստանի առաջին վավերացման արդյունքում ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը Հայաստանին շնորհեց երկրի ԱՃԹՆ-ի առաջխաղացումը բնորոշող ամենաբարձր՝ բավարարող առաջընթացի գնահատականը: Հետևաբար, ՀՀ կառավարությունը և ԲՇԽ-ն շարունակելու են իրենց հետևողական ջանքերը՝ պահպանելու ԱՃԹՆ-ի այս բարձր արդյունքները և զարգացնելու դրանք՝ ներդնելով ԱՃԹՆ-ի տվյալների կանոնավոր բացահայտումների կայուն մեխանիզմներ և ընդլայնելով ԱՃԹՆ-ի ազդեցության շրջանակները:

Տիգրան Ավինյան

ՀՀ փոխվարչապետ, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ

Հարգելի՛ բարեկամներ,

Արդեն երկրորդ անգամ հանրության ուշադրությանն է ներկայացվում Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցը, որը պատկերում է 2018թ. ֆինանսական տարվա գործունեությունը:

Հանքարդյունաբերական ընկերությունները շահագրգիռ վերաբերմունք ունեն ԱՃԹՆ-ի պահանջների համապարփակ կիրառման գործում, քանի որ կարծում ենք, որ մեր ոլորտի կառավարման թափանցիկությունը և ոլորտի գործունեության վերաբերյալ տվյալների հասանելիությունը նպաստում են հենց ոլորտի զարգացմանը: Հանրությանը ներկայացնելով Հայաստանի տնտեսության և բյուջեի եկամուտների մեջ հանքարդյունաբերության տեսակարար կշիռը, համայնքների զարգացման գործում ունեցած դերն ու նշանակությունը՝ ԱՃԹՆ-ն այդպիսով նպաստում է հանքարդյունաբերության առկա խնդիրների շուրջ հանրային երկխոսության ձևավորմանը և մասնակցային սկզբունքով առկա խնդիրների քննարկմանը:

Հայաստանի առաջին վավերացման արդյունքում Հայաստանի ԱՃԹՆ-ի բարձր՝ բավարարող առաջընթացի գնահատականը վկայում է այն մասին, որ մեր բազմաշահառու խմբի անդամները՝ պետական գերատեսչությունների, հանքարդյունաբերության ոլորտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, գտել են շահագրգիռ կողմերի տեսակետները հաշվի առնող այն հարթակը, որն ապահովել է ավելի լայն շահառուների կողմից հետապնդվող նպատակները:

Տնտեսական գործունեության այն տեսակը, որով զբաղվում են հանքարդյունաբերող ընկերությունները, ոչ միշտ է միանշանակ ընկալվում հանրության կողմից, ուստի մենք ձգտելու ենք, որպեսզի ԱՃԹՆ-ի տվյալների հրապարակումը կրի սիստեմատիկ բնույթ և իր հանրային հասանելիությամբ օգնի երկրում ձևավորել ոլորտի նկատմամբ հավասարակշիռ վերաբերմունք:

Արթուր Նիկողոսյան

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամ

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի վարչական տնօրեն

Հարգելի ընթերցող,

2000-ականներից սկսած հանքարդյունաբերության ոլորտը ճանաչվեց Հայաստանի տնտեսության զարգացման առաջնահերթություններից մեկը, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ընդերքօգտագործման ոլորտում ներդրումների համար: Սակայն սրա հետ մեկտեղ պետական բյուջե ոլորտից վճարված հարկերի, արտադրության և արտահանման ծավալների, ընդերքօգտագործման պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման մասին տեղեկատվությունը փակ էր: ԱՃԹՆ-ին Հայաստանի անդամակցության շնորհիվ Հայաստանը քայլ առ քայլ շարժվում է դեպի ոլորտի թափանցիկություն և հաշվետվողականության բարձրացում, հրապարակային է դարձել մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասին հսկայական տեղեկատվություն:

ԱՃԹՆ-ի շնորհիվ երկխոսության, բանավեճի նոր մշակույթ ստեղծվեց Հայաստանում: ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի՝ պետական մարմինների, հանքարդյունաբերական բիզնեսի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները սկսեցին համատեղ քննարկել խնդիրները և կոնսենսուսի եղանակով նոր լուծումներ գտնել: Խմբի կողմից ակտիվորեն քննարկվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը: Զեկույցի տվյալները լայնորեն տարածվեցին ազդակիր համայնքներում, ինչը մեծ արձագանք գտավ տեղական ինքնակառավարման մարմինների և տեղի բնակչության կողմից: ԱՃԹՆ-ի գործընթացը մեծացրեց քաղաքացու տեղեկացվածությունը ոլորտի վերաբերյալ, հնարավորություն տվեց գնահատել առկա բացթողումները և խնդիրների հաղթահարման համար ներկայացնել առաջարկություններ:

ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցը նոր ազդակ է ուսումնասիրություններ կատարելու, ազդակիր համայնքներին իրազեկելու և նոր առաջարկություններ ձևավորելու համար, ինչը կնպաստի հանքարդյունահանող ընկերությունների և պետական լիազոր մարմինների պատասխանատվության բարձրացմանը, ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին և վերահսկողության ուժեղացմանը, ինչպես նաև համայնքների կայուն զարգացմանը, սոցիալական և էկոլոգիական խնդիրների լուծմանը:

Շնորհակալություն ենք հայտնում զեկույցի պատրաստման բոլոր մասնակիցներին, հատկապես այս հարցում կարևորում ենք Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հետևողական և պրոֆեսիոնալ աշխատանքը, որը մեծապես նպաստում է Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացի առաջմղմանը և հաջողություններ գրանցելուն:

Ինգա Զարաֆյան

2016-2019թթ. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ, կենսաբանական գիտությունների թեկնածու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ....7
Ներածություն....9
1. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման մեթոդաբանությունը ԵՎ շրջանակը....14
1.1 ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող ընկերությունները և պետական մարմինները....14
1.2 ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող հարկերը և վճարները....15
1.3 Պետական մարմիններում և ընկերություններում աուդիտի հավաստիացման գործընթացը.... 16
2 Հանքարդյունաբերության ոլորտում ՀՀ օրենսդրական ԵՎ ինստիտուցիոնալ համակարգը, հանքարդյունահանման թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման ընթացակարգերը.... 19
2.1 Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ֆիսկալ ռեժիմը.... 19
2.1.1 Իրավական դաշտը և իրավական ակտերի նկարագրությունը.... 19
2.1.2 Ֆիսկալ ռեժիմը. հարկային և ոչ հարկային հոսքերը, դրույքաչափերը.... 27
2.1.3 Ոլորտում իրավասություն ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց լիազորությունները....58
2.1.4 Պետության կողմից հանքարդյունաբերական կազմակերպություններին տրվող արտոնություններ....73
2.2 Թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման ընթացակարգեր, դրանց հաշվառումը (պահանջ 2.2 և 2.3)....76
2.2.1 Հողօգտագործման իրավունքի ձեռքբերման և ջրօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացներ....76
2.2.2 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման և դադարեցման գործընթացներ....82
2.2.3. Ընդերքօգտագործման իրավունքն իրացնելիս հնարավոր իրավախախտումների տեսակները և պատասխանատվության միջոցները....102
2.2.4 Ընդերքօգտագործման թույլտվություններ ստացած (օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրեր կնքած) նաև հաշվետու տարում թույլտվություններից զրկված/կասեցված, զգուշացումների ենթարկված ընկերություններ.... 105
2.3 Տեղեկատվություն ընդերքօգտագործման պայմանագրի վերաբերյալ....1076
2.3.1 Պայմանագրերի հրապարակման վերաբերյալ պետական քաղաքականությունը....107
2.3.2 Ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրված սոցիալական պարտավորությունները.... 109
2.4 Իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը....116
2.4.1 Իրական սեփականատերերի բացահայտման առկա իրավական կարգավորումները (քաղաքականությունը)....116
2.4.2 Իրական սեփականատիրոջ վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը, կարգը և ձևը....119
2.4.3 Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները չներկայացնելու, կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար պատասխանատվությունը....122
2.4.4 Ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի առուվաճառքը և դրա արդյունքում իրական սեփականատերերի փոփոխությունը....124
2.4.5 Ընդերքօգտագործող ընկերությունների իրական սեփականատերերը....125
2.5 ՀՀ աուդիտորական և համահարթեցման գործընթացները, պետական բյուջե (պահանջ 5.1 և 5.3).... 130
3 Արդյունահանումը, արտադրությունը եվ իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում....149
3.1 Մետաղական օգտակար հանածոների պաշարները հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.1)....149
3.2 Ընդերքի հետախուզում (պահանջ 3.1)....152
3.3 Արդյունահանումը, արտադրություն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)155
3.4 Իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3).... 168

3.4.1 Արտահանումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում և մետաղների միջազգային գների վերլուծություն 168
3.4.2 Ներքին իրացում 180
4 Պետության ստացած եկամուտները մետաղական հանքարդյունաբերության ոլորտից ԵՎ դրանց բաշխումը 183
4.1 Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը պետական բյուջե 183
4.2 Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ 187
4.3 Հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված եկամուտներ (պահանջ 5.1,5.2,5.3) 195
5 Հանքարդյունաբերության ոլորտի սոցիալ-տնտեսական ԵՎ բնապահպանական ազդեցությունը 210
5.1 Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ 210
5.2 Զբաղվածությունը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում 213
5.3 Հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց հատկացվող նվիրատվություններ 219
5.4 Մետաղական հանքարդյունաբերության բնապահպանական ազդեցությունը և այդ ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ առկա տեղեկատվությունը (պահանջ 6.4) 228
6. Համադրման գործընթացը 233
6.1 Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները 233
6.1.1 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում համադրվող ընկերությունների ցանկի որոշում 233
6.1.2 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում եկամտային հոսքերի որոշում 237
6.2 Համադրման գործընթացի ամբողջականություն 246
6.3 Համադրման գործընթացի արդյունքները 247
7 ԱՃԹՆ-ի հաշվետվողականության գործընթացի բարեփոխման վերաբերյալ առաջարկություններ 253
7.1 Առաջարկներ՝ հաջորդող տարիների հաշվետվությունների ձևաչափերի լրամշակման համար 254
7.2 Առաջարկներ՝ տվյալների հավաքագրման առցանց համակարգի հետ կապված խնդիրների շտկման համար 268
7.3 ԱՃԹՆ-ի 2020-2021թթ. աշխատանքային ծրագրի համառոտ ակնարկ և առաջարկներ 269
7.4 Առաջարկներ Հայաստանում ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդրման վերաբերյալ 269
7.5 Առաջընթացը պատասխանատու հանքարդյունաբերության ուղղությամբ 274
7.6 Տվյալների հրապարակային հասանելիություն 275
8. ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում արձանագրված բացահայտումներ 285
Հավելված 1՝ Տեղեկատվություն ընկերություններում արտաքին ֆինանսական աուդիտի իրականացման վերաբերյալ 291
Հավելված 2՝ Ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված ռեկուլտիվացիոն վճարների բազային չափերը, նախնական հատկացման և տարեկան հատկացման չափերն՝ ըստ ընդերքօգտագործող ընկերությունների և Շրջակա միջավայրի նախարարության կողմից լրացված հաշվետվությունների 293
Հավելված 3՝ Զեկույցում ներկայացված պատկերների ԵՎ գծապատկերների աղյուսակներ 297
Հավելված 4՝ Համադրման արդյունքում կատարված Ճշգրտումներ 2018թ.-ի համար, տվյալների համադրման արդյունքներ եվ կատարված ճշգրտումների մեկնաբանություն 304
Հավելված 5 ՝Հաշվետու Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տվյալներ 2018թ. (հաշվարկված)՝ 311
Հավելված 6՝ Բնապահպանական Հարկի դրույքաչափեր 331
Հավելված 7՝ Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ 25.12.2019-ի դրությամբ 337
Հավելված 8՝ Ընդերքօգտագործողների կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձԵՎով համայնքին կատարված անհատույց օտարումները մլն ՀՀ դրամ 340
Հավելված 9՝ ԱՃԹՆ զեկույցի կազմման աշխատանքներում ներգրավված անձինք 349

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԲՀ	Բարեգործական հիմնադրամ
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՏՄ	Եվրոպական տնտեսական միություն
ՇՄՆ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
թմտ	թաց մետրիկ տոննա
ՀՀ ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվեհամար
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՄՏԿ ՊՈԱԿ	«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
չմտ	չոր մետրիկ տոննա
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՄԿ	Պղնձամոլիբդենային կոմբինատ
ՍԴՈ	Սահմանադրական դատարանի որոշում
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻ մարմիններ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԿԵՆ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է: ԱՃԹՆ արժեքային շղթան ընդգրկում է ընդերքի հետազոտությունից և բնական պաշարների արդյունահանումից մինչև դրա՝ պետության վրա ունեցած սոցիալ-տնտեսական, բնապահպանական ազդեցությանն առնչվող բոլոր հիմնական խնդիրները, մասնավորապես, ինչպես են տրամադրվում և գրանցվում ընդերքօգտագործման և ոլորտի այլ թույլտվություններն ու պայմանագրերը, ովքեր են այս գործընթացների շահառուները, ինչպիսին են ֆինանսական և իրավական կարգավորումները, որքան արտադրանք է արտադրվում, ինչքան են կազմում ոլորտից պետական բյուջե ուղղվող եկամուտները, ինչպես են տեղաբաշխվում այդ եկամուտները, ինչ ներդրում է ապահովվում տնտեսության մեջ՝ ներառյալ զբաղվածության աճը: ԱՃԹՆ-ի նպատակը ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծումն է, ինչպես նաև հանրային երկխոսության կայացման խթանումը՝ դրանով իսկ երաշխավորելով կողմերի միջև փոխըմբռնումը:

ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման առանցքային բաղադրիչներից մեկը կառավարության, ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված բազմաշահառու խմբի (ԲՇԽ) ձևավորումն է, որը նախաձեռնության շրջանակներում որոշումներ ընդունող հիմնական մարմինն է: ԲՇԽ-ն ձևավորվում է ԱՃԹՆ-ի գործընթացի կառավարման, ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման գործընթացը վերահսկելու և արդյունքները ներկայացնելու, ինչպես նաև այդ երկրում ընթացող թափանցիկության աշխատանքներում ԱՃԹՆ-ի ստանդարտի ինտեգրումը խրախուսելու նպատակով: ԲՇԽ յուրաքանչյուր խմբակցության անդամներն ընտրվում են տվյալ խմբակցության կողմից՝ իրենց իսկ որոշած ընթացակարգերով, այսպիսով՝ ապահովելով ԲՇԽ անդամների անկախությունը: ԲՇԽ-ն պետք է ապահովի աշխատանքներին մասնակցության հրավերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ անկախ քաղաքացիական խմբերի, լրատվամիջոցների, միությունների և համապատասխան պետական կազմակերպությունների պատշաճ ներկայացվածությունը:

ԱՃԹՆ իրականացնող յուրաքանչյուր երկիր, ԱՃԹՆ-ի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում և երեք տարին մեկ անգամ, պետք է անցնի վավերացման գործընթաց: Վավերացումը թույլ է տալիս գնահատել երկրի առաջընթացը ԱՃԹՆ-ի պահանջներից յուրաքանչյուրին համապատասխանության ապահովման առումով: Վավերացնում իրականացվում է ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի և անկախ վավերացնողների կողմից, որոնց կազմած վավերացման զեկույցի հիման վրա ԱՃԹՆ-ի միջազգային Խորհուրդը որոշում է երկրի ԱՃԹՆ-ի առաջընթացի գնահատականը:

ԱՃԹՆ գործընթացը Հայաստանում

ԱՃԹՆ-ի անդամ դառնալու գործընթացը Հայաստանում սկսվել է 2015թ. հուլիսից: ՀՀ բազմաշահառու խմբի կազմը, որը բաղկացած է տասնհինգ անդամից և ներառում է վեց

ներկայացուցիչ ՀՀ կառավարությունից, չորս ներկայացուցիչ հանքարդյունաբերական ընկերություններից և հինգ ներկայացուցիչ քաղաքացիական հասարակությունից (այդ թվում՝ մեկ ներկայացուցիչ գիտական համայնքից), ձևավորվել է 2016թ. նոյեմբերին՝ վարչապետի 1104-Ա որոշմամբ:[1] Այդ պահից ի վեր ԲՇԽ կազմը բազմիցս փոփոխվել է:
Ըստ ԲՇԽ աշխատակարգի՝ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցություն պետք է ունենա առնվազն մեկ այլընտրանքային անդամ, որը պետք է լինի նույն ոլորտի ներկայացուցիչ, սակայն ոչ ավել, քան խմբակցության անդամների թիվը: ԲՇԽ-ի անդամները և այլընտրանքային անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով:

Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին թեկնածության հայտը կազմվել է ԲՇԽ-ի կողմից և այդ կառույցի կողմից էլ հաստատվել է 2016թ. դեկտեմբերի 26-ի նիստում:[2] ՀՀ անդամակցությունը, հայտի համաձայն, հաստատվել է 2017թ. մարտի 9-ին՝ Բոգոտայում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստում: [3] Հայաստանի Հանրապետությունը հրապարակել է առաջին ԱՃԹՆ զեկույցը 2018թ. դեկտեմբերին:[4] Համաձայն 2017թ. մարտի 9-ի ԱՃԹՆ խորհրդի որոշման,՝ Հայաստանի Հանրապետության առաջին վավերացումը սկսվել է թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում՝ 2019թ. սեպտեմբերի 9-ից: Համաձայն վավերացման ընթացակարգի՝ կտրվի նախորդ 3 տարիներին Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնության պահանջների իրականացման գնահատականը, ինչպես նաև կգնահատվի երկրի առաջընթացն ԱՃԹՆ-ի ստանդարտի բոլոր պահանջների իրականացման առումով:

Հայաստանի առաջին վավերացման եզրակացության արդյունքում ԱՃԹՆ միջազգային խորհուրդը Հայաստանին շնորհել է բարձր գնահատական՝ ընդունելով որոշում, ըստ որի, Հայաստանը բավարարող առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի ընդհանուր իրականացման գործում:

Վավերացման գնահատականով՝ 20 պահանջների գծով Հայաստանը գրանցել է բարձր՝ բավարարող առաջընթաց, իսկ 4-ի մասով՝ գերազանցող գնահատական: 2020թ. հուլիսի 9-ի դրությամբ Հայաստանը ԱՃԹՆ-ի անդամ 53 երկրների մեջ 9-րդ երկիրն է, որին շնորհվել է բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ:[5]

ԱՃԹՆ-ի շրջանակը Հայաստանում

ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման շրջանակներում պետական մարմինների և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից լրացվում են հաշվետվություններ, որոնք թույլ են տալիս բացահայտել ընկերությունների եկամուտներին, դրանց կողմից կառավարությանը

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123961
[2] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_26_12_2016.pdf
[3] https://eiti.org/BD/2017-22 https://eiti.org/BD/2017-22 https://eiti.org/BD/2017-22
[4] Զեկույցը հրապարակվել ՀՀ ԱՃԹՆ ազգային քարտուղարության կայքում հայերեն և անգլերեն լեզուներով ու հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/hy/annual-reports/2018/
[5] https://eiti.org/board-decision/2020-39?fbclid=IwAR2mopCWeAdn6tsLcF9OMHyTQUj45xU5M27sKD8MXrhLd4J-sMt_yZBTzUM

կատարած վճարումներին, ինչպես նաև պետության ստացած եկամուտներին և այդ հոսքերի կառավարմանը վերաբերող տարբեր տեղեկություններ: Նաև պահանջվում է, որ ընկերությունները և պետական մարմինները բացահայտեն երկրաբանական ուսումնասիրության, բնական պաշարների հետախուզման, արդյունահանման, արտահանման և ֆինանսական հոսքերի վերաբերյալ, ինչպես նաև ընկերությունների առնչությամբ թույլտվությունների տրամադրմանը կամ փոխանցմանը վերաբերող տեղեկություններ: Արդյունքները համադրվում են Անկախ ադմինիստրատորի կողմից և ամենամյա կտրվածքով հրապարակվում արդյունահանող ճյուղերի մասին այլ տեղեկությունների հետ մեկտեղ՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխան: Բացի ամենամյա ԱՃԹՆ զեկույցից, ԱՃԹՆ իրականացնող երկրները նաև հրապարակում են տարեկան գործունեության հաշվետվություններ: ՀՀ ԱՃԹՆ երկրորդ զեկույցի շրջանակը սահմանվել է 2019թ. ապրիլի 16-ին կայացած ԲՇԽ նիստի ընթացքում,[6] որը վերահաստատել է նախաձեռնության շրջանակում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողների հաշվետվություն ներկայացնելու պահանջը 2018 ֆինանսական տարվա ընթացքում՝ բացառությամբ սնանկ ճանաչվածների:

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարևոր մասնաբաժին ունի Հայաստանի տնտեսությունում: Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հրապարակած տեղեկատվության՝ օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարներով օգտակար հանածոների ավելի քան 850 հանքավայր, ներառյալ՝ 42 մետաղական օգտակար հանածոյի հանքավայր: Դրանցից ներկայում շահագործվում է շուրջ 400՝ այդ թվում՝ 27 մետաղական հանքավայր[7]: Հայաստանում գրանցված է 26 ընդերքօգտագործող ընկերություն: Վերջիններիս գործունեության իրականացման շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում առկա է 27 թույլտվություն:

ՀՀ-ում ընդերքը պատկանում է պետությանը և համարվում վերջինիս բացառիկ սեփականությունը: Պետության այս իրավունքն ամրագրված է սահմանադրական մակարդակում. այն տեղ է գտել ՀՀ Սահմանադրության վերջին խմբագրության (գործում է 2015թ. դեկտեմբերի 22-ից) 10-րդ հոդվածի 2-րդ մասում[8]: Այս դրույթն արտացոլված է նաև ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող կենտրոնական փաստաթղթում՝ Ընդերքի մասին օրենսգրքում[9]:

Ընդերքօգտագործողներին ընդերքը տրամադրվում է միայն օգտագործման իրավունքով՝ երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակներով:

ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում համադրվող ընկերությունների և եկամտային հոսքերի նկատմամբ Անկախ ադմինիստրատորը իրականացնում է եկամուտների և վճարումների

[6] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf
[7] www.minenergy.am/page/472
[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510
[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126310

վերաբերյալ պետական մարմիններից և ընկերություններից ստացված տեղեկատվության համադրում: Համադրման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ներկայացվում են ԱՃԹՆ զեկույցում:

Անկախ ադմինիստրատորը հավաքագրել և մշակել է յուրաքանչյուր արդյունահանող ընկերության դեպքում հայտնաբերված անհամապատասխանությունները և ճշգրտումների պատճառների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը:

Առավել հաճախ հանդիպող անհամապատասխանությունները և դրանց ճշգրտման պատճառները հետևյալն էին՝ հաշվետվությունը լրացնելու ուղեցույցի լրացուցիչ մեկնաբանությունների անհրաժեշտություն, ինչպես նաև որոշ հարկատեսակների գծով ներկայացվող տվյալների թերի ներկայացում: Այս խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են Զեկույցի 6.3-րդ բաժնում:

Զեկույցի 1-ին բաժնում ներկայացված է ԱՃԹՆ զեկույցի պատրաստման մեթոդաբանությունը և շրջանակը: 2-րդ բաժնում ներկայացված է ՀՀ օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգը, հանքարդյունահանման թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման ընթացակարգերը, ինչպես նաև պետական բյուջեի, համահարթեցման և աուդիտորական գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն: 3-րդ բաժինը վերաբերում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մանրամասն նկարագրությանը՝ ներառյալ արտադրության, արդյունահանման, ներքին իրացման և արտահանման վերաբերյալ տեղեկատվության: 4-րդ բաժինն ամփոփում է ոլորտի բազմակողմանի ազդեցությունը տնտեսության վրա, իսկ 5-րդ բաժինը՝ սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը: Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և արդյունքները նկարագրված են 6-րդ բաժնում, ինչպես նաև ներկայացված են հայտնաբերված անհամապատասխանությունները և ճշգրտումների պատճառների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը: Զեկույցի 7-րդ բաժնում Անկախ ադմինիստրատորը ներկայացնում է կատարված գործառույթների շրջանակներում նկատված թերությունները շտկելու և հաշվետվողականության գործընթացի բարեփոխման վերաբերյալ առաջարկություններ: Առաջարկությունների հետագա իրագործման տեղեկատվությունը ամփոփվում է 7-րդ բաժնում: ԱՃԹՆ զեկույցի պատրաստման ընթացքում ի հայտ եկած բացահայտումները ներկայացված են 8-րդ գլխում:

1 ԱՃԹՆ-Ի ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

1. ԱՃԹՆ-Ի ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (այսուհետ՝ «ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ») 2019 թվականի ապրիլի 16-ին[10] տեղի ունեցած նիստի ընթացքում որոշում է կայացվել, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի (այսուհետ՝ «ԱՃԹՆ երկրորդ զեկույց», «Երկրորդ զեկույց» կամ «ԱՃԹՆ զեկույց») պատրաստման համար նախնական ուսումնասիրություն անցկացնելու անհրաժեշտություն չկա, և 2018 թվականին անցկացված նախնական ուսումնասիրությունը և Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցը կարող են ծառայել որպես Երկրորդ զեկույցի համար նախատեսված ուսումնասիրություն:

ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կազմման նպատակով 2018թ. նախնական ուսումնասիրությունն իրականացվել է Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ-ն իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացնող գործընկերն է եղել Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը:

1.1 ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող ընկերությունները և պետական մարմինները

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումների և փոփոխությունների կատարման մասին» 2018թ. մարտի 21-ի թիվ ՀՕ-191-Ն ՀՀ օրենքի[11]՝ հաշվետու ընկերություններ են հանդիսանում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողները, բացառությամբ սնանկ ճանաչվածների: Միևնույն փոփոխությամբ ամրագրվել է նաև, որ հաշվետվություններ պետք է ներկայացնեն այն պետական մարմինները, որոնք տիրապետում են մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությանը: ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 16.04.2019թ. տեղի ունեցած նիստի արդյունքում կազմված N12 արձանագրությամբ[12] սահմանվել է Հայաստանի ԱՃԹՆ երկրորդ զեկույցի շրջանակը, ըստ որի, երկրորդ զեկույցը պետք է կազմվի 2018 ֆինանսական տարվա համար, ինչպես նաև հստակեցվել է հրապարակային հաշվետվություն ներկայացնող ընկերությունների և պետական մարմինների ցանկը: Հայաստանի ԱՃԹՆ երկրորդ զեկույցի շրջանակներում հրապարակային հաշվետվություն ներկայացնող ընկերությունները 26-ն են, իսկ

[10] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf
[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120753
[12] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

պարտադիր հրապարակային հաշվետվություն ներկայացնող պետական մարմիններն են ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ «ՀՀ ՊԵԿ»), ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տեղեկատվությունը կներկայացվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ «ՀՀ ՏԿԵՆ») կողմից: Վերոնշյալ նիստի ընթացքում հաստատվել է, որ հաշվետու 2018 ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 մլն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ կատարած ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ:

ԱՃԹՆ առաջին զեկույցի հաշվետվությունների ձևանմուշները մշակվել են ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից և քննարկվել են հանքարդյունահանողների և պետական մարմինների ներկայացուցիչների ընդլայնված կազմի և ԲՇԽ-ի հետ, որից հետո հաստատվել են վերջինիս կողմից[13]: Հաշվետվությունների ձևանմուշները ներկայացվել են նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը: Ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևանմուշները, դրանց հանձման ժամկետները և հրապարակման կարգը հաստատվել են՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշման[14]: ԱՃԹՆ երկրորդ զեկույցի հաշվետվությունների ձևանմուշները փոփոխվել են ՀՀ հարկային օրենսդրության փոփոխության, Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցում Անկախ ադմինիստրատորի կողմից ներկայացված առաջարկությունների և ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի վերաբերյալ ԲՇԽ որոշումների հիման վրա: ԲՇԽ որոշումների հիման վրա ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևաչափում կատարված փոփոխությունները ամփոփ կերպով ներկայացվել են ԱՃԹՆ երկրորդ զեկույցի մեկնարկային հաշվետվությունում: Սույն փոփոխությունները հաստատվել են ՀՀ կառավարության 11.07.2019թ. թիվ 871-Ն որոշմամբ[15]:

1.2 ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող հարկերը և վճարները

Մինչև հաշվետվությունների ներկայացման գործընթացի մեկնարկը հստակեցվել է էականության շեմը, որպեսզի յուրաքանչյուր եկամտային հոսք նկարագրվի համապատասխան էականության սահմանումներով և շեմերով: Համաձայն ԲՇԽ որոշման՝ արդյունահանվող ճյուղերից ստացվող այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը հանքարդյունահանող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1 տոկոս և ավելի, էական են և պետք է համադրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում (ԲՇԽ նիստի N12 արձանագրություն, 16.04.2019թ.[16]): Հարկ է նշել, որ

[13] eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents
[14] https://www.e-gov.am/gov-decrees/item/30461/
[15] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/
[16] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

զեկույցում ներկայացված են հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված վճարումները:

Զեկույցի շրջանակներում հաշվետու տարվա համար համադրվել են հետևյալ եկամտային հոսքերը՝

- Շահութահարկ
- Եկամտային հարկ
- Ավելացված արժեքի հարկ
- Ռոյալթի
- Մաքսատուրք և մաքսավճար
- Վարձակալական վճարներ

Հաշվետու տարում վերոնշյալ եկամտային հոսքերը կազմել են հանքարդյունահանող ընկերությունների կողմից պետական մարմիններին վճարված ընդհանուր եկամտային հոսքերի 95.50%-ը: Համադրման գործընթացի մեթոդաբանությունը ավելի մանրամասն ներկայացված է սույն զեկույցի 6-րդ բաժնում:

1.3 Պետական մարմիններում և ընկերություններում աուդիտի հավաստիացման գործընթացը

ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացված տվյալների հավաստիության ստուգման գործընթացը հիմնված է համապատասխան միջազգային ստանդարտների վրա, ինչպիսիք են ՀԾՄՍ 4400 (Ֆինանսական տեղեկատվության համաձայնեցված ընթացակարգերի իրականացման առաջադրանք) և ԱՄՍ 505 (Արտաքին հաստատումներ): Այնուամենայնիվ, ստուգման այս գործընթացներն իրենցից չեն ենթադրում աուդիտ կամ աուդիտորական եզրակացության տրամադրում, որպեսզի իրականացվեն աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Հետևաբար, հավաստիացում չի կարող տրվել ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվող տեղեկատվության արժանահավատության մասին, ինչպես նաև փորձ չի արվելու բացահայտել խարդախությունները և սխալները, որոնք կարող են թույլ տրված լինել ընկերությունների և (կամ) պետական մարմինների կողմից: Տեղեկատվությունը, որը ներառված կլինի ԱՃԹՆ-ի հաշվետվությունում և (կամ) տեղեկատվությունը, որը կտրամադրվի հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից, ենթակա չէ վերահսկման և ստուգման գործընթացներ անցնելու, եթե ԱՃԹՆ-ի ստանդարտում այլ կերպ նախատեսված չէ: Ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվող տվյալների հավաստիությունը երաշխավորվում է տվյալ ընկերությունների և պետական մարմինների ղեկավարների, ինչպես նաև ընկերությունների գլխավոր հաշվապահների ստորագրությամբ[17]: Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու կարգը, ժամկետները և ձևերը,

[17] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_12_06_%202017.pdf

մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգը, ժամկետները և ձևերը, ինչպես նաև պետական մարմինների ցանկը սահմանված են ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ (փոփոխված 11 հուլիսի 2019թ. N 871Ն ՀՀ կառավարության որոշմամբ [18]):Աուդիտորական գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2.5 բաժնում:

[18] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/

2 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

2.1 Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրությունը և ֆիսկալ ռեժիմը

2.1.1 Իրավական դաշտը և իրավական ակտերի նկարագրությունը

Որպես նախաբան, հարկ ենք համարում նշել, որ հաշվետու տարվա ընթացքում՝ 2016-2017 թվականի համեմատ, ընդերքօգտագործման հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը և, մասնավորապես, իրավական ակտերը մեծամասամբ մնացել են անփոփոխ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ստորև ներկայացնում ենք ընդերքօգտագործման ոլորտում գործող կարգավորումների հակիրճ նկարագարությունը:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում ընդերքը պատկանում է պետությանը և համարվում վերջինիս բացառիկ սեփականությունը: Պետության այս իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասում[19], ինչպես նաև ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող գլխավոր փաստաթղթում՝ Ընդերքի մասին օրենսգրքում[20] (այսուհետ՝ «Օրենսգիրք»):

Ընդերքօգտագործողներին ընդերքը տրամադրվում է միայն օգտագործման իրավունքով՝ երկրաբանական ուսումնասիրությունների (ներառյալ՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների) կամ օգտակար հանածոների արդյունահանման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակներով:

2012թ. հունվարի 1-ից (Օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո) Հայաստանում ընդերքօգտագործման և կոնցեսիոն պայմանագրերի ռեժիմից անցում է կատարվել միայն ընդերքօգտագործման պայմանագրերի ռեժիմի: Չնայած դրան, օրինակ, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը խոսում է կոնցեսիոն պայմանագրերի մասին: Վերջինիս համաձայն «[օ]տարերկրյա ներդրողներին վերարտադրվող և չվերարտադրվող բնական ռեսուրսների շահագործման իրավունքի վերապահումն իրականացվում է կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք օտարերկրյա ներդրողների հետ կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից՝ կոնցեսիաների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»[21]:

---

[19] ՀՀ Սահմանադրություն՝ փոփոխություններով (ընդունված 2015թ. դեկտեմբերի 6-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510

[20] Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք, թիվ ՀՕ-280-Ն (ընդունված 2011թ. նոյեմբերի 28-ին), հոդված 11, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138960

[21] «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-115 (1994թ. հուլիսի 31),հոդ. 21,հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման իրավունքները ընդերքօգտագործողներին տրամադրվում են համապատասխանաբար՝ (i) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությամբ, ընդերքօգտագործման պայմանագրերով և (ii) օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլտվությամբ, ընդերքօգտագործման պայմանագրերով ու լեռնահատկացման ակտով (օրենսդրությունը սահմանում է նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների ռեժիմը, որի շրջանակներում իրականացվող ուսումնասիրությունները չեն կապվում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակների հետ. համապատասխան իրավունքը տրամադրվում է ոլորտը վերահսկող լիազոր մարմինը՝ իր կողմից տրվող ընդերքօգտագործման համաձայնությամբ և պայմանագրով: Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի գործառույթներն իրականացրել է Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ «ԷԵԲՊՆ»)[22], որի լիազորություններն այժմ փոխանցված են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ «ՏԿԵՆ»)[23]: Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դիմաց ընդերքօգտագործողների կողմից վճարվում է ռոյալթի, որը համարվում է բնօգտագործման վճար:

Այս իրավահարաբերություններն իրենց էությամբ մասնավոր իրավական են, այն է՝ դրանցում պետությունը հանդես է գալիս որպես պայմանագրի իրավահավասար կողմ՝ ձեռք բերելով պետության բացառիկ սեփականությունը հանդիսացող ընդերքի նկատմամբ օգտագործման իրավունք: Նշված հարաբերությունների մասնավոր իրավական բնույթը հաստատվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից[24]: Չնայած վերոգրյալին, ռոյալթիների հաշվարկման և հարկադրման առնչությամբ կիրառական պրակտիկան մինչ օրս բացառապես իր մոդելով հանրային-իրավական է և կառուցված չէ կողմերի իրավահավասարության վրա:

Հարկ է նշել, որ 2020 թվականի մայիսի 12-ին կայացված թիվ ՍԴՈ-1530 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը կրկին անդրադարձել է այս հարցին, այս անգամ՝ ստուգումների անցկացման տեսանկյունից[25]:

---

[22] Կանոնադրությունը հաստատված է Վարչապետի թիվ 699-Լ որոշմամբ (11 հունիսի 2018թ.), հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.minenergy.am/page/374

[23] Կանոնադրությունը հաստատված է Վարչապետի թիվ 659-Լ որոշմամբ (1 հունիսի 2019թ.), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/decrees/item/20352/ :

[24] «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 և 19 հոդվածների, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում», թիվ ՍԴՈ-816 (2009թ. հուլիսի 18), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52844:

[25] ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի

Նշված որոշմամբ, Սահմանադրական դատարանը վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ բնօգտագործման վճարը, որպես գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, հանդիսանում է մասնավոր իրավահարաբերությունների տարր (Մաս 4.2, էջ 14): Սակայն, միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը գտել է, որ պետությունը, որպես ընդերքի սեփականատեր, իրավասու է վերահսկել պայմանագրային պարտավորությունների կատարումը, և այդպիսի վերահսկումը կարող է իրականացվել, ի թիվս այլնի, ստուգումների անցկացման միջոցով: Ըստ Սահմանադրական դատարանի, այսպիսի միջամտությունը ընդերքօգտագործող ընկերությունների տնտեսական գործունեությանը թույլատրելի է, քանի դեռ կատարվում է «*Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ օրենքին համապատասխան հարկեր, տուրքեր մուծելու, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու պարտականությունն ապահովելու նպատակով: Սահմանադրական դատարանի գնահատմամբ այս պարտականությունն սկզբունքորեն կարող է տարածվել նաև քաղաքացիաիրավական պայմանագրային պարտավորությունների վրա, եթե դա հատուկ կանոնակարգվի օրենքով:*»:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում առկա *ներքին բախումների (կոլիզիայի)* հարցը: Այսպես, մի կողմից, հիշյալ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն օրենքը չի տարածվում պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի շրջանակներում պետական մարմնի կողմից որպես գործարքի կողմ իրականացվող ստուգումների վրա: Մյուս կողմից, նույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը սահմանում է օգտագործման վճարները որպես պարտադիր վճար, որի նկատմամբ կարող են իրականացվել ստուգումներ: Վերոգրյալի կապակցությամբ, Սահմանադրական դատարանը գտել է, որ «*Նույն հոդվածի տարբեր մասերի միջև այս բախումը (կոլիզիան) իրավակիրառ պրակտիկայում պետք է իր լուծումն ստանար սույն գործով վիճարկվող իրավադրույթների գործողության ժամանակ գործած և ներկայումս ուժը կորցրած՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի դրույթների կիրառմամբ, ինչը տեղի չի ունեցել: Իսկ Սահմանադրական դատարանի համար որևէ սովորական կամ սահմանադրական օրենքի նորմ չի կարող դրվել սահմանադրականության գնահատման հիմքում, քանի որ Սահմանադրական դատարանը՝ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ուժով ապահովում է Սահմանադրության գերակայությունը՝ կաշկանդված լինելով բացառապես Սահմանադրությամբ:*»

Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի և 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և Բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ուժը կորցրել է 2018 թվականի հունվարի 1-ին) 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում, թիվ ՍԴՈ-1530 (2020թ. մայիսի 12), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142485

Մինչդեռ, Սահմանադրական դատարանը չի անդրադարձել այն հարցին, թե արդյոք այսպիսի ներքին անհամապատասխանություններ և հակասություններ պարունակող օրենքը համապատասխանում է անհրաժեշտ կանխատեսելիության (տե՛ս՝ ՍԴՈ-753 որոշումը) կամ իրավական որոշակիության (տե՛ս, օրինակ, ՍԴՈ-1142 որոշումը) պահանջներին:

Ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման իրավունքի դիմաց վճարվում է նաև բնապահպանական հարկ (մինչև Հարկային օրենսգիրքը՝ բնապահպանական վճար), շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար, պետական տուրք և մշտադիտարկումների իրականացման վճար, որոնք ռոյալթիի հետ միասին համարվում են ընդերքօգտագործման վճարներ:

Ընդերքօգտագործման թույլտվությունները տրամադրվում են ՏԿԵՆ-ի կողմից՝ դիմումների հիման վրա: ՀՀ ՏԿԵՆ-ը արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության փորձագիտական դրական եզրակացությունների հիման վրա տրամադրում է ընդերքօգտագործման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության անունից մասնավոր սուբյեկտների հետ կնքելով համապատասխան պայմանագրերը:

Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը (օտարումը) երրորդ անձանց հնարավոր է միայն ՏԿԵՆ համաձայնությամբ, իսկ իրավունքի տրամադրումը երրորդ անձանց օգտագործման իրավունքով արգելված է: Չնայած վերոգրյալի, ՏԿԵՆ կողմից որևէ վերահսկողության չի ենթարկվում ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների բաժնեմասերի կամ բաժնետոմսերի օտարումը երրորդ անձանց, ինչի արդյունքում փաստացի ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը հնարավոր է իրավաբանական անձի մասնակիցների/բաժնետերերի փոփոխության արդյունքում:

Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն ինքնին չի երաշխավորում օգտակար հանածո պարունակող ընդերքի տեղամասերից մակերեսին և դրանց հարակից հողամասերի հասանելիությունը (դրանց նկատմամբ հողային իրավունքները) իրավունքը ձեռք բերած սուբյեկտների համար, այն չի երաշխավորում նաև ջրօգտագործման թույլտվության ձեռքբերումը: Օգտակար հանածո պարունակող ընդերքի տեղամասերի մակերեսին գտնվող հողամասեր մուտքն ընդերքօգտագործող սուբյեկտը ձեռք է բերում անձամբ՝ համապատասխան հողամասերի սեփականատերերի հետ բանակցությունների միջոցով՝ դրանք գնելու, վարձակալելու, սերվիտուտի իրավունքի միջոցով: Նմանապես, ընդերքօգտագործողն առանձին դիմում է ջրօգտագործման իրավունքի ձեռքբերման համար: ԱՃԹՆ առաջին զեկույցի պատրաստման ընթացքում ընդերքօգտագործողների կողմից հնչեցվել են մտահոգություններ առ այն, որ ընդերքօգտագործման համար կենսական նշանակություն ունեցող այս հարցերի տարանջատված կարգավորումը և կախվածությունը երրորդ անձանց գործողություններից պրակտիկ խնդիրներ է ներկայացնում թույլտվություն ստացած ընկերությունների կողմից իրենց իրավունքների արդյունավետ իրականացման համար:

Ընդերքօգտագործողներն իրենց գործունեության առնչությամբ հաշվետու են մի շարք պետական մարմինների և գերատեսչությունների, որոնք են ՏԿԵՆ-ը, Շրջակա միջավայրի նախարարությունը,

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ՊԵԿ-ը և այլն:

Մասնավորապես, 2018թ.-ից ի վեր մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողներն՝ իրենց գործունեության առնչությամբ ԱՃԹՆ զեկույցի կազմման, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակներով ՏԿԵՆ (հաշվետու ժամանակահատվածում Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն) և ՀՀ վարչապետի աշխատակազմ (հաշվետու ժամանակահատվածում՝ ՀՀ կառավարության աշխատակազմ) տարեկան հրապարակային հաշվետվություն են ներկայացնում, որը ներառում է տեղեկատվություն արդյունահանման և արտահանման տարեկան ծավալների, վճարված պետական և տեղական հարկերի և վճարների, համայնքային արտաբյուջեներ կատարած վճարների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարված հատկացումների և մշտադիտարկումների իրականացման վճարների վերաբերյալ, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկների վերաբերյալ, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում պարտավորությունների վերաբերյալ:[26]

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած բոլոր անձինք ՏԿԵՆ են ներկայացնում օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվություններ [27] : Նշված հաշվետվությունների (ինչպես նաև հաստատված պաշարների) հիման վրա վարվում է օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը:[28] Հաշվետվությունները և պաշարների պետական հաշվեկշիռը հրապարակային չեն:

Սկսած 2018թ. հունվարի 1-ից[29], մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձինք ընդերքի օգտագործման հետ կապված Շրջակա միջավայրի նախարարությանն են ներկայացնում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ *եռամսյակային կտրվածքով հաղորդում*, իսկ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը՝

[26] Օրենսգիրք, հոդվ 20, հոդ. 9(3): «Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողի և պետական մարմինների կողմից հրապարակային հաշտվետվությունը ներկայացնելու վերաբերյալ» կարգ, ՀՀ կառավարության որոշում N 666-Ն (2018թ. հունիսի 8), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=132674 :

[27] *Ibid.*, հոդված 59(3)(7)

[28] *Ibid.*, հոդ. 63(9)

[29] «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-214-Ն (2017թ. նոյեմբերի 17):

ամփոփ տարեկան հաշվետվություն [30] : Կայքի առկայության դեպքում ամփոփ տարեկան հաշվետվությունը պետք է տեղադրվի նաև կայքում[31]: Հաշվետվությունները հրապարակվում են նաև Շրջակա միջավայրի նախարարության կայքում [32] : 2018թ. բնապահպանական մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացված ընդերքօգտագործող ընկերությունների մասին տեղեկությունները մանրամասն ներկայացված են սույն Զեկույցի 5.5. բաժնում: Նույն թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը[33]:

Ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված և ընդերքօգտագործողներին վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը, Օրենսգրքի համաձայն ենթակա է հրապարակման Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվա ավարտին հաջորդող ամսվա 30-ը[34]:

Վերաբերելի իրավական դաշտն իր մեջ ներառում է մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, որոնք մանրամասն նկարագրված են հաջորդ բաժնում: Ելակետային փաստաթղթերի համառոտ նկարագիրը ներկայացված է ստորև:

ՀՀ Սահմանադրության գործող խմբագրությունը, ինչպես նշվեց վերը, արձանագրում է պետության բացառիկ սեփականությունն ընդերքի նկատմամբ[35]:

Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը ոլորտը կարգավորող առաջնային նորմատիվ իրավական ակտն է: Վերջինս կարգավորում է ընդերքօգտագործման թույլտվությունների ստացման, պայմանագրերի կնքման, ոլորտի վերահսկողության առնչությամբ ելակետային հարցերը, սահմանում լիազոր մարմինների իրավասությունների շրջանակները: Օրենսգիրքն է կարգավորում նաև ընդերքօգտագործման իրավունքի դիմաց կատարվող վճարումների (ընդերքօգտագործման

[30] Օրենսգիրք, հոդում 20, հոդ. 59(3)(19): ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի 437-ն որոշմամբ հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևի համաձայն, տարեկան հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը (պայմանագրային) տարածվում է օգտակար հանածոների արդյունահանման մեջ ներգրավված բոլոր ընկերությունների վրա (հոդ. 3.4.27 և 5.4), ինչն անմիջականորեն չի բխում Օրենսգրքի տեքստից:

[31] *Ibid*

[32] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mnp.am/am/pages/233

[33] ՀՀ կառավարության թիվ 191-Ն որոշում (22 փետրվարի 2018), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120135

[34] Օրենսգիրք, հոդում 20, հոդ. 69(6): Հրապարակված տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mnp.am/am/pages/234

[35] ՀՀ Սահմանադրություն՝ փոփոխություններով, հոդ. 10(2) հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510:

վճարների) հաշվարկման, կիրառման և կիրարկման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունների ելակետային հարցերը:

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգիրքը [36] հարկային իրավահարաբերությունները կարգավորող համալիր իրավական ակտ է, որը կարգավորում է հարկերի տեսակները, դրույքաչափերը, հարկման բազաները, հարկային արտոնությունները և այլ հարցեր: Այն կարգավորում է նաև բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների (այդ թվում՝ ռոյալթիների) առնչությամբ առաջացող հարաբերությունները:

Մինչև վերջինիս ուժի մեջ մտնելը հարկային իրավահարաբերությունները կարգավորվել են ոլորտային օրենքներով («Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը[37], «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը[38], «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը[39] և այլն), իսկ բնապահպանական և բնօգտագործման վճարների առնչությամբ իրավահարաբերությունները կարգավորվել են նաև «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով[40] և «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով[41] (գործում է մասամբ): ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1901-Ն որոշմամբ հաստատված է եղել ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը:

Ընդերքօգտագործման գործունեության հետ առնչվող բնապահպանական հարցերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով[42], «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով[43], «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով[44] և այլն:

[36] ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՕ-165-Ն (ընդունված 2016թ. հոկտեմբերի 4-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126329:

[37] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-246-Ն (ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118444: :

[38] «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-155 (ընդունված 1997թ. սեպտեմբերի 30-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118416:

[39] «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-118 (ընդունված 1997թ. մայիսի 14-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118406:

[40] «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-270 (ընդունված 1998թ. դեկտեմբերի 28-ին) հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118424 :

[41] «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-245-Ն (ընդունված 2006թ. դեկտեմբերի 20-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118446:

[42] «Թափոնների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-159-Ն (ընդունված 2004թ. նոյեմբերի 24-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122729:

[43] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-110-Ն (ընդունված 2014թ. հունիսի 21-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93148:

[44] «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-82-Ն (ընդունված 2005թ. ապրիլի 11-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120771:

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման դիմաց վճարվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով[45]:

ՀՀ ջրային օրենսգիրքը [46] կարգավորում է ջրօգտագործման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունները, մասնավորապես, ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար հայտերի ներկայացման կարգը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման, վավերության, ստանալու գործընթացի հետ կապված իրավահարաբերությունները, մերժման հիմքերը, ստորերկրյա քաղցրահամ ջրերի ջրօգտագործման առանձնահատկությունները և այլն:

Իսկ ՀՀ հողային օրենսգիրքը [47] կարգավորում է հողօգտագործման առնչությամբ առաջացող իրավահարաբերությունները, ինչպես նաև արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի ռեժիմը, որը ներառում է նաև ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերը: Հողային օրենսգիրքն ամրագրում է նաև ընդհանուր արգելք, որի համաձայն *«[ը]նդերքօգտագործողներին նոր հողամասեր չեն կարող տրամադրվել, եթե նրանց գործունեության արդյունքում նախկինում խախտված հողերը վերականգնման նախագծերին համապատասխան չեն վերականգնվել»*[48]:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը [49] սահմանում է ընդհանուր իրավական համատեքստը, որի շրջանակներում գործում են ընդերքօգտագործման պայմանագրերը (ինչպես նշվեց, դրանց շրջանակներում ձևավորվող իրավահարաբերություններն իրենց էությամբ մասնավոր իրավահարաբերություններ են):

Վերաբերելի օրենսդրության շրջանակների մեջ ներառված են նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը [50] և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը[51], քանի որ ՀՀ-ում գրանցված ընդերքօգտագործողներն իրենց կազմակերպաիրավական ձևով բացառապես ՍՊԸ-ներ և ՓԲԸ-ներ են:

Վերջնական շահառուների (իրական սեփականատերերի) վերաբերյալ առկա կարգավորումները բխում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական

---

[45] «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-186 (ընդունված 1997թ. դեկտեմբերի 27-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138249 :

[46] ՀՀ ջրային օրենսգիրք, ՀՕ-373-Ն (ընդունված 2002թ. հունիսի 4-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136716

[47] ՀՀ հողային օրենսգիրք, ՀՕ-185 (ընդունված 2001թ. մայիսի 2-ին), հասանելի է հետևյալ հղումով՝https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137828:

[48] *Ibid.*, հոդված 13(6):

[49] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239 (ընդունված 1998. մայիսի 5-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137919:

[50] «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-252 (ընդունված 2001թ. հոկտեմբերի 24-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=134784 :

[51] «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-232 (ընդունված 2001թ. սեպտեմբերի 25-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137792:

հաշվառման մասին» ՀՀ օրենքից[52] և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքից[53], «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից[54]:

2.1.2 Ֆիսկալ ռեժիմը. հարկային և ոչ հարկային հոսքերը, դրույքաչափերը

(i) Ընդերքօգտագործման վճարներ

ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն ընդերքօգտագործման վճարներն են՝ (i) բնապահպանական հարկը, (ii) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարը, (iii) մշտադիտարկումների իրականացման վճարը, (iv) բնօգտագործման վճարները, այդ թվում՝ ռոյալթին, և (v) ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրքը:

ա) Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար

Ընդերքօգտագործողների կողմից վճարվող շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարը, որի միջոցով համալրվում է կենտրոնական գանձապետարանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության արտաբյուջետային հաշվում պահվող շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխը (այսուհետ՝ «Դրամագլուխ») մանրամասն նկարագրված է ՀՀ ԱՃԹՆ 2016-2017թթ. զեկույցում[55]: Հաշվի առնելով, որ վերջինս անդրադառնում է ոչ միայն դրամագլխի գումարների օգտագործման նպատակներին, հաշվարկման կարգին, այլ նաև վերհանում է որոշ խնդիրներ, որոնք մինչ օրս արդիական են, նպատակահարմար ենք գտնում սույն Զեկույցում ևս անդրադառնալ դրանց:

Այսպես, ռեկուլտիվացիոն վճարները ֆիսկալ ռեժիմի բաղկացուցիչ մաս չեն բառի բուն իմաստով, քանի որ չեն *հանդիսանում* բյուջետային վճարներ: Ըստ Օրենսգրքի ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հաստատումը, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունումն իրականացնում է Շրջակա միջավայրի նախարարությունը:

---

[52] «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-169 (ընդունված 2001թ. ապրիլի 3-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138935 :

[53] «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-80-Ն (ընդունված 2008թ. մայիսի 26-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138991 :

[54] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-172-Ն (ընդունված 2011թ. մայիսի 26-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138908 :

[55] ՀՀ ԱՃԹՆ 2016-2017թթ. զեկույց, էջ 104-ից 112, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf

Ընդերքօգտագործողին՝ իր կողմից կատարված հատկացումների չափով (սակայն ոչ ավել, քան կատարված հատկացումները, [56] Դրամագլխից տրամադրվում են դրամական միջոցներ՝ նախագծով սահմանված ժամկետներում և կարգով՝ բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով: [57] Ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնված բնապահպանական աշխատանքների կատարման, ստանձնած և չիրականացված աշխատանքների կատարման, ինչպես նաև ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնման միջոցառումների կատարումից հետո Դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին[58]:

Հատկանշական է, որ Օրենսգիրքը որևէ կերպ չի սահմանում ո՛չ բնապահպանական աշխատանքների ծավալների, ո՛չ ընդերքօգտագործողի կողմից դրանք իրականացված լինելու որոշման չափանիշներ, ո՛չ շրջակա միջավայրին պատճառված վնասների գնահատման չափանիշներ, և ո՛չ էլ սահմանում է, թե որ սուբյեկտն է իրականացնում բնապահպանական աշխատանքների կատարման կամ շրջակա միջավայրին պատճառված վնասի գնահատում (գնահատող սուբյեկտի մասով տրամաբանական է ենթադրել, որ սուբյեկտը Շրջակա միջավայրի նախարարությունն է, քանի որ ռեկուլտիվացիոն աշխատանքներ չկատարելու դեպքում հենց Շրջակա միջավայրի նախարարություն է ծանուցում ընդերքօգտագործողին և պահանջում իր կողմից սահմանված ժամկետում իրականացնել միջոցառումները[59]):

Թեև առկա են կառավարության մի շարք որոշումներ, որոնք սահմանում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգեր [60] , վերջիններս ընդունված են այլ օրենքների շրջանակներում, և դրանց կիրառելիությունն Օրենսգրքի շրջանակներում առաջացող իրավահարաբերությունների համատեքստում իրավական առումով վիճելի է:

Ըստ Օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի, ռեկուլտիվացիոն վճարը վճարվում է Օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված դեպքում և կարգով: 69-րդ հոդվածը, սակայն, չի քննարկում «դեպքեր» (օրենսդրական տեխնիկայի առումով շարադրանքը թերի է), այլ արձանագրում է.

---

[56] Օրենսգիրք, հոդ. 20, հոդ. 69(4)
[57] *Ibid.*, հոդ. 70(1)
[58] *Ibid.*, հոդ. 69(5)
[59] *Ibid.*, հոդ. 70(3)
[60] Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգ», ՀՀ կառավարության որոշում N 764-Ն (ընդունված 2015թ. մայիսի 27-ին), Հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99202: «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ», ՀՀ կառավարության որոշում N 91-Ն (ընդունված 2005թ. փետրվարի 14-ին), Հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=13400: «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ», ՀՀ կառավարության որոշում 1110 (ընդունված 2003թ. օգոստոսի 14-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84631: «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների», ՀՀ կառավարության որոշում N 1643-Ն (ընդունված 2017թ. դեկտեմբերի 14-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118387:

«Օգտակար հանածո արդյունահանողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ»:

Ստացվում է՝ 69-րդ հոդվածով սահմանված «դեպքը» փաստացի «օգտակար հանածո արդյունահանող» լինելն է, նույնը՝ արդյունահանման իրավունք ունենալը և այն իրացնելը (ի տարբերակումն ընդերքօգտագործման մյուս՝ երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունենալուն և այն իրացնելուն):

Օրենսդիրը դրամագլխի համալրման վճարների չափի որոշման և դրամագլխի հետ կապված այլ իրավահարաբերությունների որոշակիացման իրավասությունը պատվիրակել է Կառավարությանը. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին հոդվածը սահմանում է.

«Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը»:

Կառավարության համապատասխան՝ 2012թ. օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշումը, որը հաստատում է *«Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը»* (այսուհետ՝ «Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգ»), սահմանում է, որ դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափը որոշվում է *«նախագծով և (կամ) ծրագրով և (կամ) ընդերքօգտագործման պայմանագրով»*[61]: Իսկ բազային չափը, ըստ Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգի, *«ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքն է*[62]*:»* Ստացվում է, որ բազային չափի որոշման օրենսդրական (ենթաօրենսդրական) կարգավորումները բացակայում են, և որ յուրաքանչյուր դեպքում բազային չափը որոշվում է կոնկրետ հանգամանքներից ելնելով՝ ծրագրով կամ նախագծով ներկայացված նախահաշվի հիման վրա:

Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգը սահմանում է նաև «նախնական հատկացման» պարտականություն, որը կատարվում է *«համապատասխան պայմանագրի ստորագրման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում»* [63] և որի չափը *«սահմանվում է համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրով»*, սակայն *«չպետք է պակաս լինի դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի 15 տոկոսից»*[64]:

Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգը սահմանում է նաև հատկացումների նվազագույն չափը հաշվարկելու բանաձև և արձանագրում, որ ընթացիկ հատկացումները չեն կարող պակաս լինել այդ նվազագույն չափից[65]: Նվազագույն չափը (ԴՎ) հաշվարկվում է բազային չափի (ՀԲ) և նախնական հատկացման չափի (ՆՎ) տարբերությունը բաժանելով ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման ժամկետի (Ժ) վրա՝ ԴՎ = (ՀԲ-ՆՎ)/Ժ:

[61] ՀՀ կառավարության որոշում թիվ 1079-Ն որոշում (2012թ. օգոստոսի 23), Հավելված 1, կետ 2(2)
[62] *Ibid.*
[63] *Ibid.*, կետ 5
[64] *Ibid.*, կետ 12
[65] *Ibid.*, կետ 13

Այսպիսով, ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկն ամբողջությամբ կախված է ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված նախնական հատկացման չափից և նախագծով, ծրագրով կամ ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված բազային չափից: Սակայն սույն զեկույցի շրջանակներում, հարկ ենք համարում նշել, որ գործող ընդերքօգտագործման պայմանագրերից միայն 6-ն են ամրագրում ռեկուլտիվացիոն վճարների վերաբերյալ թվային տվյալներ, իսկ մյուս դեպքերում դրանք ամրագրված են նախագծում և ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության մեջ: Պայմանագրերում առկա բազային չափերը, նախնական հատկացման և տարեկան հատկացման չափերը ներկայացված են ստորև[66].

Աղյուսակ 2.1.1

Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված ռեկուլտիվացիոն վճարների բազային չափը, նախնական և տարեկան հատկացումները

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործմանպայմանագրի համարը, տարեթիվը	Բազային չափ (հազար դրամ)	Նախնական հատկացում (հազար դրամ)	Տարեկան հատկացումներ, (հազար դրամ)
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	X	X	307.74
«ՖորչնՌիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	X	4,174.35	1,028.46
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	X	392.5	171.1
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26՝ ըստ 2016թ. մայիսի 23-ի փոփոխության	1,864,926	279,740	121,940
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	X	3,126.2	2,952.54
«ՄուլտիԳրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	X	947.25	233.381

Ընդերքօգտագործման այն պայմանագրերում, որոնցում ռեկուլտիվացիոն վճարների բազային չափ չի սահմանվում, որպես կանոն, օգտագործվում է հետևյալ ձևակերպումը Հավելված 1-ի (ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները) 3.1 կետում.

> *3. Բնության և շրջակա միջավայրի դրամագլխին և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ,*

[66] Տեղեկատվությունը վերցված է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում հրապարակված պայմանագրերի տեքստերից: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mtad.am/hy/mtad26.12.4/ Ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված ռեկուլտիվացիոն վճարների բազային չափերը, նախնական հատկացման և տարեկան հատկացման չափերը՝ ըստ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից լրացված հաշվետվությունների, ներառվել են Հավելված 2-ում:

3.1 Ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից բնության և շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով.

Շարադրանքը տառացի կրկնում է ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի 437-Ն որոշմամբ հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևը (այսուհետ՝ «Պայմանագրի օրինակելի ձև»): Ակնհայտ է, սակայն, որ Պայմանագրի օրինակելի ձևում 3.3.1 (ինչպես նաև 3.2) կետերը սահմանված են որպես վերտառություններ (բաժիններ) և ենթադրվում է, որ 3.1 բաժնին պետք է հաջորդեն հստակ հաշվարկները, ինչը բխում է նաև Ռեկուլտիվացիոն վճարների հաշվարկման կարգի պահանջներից, ըստ որի, ռեկուլտիվացիոն վճարների բազային չափը սահմանվում է ընդերքօգտագործման պայմանագրով:

Պրակտիկայում, սակայն, ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասը պարզապես տառացի կրկնում է Պայմանագրի օրինակելի ձևի վերտառությունները՝ առանց սահմանելու բազային չափերը, ինչը խնդրահարույց է նաև լեզվատրամաբանական առումով, քանի որ որպես վերտառություն նախատեսված ձևակերպումներն օգտագործվում են որպես բուն պարտավորություն սահմանող դրույթներ՝ չարտահայտելով ավարտուն միտք:

Արդյունքում, առաջանում է իրավական անորոշություն. օրենսդրությունը հղում է կատարում պայմանագրերին (ինչպես նաև նախագծերում/ծրագրերում), իսկ պայմանագրերով որևէ պարտավորություն փաստացի արձանագրված չէ, այլ միայն հղում է կատարվում «օրենսդրությամբ սահմանված չափ»-ին և «վճարման կարգ»-ին:

Կարծում ենք՝ իրավական տեսանկյունից խնդրին պետք է նայել հետևյալի հարցերի շրջանակներում.

- արդյո՞ք պայմանագրերում (ինչպես նաև նախագծերում/ծրագրերում) դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափ չսահմանելը վերացնում է նման հատկացումներ անելու պարտականությունը,
- եթե ոչ, արդյո՞ք պայմանագրերում (ինչպես նաև նախագծերում/ծրագրում) դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափ չսահմանելը հետաձգում/տարաժամկետում է նման հատկացումներ անելու պարտականությունը:

Առաջին հարցի պատասխանը միանշանակ բացասական է: Օրենսգրքի տեքստի վերլուծությանը ակնհայտ հետևում է վճարի պարտադիր բնույթը: Օրենսգիրքը որևէ բացառություն այս առումով չի նախատեսում (Օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված ընդերքօգտագործման վճարներից ազատելու հիմքերը վերաբերելի չեն):

Երկրորդ հարցի պատասխանը նույնպես բացասական է, քանի որ վճարների հետաձգման/տարաժամկետման հնարավորություն Օրենսգիրքը նույնպես չի սահմանում:

Ըստ ԱՃԹՆ-ի շրջանակներում ՇՄՆ-ի[67] կողմից տրամադրված հաշվետվության՝ 2016թ.-ին 27 ընդերքօգտագործող ընկերություններից 22-ը ներկայացրել են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման հաշվարկված գումար, սակայն, այդ ընկերություններից 15-ը փաստացի վճարում չեն կատարել: 2017թ.-ին հաշվարկած գումար ներկայացրած 25 ընդերքօգտագործող ընկերություններից փաստացի վճարում չեն կատարել 20-ը: 2018թ.-ին 27 ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններից 16-ը ներկայացրել են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման հաշվարկված գումար, սակայն, այդ ընկերություններից 2-ը փաստացի վճարում չեն կատարել: Հատկանշական է, որ ընդհանուր թվով վճարումներ կատարվել են 18 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից:

Ընդհանրական դիտարկմամբ, ըստ ՇՄՆ-ի տրամադրած հաշվետվության, 2016թ.-ին հաշվարկվել է 261,335,348 ՀՀ դրամ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման գումար, որից փաստացի վճարվել է 194,196,907 ՀՀ դրամ, իսկ 2017թ., համապատասխանաբար, հաշվարկվել է 368,484,242 ՀՀ դրամ և վճարվել 288,185,535 ՀՀ դրամ: Հաշվի առնելով հաշվարկված և փաստացի վճարված գումարները՝ վճարումներ չեն կատարվել որոշ ընկերությունների կողմից, և չվճարված գումարային արժեքը կազմում է 67,138,441 ՀՀ դրամ 2016թ. համար և 80,298,707 ՀՀ դրամ՝ 2017թ. համար: 2015թ.դեկտեմբեր 31-ի դրությամբ, հաշվետու տարվա համար դրամագլխին հատկացման ենթակա հաշվարկված գումարը կազմել է 697 մլն ՀՀ դրամ, իսկ փաստացի վճարված գումարը կազմել է 474 մլն ՀՀ դրամ: Հետևաբար, չվճարված գումարը կազմել է 223 մլն ՀՀ դրամ:

Հատկանշական է, որ 2018թ.-ին հաշվարկվել է 1,414,853,262 ՀՀ դրամ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման գումար, որից փաստացի վճարվել է 961,797,565 ՀՀ դրամ:

Միաժամանակ վճարումներ չեն կատարվել որոշ ընկերությունների կողմից և չվճարված գումարային արժեքը կազմում է 453,055,697 ՀՀ դրամ: Ընդերքօգտագործող ընկերությունների և Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա կազմված ամփոփ աղյուսակը ներկայացված է Հավելված 3-ում:

Համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի՝ ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տրվել գրավոր զգուշացում, եթե վերջինս չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում: Եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, չի վերացրել նշված հիմքերը, նախարարությունը կարող է հարուցել վարչական վարույթ:

Հատկանշական է, որ ՏԿԵՆ-ի կողմից կազմվել է Կառավարության որոշման նախագիծ, որով հստակ կանոնակարգվել են պետական մարմինների՝ ՊԵԿ-ի, Տեսչական մարմնի, ոլորտային նախարարությունների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը:

[67] 2016թ. և 2017թ. Բնապահպանության նախարարություն

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության N 1079–Ն որոշումը վերանայման կարիք ունի. այն ընդունվել է 2012 թվականին և դրանից հետ որևէ փոփոխության չի ենթարկվել: Մինչդեռ, այն առնվազն խմբագրական վերանայման կարիք ունի. այսպես, Որոշմամբ հղում է կատարվում իրավական ակտերի, որոնք ուժը կորցրել են և այլևս չեն գործում: Օրինակ, հղում է արվում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N750 որոշմանը, որն ուժը կորցրել է 31.12.2017թ-ին և փոխարինվել է ՀՀ կառավարության 14 դեկտեմբերի 2017 թվականի N 1643-Ն որոշմամբ:

Աղյուսակ 2.1.2

Ընդերքօգտագործողների կողմից 2016-2018թթ ընթացքում փաստացի կատարված դրամագլխի հատկացման վճարների չափը և բազային չափերը որոշելու մոտեցումները՝

Ընդերքօգտագործող	Բազային չափերը որոշելու ընդերքօգտագործողի մոտեցում	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2018թ., ՀՀ դրամ, ըստ Շրջակա միջավայրի նախարարության ԱՃԹՆ հաշվետվության
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Նախագծի բնապահպանական մասի էջ 27 -ի 9,7 աղյուսակ	-
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	13.12.2010թ. ՆԲՓ -128 փորձաքննական եզրակացություն	89,580,000
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի պահպանում	3,415,000
«Ասսաթ» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության 66-67 էջ	-
«ԱՏ Մետալ» ՍՊԸ	Նախագծի էջ 94 աղյուսակ 9,1-ում նշված է խախ տված հողերի մակերեսները (հա-ով), իսկ էջ 112-ում նշված է տեխնիկական ռեկուլտիվացիա	35,000,000
«Բակտեկէկո» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի պահպանում 30 էջ	697,840
«Գեղի Գոլդ» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 2-ի աղյուսակի 1-ին կետ – բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախս	12,224,500
«ԳեոՊրոՄայնինգԳոլդ» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 2-ի աղյուսակի 1-ին կետ -խախտված հողատարածությունների վերականգնում	58,957,300
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Նախագծով և ժամանակացույցով	21,264,739
«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի նախագծի շրջակա միջավայրի պահպանություն մասի էջ 47	122,135
«Թաթսթոուն» ՍՊԸ	Այգեձորի նախագծի շրջակա միջավայրի պահպանություն մասի էջ 21	149,000
«Թեղուտ» ՓԲԸ	Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի 3.1.1 և 3.1.2 կետեր	2,953,000

Ընդերքօգտագործող	Բազային չափերը որոշելու ընդերքօգտագործողի մոտեցում	Տարեկան փաստացի կատարված ռեկուլտիվացիոն վճար, 2018թ., ՀՀ դրամ, ըստ Շրջակա միջավայրի նախարարության ԱՃԹՆ հաշվետվության
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի աղյուսակի 16-րդ կետ – հանքի տարածքի ուղղաձիգ հարթեցում և բարեկարգում	-
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	2016թ .փոփոխված պայմանագրի Հավելված 2-ի 2 և 3-րդ կետեր, ժամանակացույց	121,938,000
«Լիճքվազ» ՓԲԸ	29.06.2017թ ՈԲՓ -60 փորձաքննական եզրակացություն	9,236,841
«Զաարատ Կապան» ՓԲԸ	-	23,863,635
«Ղարագույաններ» ՓԲԸ	Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցությանգ նահատման հաշվետվության 102 էջ	1,717,245
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	19.08.2008թ. ՈԲՓ-86 փորձաքննական եզրակացություն	-
«ՄեգոԳոլդ» ՍՊԸ	Նախագծով	-
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Համաձայն հանքի փակման ծրագրի 22-րդ էջ-ի	615,480
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	-	1,561,152
«ՄուլտիԳրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-իաղյուսակի 3-րդ կետիժ) ենթակետ–բուսահողիկուտակում, ռեկուլտիվացիա	2,100,430
«ՊարամաունտԳոլդ Մայնինգ» ՓԲԸ	23.12.2010թ. ՈԲՓ -137 փորձաքննակա նեզրակացություն	6,241,600
«Սագամար» ՓԲԸ[68]	Նախագծի էջ 80 –վնասված հողերի վերականգնման ուղղվող ծախսեր	-
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Նախագծի շրջակա միջավայրի պահպանում	1,715,900
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի 3.1.2 և 3.1.3 կետեր	735,000
«ՖորչնՌիզորսիս» ՍՊԸ	Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի 3.1.2 և 3.1.3 կետեր	7,084,000

բ) Մշտադիտարկումների իրականացման վճար

Մշտադիտարկումների իրականացման վճարը , որը վճարվում է *«օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման (մշտադիտարկումների իրականացման) համար»* [69] մանրամասն նկարագրված է ՀՀ ԱՃԹՆ 2016-2017թթ. զեկույցում[70]: Վերջինս, ի թիվս այլոց, անդրադառնում է ոչ միայն մշտադիտարկումների իրականացման նպատակին, հաշվարկման և վճարման կարգին, այլն նաև ներկայացնում է ընդերքօգտագործման վճարներից ազատվելու հիմքերի սպառիչ ցանկը և վերհանում առկա իրավական անորոշությունները:

Սակայն սույն զեկույցի շրջանակներում, հարկ ենք համարում նշել, որ մշտադիտարկումների իրականացման հաշվարկային չափը անմիջական կախվածության մեջ է հանքի փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների նախահաշվային արժեքից:

Հանքի փակման ծրագիրն, ըստ Օրենսգրքի, ներկայացվում է դեռևս օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումին կից[71]: Այս առումով, սակայն, խնդրահարույց են այն ընդերքօգտագործման պայմանագրերը, որոնք կնքվել են ոչ թե նման դիմումների արդյունքում տրված ընդերքօգտագործման թույլտվության հիման վրա, այլ ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաների վերաձևակերպման արդյունքում: Հաշվի առնելով, որ 2002-2012թթ. գործած նախորդ Ընդերքի մասին օրենսգիրքը[72] չէր նախատեսում հանքի փակման ծրագիր ներկայացնելու օրենսդրական անհրաժեշտություն, վերաձևակերպված թույլտվություններից շատերի պարագայում հանքի փակման ծրագրերը բացակայում են: Ուստի բացակայում է նաև մշտադիտարկումների նախահաշվային արժեքը:

Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկումների իրականացման վճարը (ինչպես և ցանկացած այլ օրենքով սահմանված վճար) սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում չվճարելն առաջացնում էր Լիազոր մարմնի իրավունքը ընդերքօգտագործողին տալու զգուշացում: Իսկ զգուշացմանը հիմքերը 90 օրվա ընթացքում չվերացնելը հանգեցնում էր ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման:

Գործող ընդերքօգտագործման պայմանագրերի շրջանակներում արձանագրված հանքի փակման ծրագրերով ստանձնած պարտավորությունները համառոտ ներկայացված են ստորև (ըստ «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» հավելված 2-ի)[73]: Հանքի փակման ծրագրերի առանձին ուսումնասիրություն չի իրականացվել, քանի որ դրանք հրապարակային չեն:

---

[69] Օրենսգիրք, հոդում 20, հոդված 61(2)(3) և Հոդված 15(2)(10)

[70] ՀՀ ԱՃԹՆ 2016-2017թթ. զեկույց, էջ 112-ից 118, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf

[71] Օրենսգիրք, հոդում 20, հոդ. 49(2)

[72] Ընդերքի մասին օրենսգիրք, ՀՕ-456-Ն (ընդունված 2002թ. նոյեմբերի 6-ին, չի գործում 2012թ. հունվարի 1-ից), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72894

[73] Տեղեկատվությունը վերցված է ԷԲՊՆ կայքում հրապարակված պայմանագրերի տեքստերից: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mtad.am/hy/mtad26.12.4/

Աղյուսակ 2.1.3

Ընդերքօգտագործման պայմանագրերի շրջանակներում արձանագրված հանքի փակման ծրագրերով ստանձնած պարտավորությունները

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքի փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների համար տարեկան վճար
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ.օգոստոսի 22	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«ՊարամաունտԳոլդՄայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ.հունիսի 12	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ.հոկտեմբերի 20	11,780,000 ՀՀ դրամ
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«ՖորչնՌիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«ՄոլիբդենիԱշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	Պայմանագրով նախատեսված են բացառապես աշխատուժի սոցիալական վիճակի մեղմացման միջոցառումներ: Սահմանված է նաև (հավելված 2,կետ 1.3) ընկերության պարտականությունը «շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին»:
«Զաարատ Կապան»	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«ՄեգոԳոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	Հանքի փակման ծրագրով նախատեսված

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքի փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների համար տարեկան վճար
		պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«ԳեոՊրոՄայնինգԳոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20՝ ըստ 2014թ.հոկտեմբերի 22-ի փոփոխության	6,000,000 ՀՀ դրամ
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26՝ ըստ 2016թ. մայիսի 23-ի փոփոխության	16,610,000 ՀՀ դրամ
«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5՝ ըստ 2013թ.հուլիսի 1-ի փոփոխության	25,000,000 ՀՀ դրամ
«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	Պայմանագրում արձանագրված հանքի փակման ծրագրից բխող պարտավորությունների շրջանակներում մշտադիտարկումներ նախատեսված չեն
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	Պայմանագրում արձանագրված հանքի փակման ծրագրից բխող պարտավորությունների շրջանակներում մշտադիտարկումներ նախատեսված չեն
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Մարջան ՄայնինգՔոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Թաթսթոուն» ՍՊԸ (Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի «Թղկուտ տեղամաս»)	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11	2 ,500,000 ՀՀ դրամ
«Թաթսթոուն» ՍՊԸ (Լիճքի պղնձի հանքավայր)	Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11՝ ըստ 2016թ.փետրվարի 10-ի փոփոխություններով	375,000 ՀՀ դրամ
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	5,000,000 ՀՀ դրամ

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Հանքի փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների համար տարեկան վճար
«Բակտեկէկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	150,000 ՀՀ դրամ
«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	2,200,000 ՀՀ դրամ
«ՄուլտիԳրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները պայմանագրից բացակայում են
«Ղարագուլյաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	4,895,000 ՀՀ դրամ

Այսպիսով, խնդրո առարկա 27 պայմանագրերից 14-ի դեպքում «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» հավելվածը բացակայում է: Նման պարտավորությունների արձանագրմամբ 14 պայմանագրերից մեկի («Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ-ի հետ 2012թ. նոյեմբերի 7-ի կնքված թիվ ՊՎ-174 պայմանագիր) պարագայում «Հանքի փակման ծրագիր» վերտառությամբ հավելված 2-ը սահմանում է բացառապես աշխատուժի սոցիալական վիճակի մեղմացման և հանքի ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական միջոցառումներ իրականացնելու պարտականություն (առանց դրանց էության հստակեցման): Սահմանված է նաև ընկերության պարտականությունը «շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին»: Եվս երկու պայմանագրերի պարագայում («Ասսաթ» ՍՊԸ-ի հետ 2013թ. հունիսի 6-ի կնքված թիվ ՊՎ-366 պայմանագիր և «Վայք Գոլդ» ՍՊԸ-ի հետ 2012թ. նոյեմբերի 30-ի կնքված թիվ Պ-371 պայմանագիր) «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» հավելվածն առկա է, սակայն դրանում բացակայում են մշտադիտարկումների հետ կապված հաշվարկները:

«Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» վերտառությամբ հավելված ունեցող 14 պայմանագրերից մնացած 11-ից միայն «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրում է օգտագործվում Օրենսգրքի և Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգի եզրութաբանությունը:

Մյուս 10 պայմանագրերի պարագայում «հանքի փակման ծրագիր» վերտառությամբ 2-րդ հավելվածում, որտեղ խոսվում է սոցիալական վիճակի մեղմացման միջոցառումների մասին, հավելվածի վերջում ներկայացված է նաև միջոցառումների ցանկ՝ աղյուսակի տեսքով, որոնք բովանդակային առումով սոցիալական չեն, այլ էկոլոգիական (ներառում են այնպիսի

միջոցառումներ, ինչպիսիք են խախտված հողատարածքների վերականգնումը, արտադրական հրապարակների ապամոնտաժումը, սարքավորումների տեղափոխումը, մոնիթորինգի իրականացումը («մշտադիտարկում» եզրույթի փոխարեն գրեթե ամեն տեղ օգտագործվում է լատիներեն «մոնիթորինգ» եզրույթը), նախազգուշացնող միջոցների տեղադրումը, ջրահեռացնող առուների սպասարկումը, դրենաժային համակարգի ստեղծումը և այլն) և, ըստ էության, հանդիսանում են նախահաշիվ, որը սահմանում է միջոցառումների համար նախատեսված «ներդրումների չափը»:

Նման շարադրանքով պայմանագրերում աղյուսակները, սակայն, բովանդակային առումով կապված չեն տեքստի հետ և չեն օգտագործում Օրենսգրքի և Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգի ձևակերպումները, ինչը կարող է ստեղծել որոշակի իրավական անորոշություն:

Խնդրահարույց են այն ընկերությունների պայմանագրերը, որոնք չեն սահմանում «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» (առանձին հավելվածի տեսքով) և/կամ չունեն համապատասխան հաշվարկներ հանքի փակման ծրագրերում. արդյո՞ք վերջիններս ազատված են համապատասխան վճար կատարելու պարտականությունից միայն այն պատճառով, որ Կառավարության կողմից հաստատված Մշտադիտարկումների հաշվարկման և վճարման կարգը վճարների հաշվարկը կապում է փակման ծրագրով նախատեսված մշտադիտարկումների նախահաշվային արժեքի հետ:

գ) Բնապահպանական հարկ

2018թ.-ից ի վեր բնապահպանական հարկը կարգավորվում են Հարկային օրենսգրքով:

Հարկային օրենսգիրքը սահմանել է «բնապահպանական հարկ» հասկացությունը, որի համաձայն բնապահպանական հարկը պետական բյուջե վճարվող հարկ է, որը ծառայում է *«բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման»* նպատակին[74]: Հարկային օրենսգիրքը տարանջատել է բնապահպանական հարկով հարկման չորս օբյեկտ.

1) մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումը.
2) ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքը.
3) ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները՝
   ա. հատուկ հատկացված տեղերում տեղադրելը,
   բ. հատուկ հատկացված տեղերում պահելը.
4) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների՝
   ա. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը,
   բ. ներմուծող-իրացնողների և (կամ) արտադրող-իրացնողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում օտարումը:

[74] Հարկային օրենսգիրք, հոդված 36, հոդված 161

Հարկային օրենսգիրքը սահմանում է մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի ցանկը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում կատարվող վճարների դրույքաչափերը:

Վերջինս փոշու, ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների, ծծմբային անհիդրիդի, քլորի, քլորոպրենի հաշվետու ժամանակաշրջանում արտանետված յուրաքանչյուր տոննայի համար նախատեսել է դրամային դրույքաչափ:

Մթնոլորտային օդն աղտոտող այլ նյութերի համար, որոնց մասով արտանետումների փաստացի ծավալները գերազանցում են օրենսդրությամբ սահմանված կարգով մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվություններով նախատեսված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալը, կամ որոնց մասով բացակայում են մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու թույլտվությունները, կամ թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտանետումները, կիրառվող դրույքաչափը մեկ տոննայի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$Դ_{օդ}$ = 900 դրամ/ ՍԹԿ

որտեղ՝ «Դօդ»-ն դրույքաչափն է, «ՍԹԿ»-ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է (կոնցենտրացիա)[75]:

Երևանի և ազգային պարկերի տարածքներում արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ[76]:

Հարկային օրենսգիրքը ֆիքսված դրույքաչափեր է նախատեսում նաև ջրային ռեսուրս անմիջապես և (կամ) կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր կախված նյութերի , ամոնիակային ազոտի, թթվածնի կենսաբանական պահանջի, նավթամթերքի, պղնձի, ցինկի, սուլֆատների, քլորիդների, նիտրիտների, նիտրատների, ընդհանուր ֆոսֆորի, դետերգենտների, ծանր մետաղների աղերի, ինչպես նաև ցիանի և ցիանի միացությունների հաշվետու ժամանակաշրջանում արտահոսքի յուրաքանչյուր տոննայի համար :[77]

Բոլոր մյուս վնասակար նյութերի և միացությունների համար, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված՝ կեղտաջրերում վնասակար նյութերի և միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ բացակայում են ջրօգտագործման թույլտվությունները կամ ջրօգտագործման թույլտվություններով նշված չեն սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալներ, կամ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված սահմանային թույլատրելի արտահոսքերի ծավալները որոշված չեն բնապահպանական հարկի կիրառվող դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտահոսքի յուրաքանչյուր մտոննայի համարհաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

[75] *Ibid.*, հոդ. հոդված167
[76] *Ibid.*, հոդ. 167, մաս 2
[77] *Ibid.*, հոդ. 169, մաս 1 Դրույքաչափերը տե՛ս հավելված 6-ում

$Դ_{ջուր}$ = 10 000 դրամ/$ՍԹԿ_{ձկն}$

որտեղ՝ «$Դ_{ջուր}$»-ը դրույքաչափն է, «$ՍԹԿ_{ձկն}$»-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի կամ միացությանսահմանային թույլատրելի կոնցենտրացիան է[78]:

Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսք իրականացնողների համար դրույքաչափերը կրկնապատկվում են:[79] Հարկային օրենսգիրքը սահմանել է նաև հատուկ հատկացված տեղերում (բացառությամբ արդյունաբերական հրապարակների) արտադրության և (կամ) սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի՝ հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով տեղադրման (պահման) համար բնապահպանական հարկի դրույքաչափեր[80]: «Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետով սահմանված են արդյունաբերական հրապարակներում արտադրության և սպառման թափոնների յուրաքանչյուր տոննայի տեղադրման (պահման) համար դրույքաչափերը ըստ տեղադրման ժամանակահատվածի, որոնք կգործեն մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ: Օրենսգրքով սահմանվել են նաև արդյունաբերական հրապարակներում արտադրության և (կամ) սպառման թափոնների (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների) յուրաքանչյուր տոննայի՝ հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով մեկանգամյա պահման համար հարկի դրույքաչափերը, հատուկ հատկացված տեղերում՝ պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում ընդերքօգտագործման թափոնների հաշվետու ժամանակաշրջանում մեկանգամյա տեղադրման կամ պահման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը, որոնք կգործեն 2021թ. հունվարի 1-ից[81]:

դ) Ռոյալթի

2018թ. հունվարի 1-ից ռոյալթի հասկացության, վճարողների շրջանակի, հաշվարկման բազայի, դրույքաչափի և այլ հարցերը կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքով: Ըստ էության, ՀՀ հարկային օրենսգիրքը մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին թիվ ՀՕ-270 օրենքի՝ ռոյալթիի մասով կարգավորումները և մինչև 2018թ. հունիսի 23-ը գործող թիվ 1901-Ն որոշմամբ հաստատված «Ռոյալթիի հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման» կարգի դրույթները ինկորպորացնում է մի շարք լրացումներով և շտկումներով, որոնք փաստացի լուծում են ԱՃԹՆ առաջին զեկույցում վերհանված խնդիրները: .

Հարկային օրենսգիրքը տալիս է ռոյալթիի հետևյալ սահմանումը.

Ռոյալթին մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման

[78] *Ibid.*, հոդ. 169, մաս 1
[79] *Ibid.*, հոդ. 169, մաս 2
[80] *Ibid.*, հոդ. 3(ա): Դրույքաչափերը տե՛ս հավելված 6-ում
[81] *Ibid.*, հոդ 3(բ):

վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող բարձր շահութաբերության համար օրենսգրքի 10-րդ բաժնին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է[82]*:*

Օրենսգրքի համաձայն, ռոյալթի վճարողներ են համարվում

1) ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և մետաղի խտանյութ (օրենսգրքի 10-րդ բաժնում՝ խտանյութ) կամ ձուլվածք կամ հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները.

2) ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և այդ հանքավայրերից արդյունահանված մետաղական օգտակար հանածոներից առանց խտանյութի ստացման ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները.

3) ընդերքօգտագործման թափոններից և (կամ) հանքաքարից մետաղի խտանյութ և (կամ) ձուլվածք կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները՝ անկախ մետաղական օգտակար հանածոյի հանքավայր շահագործող հանդիսանալուց[83]:

Ռոյալթիի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր տարին է[84]:

Հաշվարկման բազա և դրույքաչափ

Օրենսգրքի համաձայն՝ ռոյալթիի բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը:

Ռոյալթիի հաշվարկման համար իրացման շրջանառությունը որոշվում է հաշվեգրման եղանակով: Հաշվառման հաշվեգրման մեթոդը նշանակում է, որ ռոյալթի վճարողի եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից:

Հարկային օրենսգիրքը սահմանում է ռոյալթիի հաշվարկման չորս տարբեր դեպքեր՝

Խտանյութ

Մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ մատակարարման պայմանագրին համապատասխան որոշված (պայմանագրին

[82] Հոդված197
[83] Հոդված 198
[84] *Ibid.*, հոդ. 211

համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով): Մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գին՝ հիմք է ընդունվում մատակարարված խտանյութի համար մատակարարի և գնորդի միջև կնքված՝ խտանյութի մատակարարման պայմանագրին համապատասխան ըստ գնորոշման ժամանակահատվածի և գնանշումների (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) որոշված պայմանագրի գինը:

Եթե մատակարարման պայմանագրին համապատասխան՝ խտանյութի մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա խտանյութի մատակարարման հաշվետու ժամանակաշրջանում իրացման շրջանառության հաշվարկման համար որպես ֆիզիկական ծավալ հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով (ըստ մատակարարի կողմից տրվող որակի նախնական հավաստագրերի և հաշվարկային փաստաթղթերի) մետաղների պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով).

Եթե խտանյութի մատակարարման պայմանագրին համապատասխան՝ խտանյութի մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա խտանյութի մատակարարման հաշվետու ժամանակաշրջանում իրացման շրջանառության հաշվարկման համար, որպես ֆիզիկական ծավալի գին, հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով որոշված պայմանագրի գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի.

Ռոյալթիի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված (անկախ մատակարարման պայմաններից) խտանյութի իրացման շրջանառություն է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ֆիզիկական ծավալի համար մատակարարի և գնորդի միջև կնքված արտադրանքի մատակարարման պայմանագրով որոշված (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) պայմանագրի գինը՝ հիմք ընդունելով հետևյալը.

ա. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի մատակարարման պայմանագրի վերջնահաշվարկի արդյունքներով որոշված ֆիզիկական ծավալից մատակարարման պահին որոշված ծավալի բացասական շեղման առավելագույն չափ է համարվում մատակարարման պահին որոշված ծավալի երկու տոկոսը,

ա1. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս խտանյութի առանձին տեսակների համար վճարվող մետաղներ են համարվում՝

- պղնձի խտանյութերի դեպքում՝ պղինձը, ոսկին, արծաթը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,
- մոլիբդենի խտանյութի դեպքում՝ մոլիբդենը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

- ցինկի խտանյութի դեպքում՝ ցինկը, ոսկին, արծաթը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,
- այլ խտանյութերի դեպքում՝ խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող մետաղները,

ա2. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս Կառավարությունը կարող է սահմանել՝

- վճարվող մետաղների համար գնորդի կողմից չվճարվող (նվազեցումների ենթակա) մասի առավելագույն սահմանաչափերը: Կառավարության կողմից սահմանված չլինելու դեպքում դրանք ընդունվում են պայմանագրով սահմանված չափով,
- մատակարարման պայմանագրով որոշված՝ վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ՝ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափերը: Սահմանաչափերը հրապարակվում են՝ հիմնվելով մասնագիտացված միջազգային պարբերականների, այդ թվում՝ Վուդ Մակենզի (Wood Mackenzie), Մետալ Բյուլետին (Metal Bulletin) կամ համանման հեղինակությամբ միջազգային այլ պարբերականների կողմից մետաղական խտանյութերի վերամշակման և զտման ծախսերի վերաբերյալ հրապարակվող տվյալները՝ հողում կատարելով համապատասխան աղբյուրին: Կառավարության կողմից սահմանված չլինելու դեպքում դրանք ընդունվում են պայմանագրով սահմանված չափով:

Ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի մատակարարման պահին կամ դրանից հետո արձանագրված՝ պայմանագրով նախատեսված ցուցանիշներից ավելի շեղումներով պայմանավորված իրացման շրջանառության նվազեցումները (այդ թվում՝ մատակարարված խտանյութում տեխնոլոգիական բարդություններ առաջացնող քիմիական տարրերի (տուգանային տարրերի) համար պայմանագրով նախատեսված չափից ավելի գների նվազեցումները, խոնավության համար պայմանագրով նախատեսված թույլատրելի ցուցանիշի խախտման դեպքում պայմանագրի գնի նվազեցումները) հաշվի չեն առնվում:

Եթե ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթիի իրացման շրջանառությունը 20 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում՝ օրենսգրքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային միջին գների 80 տոկոսի արտադրյալը:

Խտանյութի մատակարարման պայմանագրերով նախատեսված՝ ռոյալթիի բազայի վերջնահաշվարկների արդյունքում ճշտումները կատարվում են, և դրանց արդյունքներն

արտացոլվում են վերջնահաշվարկն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում (արտացոլվում են այդ հաշվետու ժամանակաշրջանի ռոյալթիների հարկային հաշվարկներում):

Ձուլվածք

Ռոյալթի վճարողի կողմից ձուլվածքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով. ձուլվածքի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված ձուլվածքի մատակարարման պայմանագրին համապատասխան, հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի կշիռը՝ արտահայտված գրամներով կամ տոննաներով: Հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի համար օգտագործված խտանյութի հաշվարկային մեծություն (խտանյութի ֆիզիկական ծավալ) է համարվում ձուլվածքի կշռի միավորի արտադրության համար փաստացի օգտագործված՝ տեխնոլոգիապես հիմնավորված խտանյութի ֆիզիկական ծավալը՝ խտանյութում մետաղների վերջնական պարունակությունն արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով).

Ձուլվածքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված ձուլվածքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութում պարունակվող մետաղների միջազգային միջին գները:

Խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանք.

Վերջնական արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ արտադրանքի մատակարարման պայմանագրին համապատասխան մատակարարված արտադրանքի արտադրության համար ծախսված բոլոր մետաղների կշիռը՝ արտահայտված գրամներով կամ տոննաներով: Վերջնական արտադրանքում յուրաքանչյուր մետաղի համար ռոյալթիի հաշվարկման իմաստով հիմք է ընդունվում տվյալ մետաղի խտանյութի ֆիզիկական ծավալի (խտանյութում մետաղների վերջնական պարունակությունն արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով) տեխնոլոգիապես հիմնավորված այն հաշվարկային մեծությունը, որը ծախսվել է հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված արտադրանքում պարունակվող տվյալ ծավալի մետաղի ստացման համար.

Վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված վերջնական արտադրանքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութում պարունակվող մետաղների միջազգային միջին գները:

Առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանք

Իրացման շրջանառության որոշման նպատակով, առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում դրանում պարունակվող մետաղի փաստացի քանակությունը՝ գրամներով կամ տոննաներով: Նշված արտադրանքի օտարման դեպքում իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով

մետաղների վերջնական պարունակությունից (արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով), կիրառելով մետաղների միջազգային միջին գները:

Հարկ է նշել, որ մետաղի միջազգային միջին գին է համարվում ֆինանսների բնագավառում Կառավարության լիազոր մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի, իսկ նշված աղբյուրի կողմից որևէ մետաղի վերաբերյալ տվյալներ չհրապարակվելու դեպքում՝ համանման միջազգային այլ հեղինակավոր աղբյուրի տվյալների հիման վրա յուրաքանչյուր ամսվա համար հրապարակված գինը (հրապարակելով նաև աղբյուրի վերաբերյալ տեղեկությունները):

Ռոյալթիի բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված (i) խտանյութի, (ii) խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ (iii) ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (օրենսգրքի 10-րդ բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառությունը:

Ռոյալթիի համար սահմանվում է ռոյալթիի բազայի նկատմամբ արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

R = 4 + [Շ/(Հx8)]x100, որտեղ՝

R – ռոյալթիի դրույքաչափն է՝ տոկոսով.

Շ – շահույթն է նախքան հարկումը՝ դրամով, որը հաշվարկվում է որպես ռոյալթիի բազայի և օրենսգրքի 6-րդ (Շահութահարկը) բաժնով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի, ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

Հ – ռոյալթիի բազան է՝ դրամով:

շահույթը նախքան հարկումը բաղադրիչի հաշվարկման ժամանակ բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարությանը 2017թ. նոյեմբերի 23-ին ընդունած թիվ 1492-Ն որոշմամբ սահմանում է, որ

1. Հայաստանի Հանրապետությունում ռոյալթիների հաշվարկման նպատակով, ռոյալթի վճարողների կողմից իրացվող խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս վճարվող մետաղների գծով գնորդի կողմից չվճարվող առավելագույն սահմանաչափեր են՝ ներառյալ պայմանագրով վճարող մետաղների մասով կիրառվող ցանկացած նվազեցումները, համարվում՝

1) պղնձի խտանյութի դեպքում՝

ա. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող պղնձի 1 տոկոսային կետը,

բ. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու փաստացի քանակությունը, եթե այն պակաս է 1 գրամից,

գ. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու քանակության 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող ոսկու քանակությունը պակաս չէ 1 գրամից,

դ. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի փաստացի քանակությունը, եթե այն պակաս է 30 գրամից,

ե. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի փաստացի քանակության 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող արծաթի քանակությունը պակաս չէ 30 գրամից.

2) ցինկի խտանյութի դեպքում՝

ա. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ցինկի 8 տոկոսային կետը,

բ. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող ոսկու քանակությունը պակաս չէ 1 գրամից,

գ. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի 10 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող արծաթի քանակությունը պակաս չէ 30 գրամից.

3) մեկ չոր մետրիկ տոննայում մոլիբդենի խտանյութի դեպքում՝ խտանյութում պարունակվող մոլիբդենի 0.5 տոկոսը, եթե պայմանագրով նախատեսված են վերամշակման ծախսերի արժեքային մեծություններ.

4) ոսկու խտանյութի դեպքում՝

ա. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող ոսկու փաստացի քանակության 15 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող ոսկու քանակությունը պակաս չէ 1 գրամից,

բ. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութում պարունակվող արծաթի փաստացի քանակության 15 տոկոսը, եթե խտանյութում պարունակվող արծաթի քանակությունը պակաս չէ 30 գրամից:

2. Հիմք ընդունելով համաշխարհային խոշորագույն արդյունահանողների և ձուլարանների միջև պայմանագրերի բանակցման արդյունքում ձևավորված՝ մետաղական խտանյութերի վերամշակման և զտման ծախսերի տարեկան ուղենիշային գների Անուալ բենչմարկ (Annual benchmark) վերաբերյալ Մետալ Բյուլետին (Metal Bulletin), Վուդ Մակենզի (Wood Mackenzie), Սի Ար Յու Մոնիթոր (CRU monitor), Էս էնդ Փի Գլոբալ Փլաթս (S&P Global Platts) կազմակերպությունների կողմից հրապարակվող տվյալները՝ սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում ռոյալթիների հաշվարկման նպատակով ռոյալթի վճարողների կողմից իրացվող խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս, խտանյութերի մատակարարման պայմանագրով սահմանված վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափեր են՝ ներառյալ պայմանագրով վերամշակման, զտման կամ այլ համանման ծախսերի մասով կիրառվող ցանկացած նվազեցումները, համարվում՝

1) պղնձի խտանյութի դեպքում՝

ա. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութի վերամշակման ծախսեր՝ 90 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

բ. վճարվող մեկ ֆունտ պղնձի զտման ծախսեր՝ 0.09 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

գ. վճարվող մեկ տրոյական ունցիա ոսկու զտման ծախսեր՝ 3 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

դ. վճարվող մեկ տրոյական ունցիա արծաթի զտման ծախսեր՝ 0.3 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը.

2) ցինկի խտանյութի դեպքում՝ մեկ չոր մետրիկ տոննա ցինկի խտանյութի վերամշակման և զտման ծախսեր՝ 100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը.

3) մոլիբդենի խտանյութի դեպքում՝ մեկ չոր մետրիկ տոննա մոլիբդենի վերամշակման և զտման համար պայմանագրով նախատեսված ծախսի չափը, սակայն վերամշակման, զտման և գնորդի կողմից չվճարվող մետաղի համար նախատեսված ծախսերի արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի խտանյութում պարունակվող մոլիբդենի արժեքի 15 տոկոսը.

4) ոսկու խտանյութի դեպքում՝

ա. մեկ չոր մետրիկ տոննա խտանյութի վերամշակման ծախսեր՝ 185 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը, իսկ մեկ տրոյական ունցիայի զտման համար 6 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը,

բ. վճարվող մեկ տրոյական ունցիա արծաթի զտման ծախսեր՝ 0.4 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը չգերազանցող չափը:

3. Հայաստանի Հանրապետությունում ռոյալթիների հաշվարկման նպատակով ռոյալթի վճարողների կողմից խտանյութերի տեղափոխման համար կատարվող ծախսերի՝ ներառյալ տրանսպորտային, փաթեթավորման, մակնշման և բեռնման ծախսերը, առավելագույն սահմանաչափեր են համարվում՝

1) մեկ չոր մետրի տոննայի վերահաշվարկված խտանյութի հաշվով 12 հազ. դրամը չգերազանցող չափը՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին խտանյութի վաճառքի դեպքում.

2) մեկ չոր մետրիկ տոննայի վերահաշվարկված խտանյութի հաշվով 30 հազ. դրամը չգերազանցող չափը՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող խտանյութի դեպքում, եթե տրանսպորտային փոխադրման սկզբնակետը գտնվում է Բագրատաշեն մաքսակետից ավելի քիչ, քան 150 կմ հեռավորությամբ.

3) մեկ չոր մետրիկ տոննայի վերահաշվարկված խտանյութի հաշվով 40 հազ. դրամը չգերազանցող չափը՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող խտանյութի դեպքում, եթե տրանսպորտային փոխադրման սկզբնակետը գտնվում է Բագրատաշեն մաքսակետից 150 կմ և ավելի հեռավորությամբ:

4. Սույն որոշումը նաև սահմանում է, որ 3-րդ կետում նշված տրանսպորտային ծախսերին համարժեք գումարը կարող է առանձնացված չլինել 2-րդ կետով նշված ծախսերից: Այդ դեպքերում 1 չոր մետրիկ տոննա խտանյութի համար որպես վերամշակման և տրանսպորտային ծախսերի նվազեցվող միասնական առավելագույն սահմանաչափ է համարվում որոշման վերոգրյալ 2-րդ և 3-րդ կետերով սահմանված սահմանաչափերի հանրագումարը:

Միաժամանակ, ռոյալթիի հաշվարկման իմաստով հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված առավելագույն սահմանաչափերը գերազանցելու դեպքում նվազեցումները հաշվարկվում են սույն որոշմամբ սահմանված առավելագույն սահմանաչափին համարժեք, իսկ առավելագույն սահմանաչափերը չգերազանցելու դեպքում հաշվի են առնվում պայմանագրով նախատեսված չափին համարժեք:

ե) Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման դիմաց վճարվում է պետական տուրք, որի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով[85]: Վերջինս օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար և ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրման համար սահմանում է ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման տուրքի տարեկան դրույքաչափեր, որոնք ներկայացված են աղյուսակ 2.1.4-ում:

[85] «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 45 հոդ. 19.4

Աղյուսակ 2.1.4

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման տուրքի տարեկան դրույքաչափերը

Թույլտվության տեսակ	Տարեկան պետական տուրք ՀՀ դրամով
Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար	50,000
Ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրման համար[86]	10,000,000
Շինանյութերի արտադրության հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	500,000
Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար	10,000,000
Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար	50,000
Ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի նպատակով միանգամյա թույլտվության տրամադրման համար	100,000
Կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվության տրամադրման համար	500,000

Ընդերքօգտագործողը պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան թույլտվության- տրման դիմումը բավարարելու մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:[87]

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 8 հունիսի 2018 թվականի N 666-Ն որոշման Հավելված N 2-ի Ձև 2-ի (*Ընդերքօգտագործողի կողմից վճարված հարկերը, վճարները և տուրքերը*), ինչպես նաև Հավելված N 3-ի (Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության ձևը) համաձայն, պետք է տեղեկատվություն ներկայացվի նաև սև մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքի վերաբերյալ: Մինչդեռ, ինչպես նշվել է աղյուսակում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն սև մետաղների հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք սահմանված չէ: Առաջարկում ենք, համապատասխան փոփոխություն կատարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում՝ ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղներին ավելացնելով նաև սև մետաղը:

Փորձաքննության գործընթացի իրականացման համար վճարվող պետական տուրքը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փորձաքննության գործընթացի իրականացման համար վճարվում է պետական տուրք: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի համաձայն նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման

[86] Սև մետաղների յուրաքանչյուր հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրման համար օրենքը պետական տուրք չի նախատեսում:
[87] Ընդերքի մասին հոդված 61 մաս 8

հաշվետվությանը կից ‹‹Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն›› ՊՈԱԿ-ին տրամադրվում է պետական տուրքի անդորրագիրը: Իսկ պետական տուրքի չափը սահմանված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 12-րդ մասի 12.4 կետով:

(ii) Հարկեր

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Հարկային օրենսգիրքը որպես միասնական փաստաթուղթ, իր մեջ է համախմբում բոլոր հարկերի մասով կարգավորումները[88]:

Ստորև ներկայացվում են առանձին հարկատեսակներով հարկման և պարտադիր վճարների կիրառման հիմնական առանձնահատկությունները:

Շահութահարկ. ՀՀ-ում գործունեություն իրականացնող հանքարդյունաբերական ոլորտի բոլոր ընկերությունների շահույթը ենթակա է շահութահարկով հարկման: Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20%[89] դրույքաչափով: Բացի վերոնշյալից, ընկերությունները ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ վճարելիս, որպես հարկային գործակալ, պետք է գանձեն ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ համաձայն աղյուսակ 2.1.5-ում նշված դրույքաչափերի:

Աղյուսակ 2.1.5

2018թ. ընթացքում կիրառելի ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափեր

Եկամտի տեսակ	Դրույքաչափ
Ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5%
Շահաբաժիններ[90], տոկոսներ, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, ակտիվների արժեքի հավելաճ և այլ պասիվ եկամուտներ	10%
Արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճ	0%
Այլ եկամուտների մասով	20%

Եկամտային հարկ. ՀՀ-ում գործունեություն իրականացնող հանքարդյունաբերական ոլորտի բոլոր կազմակերպությունները, որպես հարկային գործակալ, ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, հաշվարկում և պահում են եկամտային հարկ: Եկամտային հարկը հաշվարկվում և ՀՀ պետական բյուջե է վճարվում ամսական կտրվածքով: 2018թ. ընթացքում ընկերությունները եկամտային հարկը հաշվարկել և վճարել են, մասնավորապես համաձայն հետևյալ դրույքաչափերի.

[88] Հարկային օրենսգրքի՝ «Անշարժ գույքի հարկը» և «Փոխադրամիջոցների գույքահարկը և վճարողները» կարգավորող համապատասխանաբար 11-րդ և 12-րդ բաժինները ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Մինչ սույն բաժինների ուժի մեջ մտնելը՝ 14.02.1994թ. ընդունված ՀՕ-101 «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը և 26.12.2002թ. ընդունված ՀՕ-491-Ն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը մնում են կիրառության մեջ:

[89] 25.06.2019թ. ընդունված ՀՕ-68-Ն օրենքի համաձայն՝ 2020թ. և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար շահութահարկի հաշվարկման նպատակով կկիրառվի 18% դրույքաչափ:

[90] 01.01.2020թ. հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինները հարկվում են 5% դրույքաչափով:

Աղյուսակ 2.1.6

2018թ. ընթացքում կիրառելի եկամտային հարկի դրույքաչափեր

Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
մինչև 150,000 դրամը ներառյալ	23 տոկոս
150,000-ից մինչև 2,000,000 դրամը ներառյալ	34,500 դրամ՝ գումարած 150,000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը
2,000,000-ից ավելի դրամ	552,500 դրամ՝ գումարած 2,000,000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Մինչդեռ 2020թ. հունվարի 1-ից սկսած՝ եկամտային հարկով հարկման բազայի նկատմամբ կիրառվելու է ընդհանուր սահմանված դրույքաչափ համաձայն ստորև բերված աղյուսակի.

Ժամանակահատված	Հարկման դրույքաչափ
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս
2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

Ավելացված արժեքի հարկ. Ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) հարկվում են հետևյալ գործարքները՝

- ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումը,
- Աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը,
- «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծումը ՀՀ,
- ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծումը: ԱԱՀ-ի դրույքաչափերն են՝ 0% և 20%:

20% դրույքաչափը կիրառվում է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման ու ծառայությունների մատուցման ԱԱՀ-ով հարկման բազայի նկատմամբ:

0% դրույքաչափը հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների համար կիրառվում է ՀՀ տարածքից ապրանքների արտահանման, ինչպես նաև այն ծառայությունների նկատմամբ, որոնց մատուցման վայրը չի համարվում Հայաստանի Հանրապետությունը:

<u>Գույքահարկ և հողի հարկ</u> (01.01.2021թ.-ից միասին՝ անշարժ գույքի հարկ).

Գույքահարկը հաշվարկվում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված հարկվող օբյեկտ համարվող գույքի համար: Գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինները:

Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Շենքերի և շինությունների գույքահարկի և հողի հարկի հաշվարկման հիմք է հանդիսանում դրանց կադաստրային արժեքը: Շենքերի և շինությունների գույքահարկի դրույքաչափերը կազմում են 0%-ից մինչև 1%, իսկ հողի հարկինը՝ 0,5%-ից մինչև 1%[91]:

Տրանսպորտային միջոցների գույքահարկի հաշվարկման հիմք է հանդիսանում շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ):

Համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացրած հարցադրումների շրջանակներում ստորև ներկայացված է գույքահարկի գծով առկա հետևյալ խնդիրը:

Համաձայն Շնող համայնքի ղեկավարության և Թեղուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ քննարկման՝ Թեղուտ ՓԲԸ-ի տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի նշանակալի մասը, որի կառուցապատման աշխատանքները ավարտվել են 2014-2015թթ. և վերջին տարիների ընթացքում շահագործվել է ընկերության կողմից, հաշվառված չէ ՀՀ Կադաստրի կոմիտեում: Կողմերը նշում են, որ տարբեր տեխնիկական խնդիրների պատճառով գույքի գրանցման գործընթացը պարբերաբար հետաձգվել է և չի իրականացվել, սակայն ընկերությունը կատարում է որոշ վճարումներ համայնքի բյուջե, որոնք ուղղված են համապատասխանաբար փոխհատուցելու նշված գույքի կադաստրային գրանցման և սեփականության իրավունքի արդյունքում առաջացող գույքահարկը: Սույն դեպքում, համաձայն ընկերության կողմից լրացված հաշվետվության, նշված վճարը դասակարգվել է որպես բարեգործական հատկացում «օգնություն գույքահարկի գծով» անվանման տակ, այնինչ համայնքի կողմից լրացված հաշվետվությունում վճարը ներկայացված է որպես գույքահարկ:

ԱՃԹՆ առաջին զեկույցում արձանագրվել է, որ գրանցման բացի պարագայում ընկերության կողմից պատրաստակամորեն վճարումներ կատարելը համայնքի բյուջե ողջունելի է, սակայն ընդգծվել է, որ թե՛ վճարման չափերի որոշման և թե՛ սահմանված կանոնակարգերի պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է խնդրին տալ ինստիտուցիոնալ լուծում: ԱՃԹՆ-ի տեսանկյունից սա հատկապես կարևոր է այն առումով, որ գույքահարկի մասով այդ դեպքում առկա է շեղում ֆինանսական հոսքերի սահմանված գործընթացից:

ԱՃԹՆ Անկախ ադմինիստրատորի կողմից ներկայացվել է առաջարկ իրականացնել համապատասխան հարցումներ կամ վերլուծություն պարզելու՝ արդյո՞ք վերը նշված խնդիրը, ինչպես նաև կիրառված համապատասխան մոտեցումները առկա են մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող այլ ընկերությունների մոտ և ինչպես են արձագանքում նման խնդիրներին համապատասխան համայնքների ղեկավարները և ՀՀ Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները:

ԱՃԹՆ առաջին զեկույցին հաջորդիվ՝ ՀՀ փոխվարչապետը հանձնարական է ուղարկել Անշարժ գույքի կադաստրի կոմիտե և ՏԿԵՆ՝ իրականացնելու համայնքի տարածքում մետաղական հանքաքար արդյունահանելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց անշարժ գույքի դիտարկում, արձանագրել փաստացի առկա և կադաստրային փաստաթղթերում գրանցված

[91] 2021թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտնում անշարժ գույքի հարկման փոփոխված դրույքաչափեր:

գույքի տարբերությունները և ներկայացնելու համապատասխան տեղեկանք չգրանցված անշարժ գույքի վերաբերյալ՝ ըստ ընկերությունների և համայնքների: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Կադաստրի կոմիտեին է տրամադրել համայնքներում մետաղական հանքաքար արդյունահանելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց փաստացի առկա և կադաստրային փաստաթղթերում գրանցված գույքի տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը: 2020թ. փետրվարի 18-ի թիվ ՍՊ/15.3/4187-2020 հանձնարարականի համաձայն Արարատի, Լոռու, Սյունիքի մարզպետներին հանձնարարվել է համապատասխան համայնքներում փաստացի առկա և կադաստրային փաստաթղթերում գրանցված գույքի տարբերությունների մասով մինչև սահմանված ժամկետը կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն: Համաձայն ներկայացված տեղեկատվության մի շարք համայնքներում արդեն իսկ առկա է գրանցված գույք: Իսկ չգրանցված գույքի մասով գործընթացը կրում է շարունակական բնույթ:Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ի պատասխան հանձնարարականի՝ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն տեղեկացրել է, որ կլինեն դեպքեր, երբ կադաստրային քարտեզներում գրանցված գույքերը տեղադրված չեն լինի կամ տեղադրված կլինեն մոտավոր չափերով՝ կադաստրային գործերում հանքերի կոորդինատների բացակայության պատճառով, քանի որ ՀՀ կառավարության «WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում տեղագրական քարտեզների և հատակագծերի բաց հրատարակման ընթացակարգը կարգավորելու մասին» N 791-Ն որոշումը ընդունվել է 2009 թվականի հուլիսի 16-ին[92]:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվել է օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների անվամբ գրանցված անշարժ գույքի միավորների վերաբերյալ տեղեկատվության համար հանձնարարականն ուղարկել ՀՀ բնապահպանության և ընդերքի, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին՝ պահանջվող վերլուծությունը կատարելու համար:

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինն էլ իր հերթի ներկայացրել է, որ հաշվի առնելով անհամապատասխանությունների բազմաթիվ և բազմաբնույթ լինելը՝ իրենց կարծիքով խնդիրներին միանշանակ և վերջնական պատասխան տալ հնարավոր չէ, վերը նշված անհամապատասխանություններին լուծում տալու համար անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում:

Այնուհետև, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից առաջարկվել է համայնքներում մետաղական հանքաքար արդյունահանելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց փաստացի առկա և կադաստրային փաստաթղթերում գրանցված հողերը համապատասխանեցնել լեռնահատկացման ակտերով տրամադրված տարածքներին:Հաշվի առնելով հետևյալը՝ առաջարկվել է ստեղծել շահագրգիռ կազմակերպություններից կազմված

[92] «WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում տեղագրական քարտեզների և հատակագծերի բաց հրատարակման ընթացակարգը կարգավորելու մասին» ՀՀ Կառավարության N 791-Ն որոշում (ընդունված 2009թ. հուլիսի 16-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=107604

հանձնաժողով, որը յուրաքանչյուր անհամապատասխանության նկատմամբ կցուցաբերի անհատական մոտեցում և արդյունքում հիմնավորված ու ամբողջական որոշում կկայացնի՝ ապահովելով համաչափ մոտեցումներ:

iii. *Մաքսային վճարներ*

ՀՀ-ում գործող մաքսային վճարները հետևյալն են[93].

- ներմուծման մաքսատուրքը.
- արտահանման մաքսատուրքը.
- ավելացված արժեքի հարկը, որը գանձվում է Մաքսային միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման ժամանակ.
- ակցիզային հարկը, որը գանձվում է Մաքսային միության մաքսային տարածք ենթաակցիզային ապրանքների ներմուծման ժամանակ.
- մաքսավճարները:

Հանքարդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունները, արտադրանքը արտահանելիս, վերոնշյալից վճարում են, մասնավորապես, մաքսավճարներ:

Մաքսավճարը Մաքսային միության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է[94], որը հաշվարկվում և գանձվում է մասնավորապես հետևյալ դրույքաչափերով[95].

- ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների (ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի) մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների զննման և հաշվառման) համար գանձվում է 3,500 դրամ մաքսավճար:
- Ապրանքների զննման և հաշվառման համար, բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների, մաքսավճար գանձվում է՝
  - միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա կշիռ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1,000 դրամ.
  - միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մեկ տոննայից ավելի կշիռ ունեցող ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար՝ 300 դրամ:

(iii) Տեղական ինքնակառավարման մարմիններին վճարվող վարձակալության վճար

[93] «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-241-Ն (ընդունված 2014թ. դեկտեմբերի 17), հոդ. 89(1), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121889
[94] *Ibid.*, հոդ. 95
[95] *Ibid.*, հոդ. 97

Համայնքային բյուջեներ ուղղվող ֆինանսական հոսքերի բաղկացուցիչ մասն են կազմում տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ «ՏԻՄ») վճարվող վարձակալության վճարները [96], որոնք փոխանցվում են ՏԻՄ-երի բյուջեներ վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող հողի, շինությունների և մեքենաների վարձակալության դիմաց:

Այս հարաբերություններն իրենց էությամբ քաղաքացիաիրավական հարաբերություններ են, որոնք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[97], իսկ հողի վարձակալության դեպքում նաև՝ ՀՀ հողային օրենսգրքով:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող ու պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով[98] վարձակալության (կամ կառուցապատման) իրավունքով տրամադրում են համայնքների ղեկավարները [99] ՝ (հրապարակային սակարկությունների միջոցով)[100]: Մրցույթների անցկացման ձևը (մրցութային հանձնաժողովների միջոցով)[101] և կարգը[102] կարգավորվում են օրենսդրությամբ (օրենսդրությունը լեռնահատկացման սահմաններում ընդգրկված հողամասերի նկատմամբ նախատեսում է նաև առանց մրցույթ հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրում[103]):

Հողային օրենսգիրքը որոշակի սահմանափակումներ է նախատեսում պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալության ժամկետների և այլ էական պայմանների առնչությամբ: Այսպես, նման հողամասերի վարձակալությունը չի կարող գերազանցել 99 տարին[104], իսկ տարեկան վարձավճարի (կամ կառուցապատման իրավունքի վճարի) չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից[105]: ՀՀ կառավարությունը սահմանել է նաև պետության

---

[96] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-337 (ընդունված 2002թ. մայիսի 7), հոդ. 86(1)(3)(ա)-(բ): Վերջինս սահմանում է՝

> *«Համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերից, այդ թվում՝*
>
> *3) այլ եկամուտներ, այդ թվում՝*
>
> *ա. համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ,*
>
> *բ. համայնքի սեփականություն համարվող հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից առաջացած եկամուտներ»*:

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143946

[97] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հղում 49, հոդ. 606-628, 645-659

[98] Հողային օրենսգիրք, հղում 47, հոդ. 48(4) և 76(3)

[99] *Ibid.*, հոդ. 76(2)

[100] *Ibid.*, հոդ. 48(4)

[101] *Ibid.*, հոդ. 77

[102] *Ibid.*, հոդ. 78

[103] ՀՀ կառավարության որոշում թիվ N 286 (ընդունված 2001թ. ապրիլի 12-ին), Հավելված, հոդված 46.2(թ), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72502

[104] Հողային օրենսգիրք, հղում 47, հոդ. 48(3)

[105] *Ibid.*, հոդ 81(3)

և համայնքների սեփականության հողամասերի վարձակալության պայմանագրերի օրինակելի ձևերը[106]: Չնայած վերոգրյալին՝ վարձավճարի ձևավորման որևէ բանաձև կամ սկզբունքների ամբողջություն (բացառությամբ նվազագույն շեմի սահմանման) օրենսդրական մակարդակով սահմանված չէ, որպիսի պայմաններում վարձավճարի սահմանման հարցում ՏԻՄ հայեցողությունը դառնում է որևէ կերպ չսահմանափակված, ինչը կարող է հավանական չարաշահումների առիթ հանդիսանալ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նպատակահարմար ենք համարում առնվազն գնագոյացման ելակետային սկզբունքների սահմանումը առնվազն այն դեպքերում, երբ նման հողերի վարձակալությունը կենսական նշանակություն կարող է ունենալ արդեն իսկ տրամադրված թույլտվության շրջանակներում ընդերքօգտագործման իրավունքի իրացման համար՝ ներդրումային առողջ միջավայրի պահպանման նպատակով:

Պետական սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարների, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների մուտքագրումը համայնքի բյուջե ինքնուրույն ապահովում են համայնքների համապատասխան ստորաբաժանումները[107]՝ համայնքի ղեկավարի ղեկավարության և վերահսկողության ներքո[108]: Գործընթացն առավել բարձր մակարդակում վերահսկում են մարզպետները[109]:

(iv) Ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք

Ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար սահմանված է (յուրաքանչյուրի համար) 1,000 ՀՀ դրամ պետական տուրք ֆիզիկական անձանց դեպքում, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ պետական տուրք[110], որը ենթակա է վճարման ոչ ուշ, քան ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից թույլտվության տրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման հայտը բավարարելու մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում[111]:

2.1.3 Ոլորտում իրավասություն ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց լիազորությունները

(i) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Որպես նախաբան, հարկ ենք համարում ընդգծել, որ 2019 թվականին պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է պետական կառավարման համակարգի մարմինների կրճատում: Արդյունքում, «Կառավարության

[106] ՀՀ կառավարության որոշում թիվ N 286 (ընդունված 2001թ. ապրիլի 12-ին), Հավելված, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=72502
[107] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 96
[108] *Ibid.*, հոդ.38(1)(3)
[109] Հողային օրենսգիրք, հոդված 47, հոդ. 42(1)(3)
[110] «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 45, հոդ. 19.4(7)
[111] Ջրային օրենսգիրք, հոդված 28, հոդ. 46

կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի (ընդունված 08 մայիսի 2019 թվականին) համաձայն, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունն ու տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպել են՝ ստեղծելով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Հաշվի առնելով վերոգրյալը և նախարարության անվանման հետ կապված թյուրըմբռնումներից խուսափելու համար, սույն Զեկույցում մենք կօգտագործենք ներկայումս գործող անվանումը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն կամ *ՏԿԵՆ*:

Օրենսգրքի տեսանկյունից հանդիսանալով ընդերքօգտագործման ոլորտում ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմին՝ ՏԿԵՆ-ը կենտրոնական դեր է կատարում ընդերքօգտագործման ոլորտի կարգավորման հարցում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը մասնավոր սուբյեկտների հետ ընդերքօգտագործման առնչությամբ հարաբերություններում:

Հաշվետու տարվա ընթացքում հանքարդյունաբերության ոլորտում ՏԿԵՆ իրավասություններում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել և դրանք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ (i) քաղաքականությունների և իրավական ակտերի մշակմանն առնչվող իրավասություններ, [112] (ii) ընդերքօգտագործման հարաբերությունների առնչությամբ իրականացվող իրավասություններ, [113] (iii) տեղեկատվության հավաքման, պահպանման, տարածմանն առնչվող իրավասություններ, [114] և (iv) փորձաքննություններին առնչվող իրավասություններ[115]:

ՏԿԵՆ առանձնացված ստորաբաժանումներից է Ընդերքի գործակալությունը, որի կանոնադրությունը և կառուցվածքը սահմանվել են ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 7-ի թիվ 1108-Ն որոշմամբ: 2019 թվականին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների արդյունքում վերջինս վերակազմավորվել է ՀՀ ՏԿԵՆ ընդերքի վարչության (այսուհետ՝ «Վարչություն»): Վարչության կանոնադրությունը և կառուցվածքը սահմանվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019թ. հունիսի 19-ի N 162-Ա հրամանով [116]:

Հրամանի համաձայն, Վարչությունը ՏԿԵՆ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը մշակում է առաջարկություններ և իրականացնում է ՏԿԵՆ քաղաքականությունն ընդերքօգտագործման բնագավառում, ապահովում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը սահմանված պահանջներին համապատասխան, ընդերքի մասին

[112] Օրենսգիրք, հոդված20, հոդված 17(1)(1), 17(1)(3), 17(1)(4), 17(1)(10) և 17(1)(6)
[113] *Ibid.*, հոդված 17(1)(20), 17(1)(18), 17(1)(5), 17(1)(12), 17(1)(11), 17(1)(9), 17(1)(14), 17(1)(18)-(19)
[114] *Ibid.*, հոդված 17(1)(8), 17(1)(13) և 17(1)(15)
[115] *Ibid.*, հոդված 17(1)(7), հոդված 17(1)(2): Դրույթն ուժը կորցրել է «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-186-Ն (ընդունված 2018թ. մարտի 21-ին) ՀՀ օրենքի ուժով: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120746, 17(1)(14) և 17(1)(17):
[116] ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019թ. հունիսի 19-ի N 162-Ա հրաման, հասանելի է հետևյալ հղումով՝ www.mtad.am/u_files/file/կանոնադրություն2019/5Ynderqi_varchutyan_kanon_+.pdf

երկրաբանական և այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության, Նախարարության իրավասության սահմաններում ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորման, Նախարարության իրավասության սահմաններում ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության աշխատանքների իրականացումը, նպաստում է ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը:

Վարչության խնդիրներն են՝

- ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը.
- ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջների ապահովումը.
- ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելը.
- ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության ապահովումը.
- Վարչության իրավասության սահմաններում ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորման ապահովումը.
- Վարչության իրավասության սահմաններում ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովումը:

Հրամանով մանրամասն սահմանվում են նաև Վարչության խնդիրների իրականացման համար վերջինիս գործառույթները:

Վարչության կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- Ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժին.
- Ընդերքաբանական փորձաքննության բաժին.
- Ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժին.

Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, որին «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը:

(ii) «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ

ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1758-Ն որոշմամբ ստեղծվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Առաջին զեկույցում մանրամասն անդրադարձ է կատարվել ՊՈԱԿ-ի նպատակներին և գործառույթներին, և մենք հաստատում ենք, որ հաշվետու տարում որևէ փոփոխություններ չեն կատարվել որոշման մեջ: Միևնույն ժամանակ, 23 հունվարի 2020 թվականին փոփոխություններ և

լրացումներ[117] են կատարվել նշված որոշման մեջ, համաձայն որոնց ՊՈԱԿ-ի գործառույթներին ավելացել են մի շարք գործառույթներ, մասնավորապես.

- հանքավայրերն ըստ մարզերի, օգտակար հանածոների տեսակների (այդ թվում՝ ստորերկրյա հանքային ջրերի) դասակարգումը՝ մարզի ներուժի հետագա աճի կամ սահմանափակումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմամբ՝ լիազոր մարմնի ղեկավարին.
- ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնվածության վերաբերյալ վերլուծության իրականացումը՝ ըստ մարզերի, օգտակար հանածոների տեսակների (այդ թվում՝ ստորերկրյա հանքային ջրերի) և դրանց փոփոխությունն ըստ տարիների՝ լիազոր մարմնի ղեկավարին պաշարների հետագա օգտագործման տրամադրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմամբ.
- օգտակար հանածոների պաշարների քանակական շարժի՝ ըստ մարզերի, տարիների, օգտակար հանածոների տեսակների վերլուծումը՝ նոր օգտակար հանածոների պաշարների ուսումնասիրման կամ արդեն իսկ հաստատված պաշարների շահագործման նպատակահարմարության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարին առաջարկությունների ներկայացմամբ՝ կապված օգտակար հանածոների պաշարների քանակական ծավալների փոփոխության հետ.

2016թ. երկրորդ կիսամյակից ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի շրջանակներում 2016-2017թթ. իրականացվեց ֆոնդային նյութերի (շուրջ 12,000 հաշվետվություն և այլ նյութեր) թվայնացում և հանրայնացում: Թվայնացված նյութերը տեղադրված են https://www.geo-fund.am պաշտոնական կայքում: Հարկ է նշել, որ տվյալ հաշվետվության պատրաստման պահին Հանրապետական երկրաբանական ֆոնդի պաշտոնական կայքէջի որոշ հատվածներ թարմացված չէ:

(iii) ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի (ընդունված 08 մայիսի 2019 թվականին) համաձայն, ՀՀ բնապահպանության նախարարությունը վերակազմավորվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության: Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով նախարարության անվանման հետ կապված թյուրըմբռնումներից խուսափելու անհրաժեշտությունից՝ սույն օգտագործվում է ներկայումս գործող ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ «***ՇՄՆ***») անվանումը:

ՇՄՆ-ն նույնպես ելակետային դերակատարություն ունի ընդերքօգտագործման ոլորտում: ՇՄՆ ոլորտին առնչվող իրավասությունները սահմանվում են Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում, և դրանք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ (i) քաղաքականությունների և

[117] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138453

իրավական ակտերի մշակման [118], (ii) տեխնիկական պահանջների, չափորոշիչների, սահմանաչափերի որոշման [119], (iii) փորձաքննությունների և վերահսկողության [120], (iv) տեղեկատվության տնօրինման [121] և (v) դրամագլխի տնօրինման հետ առնչվող իրավասություններ[122]:

Համայնքների տարածքներում իրականացվող բնապահպանական ծրագրերի համաձայնեցում. Հաշվետու ժամանակահատվածում գործող խմբագրությամբ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է մի շարք ընկերությունների (ներառյալ ընդերքօգտագործման մեջ ներգրավված ընկերությունների) կողմից վճարվող բնապահպանական հարկերից մասհանումներ իրականացնելու և դրանք ազդակիր համայնքների բյուջեների վարչական մասում արտացոլելու ընթացակարգ [123], որի համաձայն, բնապահպանական հարկերից համայնքների վարչական բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար[124]: Նման ծրագրերը, որոնք մշակվում են համայնքի ղեկավարների կողմից, համաձայնեցվում են ՇՄՆ-ի (ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության) հետ[125]:

ՀՀ ՇՄՆ կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի թիվ N 745-Լ որոշմամբ [126] հաստատված նախարարության կանոնադրության 10-րդ հոդվածով սահմանվում են նախարարության նպատակներն ու խնդիրները.

> ա) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի պահպանության, բարելավման, դրա վրա բնական կամ մարդածին բացասական և վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումն ու իրականացումը.
>
> բ) կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված, ներառյալ՝ հարմարվողականության ոլորտի, Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումն ու իրականացումը.

---

[118] Օրենսգիրք, հոդում 20, հոդված 17(2)(5), 17(2)(7), 17(2)(8), 17(2)(12) և 17(2)(14)
[119] *Ibid.*, հոդված 17(2)(9)- 17(2)(11)
[120] *Ibid.*, հոդված 17(2)(3), 17(2)(6)
[121] *Ibid.*, հոդված 17(2)(13)
[122] *Ibid.*, հոդված 17(2)(4)
[123] «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-188 (ընդունված 2001թ. մայիսի 15-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=25676
[124] *Ibid.*, հոդ. 2
[125] *Ibid.*, հոդ. 3
[126] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136952

գ) բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման, վերականգնման և վերարտադրության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումն ու իրականացումը.

դ) շրջակա միջավայրի պահպանությունը տնտեսական, սոցիալական և այլ ոլորտներում ինտեգրելու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումը.

ե) շրջակա միջավայրի ու բնական պաշարների վիճակի, բնական երևույթների, մարդածին ազդեցության հետևանքով շրջակա միջավայրի փոփոխությունների դիտարկումը, բացահայտումը և գնահատումը.

զ) էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության մշակումն ու իրականացումը, մասնակցությունը էկոլոգիական կրթության և գիտության քաղաքականության մշակմանը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության ոլորտի քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակումը և դրանց իրականացման գործընթացի ապահովումն ու վերլուծությունը[127].

բ) շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացումը և փորձաքննական եզրակացության տրամադրումը[128].

(iv) «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հաշվետու տարվա ընթացքում գործել է «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի գործունեության առարկան և նպատակը մանրամասնորեն ներկայացվել է Առաջին Զեկույցի ժամանակ[129]:

[127] 11 հունիսի 2018 թվականի թիվ N 745-Լ ՀՀ կառավարության 2002թ. 8 օգոստոսի թիվ 1237-Ն որոշմամբ հաստատված նախարարության կանոնադրության 11-րդ հոդվածի 1-ին մաս

[128] *Ibid.*, Հոդված 11(16)

[129] «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության առարկային և նպատակին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 144-րդ էջում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf:

Սակայն, ՀՀ կառավարության 30 հունվարի 2020 թվականի թիվ N 81-Ն որոշման համաձայն «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն», «Անտառային մոնիթորինգի կենտրոն» և «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության[130], որը հանդիսանում է թվարկված կազմակերպությունների իրավահաջորդը[131]:

Նորաստեղծ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

- շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ու անտառների, հողերի և ընդերքի պահպանության և բնական ռեսուրսների (բացառությամբ՝ օգտակար հանածոների պաշարների) բանական օգտագործման ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի բաղադրիչների և դրանց վրա ազդող գործոնների նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման համար բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով.

- հիդրոօդերևութաբանական տարրերի (մթնոլորտային ճնշում, քամի, խոնավություն, օդի և ջրի ջերմաստիճան, ջրի մակարդակ և ծախս, հորդացում, սառցակալում և այլն) և պրոցեսների վիճակը բնորոշող տեղեկատվության ստանալը՝ դիտարկումների իրականացման, ստացված տեղեկատվության ուսումնասիրության, օգտագործման, տրամադրման, պահպանման և վիճակի գնահատման ու կանխատեսման միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների ու ռադիոլոկացիոն դիտարկումների կազմակերպման և իրականացման ապահովումը:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության խնդիրներն են՝

- պլանավորված, միջազգային ստանդարտներին ու միասնական ցուցանիշներին համապատասխան շրջակա միջավայրի և հիդրոօդերևութաբանական գործունեության մոնիթորինգի ապահովումը.
- շրջակա միջավայրի և հիդրոօդերևութաբանական երևույթների ու պրոցեսների նկատմամբ դիտարկումների իրականացման, դրանց վիճակի մասին հավաստի տեղեկատվության ստացման, ստացված տեղեկատվությունը միասնական տեղեկատվական շտեմարաններում (ֆոնդում) ներբեռնման և պետական մարմիններին, հասարակական

[130] «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքը հասանելի է հետևյալ հղումով՝ http://armmonitoring.am/#home
[131] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138543

կազմակերպություններին ու հասարակությանը տեղեկատվության տրամադրման ապահովումը.

- Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրի վիճակի աղտոտվածությամբ պայմանավորված և վտանգավոր ու տարերային հիդրոօդերևութաբանական երևույթներից բնակչության և տնտեսության պաշտպանությանը, քաղաքացիների կյանքին ու սեփականությանն սպառնացող վտանգի վերաբերյալ ահազանգման համակարգի ապահովումը.
- շրջակա միջավայրի և հիդրոօդերևութաբանական գործունեության համակարգերի կատարելագործման, դիտացանցերի ու նյութատեխնիկական բազայի զարգացման, ժամանակակից տեխնիկական միջոցների ու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, տեխնիկական միջոցների շահագործման և ընթացիկ նորոգման, մասնագիտական չափիչ-ստուգիչ սարքերի և այլ չափման միջոցների ստուգաչափման ու չափաբերման գործընթացի ապահովումը.
- թափոնների և դրանց հեռացման վայրերի դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացման և բացասական ազդեցությունների վերհանման ապահովումը:

(v) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի թիվ 1846-Ն որոշմամբ, որի գործունեության առարկան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության բնագավառում լիազոր մարմնի գործունեության ապահովումն ու փորձաքննական կենտրոնի լիազորությունների կատարումն է[132]: ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարի 2015 թ.. թիվ 14-Ա որոշմամբ:

(vi) ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»

ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը ստեղծվել է 2010թ. ՀՀ կառավարության №1191-Ն որոշմամբ [133] ՝ նախկինում գործած «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի բազայի վրա, որն էլ «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման» ԾԻԳ պետական հիմնարկի իրավահաջորդն ու գործունեության շարունակողն էր: Վերջինիս կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 13 հունվարի 2011թ. թիվ 9-Ն որոշմամբ[134]:

Հիմնարկի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումն է: Հիմնարկի

[132] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի լիազորություններին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 146-րդ էջում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf:

[133] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=93665

[134] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67015

գործունեության հիմնական ոլորտներն են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության և տարածքային կառավարման մարմինների շրջակա միջավայրի ոլորտի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու և դրամաշնորհային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերը և աշխատանքները[135]:

(vii) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն (այսուհետ՝ «ԱԻՆ») արտակարգ իրավիճակների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն է: Օրենսգրքի համաձայն այն օժտված է մի շարք լիազորություններով, որոնք վերաբերվում են օգտակար հանածոյի արդյունահանման նախագծերի տեխնիկական անվտանգության փորձաքննություններին, ինչպես նաև, այսպես կոչված, արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման գործընթացին:

Այսպես, Օրենսգրքի համաձայն օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումին կից օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության, որը կազմակերպվում է ԱԻՆ-ի կողմից՝ ՏԿԵՆ կողմից նախագիծը ստանալուց հետո 60-օրյա ժամկետում: Նախագծի առնչությամբ ԱԻՆ-ը տրամադրում է փորձաքննական եզրակացություն[136]:

Ինքնին փորձաքննություն իրականացնում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և ԱԻՆ-ի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը[137]՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգի» համաձայն[138]:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը գործում է ԱԻՆ ենթակայության ներքո, որը ՊՈԱԿ-ի կառավարման լիազոր մարմինն է: ՊՈԱԿ-ի գործունեության հիմնական առարկան և նպատակը արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման գործառություններ կազմակերպելն ու իրականացնելն է: Վերջինիս գործառույթները և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների անցկացման կարգը կարգավորվում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով:

---

[135] ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի ծրագրերին և խնդիրներին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 147-148 էջերում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf:

[136] Օրենսգիրք, հոդված 20, հոդված 51(2)(1)

[137] Տե՛ս «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-204-Ն (2005թ. հոկտեմբերի 24), հոդված 11(1)

[138] ՀՀ կառավարության որոշում թիվ 1359-Ն (ընդունված 2011թ. սեպտեմբերի 22-ին)

(viii) Բացի այդ, Օրենսգրքի համաձայն բոլոր ընդերքօգտագործողները, նախքան ընդերքօգտագործման գործունեության մեկնարկը, պարտավոր են մշակել արտակարգ իրավիճակներում գործելու պլան՝ նշելով այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու վթարների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանը, իրենց աշխատակիցների և հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանությանը[139][140]: *Առողջապահության նախարարություն*

ՀՀ առողջապահության նախարարությունը, որպես առողջապահության ոլորտի լիազոր մարմին, ունի որոշակի իրավասություններ որոնք առնչվում են արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակմանը ու վերանայմանը: Այսպես, Օրենսգրքի համաձայն Առողջապահության նախարարությունը կարող է մասնակցել արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ու վերանայման գործընթացին[141]: Այս նպատակով ԱԻՆ-ը Առողջապահության նախարարությանը տեղեկացնում է համապատասխան աշխատանքների իրականացման մասին՝ տրամադրելով տեղեկություններ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու ընթացակարգի և այն լիազոր մարմինների մասին, որոնք պետք է ներգրավվեն գործընթացին:

Վթարների պարագայում ընդերքօգտագործողները պարտավոր են անհապաղ Առողջապահության նախարարությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մարդու առողջության համար նման վթարների հետևանքները նվազեցնելու նպատակով[142]:

(ix) *Պետական եկամուտների կոմիտե*

ՀՀ Նախագահի 2016թ. մարտի 1-ի ՆՀ-213–Ն հրամանագրով ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպվեց՝ դրանից առանձնացնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն: Մինչ այդ (սկսած 2014թ.-ից) վերջինիս գործառույթներն իրականացրել է ՀՀ ֆինանսների նախարարությունը: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի ապրիլի 9-ից գործում է որպես Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ):

ՊԵԿ-ը Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակմանը: Վերջինիս գործառույթների մեջ, ի թիվս այլոց, մտնում է

[139]Օրենսգիրք, հոդվ 20, հոդված 60.6(3)(2)
[140] Պլանի նպատակներին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 149-150 էջերում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf
[141] *Ibid.*, հոդ. 60.6(9)
[142] *Ibid.*, հոդ. 60.6(7)

պետական հարկերի և վճարների հավաքագրման կազմակերպումը, հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների, ուսումնասիրությունների և օրենքով նախատեսված այլ հսկողական գործողությունների իրականացումը, կոմիտեի իրավասության սահմաններում՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերի, վճարների, մաքսային վճարների հաշվարկման, գանձման և ժամանակին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման նկատմամբ հսկողության իրականացումը:[143]

(x) Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարության **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը** ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշմամբ[144], որով սահմանվել է նաև տեսչական մարմնի կանոնադրությունը (այն փոխարինել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունը): 2018 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ կառավարությանն անմիջապես ենթակա Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, որի կարգավիճակը սահմանված է օրենքով[145]: Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է: Անհրաժեշտ է նշել, որ Տեսչական մարմինը բնապահպանության և ընդերքի բնագավառներում Կառավարության՝ ստուգումներ իրականացնող գործիքն է, որի հավաքագրած տեղեկատվության հիման վրա էլ գործում են ՏԿԵՆ-ը և Շրջակա միջավայրի նախարարությունը:

Տեսչական մարմնի կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի խնդիրներն են՝

1) բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

---

[143] ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N702-Լ որոշում, 12-րդ կետ

[144] ՀՀ կառավարության որոշում թիվ 445-Ն (ընդունված 2017թ.ապրիլի 27-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/28550/

[145] «Պետական կառավարման մարմինների մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-260-Ն (23 մարտի 2018թ.): Կանոնադրությունը հաստատված է ՀՀ վարչապետի թիվ 733-Լ որոշմամբ (11 հունիսի 2018թ.), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124383

2) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմնի լիազորություններն ամրագրված են կանոնադրության երրորդ գլխով:

Տեսչական մարմնի կանոնադրության 14-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը և տեսչական մարմնի կառավարման խորհուրդը, որը կազմված է տասն անդամից:

(xi) Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ընդերքի օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության և ֆինանսական բնագավառներում որոշակի իրավասություններով են օժտված նաև տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ «ՏԻ մարմիններ»): Վերջիններիս իրավասությունները պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի՝ ըստ ստորև ներկայացված աղյուսակի:

Բնապահպանական հարցեր. Օրենսգրքի համաձայն ռեկուլտիվացիայի՝ ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների) ծրագիրը, որը պետք է ներառվի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից, պետք է ներկայացվի համայնքի ղեկավարի համաձայնությանը[146]:

Տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված են իրավասություններ նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով[147][148]:

Հողօգտագործման իրավունքի տրամադրում. Ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը հանքարդյունահանման աշխատանքները չի կարող սկսել առանց տվյալ տարածքի համապատասխան սեփականատիրոջ համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի: Եթե հողատարածքը պատկանում է համայնքին, ապա համայնքի ավագանու որոշմամբ, համայնքի ղեկավարը ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ կնքում է հողօգտագործման պայմանագիր[149]:

Հատկանշական են նաև հողերի նպատակային նշանակության վերաբերյալ կարգավորումները: ՀՀ-ում հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության (որոշակի նպատակների համար հողերի օգտագործման և շահագործման պայմանների, հատկանիշների և առանձնահատկությունների համալիր[150]) դասակարգվում են 9 խմբի՝ գյուղատնտեսական, բնակավայրերի, արտադրական

[146] Օրենսգիրք, հղում 20, հոդված 17(3)(2)

[147] Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 153 էջում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf

[148] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-110-Ն (2014թ. հունիսի 21), հոդ. 13

[149] Օրենսգիրք, *supra* հղում 20, հոդ. 17(3)(1):

[150] Հողային օրենսգիրք, հղում 47 հոդված 7(1):

(ներառյալ՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման), ենթակառուցվածքների օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների, հատուկ նշանակության, անտառային, ջրային և պահուստային հողերի[151]:

Հողերի նպատակային նշանակությունն սահմանվում է համայնքի գլխավոր հատակագծով[152], որը մշակվում է համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ նախագծային կապալի պայմանագրով[153] և հաստատվում է համայնքի ավագանու կողմից[154]:

Ի լրումն վերոգրյալի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշմամբ սահմանվել է, որ մինչև համայնքի գլխավոր հատակագծի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց, իսկ հողամասերի օգտագործման (վարձակալության) կամ կառուցապատման մասին պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, հողամասերի նկատմամբ համապատասխան իրավունքներ ունեցող սուբյեկտների նախաձեռնությամբ, հողերի նպատակային նշանակության փոփոխությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաստատում է համայնքի ավագանին՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:[155]

Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու նպատակով վերջինիս սեփականատերը դիմում է համայնքի ղեկավարին, որը հարցի առնչությամբ կայացնում է որոշում [156] : Այսպիսով՝ գործընթացում էական դերակատարություն ունի համայնքի ղեկավարի հայեցողությունը, ինչը չի կարող դրական համարվել ընդերքօգտագործման ոլորտի և ընդհանրապես ներդրումային միջավայրի զարգացման համար:

Մինչդեռ, այն դեպքերում, երբ համայնքն ունի հաստատված գլխավոր հատակագիծ առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ առաջարկությունը համայնքի ղեկավարը ներկայացնում է լիազոր մարմին, ընդ որում, համակցված փաստաթղթի դեպքում համապատասխան համայնքի ղեկավարն այն ներկայացնում է մարզպետին, որն

[151] *Ibid.*, հոդված 6(1):
[152] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-217 (05 մայիսի 1998թ.), հոդված 14³(2), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140929:
[153] *Ibid.*, հոդված 14³(24):
[154] *Ibid.*, հոդված 14³(9):
[155] ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135744
[156] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-217 (05 մայիսի 1998թ.), հոդված 14³(12):

ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ իր դրական եզրակացության հետ միասին ներկայացնում է ՀՀ քաղաքաշինության կոմիտե[157]:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն վերևում նշված առաջարկություններն ուսումնասիրում է և իր կողմից քաղաքաշինական խնդիրներին առնչվող մասով առարկություններ չունենալու դեպքում, ներկայացնում է նաև տվյալ հարցին առնչվող պետական կառավարման մարմին (մարմիններ)[158] և (կամ) համապատասխան մարզպետին՝ կարծիքի:

Առանձին հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները համապատասխան մարմինների կողմից կարող են հաստատվել միայն միջգերատեսչական հանձնաժողովի[159] դրական եզրակացության առկայության դեպքում: Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը տրվում է, եթե համաձայնեցման ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ պետական կառավարման մարմինների, համապատասխան մարզպետի և կազմակերպությունների (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ) կարծիքները դրական են: Այն դեպքերում, երբ առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության առաջարկությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացվել է համաձայնեցման միայն հարցին առնչվող մարմնին (մարմիններին), միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ուժի մեջ է մտնում՝ շահագրգիռ մարմիններին վերջինիս օրինակը ներկայացնելու օրվանից 7 աշխատանքային օր հետո, եթե այդ ժամկետում շահագրգիռ մարմիններից գրավոր առարկություն չի ստացվում:

Այն դեպքում, երբ շահագրգիռ մարմիններից ստացվել են համապատասխան իրավական ակտերի կոնկրետ դրույթներին հղումներ պարունակող բացասական կարծիքներ (դիտողություններ և առաջարկություններ), ՀՀ քաղաքաշինության կոմիտեն նախագիծը վերադարձնում է լրամշակման, կցելով՝ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփ տեղեկանքը: Եթե կրկին ներկայացված փաստաթղթում հաշվի են առնված բոլոր դիտողությունները և առաջարկությունները, փաստաթղթի վերաբերյալ կազմվում է դրական եզրակացություն: Այն դեպքում, երբ լրամշակված նախագծում ընդունվել են ոչ բոլոր դիտողությունները կամ

[157] «ՀՀ համայնքների գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգ», կետ 11, ՀՀ կառավարության որոշում թիվ 1920-Ն (29 դեկտեմբերի 2011), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135745:

[158] *Ibid.*, Սույն որոշման համաձայն պետական կառավարման մարմիններ են համարվում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեն, ՀՀ ոստիկանությունը

[159] Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 22 դեկտեմբերի 2009 թվականի N 1064-Ա որոշմամբ: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133689

փոփոխությունները կատարվել են մասնակիորեն, լիազոր մարմինը լրամշակված փաթեթը համաձայնեցնում է բացասական կարծիք ներկայացրած շահագրգիռ մարմնի (մարմինների) հետ:

Լրամշակված փաստաթղթերի վերաբերյալ կրկին բացասական կարծիք (կարծիքներ) ստանալու կամ վերևում նշված՝ դրական եզրակացության վերաբերյալ առարկություն ներկայացվելու դեպքում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ բացասական կարծիքը (առարկությունը) սույն կարգի պահանջներին համապատասխան հիմնավորված լինելու դեպքում, փաթեթը վերադարձնում է իրավասու մարմնին՝ կցելով մերժման հիմքերը կամ, անհրաժեշտ հիմնավորման բացակայության դեպքում՝ հարցը ներկայացնում է միջգերատեսչական հանձնաժողովի առաջիկա նիստի քննարկմանը:

Հանձնաժողովի նիստում հարցի վերաբերյալ միասնական կարծիք չձևավորելու դեպքում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ամփոփում է կարծիքները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի առաջիկա նիստում զեկուցելու համար: Նախարարական կոմիտեի որոշումը հիմք է հարցի վերաբերյալ հանձնաժողովի վերջնական որոշումն ընդունելու համար:

Առանց միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և (կամ) դրանց փոփոխությունները առ ոչինչ են:

Ֆինանսական հարցեր. ՏԻ մարմիններն օժտված են նաև որոշակի իրավասություններով ֆինանսական բնագավառում: Մասնավորապես, համայնքի ղեկավարը կազմակերպում է տեղական հարկերի (անշարժ գույքի հարկ, փոխադրամիջոցների գույքահարկ[160]), տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը, ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը (օրենսդրի կողմից նախատեսված թույլատրելի սահմաններում), չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ[161]:

Սոցիալ-տնտեսական հարցեր. Թեև ընդերքօգտագործողների կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների առաջնային շահառուներն են հանդիսանում ազդակիր համայնքները (հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքը), սակայն օրենսդրությունը որևէ հստակ մեխանիզմ չի արձանագրում ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական պարտավորությունների շրջանակի ձևավորման և հստակեցման գործընթացում համայնքը ներկայացնող ՏԻ մարմինների մասնակցության համար:

[160] Հարկային օրենսգիրք, հոդում36, հոդ. 6(1)(2)
[161] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-337 (2002թ. մայիսի 7), հոդ. 38(1)(3)-(4)

2.1.4 Պետության կողմից հանքարդյունաբերական կազմակերպություններին տրվող արտոնություններ

ՀՀ օրենսդրությամբ հանքարդյունաբերական ընկերություններին տրվող հատուկ արտոնություններ սահմանված չեն: Օրենսդրությունը, սակայն, նախատեսում է մի շարք հարկային և մաքսային արտոնություններ, որոնցից կարող են օգտվել ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունները, այդ թվում՝ ընդերքօգտագործողները: Նման արտոնությունների տրամադրման իրավասությունը, որպես կանոն, գտնվում է ՀՀ կառավարության իրավազորության տիրույթում: Հիշատակման արժանի են, մասնավորապես, ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման և գերակա ճանաչված ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումները մաքսատուրքից ազատելու արտոնությունները:

Ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգում. Հարկային օրենսգիրքը սահմանում է ներդրումային ծրագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի հետաձգելու ընթացակարգ՝ Կառավարությանը պատվիրակելով ներդրողների ընտրության կարգը սահմանելու լիազորությունը: Հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասում.

> *«[ՀՀ] կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում […] ապրանքների ներմուծման մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով: Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:*

Վերոգրյալ դրույթի հիման վրա ՀՀ կառավարությունը 2017թ. հոկտեմբերի 5-ին ընդունել է թիվ 1225-Ն որոշումը, որով սահմանել է «Ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը»[162]:

Գնահատման ընթացքում կիրառվող չափանիշներին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 155-րդ էջում :

Գերակա ճանաչված ոլորտներում ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ազատում մաքսատուրքից. 2015թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ կառավարությունը, օգտվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրի՝ Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին թիվ 6 հավելվածով տրամադրված

[162] ՀՀ կառավարության որոշում թիվ 1225-Ն (2017թ. հոկտեմբերի 5-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119820

հնարավորությունից, ընդունեց թիվ 1118-Ն որոշումը[163]: Որոշմամբ սահմանվող ընթացակարգի համաձայն՝ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում բացառապես ՀՀ տարածքում օգտագործելու համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի (այսուհետ՝ «սարքավորումներ և նյութեր») ներմուծումն ազատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից:

Նման սարքավորումները և նյութերը ազատվում են մաքսատուրքից, եթե դրանք չեն արտադրվում ԵԱՏՄ անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով) կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին:

Մաքսատուրքից ազատվելու վերաբերյալ հայտերը ներկայացվում են Կառավարություն՝ հայտի մեջ ներառելով ներդրումային ծրագիրը, սարքավորումների և նյութերի ցանկը և տեխնոլոգիական բնութագիրը և հայտարարություն՝ ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված կամ ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները և նյութերը բացառապես ՀՀ տարածքում օգտագործելու վերաբերյալ[164]:

Հայտի առնչությամբ կարծիք են տրամադրում ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՊԵԿ-ը և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան ոլորտային նախարարությունը[165]: Ներկայացված կարծիքներն ամփոփվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, որը պատրաստում է եզրակացություն և ներկայացնում այն ՀՀ վարչապետի աշխատակազմ[166] (Արդարադատության նախարարությունն, իր հերթին, էկոնոմիկայի նախարարության եզրակացության առնչությամբ տալիս է կարծիք[167]):

Ներդրումային ծրագրերի գնահատման չափանիշները սահմանված են ըստ Կառավարության թիվ 1118-Ն որոշմամբ[168], և դրանց կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 156-157 էջերում:

Ի հավելումն ներկայացված արտոնությունների՝ ՀՀ հարկային օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագիր

---

[163] ՀՀ կառավարության որոշում թիվ 1118-Ն (2015թ. սեպտեմբերի 17), Հավելված 1, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116976

[164] *Ibid.*, կետեր 4 և 5

[165] *Ibid.*, , Հավելված 1, կետ 7: Որոշումը հիշատակում է նաև ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, որը, սակայն, այլևս գոյություն չունի. 2018թ. մարտի 23-ին ընդունված և 2018թ. ապրիլի 9-ից գործող «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի (թիվ ՀՕ-253-Ն) համաձայն, այս նախարարությունն այլևս գոյություն չունի և դադարել է գործել ՀՀ վարչապետի աշխատակազմի ստեղծման ուժով: Սակայն Կառավարության որոշումը դեռևս չի վերախմբագրվել: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում նշված գերատեսչության լուծարմամբ առաջացող բոլոր հարցերը. այն միայն նշում է, որ *«Վարչապետի աշխատակազմը միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության իրավահաջորդն է միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու մասով»* (20-րդ հոդված, 5-րդ մաս):

[166] *Ibid.*, կետ 9

[167] *Ibid.*, կետ 11

[168] *Ibid.*, կետ 10

իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողի (բացառությամբ առևտրի կամ ֆինանսական ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների) գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող հինգ հարկային տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան հարկային տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հարկային տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

Գործարար ծրագրերի հավանության արժանացման և լրացուցիչ աշխատավարձի հաշվարկման կարգը սահմանում է Կառավարությունը:[169]

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են նաև «ստաբիլիզացիոն դրույթներ» ընդերքօգտագործողների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների համար (ընդերքօգտագործող կազմակերպությունների մի մասի մասնակցությունը փաստացի ուղղակի օտարերկրյա ներդրում է): Այսպես, Օրենսգրքի 25-րդ հոդվածը («Ընդերքօգտագործման իրավունքի երաշխիքներ») սահմանում է.

> *«Ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ընդերքօգտագործման իրավունքի տրման պահից սկսած՝ 3 տարվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունք ստացած անձի նկատմամբ, վերջինիս կողմից լիազոր մարմնին ուղղված դիմումի հիման վրա կիրառվում են օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրման պահին գործող բնօգտագործման վճարների (այդ թվում՝ ռոյալթիի), ռեզիդենտների շահութահարկի, ոչ ռեզիդենտների շահաբաժինների, տոկոսադրույքների, ռոյալթիների հարկման դրույքաչափերը»:*

Սույն կարգավորումն իրավունք է տալիս ընդերքօգտագործողներին, որոնք ընդերքօգտագործման իրավունքը ստացել են վերջին երեք տարիների ընթացքում, անբարենպաստ օրենսդրական փոփոխությունների դեպքում պահանջել ՏԿԵՆ-ից, որպեսզի իրենց նկատմամբ կիրառվեն օրենքի նախկին առավել բարենպաստ կարգավորումները, եթե այդ փոփոխությունները վերաբերում են բնօգտագործման վճարների, ռեզիդենտների շահութահարկի, ոչ ռեզիդենտների շահաբաժինների, տոկոսադրույքների, ռոյալթիների հարկման դրույքաչափերին:

Հատկանշական է, սակայն, որ նշված վճարները գտնվում են ՊԵԿ-ի վերահսկողության, այլ ոչ թե ՏԿԵՆ վերահսկողության տիրույթում: Ուստի անգամ համապատասխան դիմումը ներկայացնելու պայմաններում՝ անհասկանալի է արտոնության կիրարկման իրական ընթացակարգը: Այս իրավական անորոշությունը կարող է լրացվել Կառավարության որոշման ընդունման պարագայում, սակայն դրա համար անհրաժեշտ է նաև համապատասխան օրենսդրական փոփոխություն (հոդվածը պետք է սահմանի Կառավարությանը նման իրավասություն պատվիրակելու մասին դրույթ):

[169] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=116379

Համանման «ստաբիլիզացիոն դրույթ» սահմանված է նաև «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, որի 7-րդ հոդվածն («Երաշխիքներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում») արձանագրում է.

> *«Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը»:*

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նշված կարգավորման կիրարկման հստակ ընթացակարգեր, որի արդյունքում այն դարձել է դատական վեճերի առարկա: Մասնավորապես, *«ԴինոԳոլդՄայնինգՔամփնի» ՓԲԸ-ն*[170] *ընդդեմ ՊԵԿ-ի* թիվ ՎԴ/0724/05/10 գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր 2011թ. ապրիլի 29-ի որոշմամբ սահմանել է.

> *«[Ն]շված իրավանորմի կիրառման միակ պայման է օտարերկրյա ներդրողի ցանկությունը, որը օտարերկրյա ներդրողը պետք է արտահայտի որևէ ձևով՝ իր գործունեության դրսևորմամբ, հայտարարություն տարածելով և այլ ցանկացած եղանակով, որպեսզի ընկերության գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին պարզ լինի, որ ՀՀ որևէ օրենսդրական փոփոխության դեպքում այդ ընկերությունը շարունակում է կիրառել հին օրենսդրությունը: Այդ ցանկությունը պետք է արտահայտվի ՀՀ օրենսդրության փոփոխության ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, կամ առնվազն ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում»*:

Այսպիսով, ֆորմալ իրավական ընթացակարգերի բացակայության պայմաններում ներդրողներից ակնկալվում է առնվազն որոշակի ակտիվ գործողությունների կատարում, որի շնորհիվ կոնկրետ ոլորտի համար պատասխանատու պետական մարմինը կարող է ընկալել ներդրողի ցանկության փաստը:

2.2 Թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման ընթացակարգեր, դրանց հաշվառումը (պահանջ 2.2 և 2.3)

2.2.1 Հողօգտագործման իրավունքի ձեռքբերման և ջրօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացներ

Ինչպես արդեն ընդգծել էինք վերևում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն ինքնին չի երաշխավորում օգտակար հանածո պարունակող ընդերքի տեղամասերի մակերեսի և դրանց հարակից հողամասերի նկատմամբ հողօգտագործման, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվության ձեռքբերումը: Մինչդեռ, առանց համապատասխան հողօգտագործման և ջրօգտագործման իրավունքի, ընդերքօգտագործողները զրկված են իրենց ընդերքօգտագործման իրավունքն իրացնելու իրավական հնարավորությունից: Հետևաբար, օգտակար հանածո

[170] «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի անվանումը նախկին բաժենտերերի օրոք

պարունակող ընդերքի տեղամասերի մակերեսին գտնվող հողամասերն օգտագործելու իրավունքն ընդերքօգտագործող սուբյեկտը ձեռք է բերում անձամբ. նմանապես, ընդերքօգտագործողն առանձին դիմում է ջրօգտագործման իրավունքի ձեռքբերման համար: Ստորև մանրամասն ներկայացվում են հողօգտագործման իրավունքի ձեռքբերման և ջրօգտագործման իրավունքի տրամադրման ընթացակարգերը:

Հողօգտագործման իրավունք. ՀՀ հողային օրենսգրքի (սույն հատվածում այսուհետ՝ Օրենսգիրք) համաձայն Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը դասակարգվում է ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների): Ըստ նշված դասակարգման, ի թիվս այլ նշանակության հողերի, առկա են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր: Օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերին համապատասխան: Ի լրումն, հոդվածում նշվում է, որ ընդերքօգտագործողներին նոր հողամասեր չեն կարող տրամադրվել, եթե նրանց գործունեության արդյունքում նախկինում խախտված հողերը վերականգնման նախագծերին համապատասխան չեն վերականգնվել:

Հողերի նկատմամբ կարող են սահմանվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, համայնքների կամ պետության սեփականությունը: Հողերը, որոնք չեն պատկանում քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին, պետության սեփականությունն են, իսկ տվյալ համայնքի սահմանագծի ներսում գտնվող հողերը, բացառությամբ պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց և սեփականության այլ սուբյեկտներին պատկանող հողերի, պատկանում են համայնքների սեփականությանը:

ՀՀ Հողային օրենսգիրքը սահմանում է, թե ինչ իրավունքներով կարող են օգտագործվել հողամասերը: Այսպես, հողամասը սեփականատերն օգտագործման է տրամադրում կառուցապատման, անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով , իսկ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով :

Հողամասի անհատույց (մշտական) օգտագործում է համարվում սեփականատիրոջ կողմից այլ անձի՝ օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրված հողամասի տիրապետումն ու օգտագործումը:

Հողամասի վարձակալության իրավունքը վարձակալության պայմանագրի պայմաններով վճարի դիմաց հողամասի ժամկետային օգտագործման իրավունքն է: Կարևոր է նշել, որ պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի), իսկ վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Այն դեպքերը, երբ հողամասերը տրամադրվում են առանց մրցույթի, սահմանում է կառավարությունը:

Օրենսգրքով սահմանվում են նաև քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերը: Այսպես, սեփականության իրավունքով չեն կարող փոխանցվել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը, որոնք ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2.2.1

Սեփականության իրավունքով չփոխանցվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր.

1	պատմական և մշակութային արժեքների օբյեկտներ են, բացառությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով փոխանցված և փոխանցվող եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների կառուցապատման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի.
2	բնության հատուկ պահպանվող տարածքներից պետական բնական արգելոցներ են, բնության պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ, ազգային զբոսայգիներ, ծառաբանական զբոսայգիներ, բուսաբանական այգիներ, ինչպես նաև այդ նպատակների համար պահեստավորված տարածքներ.
3	պաշտպանվող սանիտարական պահպանության տարածքների սահմանների շրջանում բուժիչ-առողջարանային վայրեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.
4	զբաղեցված են պետական սեփականություն հանդիսացող անտառով.
5	պետական մելիորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.
6	բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ).
7	պետության կողմից հաշվառված և գրանցված օգտակար հանածոների տեղադրվածություններ են.
8	ենթարկված են ռադիոակտիվ և քիմիական աղտոտման, կենսաձին վարակման.
9	կառավարության սահմանած ցանկով տրամադրված են պետական գիտահետազոտական կազմակերպություններին (կրթական, սելեկցիոն և այլն)՝ մինչև սահմանված կարգով դրանց լուծարումը.
10	զբաղեցված են համայնքի վարչական սահմաններից դուրս ընդհանուր օգտագործման արոտավայրերով, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով.
11	ջրային օբյեկտների և ավազանների առափնյա շերտերի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհների, խողովակաշարային և այլ տրանսպորտի համար առանձնացված շերտերի, էլեկտրահաղորդիչ գծերի, մայրուղային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների, ջրանցքների, ինչպես նաև դրանց հեռանկարային զարգացման համար առանձնացված (պահեստավորված) հողեր են.
12	վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը.
13	հատուկ նշանակության հողեր, պետական կամ համայնքային գերեզմանատներ են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ հողային օրենսգիրքը որևէ առանձին ընթացակարգ չի նախատեսում ընդերքօգտագործման նպատակով հողօգտագործման իրավունքի ձեռքբերման համար: Նշված իրավահարաբերությունները կարգավորվում են ընդհանուր կանոններով:

Պետության սեփականության հողամասերի օտարման եղանակները սպառիչ են: Դրանք կարող են օտարվել՝

1) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.
2) ուղղակի վաճառելու միջոցով.
3) աճուրդով.
4) փոխանակությամբ:

Ջրօգտագործման թույլտվություն. ՀՀ Ջրային օրենսգիրքը սահմանում է ջրօգտագործման թույլտվությունը որպես փաստաթուղթ, որը ներառում է ջրային ռեսուրսից ջրառի, այդ թվում՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման, կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման և ջրի վերադարձի հետ առնչվող անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն: Նշված կանոնից կարող են լինել բացառություններ միայն Ջրային օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը սահմանել է ՀՀ կառավարությունն իր 2003 թվականի մարտի 7 թիվ 218-Ն որոշմամբ[171]: Նշված որոշման Հավելված 2-ով սահմանվում են նաև ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևերը:

ՀՀ-ում ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է ՀՀ ՇՄՆ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից (այսուհետ՝ «ՇՄՆ ՋՌԿԳ»):

Ջրօգտագործման թույլտվություն ստանալու ընթացակարգը սկսվում է ՀՀ ՇՄՆ ջրօգտագործման թույլտվության ստացման հայտի ներկայացմամբ:

Ջրօգտագործման թույլտվությունը տրամադրվում է ջրօգտագործողի կողմից գործակալություն ներկայացված հայտի նախնական և վերջնական գնահատման հիման վրա: Կարևոր է նշել, որ ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացումը, ընդունումը և նախնական գնահատումը, հայտատուի ընտրությամբ, բացի թղթային տարբերակից կարող է կատարվել նաև էլեկտրոնային տարբերակով, սակայն նշված էլեկտրոնային տարբերակի վերաբերյալ կարգը բացակայում է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ապահովել Կառավարության որոշմամբ ամրագրված պահանջը, այն է՝ ՀՀ ՇՄ նախարարի կողմից ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացման, ընդունման և նախնական գնահատման էլեկտրոնային տարբերակի կարգի ընդունումը: Վերջինիս ընդունումն առավել դյուրին կդարձնի ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն, ինչն, իր հերթին, կնպաստի ձեռնարկատիրության համար առավել գրավիչ միջավայր ստեղծելուն:

Ջրօգտագործման թույլտվության հայտը ներկայացնելուց հետո գործակալությունը 30-օրյա ժամկետում ջրօգտագործողին գրավոր տեղեկացնում է ջրօգտագործման թույլտվություն ստանալու մասին հայտն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ: Ջրօգտագործման թույլտվության հայտի վերջնական գնահատման գործընթացն սկսվում է հայտին կից՝ համապատասխան

[171] ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7 թիվ 218-Ն որոշում, հասանելի է հետևյալ հղումով https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142727

փաստաթղթերի (ամբողջական փաթեթի) առկայության դեպքում: Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը նույնպես սահմանվում է նշված որոշմամբ: Ցանկը հետևյալն է.

Աղյուսակ 2.2.2

Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը

1	ջրօգտագործող ֆիզիկական անձի անձնագրի պատճենը,
2	ջրօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին եզրակացությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում,
3	ջրօգտագործման համար հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը,
4	ցամաքուրդային ջրաղբյուրի թողունակության և որակի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ՝ տրված այդ ջրհեռներն օգտագործող կազմակերպության կողմից (անհրաժեշտության դեպքում),
5	հնարավոր սերվիտուտի և համապատասխան գույքից օգտվելու ձևի նկարագրությունը, սեփականատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը,
6	նախկին ջրօգտագործման թույլտվությունը (նախկինում ջրօգտագործող լինելու դեպքում),
7	պետական տուրքի վճարման անդորրագիրը (բնօրինակ),
8	ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգի պահանջների համաձայն՝ տպագիր միջոցներում հրապարակված ջրօգտագործման մասին հայտարարությունը (հայտի նախնական գնահատումից հետո),
9	ջրային ռեսուրսներից ջրօգտագործողներին հատկացվող ջրառի չափաքանակների ու ռեժիմի որոշման կարգով հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաները,
10	կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները՝ հաշվարկված լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկա» գերատեսչական ակտի համաձայն,
11	տեղանքի հատակագիծը (սխեմա), որտեղ արտացոլվում է ջրօգտագործման կետի (կոորդինատական առանցքներ)՝ դրա հարևանությամբ գտնվող որևէ հայտնի օբյեկտի հետ կապը՝ հաստատված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում,
12	կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում՝ համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, առողջապահական տեսչական մարմնի մարզային փորձագիտական կենտրոնների կողմից,
13	ստորերկրյա խորքային հորերից ջրօգտագործման դեպքում գործարար ծրագիր՝ տվյալ գործունեության վերաբերյալ,
14	արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց,
15	ստորերկրյա խորքային հորերից ջրօգտագործման թույլտվությունների գործողության ժամկետների երկարաձգման մասին հայտերի գնահատման ժամանակ՝ ջրօգտագործման վայրի տեղական ինքնակառավարման և ջրային համակարգերի պետական կառավարման մարմինների առաջարկությունները ջրօգտագործման թույլտվությամբ օգտագործված ջրերի երկրորդական օգտագործման վերաբերյալ,
16	հիդրոերկրաբանական տեղեկատվություն՝ տրված Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» (ՀՀ կառավարության 2019 թվականի

	հոկտեմբերի 10-ի թիվ 1442-Ն որոշմամբ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն») ՊՈԱԿ-ի կողմից (ստորերկրյա ջրաղբյուրներից նոր ջրօգտագործման թույլտվություն ստանալու դեպքում, գոյություն ունեցող տիրազուրկ հորատանցքերը, սպառված հանքավայրերը, լքված հանքահորերը և բաց հորերը կեղտաջրերի թաղման համար օգտագործելու դեպքում),
17	հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքը (հիդրոերկրաբանական դրական տեղեկատվության դեպքում),
18	խորքային հորի հորատմամբ ջրօգտագործման իրականացման հայտի դեպքում՝ հորատում իրականացնող սարքավորման հաշվառման տվյալները, սարքավորման տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը և պարտավորություն հորատման հորի տվյալները «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպություն և ջրային պետական կադաստր ներկայացնելու վերաբերյալ:

Ջրօգտագործման թույլտվությունների ստացման հայտերը Հայաստանի Հանրապետության ջրի ազգային խորհուրդ ներկայացնելու դեպքում ՇՄՆ ՋՌԿԳ դրանք ուղարկում է ջրային համակարգի կառավարման լիազոր մարմին՝ կարծիքի: Ջրային համակարգի կառավարման լիազոր մարմինը հայտի մասին կարծիքը լիազոր մարմին է ներկայացնում 10-օրյա ժամկետում:

Հայտի ընդունումից և նախնական գնահատումից հետո գործակալությունը, 30-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնելով հայտատուին, ապահովում է հասարակայնության ծանուցումը ջրօգտագործման թույլտվության հայտի մասին:

Հասարակայնության ծանուցման ժամանակ սպասվող ջրօգտագործման թույլտվության վերաբերյալ արձագանքների, կարծիքների բացակայությունը համարվում է տվյալ ջրօգտագործման վերաբերյալ հասարակայնության դրական կարծիքի դրսևորում:

Հասարակայնության ծանուցման ժամանակ սպասվող ջրօգտագործման թույլտվության վերաբերյալ այլ անձանց իրավունքների և օրինական շահերի կամ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրության խախտումը հիմնավորող բացասական կարծիքները քննարկվում են լիազոր մարմնի կողմից և, հաստատվելու դեպքում, հիմք են հանդիսանում ջրօգտագործման թույլտվության տրամադրումը մերժելու համար:

Գործակալության կողմից ջրօգտագործման թույլտվությունը ձևակերպվում է հասարակայնության ծանուցմանը հաջորդող 30-օրյա ժամկետում:

Ջրային օրենսգիրքը սահմանում այն առավելագույն ժամկետը, որի ընթացքում կարող է տրամադրվել ջրօգտագործման թույլտվությունը : Նշված ժամկետը չի կարող 50 աշխատանքային օրվանից ավելի լինել:

Ջրօգտագործման թույլտվության տրամադրումից հետո՝ ՇՄՆ 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրանցում է ջրօգտագործման թույլտվությունը և դրան կից պայմանները ՀՀ Ջրային օրենսգրքով սահմանված կարգով:

Որպեսզի ջրօգտագործման թույլտվությունը համարվի վավեր, այն պետք է ստորագրված լինի Շրջակա միջավայրի նախարարի և ջրօգտագործման թույլտվություն ստացած անձի կողմից, հաստատված լինի ՇՄՆ կնիքով և գրանցված պետական ջրային կադաստրում:

2.2.2 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման և դադարեցման գործընթացներ

(i) Ընդհանուր նկարագիր

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում ընդերքը պատկանում է պետությանը և համարվում վերջինիս բացառիկ սեփականությունը: Ընդերքօգտագործողներին ընդերքը տրամադրվում է միայն օգտագործման իրավունքով՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ընդերքօգտագործման երկու առևտրային ռեժիմ և այդ ռեժիմներին համապատասխան թույլտվությունների երկու տեսակ՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն (օրենսդրությամբ կարգավորված է նաև առանձին՝ երկրաբանական ուսումնասիրությունների համար համաձայնությունների տրամադրման ռեժիմը):

Առաջինն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման համար, երկրորդն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ:

Օրենսդրությունը կարգավորում է նաև ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը. իրավունքի օտարումը երրորդ անձանց կամ փոխանցումը թույլտվություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման արդյունքում բաժանման կամ առանձնացման ճանապարհով ստեղծված նոր իրավաբանական անձին, իրականացվում է բացառապես ՏԿԵՆ համաձայնությամբ:

Սույն զեկույցի կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածում ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքը, սակայն, որևէ կարգավորման և վերահսկողության չի ենթարկվել (բացառությամբ, իհարկե, տնտեսական մրցակցությունը կանոնակարգող կիրառելի նորմերի): Ավելի ուշ՝ 2019թ. ապրիլի 23-ին ընդունված օրենսդրական փաթեթով [172] կիրարկվեց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ընթացակարգ, որը որոշ չափով մեղմում է խնդիրը, սակայն չի կարող համարվել դրա ամբողջական լուծում:

(ii) Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման ընթացակարգը

[172] Այդ փաթեթով փոփոխություններ են կատարվել Օրենսգրքում և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունների ստացման (ուսումնասիրության իրավունքի հայցման) ընթացակարգը կարգավորվում է Օրենսգրքով: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու դիմումը ներկայացվում է ՏԿԵՆ: Դիմումն իր մեջ պարունակում է ստորև աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը: [173]

Աղյուսակ 2.2.3 Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով դիմումում ներառվող տեղեկատվություն և կից փաստաթղթեր՝ ըստ հաշվետու ժամանակահատվածի.

1	դիմումատուի կորպորատիվ տվյալները (դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը)՝ իրավաբանական անձի դեպքում,		
2	աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը,		
3	երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածոն(ները),		
4	ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, և հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով,[174]		
5	երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը (որը ներկայացվում է ԷԵԲՊՆ հետ համաձայնեցման նպատակով), որը ներառում է և դրան կցվում են՝ [175]		
	i.	կատարվելիք աշխատանքների նպատակներն ու ենթադրվող ժամկետները,	
	ii.	աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, և մոտավոր ծավալները,	
	iii.	երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրին կցվում են՝	
		(a)	անհրաժեշտ քարտեզագրական նյութերը,
		(c)	շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիրը,
		(d)	ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:
6	տվյալներ դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ[176]		
7	դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան[177]		
8	ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը		
9	Ներկայացված փաստաթղթերի ցանկը:		

[173] Օրենսգիրք, հոդում 20 հոդված 38
[174] Ուժը կորցրել է 2019 թվականի նոյեմբերի 13-ին ընդունված «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով» (ՀՕ-256-Ն):
[175] Օրենսգիրք, հոդում 20 հոդված 39
[176] Ուժը կորցրել է 2019 թվականի նոյեմբերի 13-ին ընդունված «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով» (ՀՕ-256-Ն):
[177] Սույն կետը վերաշարադրվել է 2019 թվականի ապրիլի 23-ին ընդունված «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով» (ՀՕ-24-Ն):

Հարկ ենք համարում նշել, որ 2019 թվականի նոյեմբերի 13-ին ընդունված «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքով» մի շարք փոփոխություններ են կատարվել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստանալու նպատակով դիմումում ներառվող տեղեկատվության և կից փաստաթղթերի ցանկում: Նշված փոփոխություններն ուժի մեջ են մտել 2019 թվականի դեկտեմբերի 21-ին: Այդ փոփոխությունների արդյունքում դիմումն իր մեջ պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

1. դիմումատուի պետական գրանցման համարը.
2. աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը.
3. երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածոն(ները).
4. երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը, որը ներառում է՝
   - կատարվելիք աշխատանքների նպատակներն ու ենթադրվող ժամկետները,
   - Աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, և մոտավոր ծավալները,
   - ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, հատակագիծը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի ստորագրությամբ հաստատված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող վեց ամսվա դրությամբ:

   Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝
   - շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների ծրագիրը,
   - ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:
5. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ,
6. մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ դիմումը ներկայացնելուց հետո մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումն ընկած ժամանակահատվածում իրական սեփականատերերի փոփոխության դեպքում փոփոխության պետական գրանցումից հետո իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք,
7. ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը,

8. ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Վերը՝ 8-րդ կետով սահմանված՝ դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունները բացահայտվել են ԱՃԹՆ առաջին զեկույցում և սույն զեկույցի հաշվետու տարվա ընթացքում փոփոխության չեն ենթարկվել: Ուստի, նախորդ զեկույցում ներկայացված ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությանը ներկայացվող որակական չափանիշների գնահատման կարգը գործում է նույն ձևով:

Նույնությամբ գործում են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված ֆինանսական և տեխնիկական կարողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու ընթացակարգը [178] և համապատասխան ձևերը (ընդերքօգտագործման ոլորտում ունեցած մասնագիտական աշխատանքի փորձի մասին տեղեկանք, պահանջվող ինժեներատեխնիկական կազմի առկայության մասին տեղեկանք, անհրաժեշտ տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին տեղեկանք, անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին տեղեկանք, ՀՀ հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք):

Ինչպես երևում է վերը սահմանված աղյուսակից, դիմումին կից ներկայացվում է նաև Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը, որը պետք է ներառի կատարվելիք աշխատանքների նպատակներն ու ենթադրվող ժամկետները, ինչպես նաև աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, և մոտավոր ծավալները, իսկ 2019 թվականից սկսած նաև ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով, հատակագիծը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման վկայական ստացած անձի ստորագրությամբ հաստատված ծայրակետային կոորդինատներով՝ դիմումը ներկայացնելուն նախորդող վեց ամսվա դրությամբ: Ծրագրին կցվում են քարտեզագրական նյութեր (ուժը կորցրել է 13.11.19 ՀՕ-256-Ն), ՇՄԱԳ հայտը (բնապահպանական միջոցառումների ծրագրի հետ միասին) և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, իսկ այն դիմումատուների դեպքում, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոնները՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:

[178] «Ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների բովանդակությունը և դրանց ներկայացվող պահանջները», ՀՀ կառավարության որոշում 367-Ն (ընդունված 2013թ. մարտի 28-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82720

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը համաձայնեցվում է ՏԿԵՆ հետ: Առանց ծրագրի համաձայնեցման երկրաբանական ուսումնասիրությունների իրականացում չի թույլատրվում:

Դիմումների քննարկումը. Դիմումների քննարկման ընթացակարգը փոփոխությունների չի ենթարկվել 2018 թվականի ընթացքում, սակայն որոշ ժամկետներ փոխվել են 13.11.19 թվականին ընդունված ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-256-Ն օրենքով (այդ փոփոխությունների առաջնային նպատակն է ապահովել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի և դիմումի հետ ներկայացված ՇՄԱ նախնական գնահատման հայտի առավել մանրամասն ուսումնասիրություն նախնական փուլում՝ բացառելով դրանց վերաբերյալ խնդիրների վերհանումը դիմումի քննարկման եզրափակիչ հատվածում): Այսպես, դիմումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, ՏԿԵՆ դիմումատուին ծանուցում է դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության և դիմումի գրանցման մասին: Դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 20-օրյա ժամկետում), ՀՀ ՏԿԵՆ-ը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը և դիմումի հետ ներկայացված ՇՄԱ նախնական գնահատման հայտի, քարտեզագրական նյութերի և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ֆինանսական երաշխիքների հետ միասին ներկայացնում է ՇՄԱԳ փորձաքննության:

Շրջակա միջավայրի նախարարությունը, ծրագիրը և կից ներկայացված փաստաթղթեր ստանալուց հետո՝ մինչև 30-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում) ժամկետում, տրամադրում է եզրակացություն ծրագրի վերաբերյալ: ՇՄԱ նախնական գնահատման հայտի վերաբերյալ համապատասխան եզրակացությունը մինչև 30-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում) ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական:

ՇՄԱԳ-ի դրական եզրակացությունը ստանալուց հետո ՏԿԵՆ դիմումի գրանցման օրվանից հետո՝ մինչև 60-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 20 օրվա ընթացքում) ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Նշված ժամկետում դիմումի վերաբերյալ որոշում չընդունելու դեպքում այն համարվում է բավարարված:

Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, ում դիմումն առաջինն է գրանցվել:

Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ ներկայացված ուսումնասիրության ծրագիրը, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա ՏԿԵՆ 10-օրյա ժամկետում ((13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 20 օրվա ընթացքում) տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված

թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

Վարչական վարույթի (դիմումի քննարկման) արդյունքներով տրվում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն և հրավիրվում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրն իր կողմից վավերացվելու համար:

Թույլտվությունը ներառում է թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և գործողության ժամկետը, ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով, երկրաբանական ուսումնասիրության նպատակը, օգտակար հանածոյի անվանումը: Ուսումնասիրության ծրագիրը և երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը կցվում են թույլտվությանը և դրա անքակտելի մասերն են[179]:

Դիմումի մերժումը. ՏԿԵՆ կողմից Օրենսգրքով սահմանված դիմումը մերժելու հիմքերը որևէ փոփոխության չեն ենթարկվել հաշվետու ժամանակահատվածում. դրանց, բոլոր դեպքերում, կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 164-րդ էջում:

[179] Օրենսգիրք, հղում 20, հոդ. 37

Պատկեր 2.2.1 Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման ընթացակարգը



(i) Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը

Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունների ստացման (արդյունահանման իրավունքի հայցման) ընթացակարգը կարգավորվում է Օրենսգրքով: Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով իրավաբանական անձինք դիմում են ներկայացնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (նախկինում՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն): Դիմումն իր մեջ պարունակում է ստորև աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը.

Աղյուսակ 2.2.4

Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմումում ներառվող տեղեկատվություն՝ ըստ հաշվետու ժամանակահատվածի

1	դիմումատուի կորպորատիվ տվյալները (դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը(13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ պետական գրանցման համարը), նշում դիմումատուի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին),		
2	հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա,		
3	ընդերքի այն տեղամասի երկրաբանական նկարագրությունը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք[180],		
4	հաստատված օգտակար հանածոների ցանկը,		
5	օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը.		
	i.	օգտակար հանածոների հանքավայրերի բացման այնպիսի եղանակներ և շահագործման համակարգեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ապահովում են հիմնական և դրանց ուղեկից օգտակար հանածոների պաշարների ողջամիտ և համալիր, տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը, ինչպես նաև կառույցների անվտանգ և երկարատև շահագործումը,	
	ii.	նախատեսվող ենթակառուցվածքների ձևավորման վերաբերյալ մանրամասներ,	
		13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով նաև ընդերքի տեղամասի երկրաբանական նկարագրությունը, հանքավայրի երկրաբանական և հաստատված պաշարների բլոկավորման քարտեզները՝ համապատասխան կտրվածքներով, հանքի շարժը՝ ըստ տարիների ցուցադրող գծագրերի, հանքի գլխավոր հատակագիծը, հանքի շահագործման նախապատրաստման և արդյունահանման աշխատանքների ժամանակացույցը,	
	iii.	առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետի հաշվարկը,	
	iv.	շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը, այդ թվում՝ բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը,	
	v.	սոցիալական ազդեցության գնահատականը,	
		(a)	վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ,
		(c)	բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ,
		(d)	համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մասնակցության ապահովման երաշխիքներ,

[180] Սույն կետն ուժը կորցրել է 13.11.19 ՀՕ-256-Ն օրենքով:

		(e)	հեռացվող հողաշերտի և զուգընթաց արդյունահանվող աղքատ հանքաքարի պահեստավորումը և պահպանությունը,
		(f)	աշխատանքի անվտանգության, աշխատակիցների առողջության պահպանության և շրջակա միջավայրի պահպանության սահմանված կանոնների և նորմերի ապահովումը,
		(g)	խախտված հողերի վերականգնումը,
6	հանքի փակման ծրագիրը.		
	i.	հանքի ֆիզիկական փակման ծրագիրը, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,	
	ii.	օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի, ներառյալ՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը հանքի գոյության ընթացքում (ելնելով հանքավայրի շահագործման եղանակից),	
	iii.	աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,	
	iv.	օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը,	
	v.	հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հավաստումը,	
	vi.	հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները,	
7	տվյալներ դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ,[181]		
8	դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավելի տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան,[182]		
8[1]	դիմումը ներկայացնելուց հետո մինչև իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումն ընկած ժամանակահատվածում իրական սեփականատերերի փոփոխության դեպքում փոփոխության պետական գրանցումից հետո իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք,		
9	ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը,		
10	ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ,		
11	ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները,		
12	շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար սահմանված պետական տուրքի անդորրագիրը:		

[181] Սույն կետն ուժը կորցրել է 13.11.19 ՀՕ-256-Ն օրենքով:

[182] Սույն կետը 23.04.19 ՀՕ-24-Ն օրենքով վերաշարադրվել է հետևյալ կերպ.
«8) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ»:

Վերը աղյուսակի 11-րդ կետում հիշատակվող ֆինանսական երաշխիք[183] տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշները ՀՀ կառավարությունը սահմանել է 2017թ. հուլիսի 20-ի «Ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշները սահմանելու»[184] մասին թիվ 885-Ն որոշմամբ:

Վերջինիս համաձայն, իրավաբանական անձը՝ բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը պետք է լինի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»[185] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձ, իսկ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը պետք է լինի Standard & Poor's, Moody's, A.M. Best կամ Fitch միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից վարկանշված անձ՝ ցածր չլինելով հետևյալ վարկանշային դասակարգումից՝

Երաշխիք տրամադրող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի նվազագույն դասակարգումը	
Standard & Poor's	A-
Moody's	A3
A.M. Best	A-
Fitch	A-

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է որոշակի տեղամասերում ընդերքօգտագործման արգելք: Այսպես, Օրենսգրքի համաձայն ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է ազգային անվտանգության ապահովման, կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

Դիմումների քննարկումը. Դիմումների քննարկման գործընթացին մասնակից են դառնում մի շարք գերատեսչություններ՝ ՏԿԵՆ, ԱԻՆ-ը, Շրջակա միջավայրի նախարարությունը:

ՏԿԵՆ՝ դիմումի գրանցելուց հետո 10-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 40-օրյա) ժամկետում քննարկում է դիմումին կից նախագիծը և ներկայացնում այն ԱԻՆ՝ տեխնիկական անվտանգության փորձաքննության, իսկ ՇՄԱԳ հաշվետվությունը՝ կից փաստաթղթերով ներկայացնում է փորձաքննության՝ Շրջակա միջավայրի նախարարություն:

ԱԻՆ-ն իրականացնում է փորձաքննությունը նախագիծը ստանալուց հետո 60-օրյա ժամկետում: Նախագծի առնչությամբ ԱԻՆ-ը տրամադրում է փորձաքննական եզրակացություն[186]: Ինչպես

[183] Ֆինանսական երաշխիքները տրամադրվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների մշակման օբյեկտների շահագործման, փակման, փակումից հետո օրենքով նախատեսված միջոցառումների իրականացման համար:
[184] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115056
[185] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=64633
[186] Օրենսգիրք, հոդված 20, հոդված 51(2)(1)

արդեն նշվել է, ինքնին փորձաքննությունն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և ԱԻՆ-ի կողմից հաշվառված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմի[187]՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգի» համաձայն:[188] Եզրակացությունը սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում այն համարվում է դրական:

Նախագծի թերի լինելու դեպքում ԱԻՆ-ն այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, տեղեկացնում է ՏԿԵՆ՝ նշելով թերությունները, վերջինս իր հերթին 5-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին: Դիմումատուն իրավունք ունի ծանուցվելուց հետո 10-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 40-օրյա) ժամկետում շտկել դրանք, հակառակ պարագայում՝ ՏԿԵՆ մերժում է դիմումը:

Նախագծի շտկված տարբերակ ստանալու դեպքում ՏԿԵՆ 5-օրյա ժամկետում այն ներկայացնում է ԱԻՆ տեխնիկական անվտանգության փորձաքննության:

Իր հերթին Շրջակա միջավայրի նախարարությունը ՇՄԱԳ հաշվետվությունը ստանալուց հետո 100-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով՝ 60 աշխատանքային օրվա ընթացքում) ժամկետում տրամադրում է փորձաքննության եզրակացություն: 100-օրյա (60 աշխատանքային օրվա ընթացքում) ժամկետում չտրամադրելու դեպքում այն համարվում է դրական: Հարկ ենք համարում նշել, որ 13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխությունների համաձայն Շրջակա միջավայրի նախարարության հիմնավորված որոշմամբ փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված ժամկետի կեսը չգերազանցող չափով, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ:

Եթե ՇՄԱԳ հաշվետվությունը կազմված է թերի, ապա ՇՄՆ-ն այն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին՝ նշելով թերությունները: Դիմումատուն կարող է վերացնել թերությունները 10-օրյա ժամկետում: Հակառակ պարագայում՝ ՏԿԵՆ-ը մերժում է դիմումը:

ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակը ստանալուց հետո ՏԿԵՆ-ն այն կրկին ներկայացնում է փորձաքննության՝ ՇՄՆ:

Դրական փորձաքննական եզրակացություններ ստանալուց հետո ՏԿԵՆ-ը՝ դիմումի գրանցման օրվանից մինչև 180-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով մինչև 25-օրյա) ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ և ծանուցում դիմումատուին: 180-օրյա (25-օրյա) ժամկետում որոշում չկայացնելու դեպքում դիմումը համարվում է բավարարված:

Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի թերի լինելու կամ ներկայացված ֆինանսական, տեխնիկական տեղեկատվությունը օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու

[187] Տե՛ս «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-204-Ն (2005թ. հոկտեմբերի 24), հոդված 11(1)
[188] ՀՀ կառավարության որոշում թիվ 1359-Ն (ընդունված 2011թ. սեպտեմբերի 22-ին)

դեպքում ՏԿԵՆ՝ դիմումը գրանցելուց հետո 10-օրյա (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով 40-օրյա) ժամկետում տեղեկացնում է դիմումատուին, որն ունի 10-օրյա ժամկետ թերությունները վերացնելու համար: Հակառակ պարագայում ՏԿԵՆ մերժում է դիմումը:

Դիմումի մերժումը. ՏԿԵՆ կողմից Օրենսգրքով սահմանված դիմումը մերժելու հիմքերը շարադրված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 2.2.5

Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմումի մերժման հիմքերը

Օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով դիմումի մերժման հիմքեր	դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են,
	դիմումում նշված ընդերքի տեղամասը կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ է,
	ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման՝ համառոտ նախագծով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահանջվող տարածքը,
	օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին,
	դիմումատուի՝ նախկինում ունեցած ընդերքօգտագործման որևէ իրավունք դադարեցվել է հետևյալ հիմքերով՝ (i) ստացել է զգուշացում և ՏԿԵՆ-ի կողմից սահմանած ժամկետում (90 օր) (23.04.19 ՀՕ-24-Ն փոփոխություններով՝ մինչև 90 օր) չի վերացրել զգուշացման հիմքերը (23.04.19 ՀՕ-24-Ն փոփոխություններով՝ նաև մինչև 120 օր կասեցման հիմքերը), (ii) ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է, (iii) ընդերքօգտագործողը հայտնաբերել և լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում չի տեղեկացրել՝ ա) ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին, բ) հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության մասին, գ) չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին (Օրենսգրքի 30-րդ հոդված),
	խախտվել են ժամկետները,
	հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան (i) գերեզմաններ, (ii) բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, (iii) ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ,
	դիմումատուի ներկայացրած ֆինանսական երաշխիքը բավարար չէ ապահովելու ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ (երբ կիրառելի է)՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը,
	ֆինանսական երաշխիքը տվել է այն իրավաբանական անձը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության սահմանած՝ ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշներին:

Դիմումի մեջ առկա հավանական թերությունների շտկումը. ՀՀ օրենսդրությունը նախատեսում է դիմումի մեջ առկա թերությունները շտկելու հնարավորություն: Այսպես՝ ըստ Օրենսգրքի 51-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է.

> *Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ ներկայացված արդյունահանման նախագիծը, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական*

կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում (13.11.19 ՀՕ-256-Ն փոփոխություններով 40-օրյա), տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

Ընդերքի միևնույն տեղամասի կամ ընդերքի այնպիսի տեղամասերի համար, որոնք ունեն ընդհանուր մաս, երկու կամ ավելի անձանց կողմից դիմումի ներկայացման պարագայում նախապատվություն է տրվում արտոնյալ դիմումատուին (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք կրող), իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ այն անձին, որի դիմումն առաջինն է գրանցվել (Օրենսգրքի 51-րդ հոդված, մաս 10):

(ii) Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման կապակցությամբ տրվող ՏԿԵՆ համաձայնությունը

Ինչպես արդեն նշվել է, օրենսդրությունը կարգավորում է նաև ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը. այն է՝ իրավունքի օտարումը երրորդ անձանց կամ փոխանցումը թույլտվություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման արդյունքում բաժանման կամ առանձնացման ճանապարհով ստեղծված նոր իրավաբանական անձին: Փոխանցումը հնարավոր է միայն ՏԿԵՆ համաձայնությամբ: Հատկանշական է սակայն, որ Օրենսգիրքը միայն սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները[189] և դիմումը ՏԿԵՆ կողմից քննելու ժամկետները (30 օր): Օրենսգիրքն ուղղակիորեն չի մատնանշում դիմումի մերժման հիմքեր, այլ հղում է կատարում ընդերքօգտագործման իրավունքի հայցերը մերժելու հիմքերին: Սակայն, կարծում ենք, որ այսպիսի առանցքային նշանակություն ունեցող հարցին միայն բլանկետային նորմով անդրադառնալը նպատակահարմար չէ, ուստի առաջարկում ենք նախատեսել առանձին կարգավորում, որն ուղղակիորեն կսահմանի ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը մերժելու հիմքերը:

Ինչպես արդեն նշվել է վերը, ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերության բաժնեմասերի/բաժնետոմսերի վաճառքը որևէ կերպ չի վերահսկվում ՏԿԵՆ կողմից: Մինչդեռ նման փոփոխությունները կարող են հանգեցնել տրամադրված ֆինանսական երաշխիքների դադարեցման կամ ակտիվ ընդերքօգտագործող ընկերության նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել այլ պետություններում բնապահպանական բացասական պատմություն ունեցող ձեռնարկությունների՝ առանց պետության կողմից կանխարգելման որևէ իրավական մեխանիզմի առկայության:

[189] Դիմումին ներկայացվող պահանջները նախատեսված են Օրենսգրքի Հոդված 23(2)-ով, ինչպես նաև սահմանված են Առաջին Զեկույցի 170-րդ էջում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf

(i) Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնության տրամադրման ընթացակարգը

Օրենսգրքով կարգավորվում է նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համար համաձայնությունների տրամադրման ռեժիմը: Երկրաբանական ուսումնասիրության իրավունքը, որը տրամադրվում է ՏԿԵՆ կողմից, սուբյեկտին տալիս է հետևյալ իրավունքները՝

- ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացում՝ ռեգիոնալ երկրաբանա-երկրաֆիզիկական աշխատանքներ, երկրաբանական հանույթ (քարտեզագրում), երկրաքիմիական, սեյսմաբանական, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հետազոտություններ, գիտահետազոտական, հնէաբանական և այլ աշխատանքներ՝ ուղղված ընդերքի ընդհանուր երկրաբանական ուսումնասիրությանը,
- հրաբխային գործունեության ուսումնասիրության երկրաբանական աշխատանքներ, արտաքին երկրաբանական պրոցեսների մշտադիտարկումներ,
- միներալոգիական, հնէաբանական և երկրաբանական այլ հավաքածուների ստեղծում, գեղագիտական և կիսաթանկարժեք քարերի հավաքում,
- գիտական, մշակութային, գեղագիտական և այլ նշանակություն ունեցող երկրաբանական օբյեկտների (եզակի երկրաբանական առաջացումներ, բնության հուշարձաններ, քարանձավներ և այլն) նկարագրում ու պահպանում:

Իրավունք (համաձայնություն) հայցող սուբյեկտները ՏԿԵՆ են ներկայացնում դիմում, որում նշվում է Օրենսգրքով ամրագրվող տեղեկատվություն[190], և որին կարելի է ծանոթանալ Առաջին Զեկույցի 171-րդ էջում:

Հատկանշական է, որ հաշվետու ժամանակահատվածում գործող օրենսդրությունը չէր ամրագրում ՏԿԵՆ-ի կողմից երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնություն չտրամադրելու հիմքերը: Սակայն դրանք սահմանվել են 2019թ. ապրիլի 23-ի փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 2019թ. հուլիսի 1-ից (այդ հիմքերն են՝ (1) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների ներկայացումը, (2) դիմումատուի կողմից երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահանջվող տարածքից հայցվող ընդերքի տեղամասի մեծ լինելը, (3) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների ոչ բավարար լինելը, (4) իրավունքի տրամադրման հակասելը ՀՀ օրենսդրության այլ պահանջներին, (5) դիմումատուի՝ նախկինում ունեցած ընդերքօգտագործման որևէ իրավունքի դադարած լինելը Լիազոր մարմնի զգուշացման հիմքերը չվերացնելու, տրամադրման նպատակին անհամապատասխան ընդերքն օգտագործելու, Լիազոր մարմնին սահմանված ժամկետում ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին կամ հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության մասին կամ չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին չտեղեկացնելը կամ (6) գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի

[190] Օրենսգիրք, հոդված 20, հոդ. 33

հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ պարունակող տարածքներում ընդերքի տեղամասը գտնվելը, եթե ծրագրով նախատեսված է լեռնային փորվածքների անցում և ենթակառուցվածքների ստեղծում, որն ուղեկցվում է հողային ծածկույթի խախտումով)[191]:

[191] Օրենսգիրք, հոդվ 20 հոդ. 33.1, «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-24-Ն, 2019 թվականի ապրիլի 23-ի, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130250

Պատկեր 2.2.2 Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը



Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման գործընթացն ամբողջությամբ կարգավորվում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքով: Մասնավորապես, ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել բացառապես ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

Ընդերքօգտագործման իրավունքի դադարման իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքի 30-րդ հոդվածով: Հաշվետու տարում՝ 2018 թվականին, ընդերքօգտագործման իրավունքը կարող էր դադարել հետևյալ դեպքերում՝

1) լրացել է ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետը,
2) լուծարվել է ընդերքօգտագործող իրավաբանական անձը, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց,
3) լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը,
4) ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է,
5) ընդերքօգտագործողը հայտնաբերել և լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում չի տեղեկացրել,
   - ա. ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին,
   - բ. հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության մասին,
   - գ. չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին:

Սակայն 23.04.2019թ. ՀՕ-24-Ն օրենքով կատարված փոփոխություններով ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարել նաև այն դեպքերում, երբ ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել ՏԿԵՆ սահմանած ժամկետում զգուշացման (մինչև 90 օր) կամ կասեցման (մինչև 120 օր) հիմքերը: Հարկ է նաև նշել, որ «ՀՀ ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (ՀՕ-397-Ն, 16 հուլիսի 2020 թվականի) [192] համաձայն փոփոխություններ են կատարվել Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում: Մասնավորապես, օրենքով ուղղակիորեն նախատեսվել է Շրջակա միջավայրի նախարարության՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարելու դեպքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսված ողջ ծավալով հատկացումներ չկատարելու դեպքում դատական կարգով հայցադիմում ներկայացնելու իրավասությունը:

Կարևոր է նշել, որ ՏԿԵՆ իրավունք չունի որոշում ընդունել ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման կամ կասեցման (կասեցումն ավելացվել է 23.04.2019թ. ՀՕ-24-Ն օրենքով կատարված փոփոխություններով) մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, կամ մինչև կասեցման համար սահմանված ժամկետը լրանալը վերացրել է նշված հիմքերը: Բացի այդ, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումն

[192] «ՀՀ ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145085

ուժի մեջ չի կարող մտնել, քանի դեռ ավարտված չեն ընդերքօգտագործման իրավունք կրողի նկատմամբ վերջինիս իրավունքների հետ կապված դատավարական գործընթացները:

Չնայած նրան, որ Օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (իսկ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը հիմք է ընդերքօգտագործման նպատակով հատկացված հողամասի նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքների դադարեցման համար), սակայն հանրության գերակա շահի սահմանում կամ դրա առանձին դեպքերի նկարագիր ոչ օրենսդրական մակարդակով և ոչ էլ Պայմանագրի օրինակելի ձևում սահմանված չէ:

Ընդերքօգտագործող ընկերությանը սնանկությունը (կամավոր թե հարկադրված), ինչպես նաև սնանկության վտանգը, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման հիմք չեն: Ընկերության սնանկ ճանաչվելու փաստը չի ազատում վերջինիս նաև ընդերքօգտագործման առնչությամբ պարտադիր վճարներից, ինչպես նաև որևէ այլ պարտավորություններից, որոնք տարածվում են ընդերքօգտագործող ընկերությունների վրա (դրանց վրա չի տարածվում մորատորիում), ինչպիսիք են ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքը, ռոյալթին, բնօգտագործման վճարը և այլն:

Ընդերքօգտագործման իրավունքից հրաժարումը. Օրենսգիրքը կարգավորում է նաև ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից և օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման վերաբերյալ իրավահարաբերությունները: Այսպես, երկու դեպքերում էլ համապատասխան սուբյեկտը հրաժարումն ուժի մեջ մտնելու համար պետք է դիմի ՏԿԵՆ իր համար ցանկալի օրվանից առնվազն 3 ամիս առաջ: Հրաժարման համար հարկավոր է ներկայացնել դիմում: Հրաժարման դիմումին կից հարկավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

(i) նշում՝ հրաժարումն ուժի մեջ մտնելու ցանկալի օրվա մասին,
(ii) ընդերքի այն տեղամասի վրա կատարված աշխատանքների մանրամասն նկարագրությունը, որի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից դիմումատուն ցանկանում է հրաժարվել,
(iii) նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

23.04.2019թ. ՀՕ-24-Ն օրենքով կատարված փոփոխություններով նաև մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքերում՝ հարկավոր է դիմումին կից ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման դեպքում այս փաստաթղթերի ցանկին է ավելանում նաև հանքի փակման ծրագիրը,

որում ներառվում են ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը, խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիրը, աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը, մշտադիտարկումների իրականացման ծրագիրը: Բացի դրանից, դիմումին կից պետք է ներկայացվեն նաև հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները և նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

Ընդերքի տեղամասի մի մասի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարվելու մասին դիմումում պետք է նկարագրվի ընդերքի այդ տեղամասը: Դիմումին կցվում են՝

1. ընդերքի այդ տեղամասի նկարագրությունը,
2. երկրաբանական ուսումնասիրության փոփոխված ծրագիրը,
3. տվյալ տեղամասի հատակագիծը, որում պետք է սահմանանշված լինի ընդերքի տեղամասի այն մասը, որի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից ընդերքօգտագործողը ցանկանում է հրաժարվել:

Ընդերքի տեղամասի մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարվելու մասին դիմումին կցվում է ընդերքի տվյալ տեղամասի հատակագիծը, որում պետք է սահմանված լինի ընդերքի տեղամասի այն մասը, որի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից ընդերքօգտագործողը ցանկանում է հրաժարվել, ինչպես նաև փոփոխված նախագիծը:

Եթե հավաստագիրը վերաբերում է երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա լիազոր մարմինը, 30-օրյա ժամկետում քննարկելով դիմումը և երկրաբանական ուսումնասիրության փոփոխված ծրագիրը, դիմումատուին տրամադրում է հրաժարման հավաստագիր, որը կարող է պարունակել երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարման պայմաններ, որի մասին ծանուցում է դիմումատուին:

Հրաժարման հավաստագրի տրամադրումը երաշխավորված չէ, հնարավոր են դեպքեր, երբ ՏԿԵՆ չտրամադրի այն: Այսպես, ՏԿԵՆ հրաժարման հավաստագիր չի տրամադրում փաստաթղթերը պատշաճ ներկայացված չլինելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի մնացած տեղամասը կամ օգտակար հանածոյի արդյունահանման օբյեկտ մնացող ընդերքի տեղամասը չի կարող ընդերքօգտագործման պայմանագրի կամ օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործվել կամ շահագործվել որպես ողջամիտ և համալիր:

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման դեպքում դիմումը մերժվում է նաև, երբ ընդերքի տեղամասի այն մասը, որի նկատմամբ ընդերքօգտագործողը ցանկանում է հրաժարվել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից, չի կարող լինել ընդերքօգտագործման իրավունքի առանձին օբյեկտ:

Կարևոր է նշել, որ ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարումը, ինչպես նաև ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարում, դիմումատուին չեն ազատում ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ մինչև հրաժարման ուժի մեջ մտնելու պահն առաջացած պարտավորություններից և պատասխանատվությունից:

Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին վարչական ակտի հասանելիության իրավական խնդիրները.

Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտով: Յուրաքանչյուր վարչական վարույթի արդյունքում ընդունված որոշում պետք է հասանելի դառնա այն անձին, ում իրավունքների կամ պարտականությունների վերաբերյալ ընդունվել է այդ ակտը: Սակայն կան ոլորտներ, որոնց շրջանակներում ընդունված վարչական ակտերն առնչվում են նաև հանրության շահերին և առաջացնում է անհրաժեշտություն նշված ակտը հրապարակային և հանրության համար հասանելի դարձնել:

Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ վարչական ակտը նույնպես կարող է մեծ հավանականությամբ առնչվել հանրության շահերին (եթե այն պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, որոնք ունեն բնապահպանական, առողջապահական, մարդու իրավունքների հետ առնչվող հետևանքներ) և դրա հասանելիությունը բխում է հենց հանրության շահերից, սակայն միևնույն ժամանակ վերջինիս հասանելիությունը կարող է էական վնաս հասցնել ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձի օրինական շահերին և գործարար համբավին:

ԲՇԽ-ի հետ հանդիպումների ընթացքում բարձրացվել է ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ վարչական ակտերի հրապարակային դարձնելու խնդիրը: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով այս առաջարկի հետ՝ գտնում ենք, որ հրապարակման պետք է ենթակա լինեն միայն օրինական ուժի մեջ մտած վարչական ակտերը:

Այսպես՝ ինչպես ցանկացած այլ վարչական ակտ, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ վարչական ակտը նույնպես կարող է վիճարկվել և կասեցվում է վիճարկման հայցի ուժով ընդհուպ մինչև վիճարկման արդյունքներով կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Ուստի փաստացի կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ իրավունքի դադարեցման վերաբերյալ ակտը հիմնավոր չէ, իսկ դրա ժամանակավրեպ հրապարակումն էական տնտեսական հետևանքներ է առաջացնում ընդերքօգտագործողի համար:

Ուստի, որպեսզի պաշտպանված լինեն երկու կողմերի՝ հանրության և ընդերքօգտագործողների իրավունքներն ու օրինական շահերը, գտնում ենք, որ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ ընդունված վարչական ակտերը կարող են հասանելի դառնալ հանրությանն միայն օրինական ուժի մեջ մտնելու պարագայում և ոչ մի դեպքում չեն կարող հրապարակվել այն դեպքերում, երբ դրանք վիճարկվում են ընդերքօգտագործողի կողմից դատական կարգով:

2.2.3. Ընդերքօգտագործման իրավունքն իրացնելիս հնարավոր իրավախախտումների տեսակները և պատասխանատվության միջոցները

Ինչպես արդեն նշվել էր վերևում, ընդերքօգտագործման իրավունք կրող անձը կարող է զգուշացում ստանալ, կա՛մ կարող է կասեցվել, անգամ դադարեցվել նրա ընդերքօգտագործման իրավունքը, եթե վերջինս, օրինակ, չի կատարում Օրենսգրքով նախատեսված պարտավորությունները, կամ չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները: Սակայն բացի վերոնշյալ բացասական հետևանքներից, ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև պատասխանատվության այլ միջոցներ՝ վարչաիրավական և քրեաիրավական:

Այսպես, որպես ընդհանուր կանոն, Օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսվում է, որ Օրենսգրքի պահանջների խախտման համար ընդերքօգտագործողները և (կամ) նրանց պաշտոնատար անձինք կրում են **Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով պատասխանատվություն**:

Արգելվում է առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացումը: Առանց Օրենսգրքով սահմանված թույլտվությունների օգտակար հանածոների արդյունահանում կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելն առաջացնում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:

(i) Վարչական իրավախախտումները ընդերքօգտագործման ոլորտում

Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքն ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 06-ին, ուժի մեջ է մտել 1986 հունիսի 01-ին: Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքը նախատեսում է մի շարք արարքներ, որոնց կատարումը համարվում է իրավախախտում շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում, սակայն ստորև մենք ներկայացնում ենք միայն ընդերքօգտագործման ոլորտում վարչական իրավախախտումներ հանդիսացող արարքները.

1. *Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման կանոնները և պահանջները խախտելը (Հոդված 60),*
2. *Ընդերքօգտագործման կանոնները խախտելը (Հոդված 60.1),*
3. *Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնները խախտելը (Հոդված 60.2), և*
4. *Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնների խախտումները չվերացնելը (Հոդված 60.3)*

Ստորև կանդրադառնանք վերոգրյալ իրավախախտումներին առանձին-առանձին՝ մատնանշելով նաև յուրաքանչյուր իրավախախտման համար նախատեսված պատժամիջոցը:

Հոդված	Իրավախախտման տեսակ	Պատժամիջոց
Հոդված 60 Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության	Ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն կատարելն առանց հանրապետական երկրաբանական ֆոնդում պետական գրանցում ստանալու, ինչպես նաև ընդերքի երկրաբանական	տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150 000 ՀՀ դրամի չափով

աշխատանքների կատարման կանոնները և պահանջները խախտելը	ուսումնասիրությունների ավարտից հետո երկրաբանական տեղեկատվությունը սահմանված կարգով հանրապետական երկրաբանական ֆոնդ չհանձնելը	
Հոդված 60.1 Ընդերքօգտագործման կանոնները խախտելը	Օգտակար հանածոների արդյունահանման հաստատված նախագծերից շեղումները, որոնք առաջացնում են ընդերքի մասին հավաստի տեղեկատվության և օգտակար հանածոների արդյունավետ օգտագործման էական խախտումներ	առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100 000 ՀՀ դրամի չափով
	Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը	առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150 000 ՀՀ դրամի չափով
	Ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակով շահագործելու դեպքում հաստատված նախագծից շեղումները, որոնք առաջացնում են արտածին երկրաբանական պրոցեսներ՝ փլուզումներ, սողանքներ, սելավներ և այլ վնասակար երևույթներ	առաջացնում են տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150 000 ՀՀ դրամի չափով
	Երկրաբանական և մարկշեյդերական պարբերաբար սպասարկումներ չկատարելը, անհրաժեշտ փաստաթղթեր չվարելը	առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100 000 ՀՀ դրամի չափով
	Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքն առանց համապատասխան թույլտվության օգտագործելը	առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 80 000 ՀՀ դրամի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150 000 ՀՀ դրամի չափով
	Ընդերքի օգտագործման ընթացքում սառեցման (կոնսերվացման) դեպքում կամ ավարտից հետո շահագործման նախագծով նախատեսված ընդերքի պահպանության, այդ թվում՝ հողատեսքերի վերականգնման (ռեկուլտիվացիայի) միջոցառումները թերի կատարելը կամ չկատարելը	առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 80 000 ՀՀ դրամի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150 000 ՀՀ դրամի չափով
Հոդված 60.2. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնները խախտելը	Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան՝ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց կողմից համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելը	առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150 000 ՀՀ դրամի չափով:
Հոդված 60.3. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության կանոնների խախտումները չվերացնելը	1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան՝ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց կողմից համապատասխան հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար սույն օրենսգրքի 60.2-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը կիրառելուց հետո լիազոր պետական կառավարման մարմնի՝ հաշվետվությունը ներկայացնելու գրավոր պահանջն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չկատարելը	առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

	Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում	առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 300 000 ՀՀ դրամի չափով:

Ընդերքի օգտագործման ու պահպանման բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է վարչական գործեր և նշանակում վարչական տույժեր Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 60-րդ և 60.1-րդ (բացառությամբ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակով շահագործելու դեպքի) նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ:

Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովումն իրականացնող Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը քննում է վարչական գործեր և նշանակում վարչական տույժեր սույն օրենսգրքի 60.2-րդ և 60.3-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ:

(ii) Քրեական իրավախախտումները ընդերքօգտագործման ոլորտում

ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 01-ին: ՀՀ քրեական օրենսգիրքը հանցագործություն է համարում մի շարք արարքներ, որոնց կատարման արդյունքում վնաս է հասցվում է շրջակա միջավայրին: Սակայն, ստորև մենք կներկայացնենք միայն սույն Զեկույցի առարկային վերաբերող քրեական իրավախախտումները:

Հոդված	Իրավախախտման տեսակ	Պատժամիջոց
Հոդված 291. Ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելը	Լեռնաարդյունահանող կազմակերպությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորգետնյա շինությունների նախագծման, տեղաբաշխման, շինարարության, շահագործման հանձնելու և շահագործման ընթացքում ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելը, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի մակերեսներն ինքնակամ կառուցապատելը, եթե այդ արարքներն անզգուշությամբ էական վնաս են պատճառել	պատժվում են տուգանքով՝ 200 000-500 000 ՀՀ դրամի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
	Ընդերքի օգտագործման և պահպանության կանոնների խախտմամբ կամ համապատասխան նախագծերի շեղումներով կամ առանց պայմանագրի ընդերքի օգտագործումը, որն էական վնաս է պատճառել մարդու առողջությանը, շրջակա միջավայրին, ընդերքին, դրանում պարփակված օգտակար հանածոներին, շենքերին կամ շինություններին	պատժվում է տուգանքով՝ 700 000-1000 000 ՀՀ դրամի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա

Վերոգրյալ հանցագործությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի դեմ ուղղված բոլոր հանցագործությունները հետապնդվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ՀՀ իրավապահ մարմինների կողմից, իսկ արարքը կատարած անձինք կարող են մեղավոր ճանաչվել միայն ՀՀ դատարանի կողմից կայացված դատավճիռներով:

2.2.4 Ընդերքօգտագործման թույլտվություններ ստացած (օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրեր կնքած) նաև հաշվետու տարում թույլտվություններից զրկված/կասեցված, զգուշացումների ենթարկված ընկերություններ

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերությունների ցանկը հասանելի է ՏԿԵՆ կայքում[193] :ՏԿԵՆ կայքում հրապարակված են ԱՃԹՆ 2019 Ստանդարտի 2.3. պահանջով նախատեսված ամբողջ տեղեկատվությունը, այն է՝ թույլտվություն ստացած ընկերությունների անունները, գործունեության իրականացման վայրը, թույլտվության համարը, գործունեության նպատակը, թույլտվություն տրամադրելու ամսաթիվը, թույլտվության գործողության ժամկետի ավարտը, պայմանագրի ամսաթիվը և համարը, նշումներ պայմանագրի

[193] Հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկությունները հասանելի են ԷԵԲՊ նախարարության կայքում հետևյալ հղումով՝ http://www.minenergy.am/page/569 , իսկ 2019-2020 թվականների վերաբերյալ տեղեկությունները կարելի է գտնել ՏԿԵՆ պաշտոնական կայքում հետևյալ հղումով՝ http://mtad.am/hy/mtad29.29.7/

երկարաձգումների վերաբերյալ, ինչպես նաև այլ նշումներ (օրինակ, ընկերության անվանափոխության մասին):

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների ցանկը նույնպես հասանելի է ՏԿԵՆ կայքում[194]: ՏԿԵՆ կայքում հրապարակված են թույլտվություն ստացած ընկերությունների անվանումները, գործունեության իրականացման վայրի հասցեն, թույլտվության համարը, վերջինիս տրման ամսաթիվը, գործողության ժամկետի ավարտը, պայմանագրի համարը և տրման ամսաթիվը, լեռնահատկացման ակտի համարը և տրման ամսաթիվը, ինչպես նաև այլ նշումներ (օրինակ, ընկերության անվանափոխության, սնանկ ճանաչվելու և այլնի մասին)[195]:

Ըստ ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության, 2018թ. ընթացքում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն մոտքագրվել է 13 հայտ, որից տրամադրվել է 3 թույլտվություն: 2 հայտի բավարարման վերաբերյալ նախարարությունը որոշում կայացրել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված ժամկետում, իսկ մեկի տրամադրման ժամկետի խախտումը պայմանավորված է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված փորձաքննության ժամկետների անհամապատասխանության հետ, մասնավորապես փորձաքննության գործընթացի կասեցման և երկրաձգման հետ:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված պահանջների չբավարարման հիմքով մերժվել է 10 հայտ:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով նախարարություն հայտ չի ներկայացվել:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ունեցող 2 կազմակերպությունների տրվել է զգուշացում՝ տարեկան միջանկյալ հաշվետվություն չներկայացնելու համար: Զգուշացման հիմքերը վերացնելու հիմքով իրավունքի դադարեցման գործընթաց չի սկսվել:

Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող 18 կազմակերպությունների տրվել է զգուշացում՝ օրենսգրքով սահմանված ժամկետում վճարները չվճարելու համար: Զգուշացման հիմքերը վերացնելու հիմքով իրավունք չի դադարեցվել:

[194] *Ibid.*
[195] *Ibid.*

2.3 Տեղեկատվություն ընդերքօգտագործման պայմանագրերի վերաբերյալ

2.3.1 Պայմանագրերի հրապարակման վերաբերյալ պետական քաղաքականությունը

Ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակման վերաբերյալ պետական քաղաքականությունը մանրամասն քննարկվել է ԱՃԹՆ-ի առաջին Զեկույցում: Հաշվետու տարում և սույն զեկույցի ամսաթվի դրությամբ խնդրո առարկա հարցին վերաբերող օրենսդրական դաշտը և պետական քաղաքականությունը մնացել են անփոփոխ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք վերահաստատում ենք առաջին Զեկույցում արտահայտած մեր դիրքորոշումը՝ ստորև համառոտ ներկայացնելով վերջինիս նկարագրությունը:

Այսպես, 2018 թ. մարտի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-191-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 7-ին) վերաշարադրվեց Ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածը՝ մասնավորապես ընդգրկելով հետևյալ խմբագրությամբ 2-րդ մասը.

> *«Լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը»:*

Վերոգրյալ օրենսդրական բարեփոխման արդյունքում այսօր բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը (փոփոխություններով և հավելվածներով հանդերձ) հասանելի են ՏԿԵՆ կայքում:[196]

Աղյուսակ 2.3.1

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերությունների պայմանագրերի համարները, կնքման ամսաթվերը, ընկերությունների գրանցման համարները և ՀՎՀՀ-ները 2020թ. փետրվարի 12-ի դրությամբ

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Գեոռեյդ» ՓԲԸ	264.120.08798	00258804	Թիվ ՊՎ-066,13.07.2012թ.
«Էքուիվես ալլիանս ֆաունդեյշն» ՍՊԸ	264.110.847218	00140736	Թիվ Պ-212,03.08.2015թ.
«Այրն մայնինգ» ՍՊԸ	286.110.929307	02653565	Թիվ Պ-236,25.03.2017թ.
«Պրեմիում մայնինգ» ՍՊԸ	273.110.925468	02652485	Թիվ Պ-237,25.02.2017թ.

[196] http://www.mtad.am/hy/mtad26.12.4/

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Էներգո ինվեստ հոլդինգ» ՓԲԸ	85.120.879763	03021382	Թիվ Պ-238,13.03.2017թ.
«Գոլդեն լենդ» ՍՊԸ	273.110.912900	02649955	Թիվ Պ-245,17.07.2017թ.
«Մետալս մայնինգ գրուպ» ՍՊԸ	273.110.912899	02649947	Թիվ Պ-246,17.07.2017թ.
«Հարուստ մետաղ» ՍՊԸ	278.110.927638	00470677	Թիվ Պ-247,20.10.2017թ.
«Կապպեր պլաս» ՍՊԸ	286.110.944106	02657454	Թիվ Պ-251,13.11.2017թ. Թիվ Պ-252,13.11.2017թ.
«Գալեռ» ՍՊԸ	72.110.955975	09425628	Թիվ Պ-255,14.12.2017թ
«Պոլիմետալ Արմենիա» ՍՊԸ	264.110.849028	00141145	Թիվ Պ-259,31.01.2018թ.
«Նիգ մայնինգ» ՍՊԸ	273.110.965994	02662823	Թիվ Պ-263,04.04.2018թ.
«Ինտեր մայնինգ» ՍՊԸ	282.110.997805	00908544	Թիվ Պ-266,28.03.2018թ.
«Զուդո մետալ» ՍՊԸ	51.110.891426	04228339	Թիվ Պ-269,25.04.2018թ.

Աղյուսակ 2.3.2

Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերությունների պայմանագրերի համարները, կնքման ամսաթվերը, ընկերությունների գրանցման համարները և ՀՎՀՀ-ները 2019 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ:

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	286.110.07682	02709666	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	286.120.58034	04219371	Թիվ 089,2012թ. հունիսի 12
«Սագամար» ՓԲԸ	278.120.03167	00410036	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20
«Լեռ-Էքս» ՍՊԸ	27.110.00893	09412188	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	96.120.00632	06602309	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	39.110.01312	02806526	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	286.110.05872	02580107	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7
«Զաարատ Կապան» ՓԲԸ	27.120.01216	09416902	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27
«Մեգո Գոլդ» ՍՊԸ[197]	77.110.00610	04213127	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28
«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	273.110.02424	01530525	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20

[197] Համաձայն ՏԿԵՆ պաշտոնական կայքում հրապարակված մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվության՝ 2019թ. դեկտեմբերի 13-ից դադարեցվել են «Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ-ի, «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի և «Վայք Գոլդ» ՍՊԸ-ի՝ ընդերքօգտագործման իրավունքները: Առավել մանրամասն տեղեկատվության համար տե՛ս http://www.mtad.am/hy/mtad27.12/?fbclid=IwAR0I7YRGww6ZesU7YoIFikhUsJ04BVHGWIcKDPWK0PBDkZCJEp5r-ePSdns:

Ընդերքօգտագործող	Գրանցման համար	ՀՎՀՀ	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	79.110.00234	09414399	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ[198]	264.120.07314	00091919	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26
«Լիճքվազ» ՓԲԸ	286.120.07744	02710054	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	79.140.00036	09700039	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5
«Ասսաթ» ՍՊԸ	77.110.00569	03807664	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6
«Վայք Գոլդ» ՍՊԸ	264.110.111245	00114369	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30
«Թեղուտ» ՓԲԸ	286.120.06078	02700773	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ[199]	273.110.05412	01569837	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7
«Թաթսթոուն» ՍՊԸ	264.110.06348	00079433	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11 Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	271.110.738775	00118721	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16
«Բակտեկ Էկո» ՍՊԸ	282.110.06759	00870494	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22
«Գեղի Գոլդ» ՍՊԸ	72.110.121815	09423012	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	42.110.01460	03516447	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	27.140.00009	09400818	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	273.110.03365	01544838	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28
«Ղարագուլյաններ» ՓԲԸ	286.120.929505	02583292	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25

2.3.2 Ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրված սոցիալական պարտավորությունները

ԱՃԹՆ Առաջին Զեկույցի շրջանակներում մանրամասն քննարկվել են ընդերքօգտագործողների մի շարք սոցիալական պարտավորությունների վերաբերյալ հարցը: Մասնավորապես դիտարկվել են հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական պարտավորությունները (աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը) և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները:

(iv) Հանքի փակման ծրագրով նախատեսվող սոցիալական պարտավորություններ (աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր)

[198] Պայմանագրի 2019թ. հուլիսի 8-ի փոփոխության համաձայն՝ փոխվել են շինարարական շրջանի և ֆինանսական առաջարկների և ընդերքօգտագործման վճարների (հանքի աշխատանքների, կապիտալ և հանքի կառուցման ընթացքում գործառնական ծախսերի) կատարման, ներդրումների ժամկետները՝ մինչև 2019թ. հուլիսի 1-ից երկարաձգվելով մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:
[199] *Ibid.*

Հաշվետու տարում և սույն Զեկույցի պատրաստման ժամանակ գործող խնդրո առարկա հարցին վերաբերող օրենսդրական դաշտը մնացել է անփոփոխ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք վերահաստատում ենք Առաջին Զեկույցի 177-179 էջերում տեղ գտած մեր դիրքորոշումը և ստորև ներկայացնում ենք վերջինիս համառոտ նկարագրությունը:

ԱՃԹՆ առաջին զեկույցի շրջանակներում արձանագրվել են մի շարք նկատառումներ այն հանքերի փակման ծրագրերի վերաբերյալ, որոնք, ի թիվս այլոց, ներառում է նաև «աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը» (49-րդ հոդված, 2-րդ մաս, 6)-րդ կետ գ) ենթակետ): Այսպես, պետք է առաջին հերթին արձանագրել, որ չնայած աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը ամրագրված է օրենսդրական դաշտում, [200] այդուհանդերձ, ինչպես նախորդ Զեկույցի շրջանակներում, այնպես էլ սույն Զեկույցի ամսաթվի դրությամբ աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի իրականացման կարգ, միջոցառումների ծավալի որոշակիացման ընթացակարգեր, ինչպես նաև նման միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն և արդյունավետության գնահատման չափանիշներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն: Իրավական տեխնիկայի առումով վերոնշյալ դրույթների բացակայությունը Օրենսդրական դաշտում շարունակում է մնալ խնդրահարույց:

Երկրորդը, ինչպես Առաջին Զեկույցում, այնպես էլ սույն Առաջին Զեկույցի ամսաթվի դրությամբ շարունակում է խնդրահարույց մնալ այն ընդերքօգտագործման պայմանագրերի հարցը, որոնք կնքվել են ոչ թե օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով ներկայացված դիմումների արդյունքում տրված ընդերքօգտագործման թույլտվության հիման վրա, այլ ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաների վերաձևակերպման արդյունքում: Ինչպես նախորդ Զեկույցում, այսօր ևս Հաշվետու տարում վերաձևակերպված թույլտվություններից շատերի պարագայում հանքի փակման ծրագրերը շարունակում են բացակայել, ինչի արդյունքում բացակայում է նաև աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը (ինչպես նաև փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների ծրագիրը): Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրո առարկա հարցի օրենսդրական մակարդակով հստակ կարգավորման բացակայության պատճառով հանքի փակման հետ կապված պարտավորությունների և աշխատուժի սոցիալական մեղմացման հետ կապված պարտավորությունների առկայության հարցը պայմանագրերի այս խմբի (վերաձևակերպված պայմանագրերի) դեպքում շարունակում է մնալ վիճելի, հետևաբար և հանքի փակման ծրագիր չներկայացրած կազմակերպությունների պարագայում իրավական առումով աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի առնչությամբ պարտավորությունների հարցը մնում է բաց:

(v) Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ

[200] Օրենսգիրք, հոդված 20, հոդված 49(2)(6)(գ) և հոդված 58(2)(3)(գ)

Ինչպես և հանքի փակման ծրագրով նախատեսվող սոցիալական պարտավորությունների պարագայում, այնպես էլ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների կտրվածքով օրենսդրական դաշտը Հաշվետու տարում և սույն Զեկույցի ամսաթվի դրությամբ մնացել է անփոփոխ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք վերահաստատում ենք Առաջին Զեկույցի 179-րդ էջում տեղ գտած մեր դիրքորոշումը, այն է՝ ինչպես և հանքի փակման ծրագրով նախատեսվող սոցիալական միջոցառումների պարագայում, այստեղ նույնպես օրենսդրորեն որևէ կերպ սահմանված չեն խնդրո առարկա պարտավորությունների ծավալի և բովանդակության գոյացման չափանիշներ: Պարտավորությունների հարկադրման միակ գործող մեխանիզմը փաստացի Օրենսգքրի 30-րդ հոդվածով սահմանված զգուշացման և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ընթացակարգն է: Ընդերքօգտագործողների հետ պայմանագրերում շարադրված սոցիալական պարտավորությունները համառոտ ներկայացված են 2.3.3 աղյուսակում: Արձանագրում ենք նաև, որ ՏԿԵՆ կողմից վերոնշյալ հարցի կարգավորումների վերաբերյալ ներկայումս իրականացվում է ուսումնասիրություն. մասնավորապես՝ վերջինս տնտեսվարողներից պաշտոնապես հայցել է սոցիալական պարտավորությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետու տարում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պարտադիր և կամավոր սոցիալ-տնտեսական ներդրումները ներկայացված են 4.2 բաժնում:

Աղյուսակ 2.3.3

Ընդերքօգտագործման պայմանագրերում շարադրված սոցիալական պարտավորությունները

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ[201]	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես պայմանագրի օրինակելի ձևում տարեկան 3 300 000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 500 000 ՀՀ դրամի բժշկական կենտրոնի ֆինանսական օգնություն և, ընդհանուր առմամբ, 6 500 000 դրամի չափով Ագարակ քաղաքի զարգացման ծրագրերին մասնակցություն:
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	Բացակայում են
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	Բացակայում են
«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 800,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 200,000 ՀՀ դրամ մասնակցություն ավտոճանապարհների վերանորոգմանը
«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 3,600,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Բակտեկ էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 650,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում

[201] Ընկերությունը հայտնել է նաև համայնքի հետ երկկողմ համաձայնագրից բխող պարտադիր վճարների չափերի մասին, ուստի դժվար է տարանջատել ընկերությունների հետ կնքված պայմանագրերում նշված սոցիալական պարտավորությունների կատարման ճշգրիտ չափը:

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները
«Գեղի Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 650,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Յուրաքանչյուր հինգ տարին՝ 12,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 1,200,000 ՀՀ դրամ՝ ազդակիր համայնքներից 2-3 ուսանողների ուսման վարձի տրամադրման նպատակով
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	Բացակայում են
«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 3,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում: Տարեկան 2,030,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության 850 ,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն ընկերության աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծման ֆոնդեր ստեղծելու նպատակով
«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	Բացակայում են
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	Բացակայում են
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 61,500,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները
«Լիճքվազ» ՓԲԸ[202]	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	Բացակայում են
«Զաարատ Կապան» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	Բացակայում են:
«Ղարագուլյաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 1,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում և 250,000 ՀՀ դրամ ուսանողի կիսամյակային ուսման վճարի տրամադրում
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	Բացակայում են
«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	Բացակայում են
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	Բացակայում են
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 12,800,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	Բացակայում են
«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	Բացակայում են
«Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 4,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, ինչպես նաև 3 տարին մեկ 1,000,000 ՀՀ դրամ՝ աղբյուրների վերանորոգման աշխատանքների մասնակցություն և 5 տարին մեկ 1,000,000 ՀՀ դրամ՝ համայնքի ջրագծերի վերանորոգման աշխատանքների նպատակով

[202] Ընկերությունը հայտնել է նաև Մեղրիի համայնքի հետ 29/12/2016թ. կնքված երկկողմ համաձայնագրից բխող պարտադիր վճարների չափերի մասին, ուստի դժվար է տարանջատել ընկերությունների հետ կնքված պայմանագրերում նշված սոցիալական պարտավորությունների կատարման ճշգրիտ չափը:

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Պայմանագրով սահմանված սոցիալական պարտավորությունները
«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	Աշխատուժի սոցիալական մեղմացման միջոցառումները շարադրված են անորոշ, ինչպես Պայմանագրի օրինակելի ձևում Տարեկան 3,000,000 ՀՀ դրամ ներդրում կատարելու պարտականություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	Բացակայում են
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	Բացակայում են

2.4 Իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը

2.4.1 Իրական սեփականատերերի բացահայտման առկա իրավական կարգավորումները (քաղաքականությունը)

(i) Իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող օրենսդրական դաշտի և դրանում տեղ գտած փոփոխությունների ակնարկ

Առաջին Զեկույցում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական դաշտի վերլուծության արդյունքում, մենք արձանագրել էինք, որ ՀՀ օրենսդրությունը թերի է և լիովին չի բավարարում ԱՃԹՆ ստանդարտի 2.5 կետի պահանջներին: Իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական պահանջներն ընդհանրական էին (կիրառելի էին բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ) և բխում էին բացառապես փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի իրավական կարգավորումներից:

Նշված օրենսդրական բացերը հաղթահարելու և իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված պահանջների ներդրումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ մշակվել էր համապատասխան օրենսդրական փոփոխությունների ամբողջական փաթեթ: Նշված բարեփոխումներն անցել են մի քանի փուլ. նախ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերված տեխնիկական աջակցության միջոցով ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի, ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, լիազոր պետական մարմինների պատասխանատուների և այլ շահագրգիռ անձանց հետ համագործակցելով՝ ներգրավված միջազգային և տեղական խորհրդատուների կողմից պատրաստվել էր «Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն»: [203] Վերլուծության արդյունքում արվել են ինստիտուցիոնալ առաջարկություններ:

Նույն խորհրդատուների կողմից մշակվել էր նաև «Հայաստանի Հանրապետության իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը», որը հաստատվել էր ԲՇԽ-ի կողմից:[204]

Արդյունքում, իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված պահանջների ներդրման և համապատասխան օրենսդրական փոփոխությունների պատրաստման նպատակով ՀՀ վարչապետի որոշման հիման վրա[205] ստեղծվել էր միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը քարտուղարության հետ միասին մշակել էր իրական սեփականատերերի բացահայտման

[203] Վերլուծությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/Legal%20Report%20EITI%20Armenia%20Final%20Report%20Arm%20EXE+.pdf

[204] Ճանապարհային քարտեզը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Beneficial%20Ownership/BO%20Roadmap_ARM.pdf

[205] Վարչապետի որոշում թիվ 297-Ա (ընդունվել է 2018թ. մարտի 27-ին), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/decrees/item/18321/

օրենքների նախագծերի փաթեթ: Փաթեթով առաջարկվում էր լրացումներ և փոփոխություններ կատարել Օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում:

Այսպիսով, 2019 թվականին իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում տեղի են ունեցել մի շարք առանցքային բարեփոխումներ: Մասնավորապես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ-25-Ն օրենքի (ընդունված 23 ապրիլի 2019 թվականին)[206], ինչպես նաև «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-24-Ն օրենքի (ընդունված 23 ապրիլի 2019 թվականին)[207] և «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-256-Ն օրենքի (ընդունված 13 նոյեմբերի 2019 թվականին) [208] համաձայն ներդրվել է իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ ինստիտուտը, որի առնչությամբ ստորև ներկայացված է հակիրճ վերլուծություն:

(ii) Իրական սեփականատիրոջ հասկացությունը

Այսպես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն, իրական սեփականատեր է համարվում այն ֆիզիկական անձը, որը.

- առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, այդ թվում՝ փայերին, բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին,
- վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայի, այսուհետ՝ բաժնետոմս) կամ այլ արժեթղթերի միջոցով,
- ստանում է իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսը,
- իրավասու է նշանակելու կամ ազատելու իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց,

[206] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130252
[207] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130250
[208] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137114

- իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ հնարավորություն ունի ազդելու իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկելու կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշելու իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի, օպցիոնի պայմանագրի, բաժնետոմսերի (բաժնեմասերի) փոխարկվող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով:

Վերոգրյալ հիմքերով իրավաբանական անձին տիրապետելու, վերահսկելու կամ եկամուտ ստանալու դեպքերում քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական սեփականատեր՝ անկախ հսկողության, մասնակցության և եկամտի չափից:

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 4.1-րդ կետի համաձայն, իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարգիր կամ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում իրական սեփականատերերի հայտարարագիր լրացնելիս իրական սեփականատեր են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողովի, խորհրդի և գործադիր մարմնի) անդամ ֆիզիկական անձինք, և իրական սեփականատերերի մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները տարածվում են նրանց վրա:

Բացի դրանից, օրենքով նախատեսվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձի, փոխկապակցված իրավաբանական անձանց և փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձանց, փոխկապակցված անձանց և միջանկյալ իրավաբանական անձի հասկացությունները:[209]

Ամփոփելով իրական սեփականատերերի բացահայտման պարտականությանն ուղղված ՀՀ կարգավորումների վերլուծությունը, հարկ ենք համարում արձանագրել նաև հետևյալը. փաստորեն, սկսած 2020 թվականից տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են լինելու ներկայացնել երկու հայտարարագիր՝ ՓԼԱՖ-ի համաձայն՝ իրական շահառուների վերաբերյալ, և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ իրական սեփականատերերի վերաբերյալ: Ակնհայտ է, որ ՓԼԱՖ-ի շրջանակներում կիրառվող իրական շահառուների բացահայտման ռեժիմը չի բավարարում ԱՃԹՆ պահանջներին. հայտարարագրի ներկայացումը պահանջվում է 20 միլիոն դրամը գերազանցելու դեպքում և, բացի այդ, նշված տեղեկատվությունը չի դառնում հրապարակային: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ միևնույն նպատակը հետապնդող օրենսդրական պահանջը, այն է՝ բացահայտել իրավաբանական անձանց իրական, փաստացի և ոչ անվանական շահառուներին և սեփականատերերին, պարտավորեցնում է տնտեսվարող սուբյեկտներին ներկայացնել երկու տարբեր հայտարարգրեր, ինչը լրացուցիչ բեռ է առաջացնում վերջիններիս համար: Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք հետագայում

[209] «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-28 կետերը

ունիֆիկացնել այս երկու հասկացությունները, արդյունքում նաև նախատեսելով մեկ միասնական հայտարարագիր ներկայացնելու պահանջ:

2.4.2 Իրական սեփականատիրոջ վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը, կարգը և ձևը

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն, օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձի վերաբերյալ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառվում են իրական սեփականատիրոջ վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

Աղյուսակ 2.4.1

Իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձի վերաբերյալ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառվող տեղեկությունները

1		ֆիզիկական անձի ինքնությունը հավաստող տվյալները՝ քաղաքացիությունը, անունը, ազգանունը (անձի անունը և ազգանունը նշվում են նաև լատինատառ), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), հաշվառման հասցեն, բնակության վայրի հասցեն (հաշվառման հասցեից տարբերվելու դեպքում), աշխատանքի վայրի անվանումը (վայրերի անվանումները), աշխատանքի վայրի հասցեն (վայրերի հասցեները), կապի միջոցները,
2		միջանկյալ իրավաբանական անձի (անձանց) անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), պետական գրանցման համարը գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը,
3		իրավաբանական անձի (այդ թվում՝ միջանկյալ) կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության կամ իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության մասին տեղեկություններ՝ կատարելով՝
	i.	նշում առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության կամ քվեարկության իրավունքի, կամ տարբեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին տիրապետելու վերաբերյալ՝ նշելով բաժնետոմսերի քանակը, բաժնետոմսերի տոկոսը և ձեռք բերելու ամսաթիվը,
	ii.	նշում իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով վերահսկելու մասին՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի միջոցով՝ նշելով բաժնետոմսերի քանակը, բաժնետոմսերի տոկոսը և ձեռք բերելու ամսաթիվը,
	iii.	նշում իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսի չափով ստացված օգուտի մասին,
	iv.	նշում իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց նշանակելու կամ ազատելու իրավասության մասին,
	v.	նշում իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ իրավաբանական անձի կառավարման վրա ազդելու, կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը վերահսկելու կամ իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով կանխորոշելու

		հնարավորության մասին (ներառյալ՝ գործարքներ կնքելու, հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի և այլ միջոցներով),
	vi.	նշում սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձ հանդիսանալու մասին (ներառյալ՝ նշում, թե ինչ կարգով է հանդիսանում փոխկապակցված անձ).
4		իրավաբանական անձի, ինչպես նաև դուստր և կախյալ ընկերությունների՝ ֆոնդային բորսայում գրանցված լինելու դեպքում՝ ֆոնդային բորսայի անվանումը՝ ներկայացնելով համապատասխան բորսաներում առկա փաստաթղթերի հղումները.
5		պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության անվանումը, եթե իրավաբանական անձը համապատասխանաբար պետական, համայնքային մասնակցությամբ կամ միջազգային կազմակերպություն է՝ նշելով մասնակցության չափը և հսկողության մակարդակը:

Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյան ներկայացված հայտարարագրում նշում է կատարվում իրավաբանական անձի (այդ թվում՝ միջանկյալ) իրական սեփականատիրոջ՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու մասին՝ նշելով տվյալ անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, կազմակերպության անվանումը:

Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը ներկայացվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձանց կողմից յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը: Աղյուսակ 2.4.1-ում նախատեսված տեղեկությունների փոփոխության դեպքում 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է պետական ռեգիստր ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները: Իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում հայտարարագրին կցվում են սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված:

Հարկ է նշել, որ իրական սեփականատերերի բացահայտման վերոգրյալ պահանջը չի տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող իրավաբանական անձանց վրա:

Հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը սահմանված է ՀՀ արդարադատության նախարարի իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին թիվ N 36-Ն հրամանով (այսուհետ նաև՝ «Հրաման»)[210], որն ընդունվել 05 փետրվարի 2020 թվականին, ուժի մեջ է 11 փետրվարի 2020 թվականից:

Հայտարարագիրը ներկայացվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ էլեկտրոնային համակարգում հայտարարագրի լրացման միջոցով: ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում հայտարարագիրն առցանց ներկայացնելու անհնարինության

[210] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=138750

դեպքում հայտարարագիրը թղթային եղանակով ներկայացվում է ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր:

Հայտարարագիրը ներկայացվում է՝ իրավաբանական անձի իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնող անձի կողմից ստորագրված հայտարարությանը կցելով լրացված բոլոր բաժինները: Հայտարարության մեջ նշվում են ներկայացնող անձի անունը և ազգանունը, վերջինիս կարգավիճակը իրավաբանական անձի հետ հարաբերություններում, առդիր էջերի քանակը, ներկայացման օրը, ամիսը և տարին:

Հայտարարագրի հետ միասին կամ դրա ներկայացումից առավելագույնը 1 ամսվա ընթացքում ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր են ներկայացվում իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում իրավասու մարմնի կողմից տրված (այդ թվում՝ օտարերկրյա) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված:

Իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ պետական գրանցումն իրականացվելու համար ներկայացվում են՝

- իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր (հայտարարագրեր),
- իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում իրավասու մարմնի կողմից տրված (այդ թվում՝ օտարերկրյա) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված,
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ պետական գրանցումը հավաստվում է պետական միասնական գրանցամատյանից տրված քաղվածքով, որն ուղարկվում է անձի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև հասանելի է դառնում համացանցում՝ տեղեկատվական համակարգում համապատասխան ծածկագիրը մուտքագրելու պայմանով: Անձի պահանջով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով համապատասխան վճար վճարելու պայմանով անձին կարող է տրվել քաղվածքի արտատպումը (պատճենը). այդ դեպքում պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ Ռեգիստրի համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:

Իրական սեփականատիրոջ պետական գրանցումից հետո՝ երեք տարվա ընթացքում, իրավաբանական անձը պահպանում է իր հայտարարագրում նշված տեղեկությունները հավաստող փաստաթղթերը:

Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը ներկայացվում է լիազոր մարմին հետևյալ դեպքերում՝

- երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու,

- երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր կնքելու,
- օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու,
- ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարվելու,
- օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու, և
- օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարվելու:

Հարկ է նշել, որ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն, իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող առաջին քաղվածքի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանել 2020 թվականի հունվարի 30-ը: Սակայն, հաշվի առնելով, որ իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ներկայացման կարգն ու ձևը նախատեսող ՀՀ արդարադատության նախարարի որոշումն ընդունվել 05 փետրվարի 2020 թվականին, ապա իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող առաջին քաղվածքները ներկայացվել են մինչև 2020 թվականի փետրվարի 20-ը:

2.4.3 Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները չներկայացնելու, կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար պատասխանատվությունը

«Իրավաբանական անձանց պետական գրանցման» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 22-րդ մասը սահմանում է.

«Հայտարարագիրը կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները չներկայացնելու, կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու դեպքում ներկայացնողը ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության:»

Նույն հոդվածի 27-րդ մասը նախատեսում է.

«Իրավաբանական անձի իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության անճշտության ակնհայտ կեղծ կամ ոչ ամբողջական լինելու դեպքում գործակալությունն այդ մասին հաղորդում է ներկայացնում կեղծ կամ ոչ ամբողջական հայտարարագիր ներկայացնելու համար պատասխանատվություն կիրառող լիազոր մարմին:»

Վերոգրյալ նորմերի մեկնաբանությունից բխում է, որ Ռեգիստրը իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության անճշտության, ակնհայտ կեղծ կամ ոչ ամբողջական լինելու մասին տեղեկանալու դեպքում, պարտավոր է այդ մասին հաղորդում ներկայացնել պատասխանատվություն կիրառող լիազոր մարմնին:

Սակայն այստեղ հարց է առաջանում, թե ինչպես պետք է Ռեգիստրը տեղեկանա տեղեկությունների անճշտության կա՛մ կեղծ, կա՛մ ոչ ամբողջական լինելու մասին, և, հետևաբար, համապատասխան հաղորդում ներկայացնել, եթե վերջինս առաջնորդվում է օրենսդրորեն ամրագրված Ռեգիստր ներկայացվող տեղեկատվության արժանահավատության կանխավարկածով:

Մասնավորապես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն *գործակալությունը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, գործակալություն ներկայացվող տեղեկությունների ճշտության ստուգում չի իրականացնում և պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով առաջացած հնարավոր որևէ վնասի համար: Սույն մասով նախատեսված պատասխանատվության սահմանափակումը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ գործակալության աշխատակիցը գիտեր կամ ակնհայտորեն պարտավոր էր իմանալ փաստաթղթերի կեղծ լինելու մասին:*

Ստացվում է, որ Ռեգիստրը չունի իրավասություն ստուգելու ստացված տեղեկատվության արժանահավատությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, որոնք սակայն կրում են ձևական բնույթ, և չեն նախատեսում տեղեկությունների ճշտության ստուգում: Այդ դեպքերից են, օրինակ, տվյալները մուտքագրելուց հետո Ռեգիստրի տեղեկատվական համակարգի կողմից ինքնաշխատ կերպով անձանց պետական գրանցման համար անհրաժեշտ տեղեկատվության ճշտության ստուգումը, որը կատարվում է մուտքագրած տեղեկատվությունը համակարգում պահվող տեղեկատվության հետ համադրելով (*«Իրավաբանական անձանց պետական գրանցման» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մաս, 32-րդ հոդվածի 4-րդ մաս*): Մեկ այլ օրինակ՝ Ռեգիիստրը ստուգում է իրավաբանական անձի կազմավորման կարգը, ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունն ու համապատասխանությունն օրենքի պահանջներին (*«Իրավաբանական անձանց պետական գրանցման» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մաս*), և այլն: Նշված օրինակները մատնանշում են, որ Ռեգիստրը իրականացնում է «տեխնիկական» կամ «ձևական» ստուգում, այնինչ, տեղեկությունների կեղծ լինելու մասին եզրակացության գալու համար, Ռեգիստրը պետք է օժտված լինի ինքնուրույն քննություն իրականացնելու իրավասությամբ, ինչն օրենքով նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար օրենքով նախատեսվող պատժամիջոցներին, ապա Օրենսգրքի 30-րդ հոդվածը սահմանում է պատժամիջոցների հետևյալ տեսակները՝

- գրավոր զգուշացում,
- ընդերքօգտագործման իրավունքի կասեցում
- ընդերքօգտագործման դադարեցում:

Այսպես, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա օրենքով սահմանված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացրել իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը, կամ ներկայացված

տվյալները կեղծ են կամ ոչ ամբողջական: Միևնույն ժամանակ, լիազոր մարմնի կողմից տրված զգուշացմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում, Լիազոր մարմինն ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու վերաբերյալ որոշում է ընդունում: Հարկ է նշել, որ ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելը, որպես պատժամիջոց նախատեսվել է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-24-Ն օրենքով (ընդունված 23 ապրիլի 2019 թվականին)՝ նույն օրենսդրական փաթեթի շրջանակներում:

Կասեցման առավելագույն ժամկետը 120 օր է, որի ընթացքում կասեցման հիմքերը չվերացնելու դեպքում ընդերքօգտագործման իրավունքը դադարում՝ տալով ՏԿԵՆ-ին պայմանագիրը լուծելու իրավունք:

2.4.4 Ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի առուվաճառքը և դրա արդյունքում իրական սեփականատերերի փոփոխությունը

Ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքը կարգավորվում է ընդհանուր կանոններով (բացառությամբ, իհարկե, տնտեսական մրցակցությունը կանոնակարգող կիրառելի նորմերի), և որևէ վերահսկողության չի ենթարկվում լիազոր մարմինների կողմից:

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել էր վերևում, 2019 թվականին ընդունված մի շարք օրենսդրական բարեփոխումների արդյունքում նախատեսվել է օրենսդրական պահանջ, համաձայն որի Ռեգիստրի գրանցամատյանում, ի թիվս այլնի, գրառվում են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները:

Ավելին, օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձը յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը, պետական ռեգիստր է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր (հայտարարագրեր)՝ ստորագրությամբ հավաստելով հայտարարագրված տվյալների ճշգրտությունը: Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում հայտարարագրին կցվում են սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված:

Ընդ որում, վերոգրյալ տեղեկությունների փոփոխության դեպքում 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է պետական ռեգիստր ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները:

Օրենքով նաև նախատեսվում է պատասխանատվություն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիրը կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները չներկայացնելու, կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար:

Այսպիսով, ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքի արդյունքում իրական սեփականատիրոջ փոփոխության դեպքում, նոր կարգավորումների համաձայն, այդ մասին տեղեկատվությունը պետք է ներկայացվի Ռեգիստր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ լիազոր մարմին: Չնայած դրան, գործընթացի նկատմամբ պետության վերահսկողության մեխանիզմները փաստացի բացակայում են:

2.4.5 Ընդերքօգտագործող ընկերությունների իրական սեփականատերերը

ԱՃԹՆ 2019թ. ստանդարտի 2.5-րդ պահանջի (g) կետի համաձայն, ԱՃԹՆ զեկույցը պետք է ներկայացնի ընկերությունների իրական սեփականատերերի և նրանց սեփականության չափի վերաբերյալ տեղեկատվություն: Ստորև աղյուսակում ներկայացված է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձև ունեցող հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից 2020թ. մարտի 11-ին ստացված գրության հիման վրա:

Աղյուսակ 2.4.2

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձև ունեցող ընդերքօգտագործող ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն

Ընդերքօգտագործող	Իրական սեփականատեր
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Վարդան Վոլոդիայի Մարգարյան
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Գյունտեր Պիլարսկի Յուրգեն Պիլարսկի Էլկե Պիլարսկի Յոաքիմ Պիլարսկի Ժան Ժակ ԼուիՊոլ Բաֆֆե Կարեն Հակոբյան Սուրեն Ոսկանյան
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Սամվել Չոբանյան Դմիտրի Կորժև Դմիտրի Տրոիցկիի
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Սիման Պովարենկին Ռոման Տրոցենկո Ռոման Խուդոլի Անատոլի Գոգոտին Օլեգ Բելյաև

Ընդերքօգտագործող	Իրական սեփականատեր
«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Սուրեն Վարդանի Այվազյան Հրաչյա Սուրենի Հովհաննիսյան Արտաշես Ֆիլիկոյի Կակոյան
«Ասսաթ» ՍՊԸ	Արամ Օսիկյան Գևորգ Օսիկյան
«Թաթսթոուն» ՍՊԸ	Արամ Յուրիկի Սաֆարյան Միխայիլ Մոգիլեվսկի Լևոն Պողոսյան
«ԱՏ Մետալ» ՍՊԸ	Սերգեյ Մուլին Գեննադի Մուլին Պավել Խանչին Սերգեյ Արոնով Ռոստիսլավ Պրեսնով Կարեն Համլետի Հովսեփյան Համլետ Բալաբեկի Հովսեփյան Վարդան Համլետի Հովսեփյան
«Գեղի Գոլդ» ՍՊԸ	Սուրիկ Սերգեի Խաչատրյան
«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Գագիկ Կոլյայի Ծառուկյան Սեդրակ Առուստամյան Սամվել Ստյոպայի Ծառուկյան
«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Վարդան Մարգարյան

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2020 թվականի մարտի 11-ի գրության համաձայն «Ֆորչն Ռիզորսիս», «Մարջան Մայնինգ Քոմփանի», «Մեգո Գոլդ», «Հրաշք Մետաղ», «Բակտեկ Էկո» և «Վայք Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները մինչև գրության օրը օրենքով սահմանված կարգով իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր չեն ներկայացվել:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգում այսուհետ զետեղված են նաև օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրեր ունեցող ընկերությունների՝ իրական սեփականատերերի վերաբերյալ ներկայացված հայտարարագրերի լուսապատճենները: Փակ բաժնետիրական ընկերություն կազմակերպաիրավական ձև ունեցող ընդերքօգտագործողների, ինչպես նաև այն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձև ունեցող ընկերությունների, ում մասնակիցներն օտարերկրյա իրավաբանական անձինք են, վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 2.4.3

Փակ բաժնետիրական ընկերություն կազմակերպաիրավական ձև ունեցող ընդերքօգտագործողների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձև ունեցող ընկերություններ՝ 2020 թվականի օգոստոսի 07-ի դրությամբ[211]

Ընդերքօգտագործող	Հայտարարագրված իրական շահառու	Հիմքը
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Հայկ Ալոյան	Գործադիր մարմնի ղեկավար
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Վահե Հակոբյան	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 100%
	Սամվել Խաչատրյան	Գործադիր մարմնի ղեկավար
«Սագամար» ՓԲԸ	Սամվել Չոբանյան	Գործադիր մարմնի ղեկավար
	Դմիտրի Կորժև	Վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 29,66%
	Դմիտրի Տրոիցկի	Վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 70,34%
«Լեռ-Էքս»ՍՊԸ	Թոմաս Պետեր Հայլ	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 12,5%
	Միխայիլ Զուրաբով	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 12,5%
	Միեր Պոլոսկով	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 7,5%
	Նարեկ Ամբարյան	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 2,5%
	Կարեն Հակոբյան	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 2,5%
	Սուրեն Ոսկանյան	Գործադիր մարմնի ղեկավար
«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Ներկայացված չէ	Ներկայացված չէ
«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Սամվել Չոբանյան	Գործադիր մարմնի ղեկավար
	Դմիտրի Կորժև	Վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 29,66%

[211] «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ-ի վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Ընդերքօգտագործող	Հայտարարագրված իրական շահառու	Հիմքը
	Դմիտրի Տրոիցկի	Վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 70,34%
«Չաարատ Կապան» ՓԲԸ	Մարտին Անդերսոն	Անուղղակի վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 35,15%
	Դավիթ Թովմասյան	Գործադիր մարմնի ղեկավար, խորհրդի անդամ
	Սերգեյ Ժուկով	Խորհրդի անդամ
	Դարին Քուփեր	Խորհրդի անդամ
«Մեգո-Գոլդ» ՍՊԸ	Ներկայացված չէ	Ներկայացված չէ
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	Սիման Պովարենկին	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 50.3%
	Ռոման Տրոցենկո	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 95,7443%
	Ռոման Խուդոլի	Խորհրդի անդամ
	Անատոլի Գոգոտին	Գործադիր մարմնի ղեկավար, խորհրդի անդամ
	Անդրեյ Կիշկինսկի	Խորհրդի անդամ
	Օլեգ Բելյաև	Խորհրդի անդամ
«Լիճքվազ» ՓԲԸ	Սասուն Ավետիսյան	100% բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Ռոման Տրոցենկո	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 95.7443%
	Անդրեյ Սինյակով	Գործադիր մարմնի ղեկավար
	Անդրեյ Կիշկինսկի	Խորհրդի անդամ
	Վլադիմիր Լեսնյով	Խորհրդի անդամ
	Ռոման Խուդոլի	Խորհրդի անդամ
«Թեղուտ» ՓԲԸ	Նորիկ Պետրոսյան	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 25.05%, խորհրդի անդամ
	Պավել Կորիչնև	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 25%, բաժնետերերի ընդհանուր ժողովի անդամ
	Sunarto Ltd	Ցուցակված
«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Իան Հագուե	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 45.60%
	Արմեն Միքայելյան	Գործադիր մարմնի ղեկավար

Ընդերքօգտագործող	Հայտարարագրված իրական շահառու	Հիմքը
	Գլոբալ Գոլդ Քորփորեյշն (ԱՄՆ)	Ցուցակված
«ԱՏ-Մետալս» ՍՊԸ[212]	Կարեն Համլետի Հովսեփյան	19.8% մասնակից
	Համլետ Բալաբեկի Հովսեփյան	15% մասնակից
	Վարդան Համլետի Հովսեփյան	15% մասնակից
	Սերգեյ Մուլին	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 25,61%
	Գեննադի Մուլին	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 19%
	Պավել Խանչին	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 7.48%
	Սերգեյ Արոնով	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 7.48%
	Ռոստիսլավ Պրեսնով	Գործադիր մարմնի ղեկավար
«Ղարագյուլյաններ» ՓԲԸ	Լևոն Ղազազյան	25% բաժնետեր, գործադիր մարմնի ղեկավար
	Արմենուշ Գալստյան	35% բաժնետեր
	Ռոլանդ Ղոնյան	Կազմակերպության կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով կարող է ազդել կառավարման վրա (Արմենուշ Գալստյանի ամուսինը լինելու ուժով)
	Ռաֆայել Հայրապետյան	40% բաժնետեր
«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ	Թոմաս Պետեր Հայլ	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 12,5%, խորհրդի անդամ
	Միխայիլ Զուրաբով	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 12,5%
	Միեր Պոլոսկով	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 7,5%, գործադիր մարմնի ղեկավար
	Նարեկ Ամբարյան	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 2,5%, խորհրդի անդամ
	Կարեն Հակոբյան	Անուղղակիորեն վերահսկում կամ տիրապետում է կանոնադրական կապիտալի 2,5%

[212] Ստացվում է, որ «ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ի բոլոր իրական սեփականատերերի մասնակցության հանրագումարը հավասար է 109.37%:

Ընդերքօգտագործող	Հայտարարագրված իրական շահառու	Հիմքը
	Վահե Հակոբյան	Խորհրդի անդամ
	Պարագ Յոհաննես Բհատ	Խորհրդի անդամ

Աղբյուրը՝ *ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգ*[213]

2.5 ՀՀ աուդիտորական և համահարթեցման գործընթացները, պետական բյուջե (պահանջ 5.1 և 5.3)

Աուդիտորական գործընթացներ: Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության և հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[214]:

ՀՀ տարածքում գործում են աշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները, որոնք ներառում են ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները և դրանց վերաբերյալ մեկնաբանությունները:

2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել 2019թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հաշվապահական հաշվառման մասին» (ՀՕ-282-Ն), [215] «Աուդիտորական գործունեության մասին» (ՀՕ-283-Ն) [216] և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» (ՀՕ-284-Ն [217] ՀՀ օրենքները, և նույն պահից ուժը կորցրած են ճանաչվել «Հաշվապահական հաշվառման մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի (ՀՕ-515-Ն) օրենքը և «Աուդիտորական գործունեության մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի (ՀՕ-512-Ն) օրենքը: Սույն օրենքների ընդունմամբ ճշգրտվել է պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը՝ նախկինում գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերությունների ներգրավելուն:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի [218] համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած իրավաբանական

[213] https://www.e-register.am/en/
[214] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130661 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130661
[215] https://www.arlis.am/documentview.aspx?docid=137754
[216] https://www.arlis.am/documentview.aspx?docID=137752
[217] https://www.arlis.am/documentview.aspx?docID=137755 https://www.arlis.am/documentview.aspx?docID=137755
[218] https://www.arlis.am/documentview.aspx?docid=137754

անձինք (ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկները), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները հիմնադիրներին, բաժնետերերին, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ պետական մարմիններին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ամբողջական ՖՀՄՍ-ներ), փոքր ու միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) կամ միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկին համապատասխան:

Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման կարգավորումն ու ֆինանսական հաշվետվությունների կազմման/ներկայացման վերաբերյալ պահանջները կարգավորում են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով[219:]

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ նոր օրենքով կազմակերպությունների և խմբերի դասակարգման չափանիշները և ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը ներկայացվող պահանջները.

[219] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=91454 https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=91454

Աղյուսակ 2.5.1 Կազմակերպությունների և խմբերի դասակարգման չափանիշները և նրանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նկատմամբ պահանջները՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ նոր օրենքի

Տեսակ	Դասակարգման չափանիշ	Ֆինանսական հաշվետվություններին պատրաստմանը ներկայացվող պահանջներ	Ենթակա՞ է պարտադիր աուդիտի
Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն/խումբ[220]	ա) Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող է, բացառությամբ արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող հանդիսացող Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, կամ բ) բանկ է, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն, վերաապահովագրական ընկերություն, ապահովագրական բրոքերային կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ.	Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունը պարտավոր է պատրաստել իր ֆինանսական հաշվետվությունները ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:	Այո

[220] Խումբ, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է

Տեսակ	Դասակարգման չափանիշ	Ֆինանսական հաշվետվություններին պատրաստմանը ներկայացվող պահանջներ	Ենթակա՞ է պարտադիր աուդիտի
Խոշոր կազմակերպություն/խումբ	«Գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը» [221] ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ 10 միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամ (այսուհետ՝ ՀՀ դրամ), բ) գործունեությունից հասույթը՝ 20 միլիարդ ՀՀ դրամ, գ) վիճակագրական կոմիտեի սահմանած կարգով հաշվարկված՝ աշխատողների միջին տարեկան թիվը՝ 250:	Խոշոր կազմակերպությունը պարտավոր է պատրաստել իր ֆինանսական հաշվետվությունները ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն: Խոշոր խումբը ևս պարտավոր է պատրաստել իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:	Այո
Միջին կազմակերպություն/խումբ	«Փոքր կազմակերպություն կամ միկրոկազմակերպություն չէ և չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը» ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ 10 միլիարդ ՀՀ դրամ, բ) գործունեությունից հասույթը՝ 20 միլիարդ ՀՀ դրամ,	Միջին կազմակերպությունը պարտավոր է պատրաստել իր ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն: Եթե միջին կազմակերպությունը իր հայեցողությամբ կիրառում է ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները, ամբողջական ՖՀՄՍ-ների հիման վրա մշակված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր, ապա	Այո

[221] Միայն խոշորի դեպքում

Տեսակ	Դասակարգման չափանիշ	Ֆինանսական հաշվետվություններին պատրաստմանը ներկայացվող պահանջներ	Ենթակա՞ է պարտադիր աուդիտի
	գ) վիճակագրական կոմիտեի սահմանած կարգով հաշվարկված՝ աշխատողների միջին տարեկան թիվը՝ 250:	ֆինանսական հաշվետվությունները պարտավոր է պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն: Միջին խումբը պարտավոր է պատրաստել իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն: Վերոնշյալ իրավական ակտերի կամավոր կիրառման հետ կապված նույն պահանջը գործում է նաև միջին խմբերի համար:	
Փոքր կազմակերպություն/խումբ	«Միկրոկազմակերպություն չէ և չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը» ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ 2 միլիարդ ՀՀ դրամ, բ) գործունեությունից հասույթը՝ 4 միլիարդ ՀՀ դրամ, գ) վիճակագրական կոմիտեի սահմանած կարգով հաշվարկված՝ աշխատողների միջին տարեկան թիվը՝ 100:	Փոքր կազմակերպությունը պարտավոր է պատրաստել իր ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն: Եթե փոքր կազմակերպությունն իր հայեցողությամբ կիրառում է ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները, ամբողջական ՖՀՄՍ-ների հիման վրա մշակված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր, ապա ֆինանսական հաշվետվությունները պարտավոր է պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն: Փոքր խումբը պարտավոր է պատրաստել իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն: Վերոնշյալ իրավական ակտերի	Ոչ

Տեսակ	Դասակարգման չափանիշ	Ֆինանսական հաշվետվություններին պատրաստմանը ներկայացվող պահանջներ	Ենթակա՞ է պարտադիր աուդիտի
		կամավոր կիրառման հետ կապված նույն պահանջը գործում է նաև փոքր խմբերի համար:	
Միկրոկազմակերպություն	«Չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը» ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ 175 միլիոն ՀՀ դրամ, բ) գործունեությունից հասույթը՝ 350 միլիոն ՀՀ դրամ, գ) վիճակագրական կոմիտեի սահմանած կարգով հաշվարկված՝ աշխատողների միջին տարեկան թիվը՝ 10:	Միկրոկազմակերպությունը պարտավոր է պատրաստել իր ֆինանսական հաշվետվությունները միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի պահանջների համաձայն: Եթե միկրոկազմակերպությունն իր հայեցողությամբ կիրառում է ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները, ամբողջական ՖՀՄՍ-ների հիման վրա մշակված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր, ապա ֆինանսական հաշվետվությունները պարտավոր է պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:	Ոչ

Այսպիսով՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը», պարտադիր աուդիտի ենթակա են հետևյալ կազմակերպությունների և խմբերի ֆինանսական հաշվետվությունները

- հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները,
- միջին կազմակերպությունները,
- խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է, և խոշոր խմբերը,
- միջին խմբերը:

Համաձայն վերը ներկայացված օրենքների՝ որոշակի փոփոխություններ կլինեն նաև հանքարդյունաբերության ոլորտում պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների շրջանակում սկսած 2020թ. հունվարի 1-ից: Ելնելով օրենքով պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների նոր չափորոշիչներից՝ Հայաստանի ԱՃԹՆ առաջին զեկույցում[222] կիրառվել են նոր չափորոշիչները և բացահայտվել այն ընկերությունները, որոնք ենթակա են պարտադիր աուդիտի՝ հիմնվելով 2017թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա: Այնուհետև դուրս է բերվել այն ընկերությունների ցանկը, որոնք, ըստ նոր օրենքի, հավանական է, ենթակա դառնան պարտադիր աուդիտի, սակայն նախկինում ենթակա չէին:

Համաձայն հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ «Ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնությունը», բոլոր կազմակերպությունները և խմբերը, բացի փոքր կազմակերպություններից և խմբերից ու միկրոկազմակերպություններից, պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել: Կազմակերպությունները և խմբերը, որոնց տարեկան ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողների, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, որոնք իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են համապատասխանաբար «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում),

[222] Գլուխ՝ 3.5 ՀՀ աուդիտորական և համահարթեցման գործընթացները, պետական բյուջե (պահանջ 5.1 և 5.3), էջ՝ 203-204: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf

պարտավոր են դրանք հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը, իսկ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման ընկերությունների ինտերնետային կայքում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում[223] կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում, եթե կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները հրապարակել է իր ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Ֆինանսական հաշվետվությունները հրապարակումից հետո առնվազն հինգ տարի պետք է պահպանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են:

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են միայն աուդիտ անցնելուց հետո՝ աուդիտորական եզրակացությամբ, բացառությամբ սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների, որոնց ֆինանսական հաշվետվությունները կարող են աուդիտի չենթարկվել: Հավելված 1-ը ներառում է տեղեկատվություն արտաքին աուդիտ անցած հանքարդյունահանող ընկերությունների վերաբերյալ: 2018թ. 26 մետաղական հանքարդյունահանող ընկերություններից 5-ը («Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ, «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ, «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Լեռ-Էքս» ՍՊԸ, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ) անցել են աուդիտ: Նշված 5 ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների հղումները տրամադրված են Հավելված 1-ում:

Աուդիտորական գործունեության իրականացումը ՀՀ-ում կարգավորվում է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով,[224] «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով[225] (երկուսն էլ ընդունված 2019թ. դեկտեմբերի 4-ին), աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով, Մասնագիտական էթիկայի կանոնագրքով և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով նախատեսված իրավական այլ ակտերով:

Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) Աուդիտի և հավաստիացման միջազգային ստանդարտների խորհրդի (IAASB) հրապարակած և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի

[223] http://www.azdarar.am http://www.azdarar.am
[224] https://www.arlis.am/documentview.aspx?docID=137752
[225] https://www.arlis.am/documentview.aspx?docID=137755]

համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված են հետևյալ միջազգային ստանդարտները.

- որակի հսկողության միջազգային ստանդարտներ (ISQC),
- աուդիտի միջազգային ստանդարտներ (ISA),
- դիտարկման առաջադրանքների միջազգային ստանդարտներ (ISRE),
- հավաստիացման (բացի աուդիտը և դիտարկումը) միջազգային ստանդարտներ (ISAE),
- հարակից ծառայությունների միջազգային ստանդարտներ (ISRS):

Մասնագիտական էթիկայի կանոնագիրքը իրենից ներկայացնում է Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (IESBA) հրապարակած և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը:

Աուդիտը աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության ստուգումն է այդ տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ անկախ կարծիք արտահայտելու նպատակով, որն իրականացվում է աուդիտորական եզրակացություն տրամադրելու միջոցով: «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի[226] 10-րդ «Աուդիտը» հոդվածի համաձայն՝ աուդիտը կարող է իրականացվել աուդիտի ենթարկվող անձի նախաձեռնությամբ (կամավոր աուդիտ) կամ երբ այն նախատեսված է օրենքով (պարտադիր աուդիտ): Նույն հոդվածի 3-րդ մասով հստակեցվում է, որ պարտադիր աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստված լինեն Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն: Կամավոր աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ նման պահանջ չկա, և ֆինանսական հաշվետվությունները կարող են պատրաստված լինել նաև այլ հիմունքներով:

Բացի այդ, «Կուտակային կենսաթոշակների մասին»[227] ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, կենսաթոշակային ֆոնդի և նրա կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է http://www.azdarar.am/՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել, ինչպես

[226] https://www.arlis.am/documentview.aspx?docID=137752
[227] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64546

նաև իր կայքում տեղադրել ընկերության ֆինանսական հաշվետվությունները և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[228] ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն, ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտի՝ աուդիտ իրականացնող անձի կողմից: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում աուդիտ իրականացնող անձը կարող է աուդիտորական ծառայություն մատուցել ընկերությանը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» [229] ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր տարի բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

Գործող օրենսդրության համաձայն, բացառությամբ վերոնշյալ ընդհանուր պահանջների, հանքարդյունաբերական ընկերությունների համար աուդիտ իրականացնելու կամ այլ հաշվետվություններ ներկայացնելու ուղղակի պահանջ գոյություն չունի:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի [230] հոդված 5-ի 3-րդ պարբերության համաձայն, ՀՀ նախարարություններում ներքին աուդիտի համակարգը գործում է նախարարի, ՀՀ կառավարության ենթակա պետական կառավարման այլ մարմիններում՝ մարմնի ղեկավարի, ՀՀ համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ ՀՀ օրենքների հիման վրա ստեղծված այլ պետական մարմիններում՝ տվյալ մարմնի ղեկավարի ենթակայությամբ:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ կազմակերպության ղեկավարությանը հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով:

Ընդհանուր առմամբ, նախարարությունների ներքին աուդիտի ստորաբաժանումը՝

- Օժանդակում է նախարարությանը, նրա առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև ենթակա կազմակերպություններին ողջ հանրության առջև հաշվետու լինելու հարցում,
- Նվազեցնում է խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի հավանականությունը,

[228] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66322
[229] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80071
[230] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65056

- Աուդիտի է ենթարկում նախարարության, նրա առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ենթակա կազմակերպությունների գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները, այդ թվում՝ ներքին հսկողության համակարգերը,
- Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտորների վարքագծի կանոնների և հետևյալ սկզբունքների համաձայն՝
    a. Անկախություն,
    b. Օբյեկտիվություն,
    c. Կարողունակություն,
    d. Անկողմնակալություն,
    e. Գաղտնիություն:

Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների համար հասանելի են կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջական, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտ իրականացնելու համար:

Միաժամանակ պետք է նշել, որ 2018թ. ընդունված ՀՀ «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի[231] 5-րդ հոդվածի համաձայն, Հաշվեքննիչ պալատը իրավասու է ուսումնասիրել իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը: Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է հաշվեքննության ենթակա մարմիններից և կազմակերպություններից:

1) Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացնում է օրինականության և տնտեսման, նպատակային ու ծախսային արդյունավետության սկզբունքների համաձայն:
2) Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, հսկողության և կառավարչական գործընթացների հետ կապված ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվեքննիչ պալատ պետական մարմնում ստեղծվում է որակի կառավարման համակարգ:
3) Հաշվեքննիչ պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են ամենամյա արտաքին աուդիտի՝ մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից:
4) Հաշվեքննիչ պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության մրցույթը կազմակերպում է Ազգային ժողովի աշխատակազմը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և

[231] http://armsai.am/hy/orenq

արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Սույն օրենքով սահմանված հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակի ապահովման համար հաշվեքննիչ պալատն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննության իրականացում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ.

Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում: Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն չի իրականացնում պետական և համայնքային բյուջեների միջոցներից չֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում:

2) սույն մասի 1-ին կետում նշված հաշվեքննության շրջանակներում սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, այն է՝

Հաշվեքննիչ պալատն ստուգում չի իրականացնում այն իրավաբանական անձանց մոտ, որոնց վերապահված են պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներ, և դրանց իրականացումը չի ֆինանսավորվում պետական կամ համայնքային բյուջեներից: Հաշվեքննիչ պալատը 1-ին մասով սահմանված հաշվեքննության շրջանակում ստուգում է իրականացնում իրավաբանական անձի մոտ, եթե՝

1) ոչ առևտրային իրավաբանական անձը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից.
2) առևտրային իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի 50-ից ավելի տոկոսը պետական կամ համայնքային մասնակցությամբ է.
3) իրավաբանական անձին իրավական ակտով և պայմանագրով վերապահվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթների իրականացում՝ պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին՝ միայն սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, եթե դրանցով նախատեսված է նման ստուգման հնարավորություն.
4) իրավաբանական անձը պայմանագրով ստացել է պետական բյուջեից վարկեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական երաշխիքով ապահովված վարկեր կամ այլ ֆինանսական միջոցներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն.

5) իրավաբանական անձը պայմանագրով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների կողմից ստացել է դրամաշնորհներ կամ սուբսիդիաներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն:

Յուրաքանչյուր տարի հաշվեքննիչ պալատը հաստատում է գործունեության ծրագիրը մեկ տարվա համար՝ հաշվեքննիչ պալատի նախորդ գործունեության ծրագրի ավարտման ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ:

Գործունեության ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝

- պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն,
- հաշվեքննություն՝ ըստ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ կազմված հաշվեքննության առարկայի, հաշվեքննվող օբյեկտի, հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման և այլն:

Համահարթեցման գործընթաց: Ֆինանսական համահարթեցումը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է «Ֆինանսական համահարթեցման մասին»[232] ՀՀ օրենքով՝ ընդունված 2016թ. հոկտեմբերի 20-ին:

Օրենքը սահմանում է համահարթեցումը որպես համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցում, որն իրականացվում է համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար:

Օրենքն ամրագրում է որոշակի ծախսային գործոններ, որոնք ազդեցություն ունեն համայնքներին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման վրա և որոնցով բնութագրվում են տվյալ համայնքի առանձնահատկությունները: Այդ գործոններն են, մասնավորապես՝

1) մասշտաբի գործոն,

2) տրանսպորտային մատչելիության գործոն,

3) համայնքի բարձրադիրության գործոն,

4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործոն,

5) բնակչության տարիքային կառուցվածքի գործոն:

Այսպես, *մասշտաբի ծախսային գործոնը* արտացոլում է բնակչության քանակի ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Ստորև բերված

[232] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94584

սանդղակը ցույց է տալիս, թե ինչպես է հաշվարկվում գործոնի արժեքը ըստ համայնքի բնակչության քանակի.

Բնակչության քանակի միջակայք	ՄԳ$_i$
0-3,500 բնակիչ	1.0
3,501-5,000 բնակիչ	2.8
5,001-20,000 բնակիչ	2.0
20,001-150,000 բնակիչ	1.5
150,001-ից ավելի բնակիչ	1.0

Վերոնշյալ սանդղակի համատեքստում **ՄԳ$_i$**-ն արտացոլում է համայնքի մասշտաբի ծախսային գործոնի արժեքը:
Հաջորդը՝ *տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնն է*, որը ենթադրում է համայնքի հեռավորության ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Նշենք, որ այս գործոնի բանաձևում ներառվում են այնպիսի տարրեր, ինչպիսիք են համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից, մարզկենտրոնից, հեռավորությունը շրջկենտրոնից, ինչպես նաև բոլոր համայնքների միջին հեռավորությունը մայրաքաղաքից:[233]

Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնը ցույց է տալիս բարձրադիրության ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Վերջինս հաշվարկվում է համաձայն համայնքի բարձրադիրության նիշի՝ ըստ հետևյալ սանդղակի.

Համայնքի բարձրադիրության նիշի միջակայք	ԲԳ$_i$
մինչև 1,700 մ	1.0
1,700-2,000 մ	1.1
2,000 մ -ից ավել	1.25

Վերոնշյալ սանդղակի համատեքստում **ԲԳ$_i$**-ն արտացոլում է համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի արժեքը:

Հաջորդը՝ *համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնն է*, որը ենթադրում է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա: Նշված գործոնի բանաձևում հաշվի է առնվում ինչպես համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի արժեքը, այնպես էլ ընդգրկված բնակավայրերի թիվը:[234]

[233] Բանաձևը և նշանակությունը կարելի է գտնել հետևյալ հղումով՝ (հոդված 12)
[234] Նույնը՝ հոդված 14

Օրենքը նախատեսում է *բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնի* հաշվարկման կարգը: Այս գործոնի շրջանակներում հաշվի են առնվում այնպիսի տարրեր, ինչպիսիք են համայնքի բնակչության թիվը, համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվը, բոլոր համայնքների 0-16 տարեկան բնակչության թվի հանրագումարը, բոլոր համայնքների կենսաթոշակային տարիքի (63 տարեկանից բարձր) բնակչության թվի հանրագումարը, ինչպես նաև բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարը (ՀՀ բնակչության թիվը)[235]: Միաժամանակ նշենք, որ օրենքը չի նախատեսում հանքերի շահագործմանը առնչվող որևէ գործոն:

Պետական բյուջե: 1997թ.-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի համաձայն,[236] ՀՀ բյուջետային համակարգը երկու մակարդակի բյուջեների՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների ամբողջությունն է: ՀՀ բյուջետային համակարգը հիմնվում է բյուջեների ինքնուրույնության, բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման ամբողջականության, բյուջեների հրապարակայնության, բյուջեների իրատեսության և այլ հիմնարար սկզբունքների վրա: ՀՀ բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

Բյուջեների կատարումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ համապատասխանաբար պետական և համայնքների բյուջեների ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է: Բյուջեների կատարումն իրականացվում է միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա, որը նախատեսում է բյուջեների բոլոր մուտքերի մուտքագրումը և ելքերի կատարումը՝ պետական լիազորված մարմնի միասնական գանձապետական հաշվով: Բյուջեի եկամուտների միասնականությունը անհնար է դարձնում ճշգրտել որևէ եկամուտի հետագա տեղաբաշխումը:[237]

Պետական բյուջեի ամենամյա նախագծի մշակման աշխատանքները կատարում է կառավարությունը՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման հիման վրա, օրենքով նախատեսված ժամկետներում: Պետական բյուջեի նախագծի մշակումը բաղկացած է երկու փուլից.

ա) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում,

բ) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակում:

[235] Նույնը՝ հոդված 15

[236] Հայաստանի Հանրապետության օրենքը ՀՀ բյուջետային համակարգի մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/documentview.aspx?DocID=121480

[237] «Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին» օրենքը ամրագրում է միայն այն պահանջը, որ բնապահպանական ծրագրերի գծով պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020թ.-ից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

Պետական բյուջեի նախագիծը օրենքով սահմանված կարգով ներկայացվում է Ազգային ժողով, որտեղ այն քննարկվում և հաստատվում է: Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Համայնքի բյուջեները ձևավորվում են ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի ավագանու կողմից ընդունված համայնքի զարգացման եռամյա ծրագրի հիման վրա: Համայնքային բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը և ներկայացնում համայնքի ավագանու քննարկմանը: Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին: Համայնքի ավագանին համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև պետական բյուջեի հաստատումը: Համայնքի բյուջեի չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը կարող է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարց բարձրացնել: Եթե համայնքի ավագանին եռօրյա ժամկետում ղեկավարի հրաժարականի մասին որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված:

Պետական բյուջեի նախագիծը ներառում է կառավարության բյուջետային ուղերձը և Պետական բյուջեի մասին օրենքը: Բյուջետային ուղերձը ներառում է սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին կառավարության զեկույցը և պետության սոցիալ-տնտեսական վիճակի առաջիկա երեք տարվա կանխատեսումը: Պետական բյուջեի մասին օրենքը[238] ներառում է պետական բյուջեի եկամուտները և ծախսերը, բյուջեի դեֆիցիտը կամ հավելուրդը և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները: Պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը տվյալ տարվա պետական բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման աղբյուրն է:

Համայնքային բյուջեների կառուցվածքը ներառում է համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասեր:[239] Ի լրումն, համայնքի բյուջեն ունի պահուստային ֆոնդ, որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեի չկանխատեսված ելքերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման համար: Բացի համայնքների բյուջեներից, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորում կատարվում է պետական բյուջեից՝ այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին:

Պետական բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է: Կառավարությունը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: Պետական բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ իր սահմանած կարգով: Պետական բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Ազգային ժողովը:

[238] Հայաստանի Հանրապետության օրենքը ՀՀ բյուջետային համակարգի մասին, հոդում 236

[239] Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» , հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271

Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը:

Համայնքային բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, իսկ վերահսկողություն իրականացնող մարմինները համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունն են՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին:

Պետական և համայնքային բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար կառավարությունը և համայնքների ղեկավարները պետական և համայնքային բյուջեների հաստատումից հետո համապատասխանաբար եռօրյա և հնգօրյա ժամկետներում բյուջեները հրապարակում են http://azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Չնայած նրան, որ 1997թ. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» մասին օրենքը թելադրում է, որ համացանցի և մամուլի միջոցով երաշխավորվի, որ բյուջեների նախագծերի և տարեկան հաշվետվությունների հետ ծանոթանալ և դրանք ուսումնասիրել ցանկացող յուրաքանչյուր անձ կարողանա դյուրությամբ ձեռք բերել համապատասխան փաստաթղթերը, օրենքը չի պահանջում, որ բյուջեների նախագծերը մինչև ընդունվելը դրվեն հանրային քննարկման կարծիքների և առաջարկությունների համար:

Աղյուսակ 2.5.2

2016-2018թթ. ՀՀ համախմբված բյուջեների չափը՝ սահմանված 2016-2018 թթ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներով [240]

ՀՀ Համախմբված բյուջեն	2016, մլրդ դրամ	2017, մլրդ դրամ	2018, մլրդ դրամ
Եկամուտների գծով	1,223	1,244	1,343
Ծախսերի գծով	1,416	1,394	1,501
Դեֆիցիտը	192	150	157

2016-2018թթ. ՀՀ պետական բյուջեն նախատեսել է որոշ հատկացումներ լեռնարդյունահանման ոլորտին, որոնք ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

[240] https://www.arlis.am/documentview.aspx?DocID=111471
https://www.arlis.am/documentview.aspx?DocID=119841
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126060https://www.arlis.am/documentview.aspx?DocID=111471
https://www.arlis.am/documentview.aspx?DocID=119841
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126060
https://www.arlis.am/documentview.aspx?DocID=111471
https://www.arlis.am/documentview.aspx?DocID=119841
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126060

Աղյուսակ 2.5.3

2016-2018թթ. պետական բյուջեից լեռնաարդյունահանման ոլորտին կատարված հատկացումները

	Հանքային ռեսուրսների, բացառությամբ բնական վառելիքի, արդյունահանմանը կատարված հատկացումներ, հազար ՀՀ դրամ	Լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար կատարված հատկացումներ, հազար ՀՀ դրամ
2016	20,602	42,400
2017	20,571	120,235
2018	16,926	36,295

Համաձայն բյուջեների կատարման հաշվետվությունների, ինչպես նաև բյուջեների մանրամասն ծրագրերի, հանքային ռեսուրսների, բացառությամբ բնական վառելիքի արդյունահանմանը կատարված հատկացումները ուղղվել են ՏԿԵՆ՝ ընդերքի մասին տեղեկատվության տրամադրումը ապահովելու համար: Իրենց հերթին, լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար կատարված հատկացումները ուղղվել են 1) ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման և շենքերի տեխնիկական վիճակի հետազննությունների և տեխնիկական անձնագրավորման համար և 2) ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական վերլուծական և տեղեկատվական ծառայությունների համար:

Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում պետական մասնակցությամբ ձեռնարկություններ գոյություն չունեն:

3 ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

3 ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

3.1 Մետաղական օգտակար հանածոների պաշարները հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.1)

2010-2018թթ. ընթացքում ՀՀ տարածքում հաստատվել են մետաղական օգտակար հանածոների զգալի պաշարներ: Հաստատված պաշարների ամենամեծ ծավալը բաժին է ընկնում երկաթին, այնուհետև ոսկուն, մագնեզիումին, պղնձին և քրոմիտին: Առկա են այնպիսի մետաղների հաշվեկշռային պաշարներ, ինչպիսիք են ցինկը, կապարը և մոլիբդենը: ՀՀ տարածքում 2010-2018թթ. հաշվառվել են նաև ուղեկից բաղադրիչներ (թելուր, բիսմութ, ռենիում, պլատին, պալադիում, ծծումբ, սելեն):

Ըստ 2010-2018 թթ.-ին մետաղական հանքաքարերի հաստատված պաշարների մասին ՏԿԵՆ կողմից տրամադրված տեղեկատվության՝ Լոռու մարզը՝ ի համեմատ այլ մարզերի, ունի օգտակար հանածոների հաստատված ամենամեծ պաշարները, որոնց հիմնական բաղադրիչը երկաթն է (երկաթի հաստատված հաշվեկշռային պաշարների 100%) և համեմատաբար փոքր քանակով՝ ոսկին (ոսկու հաստատված հաշվեկշռային պաշարների 7%): Մետաղական օգտակար հանածոների պաշարներով երկրորդ մարզը Սյունիքն է, որտեղ տեղակայված են ոսկու հաստատված հաշվեկշռային պաշարների 42%-ը և պղնձի պաշարների 100%-ը: Սյունիքի մարզում են գտնվում նաև ցինկի հաստատված հաշվեկշռային պաշարների 99%-ը և մոլիբդենի ողջ պաշարները: Մետաղական օգտակար հանածոների պաշարներով երրորդ մարզը Վայոց Ձորն է, որտեղ գտնվում է ոսկու 2010-2018թթ-ին հաստատված պաշարների 11%-ը: Մագնեզիումի և քրոմիտի օգտակար հանածոների հաստատված բոլոր պաշարները տեղակայված են Գեղարքունիքի մարզում: Արագածոտնի մարզում գտնվում է ոսկու հաստատված պաշարների ամենափոքր մասնաբաժինը՝ 3%-ը:

2018թ. ընթացքում նոր մետաղական հանքավայրեր չեն հայտնաբերվել, օգտակար հանածոյի պաշարներ չեն գնահատվել և հաստատվել, հետևաբար ՀՀ տարածքում հաստատված մետաղական հանքաքարերի պաշարների մասին տեղեկատվությունը բերված ԱՃԹՆ-ի առաջին զեկույցում անփոփոխ է մնացել:

Ստորև ներկայացված է 2010-2018թթ. ՀՀ տարածքում հաստատված մետաղական հանքաքարի պաշարների տեղաբաշխումն ըստ մարզերի:

Գծապատկեր 3.1.1

2010 – 2018թթ.-ին մետաղական հանքաքարի հաստատված քանակն ըստ մարզերի, հազար տոննա



Գծապատկեր 3.1.2

2010–2018թթ.ն մետաղական օգտակար հանածոների հաստատված պաշարները ըստ մարզերի, հազար տոննա



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Գծապատկեր 3.1.3

2010–2018թթ. ոսկու և արծաթի հաստատված պաշարները, ըստ մարզերի, հազար տոննա



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

3.2 Ընդերքի հետախուզում (պահանջ 3.1)

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) տալիս է երկրաբանական ուսումնասիրության հետևյալ ձևակերպումը՝

«Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները»:

Երկրաբանական ուսումնասիրության արդյունքում գնահատված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկությունների արժանահավատությունը գնահատելուց հետո լիազոր մարմինը իրավունք չունի բացահայտելու, եթե, օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ընդերքօգտագործողը լիազոր մարմնին է դիմում երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետը 1 տարի ժամկետով երկարաձգելու համար օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծ կազմելու և օրենսգրքով սահմանված կարգով արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով: Երկրաբանական ուսումնասիրություններ կատարելուն ուղղված ներդրումները հանդիսանում են հանքարդյունաբերության ոլորտի զարգացման կարևոր նախապայման:

Գծապատկեր 3.2.1 Երկրաբանական աշխատանքների ծավալը 2010–2018թթ., մլն ՀՀ Դրամ



Աղբյուրը՝ *ՀՀ վիճակագրական կոմիտե՝ armstat.am*[241]

[241] Երկրաբանական ուսումնասիրություններ https://armstat.am/file/article/eco_book_2018_3.pdf

Երկրաբանական աշխատանքների իրականացման համար ներդրումները ծավալային կտրուկ աճ են գրանցել 2014թ.-ին, որը, մասնավորապես, կապված է ուսումնասիրությունների քանակի, ուսումնասիրությունների ծրագրերով նախատեսված և անցկացված լեռնային փորվածքների քանակի, ինչպես նաև ուսումնասիրությունների մանրակրկիտ հետախուզական փուլի ավարտի հետ: 2014-2017թթ.-ին նկատվել է սույն աշխատանքների ծավալային նվազում 2014թ.-ի համապատասխան տվյալի նկատմամբ -74%-ով: 2018թ.-ին, սակայն, երկրաբանական աշխատանքների ծավալը աճել է 188%-ով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ: 2018թ. արձանագրված աճը կապված չէ աշխատանքների քանակի հետ, այլ պայմանավորված է աշխատանքների տեսակի փոփոխությամբ: Վերջինս հիմնականում բացատրվում է աշխատանքների նոր, ավելի ծախսատար փուլի անցումով:

Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեին ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2018թ.-ին կատարված երկրաբանական ուսումնասիրությունների ճշգրտված ընդհանուր ծավալը կազմել է 1,017.1 մլն ՀՀ դրամ: Այդ աշխատանքները ամբողջությամբ կատարվել են ընդերքօգտագործողների ֆինանսական միջոցների հաշվին: Առավել մանրամասն տեղեկատվություն, ըստ ուսումնասիրությունների բնագավառների և աշխատափուլերի, ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 3.2.2

Երկրաբանական ուսումնասիրություններն ըստ բնագավառների և աշխատափուլերի, 2018թ., մլն ՀՀ դրամ[242]

Բնագավառը	2018	
	Ընդամենը	Որոնողական
Գունավոր մետաղներ	2.0	2.0
Ազնիվ մետաղներ	1,008.4	1,008.4
Ոչ մետաղներ	6.7	6.7
Երկրաբանական ուսումնասիրությունների ընդհանուր ծավալը	1,017.1	1,017.1

Աղբյուրը՝ *ՀՀ վիճակագրական կոմիտե՝ armstat.am[243]*

[242] **Որոնողական աշխատանքներ՝** Այս փուլի նպատակը հանքանյութերի կանխատեսման համար բավարար երկրաբանական հիմք ձևավորելն է: Այս փուլի արդյունքում որոշվում են կառույցներ, ձևավորումներ և տարածքներ, որոնք նպաստավոր են հանքանյութերի հայտնաբերման համար, ստեղծվում են 1:1 500,000 – 1:50,000 մասշտաբի երկրաբանական քարտեզներ, գնահատվում են P2 և P3 դասերին պատկանող հանքանյութերը:

Որոնողա-գնահատողական՝ Այս փուլում իրականացվում է տարածքի երկրաբանական ուսումնասիրություն. հայտնաբերվում են հանքանյութերի դրսևորումները: Այս փուլի արդյունքը տեղանքի երկրաբանական կառուցվածքի, հեռանկարային տարածքների և P1 և P2 դասի ռեսուրսների համապարփակ ուսումնասիրությունն է:

Նախնական հետախուզական՝ Այս փուլում իրականացվում է հանքավայրի արդյունաբերական արժեքի գնահատում: Այս փուլի արդյունքն է հանդիսանում հանքավայրի արդյունաբերական արժեքի, պահուստների գնահատման և C1, C2 և P1 դասերին պատկանող ռեսուրսների վերաբերյալ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն է :

Մանրակրկիտ հետախուզական՝ Այս փուլում իրականացվում է հանքավայրի երկրաբանական կառուցվածքի, հանքանյութերի որակական և տեխնոլոգիական հատկությունների և տեղանքի հիդրոերկրաբանական ու ճարտարագիտա-երկրաբանական պայմանների ուսումնասիրություն: Արդյունքում ստանում ենք հանքավայրերի զարգացման և ըստ A, B, C1, C2 կատեգորիաների հանքանյութերի պաշարների պայմաններ և տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:

[243] Երկրաբանական ուսումնասիրությունները 2018թ. https://www.armstat.am/file/article/sv_03_19a_5280.pdf

2010–2018թթ. ընթացքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների կարևոր ծրագրերի նկարագրություն: 2010-2018թթ. ընթացքում ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերում իրականացվող երկրաբանական ուսումնասիրության ծրագրերից կարևորվում են հետախուզական աշխատանքների վերջին փուլի ծրագրերը, քանի որ մեծ է իրականացված աշխատանքների դրական արդյունքների (օգտակար հանածոների պաշարների գնահատման և հաստատման) ստացման հավանականությունը: Այդ աշխատանքներն իրականացվել են ներքոշարադրյալ հանքավայրերում՝

- ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայր՝ պաշարները գնահատվել են 2015թ.,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ցիցքարի ոսկու հանքավայր՝ պաշարները գնահատվել են 2016թ.,
- ՀՀ Լոռու մարզի Արջուտի ոսկու հանքավայր՝ պաշարները գնահատվել են 2014թ.:

Երկրաբանական ուսումնասիրությունների շրջանակներում իրականացվող այն աշխատանքները, որոնք օրենքով սահմանված կարգով, երկարաձգվել են համապատասխանաբար երեք անգամ (յուրաքանչյուր անգամ երկուական տարով), գտնվում են հետախուզման աշխատանքների վերջին փուլում: Հետևաբար, այդ աշխատանքներն ունեն կարևորագույն նշանակություն, քանի որ առկա է մեծ հավանականություն, որ որպես վերջնական արդյունք կհաստատվեն համապատասխան պաշարներ:

Հավելված 7-ում ներկայացված աղյուսակում արտացոլված է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Սույն տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՏԿԵՆ համապատասխան ստորաբաժանման կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման շրջանակներում և հասանելի է նախարարության պաշտոնական կայքում:[244] Հարկ է նշել, որ 2020թ. փետրվարի 12-ի դրությամբ գործող օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած կազմակերպությունների ցանկը կարելի է տեսնել նույն հղումով, ինչպես նաև ներկայացված է սույն զեկույցի աղյուսակ 2.3.1-ում: Վերոնշյալ կազմակերպությունները պետք է իրականացնեն օգտակար հանածոյի որոնողական փուլի աշխատանքներ, հետևաբար դրանցից հնարավոր չէ առանձնացնել առավել կարևորները:

[244] Տեղեկությունը հասանելի է ՀՀ ՏԿԵՆ նախարարության կայքում՝ http://mtad.am/hy/mtad27.12.2/

3.3 Արդյունահանումը, արտադրություն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)

Հայաստանում արդյունահանվող հիմնական մետաղական օգտակար հանածոներն են պղինձը, մոլիբդենն ու ոսկին: Ըստ ՏԿԵՆ տվյալների՝ օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայր, ներառյալ՝ 42 մետաղական հանքավայր: Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 24 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 1 մոլիբդենային, 1 ալյումինահանքային, 1 մագնեզիումասիլիկատային ապարների և քրոմիտի և 3 երկաթահանքային հանքավայրեր: 2018թ.-ին ընդերքօգտագործող յուրաքանչյուր ընկերության շահագործած հանքավայրերի մասին տեղեկությունը ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 3.3.1
2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների շահագործած հանքավայրերը

N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայրը/տեղամասը, Մարզը	Օգտակար հանածոյի անվանումը
1	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Ագարակի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
2	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Շամլուղի պղնձի հանքավայր, Լոռի	պղինձ
3	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Այգեձորի պղնձամոլիբդենայինհանքավայրի կենտրոնական տեղամաս , Սյունիք	պղինձ, մոլիբդեն
4	«Ասսաթ» ՍՊԸ	Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամաս, Լոռի	ոսկի, արծաթ
5	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Մեղրասարի ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի
6	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Արջուտի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ, պղինձ
7	«Գեղի Գոլդ ՍՊԸ»	Ոսկեձորի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ
8	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Սոթքի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Գեղարքունիք	ոսկի, արծաթ
9	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
10	«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի պղնձի հանքավայր, Սյունիք	պղինձ
11	«Թաթսթոուն» ՍՊԸ	Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թղկուտի տեղամաս, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
12	«Թեղուտ» ՓԲԸ	Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Լոռի	պղինձ, մոլիբդեն
13	«Լեռ-Էքս»ՍՊԸ	Հանքասարի պղնձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
14	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի «Տիգրանես», «Արտավազդես» և «Էրատո» տեղամասեր, Վայոց Ձոր	ոսկի, արծաթ

N	Ընկերության անվանումը	Շահագործած հանքավայրը/տեղամասը, Մարզը	Օգտակար հանածոյի անվանումը
15	«Լիճքվազ» ՓԲԸ	Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ
16	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
17	«Ղարագյուլյաններ» ՓԲԸ	Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
18	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Սյունիք	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
19	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թուխմանուկի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամաս, Արագածոտն	ոսկի, արծաթ
20	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Մեղրաձորի ոսկու հանքավայր, Կոտայք	ոսկի, արծաթ, թելուր
21	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայր, Սյունիք	պղինձ, մոլիբդեն
22	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Մղարթի ոսկու հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ
23	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Մեղրաձորի ոսկու հանքավայրի «Լուսաջուր» տեղամաս, Կոտայք	ոսկի, արծաթ, թելուր, բիսմուտ
24	«Սագամար» ՓԲԸ	Արմանիսի ոսկու բազմամետաղային հանքավայր, Լոռի	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
25	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Վայոց Ձոր	ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, կապար
26	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայր, Վայոց Ձոր	ոսկի, արծաթ, ցինկ, կապար
27	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Հրազդանի երկաթի հանքավայր, Կոտայք	երկաթ

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

Համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկությունների՝ 2018թ.-ի ընթացքում մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունահանման մեջ գերակշռում է պղնձի կամ պղինձ-մոլիբդենային հանքաքարը՝ կազմելով շուրջ 25 միլիոն տոննա, որից արտադրվել է պղնձի և մոլիբդենի խտանյութ և ֆեռոմոլիբդեն: Հարկ է նշել, որ Հայաստանի պղնձի և պղինձ-մոլիբդենային հանքարարը հարուստ է նաև վճարային համարվող ոսկով և արծաթով:

Աղյուսակ 3.3.2

2018թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունահանած հիմնական արտադրատեսակները

	Ընկերությունը	Հանքաքարի տեսակը	Ծավալը, տոննա
1	«Լիճքվազ» ՓԲԸ	Ոսկի, արծաթ և պղինձ պարունակող հանքաքար	40,031
2	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու հանքաքար	72,025
3	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու հանքաքար	1,141,600
4	«Ախթալայի լեռնահարստացվման կոմբինատ» ՓԲԸ	Պղնձի հանքաքար	560,397
5	«Թեղուտ» ՓԲԸ	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	243,730
6	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	21,286,100
7	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պղինձ-մոլիբդենային հանքաքար	3,213,951
8	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Ոսկի-բազմամետաղային հանքաքար	637,441

Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված տվյալներով,[245] 2018թ.ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալը կազմել է 300,745 մլն ՀՀ դրամ, որը կազմել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի արժեքի 15.5%-ը: Հարկ է նշել, որ 2017թ.-ի արդյունքներով մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալը կազմել է 341,099 մլն ՀՀ դրամ: Տվյալ ցուցանիշի նվազումը կարելի է բացատրել Լոռու մարզում գտնվող Թեղուտի հանքի շահագործման ժամանակավոր դադարեցմամբ:

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունքի մեծ մասը ստեղծվել է Սյունիքի մարզում, որն ավանդաբար հանդիսանում է հանքարդյունաբերական ոլորտում առաջատար՝ 2018թ.-ին շուրջ 86% մասնաբաժնով: Հաջորդը Գեղարքունիքի մարզն է, որին 2018թ.-ին բաժին է ընկել ամբողջ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի 6.3%-ը: Հարկ է նշել, որ Լոռու մարզի ներդրումը հանքարդյունաբերության ոլորտում զգալի նվազել է 2018թ.-ին՝ կազմելով ամբողջ ոլորտի արտադրանքի 2%-ը (2017թ. մարզին բաժին է ընկել արտադրանքի 23%-ը): Սույն փոփոխությունը կապված է «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատանքային գործունեության ժամանակավոր դադարեցմամբ:

Հայաստանի մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի հիմնական արտադրատեսակը պղնձի խտանյութն է: Բացի պղնձից, զգալի չափերով արտադրվում է նաև մոլիբդենի խտանյութ, ֆեռոմոլիբդեն, ցինկի խտանյութ: Թանկարժեք մետաղներից Հայաստանում արտադրվում է ոսկու հանքաքար, ինչպես նաև ոսկու և արծաթի համաձուլվածք: Ստորև ներկայացված գծապատկերը և աղյուսակն ամփոփում են 2013-2018թթ. հանքարդյունաբերության

[245] Տե՛ս https://armstat.am/file/doc/99516788.pdf էջ 273

ոլորտի և դրա մաս կազմող մետաղական հանքարդյունաբերության արտադրանքի ծավալը դրամային արտահայտությամբ:

Գծապատկեր 3.3.1 Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տարածքային արտադրանքի ծավալները դրամական արտահայտությամբ, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը» հրապարակումը համապատասխան տարիների համար*[246]

Աղյուսակ 3.3.3
Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտի թողարկած արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ

Մարզ	2015	2016	2017	2018
Գեղարքունիք	8,279	14,854	15,089	18,886
Լոռի	10,695	66,515	79,088	7,263
Կոտայք	1,099	2,547	1,517	1,567
Սյունիք	168,165	167,184	236,667	259,558
Ընդհանուր	188,238	251,099	332,362	287,274

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը» հրապարակումը համապատասխան տարիների համար*[247]

[246] Տե՛ս https://www.armstat.am/file/article/marzer_2018_11.pdf էջեր 35-43
[247] Տե՛ս https://www.armstat.am/file/article/marzer_2018_11.pdf էջեր 35-43

Գծապատկեր 3.3.2

2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակների մասնաբաժինը դրամական արտահայտությամբ՝



Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

Աղյուսակ 3.3.4

2018թ. մետաղական հանքաքարի արդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և արժեքը

	Ընկերությունը	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն դրամ
1	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	5.5	0.69
2	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	2,881	1,580
3	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	գրամ	4,602,155	58,611
4	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	13,956	4,771
5	«Թեղուտ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	3,435	2,156

	Ընկերությունը	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Դրամային արժեքը, մլն դրամ
6	«Թեղուտ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյութ	թմտ	62	228
7	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	269,919	65,700
8	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Ֆեռոմոլիբդեն	տոննա	7,183	39,813
9	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	38,212	15,728
10	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Մոլիբդենի խտանյութ	թմտ	676	2,178
11	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Ոսկու պարունակությամբ պղնձի խտանյութ	թմտ	9,898	21,948
12	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Ցինկի խտանյութ	թմտ	12,188	9,576

Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

Պղնձի խտանյութ

Պղինձը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի հիմնական հանքային տեսակն է: Ներկայումս Հայաստանում ընկերությունների կողմից շահագործվում է 6 պղինձ-մոլիբդենային և 2 պղնձի հանքավայր: Համաձայն ՀՀ ՎԿ-ի 2013-2018թթ. «Արդյունաբերական կազմակերպություններում հիմանական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակման՝ 2013-2017թթ-ի ընթացքում պղնձի խտանյութի արտադրությունը նշանակալիորեն աճել է՝ 2017թ-ին հասնելով 428,500 տոննայի: 2013-2017թթ. տարեկան միջին աճը կազմել է 23.5%: Այն հատկապես նշանակալի էր 2015թ.-ի ընթացքում՝ 64.1%: Այնուամենայնիվ, 2018թ.-ին պղնձի խտանյութի արտադրությունը կտրուկ նվազել է՝ հասնելով 317,400 տոննայի (-25.9%): Տվյալ ցուցանիշը պայմանավորված է Լոռու մարզում գտնվող Թեղուտի հանքի շահագործման դադարեցմամբ՝ կապված «Թեղուտ» ՓԲԸ-ի ֆինանսական և Թեղուտի պոչամբարի տեխնիկական խնդիրների հետ: 2018թ.-ին տվյալ կազմակերպությունն արտադրել է ընդամենը 3,435 թմտ պղնձի խտանյութ, այնինչ 2017թ.-ին այն արտադրել էր 122,320 թմտ, ինչը նշանակում է, որ ընկերության արտադրական ծավալը նվազել է մոտ 36 անգամ:

Գծապատկեր 3.3.3

2013-2018թթ.-ին պղնձի խտանյութի արտադրությունը և պղնձի միջազգային գինը



Աղբյուրը՝*ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակումը [248] համապատասխան տարիների համար, միջազգային գնին վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից[249]*

Պղնձի արտադրման առաջատարը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն է: Այս ընկերությանը 2018թ.-ին բաժին է ընկել Հայաստանում արտադրված պղնձի խտանյութի մոտ 80%-ը: Շուկայի այլ մեծ դերակատարներից է «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որին բաժին է ընկնում արտադրության 11%-ը:

Համաշխարհային բանկի հրապարակած տեղեկությունների համաձայն՝ պղնձի միջազգային շուկայական գինը նվազման միտում է ցուցաբերել 2013թ.-ից (7,332 ԱՄՆ դոլար/տ) մինչև 2016թ.-ը (4,868 ԱՄՆ դոլար/տ)՝ միջինում տարեկան նվազելով 12.8%-ով: Այնուհետև, վերջին երկու տարիներին դիտարկվել է գների զգալի աճ, հատկապես 2017թ.-ին՝ 26.7%: 2018թ.-ի դրությամբ պղնձի միջազգային գինը կազմել է 6,530 ԱՄՆ դոլար/տ:

Պղնձի միջազգային գների տատանումներն իրենց համապատասխան հետևանքն են թողնում Հայաստանում մետաղական հանքարդյունաբերական ոլորտում և ուղղակիորեն ազդում են ընկերությունների կողմից պղնձի խտանյութի արտադրական ծավալների վրա: Հատկանշական է,

[248] ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ».
2013թ.՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2135
2014թ.՝https://www.armstat.am/file/article/bnexen_12_2014.pdf
2015թ.՝ https://armstat.am/am/?nid=82&id=1740
2016թ.՝ https://www.armstat.am/file/article/bnexen_12_2016.pdf
2017թ.՝ https://www.armstat.am/file/article/bnexen_12_2017.pdf
2018թ,՝ https://armstat.am/file/article/bnexen__12_2018.pdf
[249] https://databank.worldbank.org/databases/commodity-price-data

որ վերջին երկու տարիներին պղնձի միջազգային գնի աճին զուգահեռ պղնձի խտանյութի արտադրությունը և՛ ծավալային, և՛ արժեքային առումներով աճ է գրանցել: Ընդերքօգտագործող ընկերությունների ներկայացուցիչների շրջանում անցկացված հարցումները վկայում են մետաղի միջազգային գնի և տեղական արտադրական ծավալների միջև դրական փոխհարաբերակցության գոյության մասին: Այսինքն, գների դրական փոփոխությունը բերում է արտադրական ծավալների ընդլայնմանը, իսկ անկումը՝ դրանց կրճատմանը: Չնայած սրան՝ երբեմն կարող է հանդիպել հակառակ պրակտիկան, համաձայն որի գնանկության ժամանակ արտադրական ծավալները ընդլայնվում են՝ միավոր արտադրանքի ինքնարժեքը նվազեցնելու նպատակով: Մասնավորապես՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ը 2016-2017թթ. պղնձի միջազգային գների 27% աճի պարագայում ավելացրել է արտադրության ծավալը 21%-ով: «Զաարատ Կապան» ՓԲԸ-ը 2016-2017թթ. ավելացրել է արտադրության ծավալները 47%-ով, իսկ 2017-2018թթ., գների 6 % աճի պարագայում ավելացրել է արտադրությունը 23%-ով:

Աղյուսակ 3.3.5

2018թ.-ին պղնձի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Ախթալա	13,956	4,771
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	3,435	2,156
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	269,919	65,700
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	38,212	15,728
«Զաարատ Կապան » ՓԲԸ[250]	ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան	9,898	21,948
Ընդհանուր		335,420	110,303

Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

Մոլիբդենի խտանյութ և ֆեռոմոլիբդեն

Մոլիբդենի արտադրատեսակներից Հայաստանում արտադրվում է մոլիբդենի խտանյութ և ֆեռոմոլիբդեն: Վերջին հինգ տարիների ընթացքում մոլիբդենի արտադրությունը ցուցաբերել է տարբեր դինամիկաներ: Մոլիբդենի արտադրության ռեկորդային ծավալը գրանցվել է 2014թ.-ին, որին 2015թ.-ին հաջորդել է խտանյութի արտադրության նվազումը 11.6%-ով: 2016-2018թթ-ին մոլիբդենի արտադրության ծավալը աճել է՝ մոտենալով նախկին պատմական բարձր ցուցանիշներին: Ֆեռոմոլիբդենի արտադրության դինամիկայի պատկերը փոքր ինչ այլ է: Այստեղ նույնպես նկատվում են տարբեր դինամիկաներ՝ զուգահեռ մոլիբդենի արտադրության ծավալների

[250] Նախկինում՝ «Կապանի Լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

դինամիկաների՝ բացառությամբ 2014թ.-ի նվազման: Բացի դրանից, վերջին հինգ տարիների ընթացքում ֆեռոմոլիբդենի արտադրությունը գրանցել է 1.9% միջին տարեկան աճի տեմպ, իսկ մոլիբդենի խտանյութի արտադրությունը նույն ժամանակահատվածում գրանցել է -0.9% միջին տարեկան աճի տեմպ:

2013-2018թթ.ն մոլիբդենի միջազգային գինը, ընդհանուր առմամբ, ցուցաբերել է նվազման միտում: Չնայած 2014թ.-ի աճին՝ 2015-2016թթ.-ին նկատվում է կտրուկ անկում՝ համապատասխանաբար -29% և -20%: 2017թ.-ից ի վեր մոլիբդենի միջազգային գինը փոքր-ինչ վերականգնվել է, սակայն դեռ շարունակում է մնալ բավական ցածր՝ պատմական միջին ցուցանիշի հետ համեմատած:

Գծապատկեր 3.3.4

2013-2018թթ.ն մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտադրությունը և մոլիբդենի միջազգային գինը



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակումը համապատասխան տարիների համար, միջազգային գնին վերաբերող տեղեկատվությունը վերցվել է metalary.com կայքից*

Աղյուսակ 3.3.6

2018թ. մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
Մոլիբդենի խտանյութ, թմտ			
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	62	228
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	676	2,178
Ֆեռոմոլիբդեն, տոննա			
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան	7,183	39,813

Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

Ցինկի հանքաքար և խտանյութ

Հայաստանում ցինկ արտադրող միակ ընկերությունն է «Զաարատ Կապան» ՓԲԸ-ն [251], որը գործում է Սյունիքի մարզում: Ցինկի խտանյութն արտադրվում է որպես պղինձ-բազմամետաղային հանքաքարի հավելանյութ, ինչի պատճառով սույն մետաղի արտադրության ծավալների և ցինկի միջազգային գնի փոխհարաբերակցությունն ընդգծված չէ: Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ ցինկի արտադրությունը զգալիորեն նվազել է 2013-2016թթ.-ի ընթացքում՝ հատկապես 2016թ.-ին, երբ ցինկի արդյունաբերությունը հասել է իր ամենացածր մակարդակին (7,891 տոննա)՝ նվազելով մոտ 30%-ով: Այնուհետև ցինկի արդյունաբերության ծավալը սկսել է վերականգնվել հաջորդող երկու տարիներին՝ գրանցելով 22% և 12% աճ՝ համապատասխանաբար 2017 և 2018թ.-ին: Կարելի է ենթադրել, որ ցինկի արտադրության ծավալների աճը պայմանավորված է ցինկի միջազգային գների բարձրացմամբ:

[251] Նախկինում՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

Գծապատկեր 3.3.5

2013-2018թթ. ցինկի խտանյութի արտադրությունը և ցինկի միջազգային գինը



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակումը համապատասխան տարիների համար, Համաշխարհային բանկի տվյալների բազա*

Աղյուսակ 3.3.7

2018թ.-ին ցինկի խտանյութի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Զաարատ Կապան» ՓԲԸ	Սյունիքի մարզ, Կապան	12,188	9,576

Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են «Զաարատ Կապան» ՓԲԸ-ի կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

Աղյուսակ 3.3.8

Ընդերքօգտագործող ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացած տեղեկատվության համեմատություն

Արտադրատեսակը	Արտադրանքի ծավալը (տոննա) ըստ ՀՀ ՎԿ-ի	Արտադրանքի ծավալը (թմտ) ըստ ընկերությունների
Պղնձի խտանյութ	317,400	335,420
Մոլիբդենի խտանյութ	11,110	738
Ֆեռոմոլիբդեն	7,275	7,183
Ցինկի խտանյութ	10,828	12,188

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների և ՀՀ ՎԿ-ի կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Վերը նշված երկու աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրումը ցույց է տալիս, որ առկա են տարբերություններ պղնձի, մոլիբդենի, ֆեռոմոլիբդենի և ցինկի արտադրատեսակների ծավալների միջև:

Պղնձի և ցինկի խտանյութերի դեպքում ընկերությունների բացահայտած արտադրական ծավալները գերազանցում են ՀՀ ՎԿ-ի արձանագրած ծավալները՝ համապատասխանաբար 5.8% և 12.6%-ով: ՀՀ ՎԿ-ից արված հարցումների արդյունքում պարզվել է, որ այս տարբերությունը կարելի է վերագրել օգտագործված տարբեր չափման միավորներին: Մասնավորապես՝ ԱՃԹՆ-ի շրջանակում բացահայտված ծավալները հաշվարկվել են թաց մետրիկ տոննայով (թմտ), իսկ ՀՀ ՎԿ-ի հրապարակած ծավալները հաշվարկված են չոր մետրիկ տոննայով (չմտ):

Պատկերը այլ է ֆեռոմոլիբդենի և մոլիբդենի խտանյութի դեպքում: ՎԿ-ի արձնագրած ֆեռոմոլիբդենի արտադրական ծավալը գերազանցում է ըներ ությունների ներկայացրած ծավալը 55%-ով, իսկ մոլիբդենի խտանյութի դեպքում՝ շուրջ 14 անգամ: Տարբերություններն առաջացել են նրանից, որ ԶՊՄԿ-ն ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում բացահայտել է միայն ֆեռոմոլիբդենի ծավալները՝ որպես արտադրանքի վերջնական արդյունք, մինչդեռ ՀՀ ՎԿ-ին ներկայացրել է արտադրված մոլիբդենի խտանյութի ծավալը: ԶՊՄԿ-ն ներգրավել է երրորդ կողմի կապալառու ընկերություն մոլիբդենի խտանյութից ֆեռոմոլիբդեն արտադրելու համար: Վերջինս չի ներգրավվել ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում, սակայն դրա արտադրած ֆեռոմոլիբդենի ծավալն արձանագրվել է ՀՀ ՎԿ-ի կողմից: Բացի դրանից, ՀՀ ՎԿ-ից կատարած հարցումների արդյունքներում պարզվել է, որ կան ֆեռոմոլիբդեն արտադրող երրորդ ընկերություններ, որոնք չեն ներառվել ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում:

Թանկարժեք մետաղներ

2012-2015թթ.-ին ոսկու միջազգային գինը կրել է շարունակական անկում՝ 1,670 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիայից հասնելով մինչև 1,161 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիայի: 2016թ.-ին ոսկու գները սկսեցին դանդաղորեն վերականգնվել՝ 2018թ.-ին հասնելով 1,269 ԱՄՆ դոլար/տրոյական ունցիայի: Հայաստանում ոսկու ամենաշատ արտադրվող արտադրատեսակը ոսկու և արծաթի դորե համաձուլվածքն է, որի արժեքային ծավալը արտադրության ընդհանուրի մեջ կազմել է ավելի քան 97%: 2017 և 2018թթ.-ին Հայաստանում ոսկու և արծաթի դորե համաձուլվածքի արտադրական ծավալներն աճել են՝ համապատասխանաբար 14% և 16%-ով: Հաշվի առնելով ոսկու մեկ տրոյական ունցիայի գնի աճը վերը նշված ժամանակահատվածում՝ կարելի է եզրահանգել, որ ոսկու և արծաթի դորե համաձուլվածքի արտադրանքի դրամային ծավալի աճը պայմանավորված է ոսկու միջազգային գների համապատասխան աճով:

ՀՀ ՎԿ-ն չի հրապարակում թանկարժեք մետաղների տարանջատման առավել մանրամասն տվյալները (օր ՝ ոսկի, արծաթ և այլն), քանի որ, համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի զ) ենթակետի, այդ տվյալները դասվում են պետական և ծառայողական գաղտնիքների շարքին: Այս պատճառով, հասանելի են միայն ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում ընկերությունների կողմից

բացահայտված 2018թ.-ի ոսկու արտադրմանը վերաբերող տվյալները, որոնք ներկայացված են ստորև՝ ոսկու միջազգային գնի 2012-2018թթ.-ի դինամիկայի հետ համատեղ:

Գծապատկեր 3.3.6

2012-2018թթ. ոսկու մեկ տրոյական ունցիայի գինը, ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ *Համաշխարհային բանկի 2017-2018թթ. «Ապրանքային Շուկաների Նկարագիր» ("Commodity Markets Outlook") զեկույց*

Աղյուսակ 3.3.9

2018թ. ոսկու արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Ծավալը, տոննա	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Գեղամասար	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	4.6	58,611
«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Մեղրաձոր	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	2,881	1,580
Վայք Գոլդ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, Ազատեկ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	5.5	0.69

Աղբյուրը՝ *Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար*

2018թ.-ին ոսկու արտադրատեսակների ցանկը կրճատվել է 2016-2017թթ-ի համեմատ: Մասնավորապես՝ 2018թ.-ին «ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ն չի արտադրել կամ իրացրել որևէ արտադրատեսակ, քանի որ ընկերությունը ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը, իսկ «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ը դադարեցրել է ոսկու և արծաթի համաձուլվածքի արտադրությունը, քանի որ վերոգրյալ մետաղի համաձուլվածքի արտադրությամբ զբաղվել է երրորդ կողմ՝ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն, որի և «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի գործողության ժամկետը լրացել է և չի երկարաձգվել նոր ժամկետով: «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն հիմնել է սեփական ոսկու վերամշակման ֆաբրիկա և ներկայումս արտադրում է միայն ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ:

3.4 Իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2 և 3.3)

3.4.1 Արտահանումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում և մետաղների միջազգային գների վերլուծություն

Համաձայն ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը Հայաստանի Հանրապետության ընդհանուր արտահանման մեջ 2018թ.-ին կազմել է 35,9 % (856.4 մլն ԱՄՆ դոլար)՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 7.9%-ով: Դրանից 22 %-ը բաժին է ընկել պղնձի խտանյութին, 7.4 %-ը՝ ոսկուն, 5.3%-ը՝ ֆեռոմոլիբդենին, 0.9%-ը՝ ցինկի խտանյութին և 0.3%-ը՝ մոլիբդենի խտանյութին:

Մետաղական արտադրատեսակների արտահանման բնեղեն ծավալները 2013-2017թթ.-ին ցուցաբերել են հստակ աճի միտում՝ 199 հազար տոննայից հասնելով 493 հազար տոննայի: Հատկանշական է 2015թ. աճը (59%), որը կարելի է բացատրել Լոռու մարզում Թեղուտի հանքի շահագործմամբ: Սակայն, 2018թ. մետաղական արտադրատեսակների արտահանման ծավալները նվազել են 10%-ով, որը մասամբ կապված է վերոնշյալ հանքի շահագործման դադարեցմամբ: Արտահանված ընդհանուր հանքանյութի արժեքը 2013թ. համեմատ զգալիորեն աճել է՝ 479.6 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 856.4 մլն ԱՄՆ դոլարի: Չնայած 2014թ. նվազմանը (6.2 %)՝ 2013-2018թթ. ընթացքում նկատվում է ընդհանուր աճի միտում՝ տարեկան 12.3% աճի միջին ցուցանիշով: Տվյալ աճի տեմպը կարելի է հիմնականում վերագրել պղնձի խտանյութի և ոսկու արտադրատեսակների արտահանման արժեքների աճով: Մասնավորապես, վերջին հինգ տարիներին արտահանված պղնձի խտանյութի ընդհանուր արժեքը աճել է մոտ 1.9 անգամ, իսկ ոսկունը՝ 2.4 անգամ:

Գծապատկեր 3.4.1

2018թ. ընդհանուր արտահանումը, մետաղական արտադրատեսակների մասնաբաժինը արտահանման մեջ, մլն ԱՄՆ դոլար[252]



Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Պղնձի խտանյութերը կազմում են հանքանյութերի արտահանման ընդհանուր ծավալի գերակշիռ մասը: 2018թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 95.6%: Նույն թվականին ցինկի խտանյութերը կազմել են խտանյութերի արտահանման ծավալի 2.8%-ը, իսկ ֆեռոմոլիբդենի՝ 1.6%-ը: 2013–2018թթ-ին ոսկու և մոլիբդենի խտանյութի ծավալները բնեղեն արտահայտությամբ փոքր են եղել, ինչ իսկ պատճառով ներկայացված չեն ստորև ցուցադրված գծապատկերի մեջ:

Գծապատկեր 3.4.2

[252] ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության ապրանքների դասակարգումը հիմնված է Համաձայնեցված «Ապրանքների համաձայնեցված նկարագրման և կոդավորվամն համակարգների» (Harmonized Commodity Description and Coding Systems) միջազգային անվանակարգի վրա, որը պղնձի, մոլիբդենի և ցինկի դեպքում կիրառում է «հանքաքարեր և խտանյութեր» (ores and concentrates) դասակարգումը տվյալ մետաղների արտադրատեսակների համար: Նույն դասակարգումը կիրառվում է նաև ՀՀ ՎԿ «Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» դասակարգչի մեջ, որը հիմնված է Եվրոպական համայնքի կողմից մշակված «Արտադրանքի դասակարգումնըստ գործունեության տեսակների» (CPA-2008) դասակարգչի, «Եվրոպական համայնքի արդյունաբերականարտադրանքի դասակարգիչի» (PRODCOM-2009) եւ ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական կոմիտեի կողմից մշակված «Արտադրանքի վիճակագրականդասակարգիչի» (ՀԿՊ-2) մեթոդաբանական մոտեցումների հիման վրա: Սակայն, քանի որ Հայաստանի Հանրապետությունից պղնձի, մոլիբդենի կամ ցինկի հանքաքարի արտահանում տեղի չի ունենում՝ արտահանվում է միայն խտանյութ, այս զեկուցի շրջանակում կիրառվել է միայն «խտանյութ» բառը նշված մետաղների արտադրատեսակների արտահանումը բնութագրելու համար:

2018թ. մետաղական արտադրատեսակների արտահանումը բնեղեն արտահայտությամբ, հազար տոննա



Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Պղնձի խտանյութ

Արդյունահանման և արտահանման ընդհանուր ծավալներում պղնձի հանքաքարի և խտանյութի զգալի տեսակարար կշիռը փաստում է Հայաստանի տնտեսության համար վերջինիս կարևորության մասին: Պղնձի խտանյութի արտահանումը 2018թ.-ին կազմել է Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի 22 %-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով -4.6%-ով: 2010–2016թթ.-ին պղնձի խտանյութի արտահանման ծավալների տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ հստակ աճի կամ նվազման միտում չի ցուցաբերել, այլ տատանվել է՝ գրանցելով իր նվազագույն և առավելագույն արժեքները (2014թ.-ին՝ 15.8 % և 2017թ.-ին՝ 26.6%):

Պղնձի խտանյութի արտահանումն արժեքային առումով կազմում է մետաղական արտահանման 61.4%-ը: Համաձայն ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության՝ պղնձի արտահանման հիմնական ուղղությունը Բուլղարիան է: 2018թ.-ին այդ ուղղությամբ արտահանման մասնաբաժինը պղնձի ընդհանուր արտահանման մեջ կազմել է 41%: Հարկ է նշել, որ, չնայած դրան, տվյալ պետության մասնաբաժինը նվազել է նախորդ տարվա համեմատ (49%): Տոկոսային մասնաբաժնով հաջորդ պետությունը Շվեյցարիան է (25%), որը 2018թ.-ի իր մասնաբաժնով գերազանցել է Չինաստանին (18%): Կարևոր գործընկերների ցանկում է նաև Ռումինիան (10%), որի արտահանման արժեքային ծավալը վերջին տարում աճել է գրեթե 16 անգամ: Հայաստանի Հանրապետությունից պղինձ ներմուծող նոր երկիր է հանդիսանում Կանադան, որի մասնաբաժինը 2018թ.-ին կազմել է 4%: Պղնձի արտահանումը Վրաստան կտրուկ նվազել է 2018թ.-ին (-90%)՝ կազմելով պղնձի ընդհանուր արտահանման 2%-ը (2017թ.-ին նույն ցուցանիշը կազմել էր 15%):

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ պղնձի արտահանումը բավականաչափ դիվերսիֆիկացված է, և Հայաստանից պղնձի հանքաքար և խտանյութ ներմուծողներ են հանդիսանում հիմնականում վեց երկիր:

Գծապատկեր 3.4.3

2018թ.-ին պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Պղնձի խտանյութի արտահանման ցուցանիշներով շուկայի առաջատար է համարվում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որի արտահանման հիմնական ուղղություններն են Չինաստանը, Ռումինիան և Բուլղարիան: 2018թ.-ին ընկերության ծավալային և արժեքային մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ կազմել է համապատասխանաբար՝ 81% և 75%:

Աղյուսակ 3.4.1

2018թ.-ին պղնձի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազար ԱՄՆ դոլար[253]
Լոռու մարզ	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	Բուլղարիա	13,899	6,602	13,699
Սյունիքի մարզ	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Չինաստան	38,351	19,977	41,358
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Չինաստա, Ռումինիա, Բուլղարիա	264,370	147,612	305,596
	«Զաարատ Կապան» ՓԲԸ[254]	Շվեյցարիա	9,483	22,053	45,665
Ընդհանուր՝			326,103	196,244	406,278

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Պղնձի խտանյութը սովորաբար պղնձից զատ պարունակում է թանկարժեք մետաղների՝ ոսկու և արծաթի, վճարվող համարվող քանակություններ: Ստորև ներկայացված է պղնձի հանքաքար և խտանյութ արդյունահանող ընկերությունների արտահանման ծավալներն՝ ըստ մետաղների վերջնական պարունակության:

Աղյուսակ 3.4.2

2018թ.-ին արտահանված պղնձի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Լոռու մարզ	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	պղինձ	2,546 տոննա	13,898 տոննա
Սյունիքի մարզ	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պղինձ	8,664 տոննա	38,351 տոննա
	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	պղինձ	55,040 տոննա	264,369 թմտ
		արծաթ	5,642 կգ	
		ոսկի	197 կգ	

[253] Զեկույցի շրջանակներում տարադրամի փոխարժեքը հաշվարկվել է տվյալ տարվա համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված բոլոր փոխարժեքների միջինացմամբ: 2018թ. մեկ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը եղել է 480,315 ՀՀ դրամ:

[254] Նախկինում՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	Ծավալը	Խտանյութի ծավալը
	«Զաարատ Կապան» ՓԲԸ	պղինձ	1,611 տոննա	9,483 թմտ
		արծաթ	13,243 կգ	
		ոսկի	797 կգ	

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Մոլիբդենի խտանյութ և ֆեռոմոլիբդեն

Մոլիբդենի խտանյութի արտահանումն արժեքային առումով կազմում է մետաղական արտադրատեսակների արտահանման 0.9%-ը: 2018թ.-ին մոլիբդենի խտանյութի արտահանման հիմնական գործընկեր է հանդիսանում Բելգիան, որի տոկոսային մասնաբաժինը կազմել է 86%: Հայաստանի Հանրապետությունից մոլիբդենի խտանյութ ներկրողների ցանկում ավելացել է Ռուսաստանի Դաշնությունը, որի մասնաբաժինը կազմել է 14%: 2017թ.-ի պատկերն այլ է եղել, քանի որ հիմնական արտահանման երկիր հանդիսացել է Նիդերլանդները, որը 2018թ.-ին բացակայում է արտահանման գործընկերների ցանկից: Բացի այդ մոլիբդենի խտանյութի արտահանման ծավալները 2017թ.-ին կտրուկ նվազել էին ՝ պայմանավորված «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կողմից մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի իրացման կտրուկ կառուցվածքային փոփոխությամբ՝ 2017թ.-ին արտահանման ծավալները համարյա զրոյացել և փոխարինվել են ներքին իրացմամբ:

2018թ.-ին մոլիբդենի արտադրատեսակների՝ մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտահանման մեջ արժեքային առումով ֆեռոմոլիբդենի արտահանումը կազմել է 95%: Ֆեռոմոլիբդեն արտահանվել է հիմնականում երկու ուղղություններով՝ Նիդերլանդներ (98.2%) և Ռուսաստանի Դաշնություն (1.8%): Նիդերլանդները ֆեռոմոլիբդենի արտահանման երկարատև և հիմնական գործընկեր է, որը 2013թ.-ից ի վեր ներկրել է Հայաստանից արտահանվող ֆեռոմոլիբդենի մեծամասնությունը՝ 2018թ.-ին գրանցելով 64% աճ: Նախորդ տարիներին խոշոր գործընկեր է հանդիսացել Գերմանիան, որի ներկրման ծավալները սկսել են նվազել՝ 2015թ-ից 2018թ.-ին հասնելով զրոյի: 2015թ. ֆեռոմոլիբդենի խտանյութի արտահանման ծավալն անկում է ապրել, սակայն վերջին երեք տարիներին այն վերականգնվել է և գերազանցել նախորդող բոլոր ցուցանիշները:

Մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտահանումը քիչ դիվերսիֆիկացված է, քանի որ վերջին շրջանում արտահանումը կատարվում է մեծապես դեպի Նիդերլանդներ: Գործընկերների շարքում են նաև Ռուսաստանի Դաշնությունը և Եվրոպական Միության մի քանի երկրներ: Արտահանող ընկերություններն են՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ը և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ը:

Գծապատկեր 3.4.4

2018թ.-ին մոլիբդենի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.5

2018թ. ֆեռոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար



Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Աղյուսակ 3.4.3

2018թ.-ին մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազար ԱՄՆ դոլար
Սյունիքի մարզ	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ֆեռոմոլիբդեն	Նիդերլանդներ	4,738 տոննա	59,700	123,595
	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	մոլիբդենի խտանյութ	Եվրոպական միության երկրներ	688 թմտ	3,158	6,537

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Աղյուսակ 3.4.4

2018թ. արտահանված մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիդբենի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Սյունիքի մարզ	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ֆեռոմոլիբդեն	4,738 տոննա	6,980 տոննա
	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	մոլիբդեն	326 տոննա	689 տոննա

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Ցինկի խտանյութ

Ցինկի խտանյութի արտահանումը դիվերսիֆիկացված չէ: 2018թ.-ին տվյալ արտադրատեսակը արտահանվել է միայն Բելգիա: 2017թ.-ին Հայաստանի Հանրապետությունից ներկրել է ցինկ նաև Կորեայի Հանրապետությունը: Մինչ այդ, գործընկերների ցանկում են եղել նաև Շվեյցարիան, Նիդերլանդները և Չինաստանը: 2013-2018թթ.-ին Բելգիան եղել է կայուն ներմուծող երկիր, որի ներկրման արժեքային ծավալների դինամիկան եղել է տարակողմ:

«Զաարատ Կապան» ՓԲԸ-ն հանդիսանում է ցինկի հանքաքար և խտանյութ արդյունահանող և արտահանող միակ կազմակերպությունը: Նախորդ տարվա համեմատ ցինկի արտահանման ծավալն գրանցել է 22% աճ:

Գծապատկեր 3.4.6

Ցինկի խտանյութի արտահանումն, ըստ երկրների, 2013-2018թթ.



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

Աղյուսակ 3.4.5

2018թ.-ին ցինկի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը, թմտ	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազար ԱՄՆ դոլար
Սյունիքի մարզ	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Բելգիա	12,473	9,894	20,483

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Ցինկի խտանյութը նույնպես պարունակում է վճարվող համարվող թանկարժեք մետաղներ: Ստորև ներկայացված է ցինկի խտանյութ արտադրող ընկերության արտահանման ծավալներն՝ ըստ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակության:

Աղյուսակ 3.4.6

2018թ. արտահանված ցինկի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	Ծավալը	Խտանյութի ծավալը
Սյունիքի մարզ	«Չաարատ Կապան» ՓԲԸ	ցինկ	6,641 տոննա	12,473 թմտ
		ոսկի	145 կգ	
		արծաթ	2,261 կգ	

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Թանկարժեք մետաղների արտադրատեսակներ

2013-2018թթ.-ին թանկարժեք մետաղների արտադրատեսակների արտահանումը ցուցաբերել է կայուն աճի միտումներ (դրամային արտահայտությամբ միջինում տարեկան 7%): 2018թ.-ին մետաղական արտադրատեսակների արտահանման մեջ արժեքային առումով թանկարժեք մետաղների արտահանումը կազմել է 20.7%:

2018թ. թանկարժեք մետաղների արտահանման հիմնական գործընկերը եղել է Շվեյցարիան, որի մասնաբաժինը կազմել է 96%: Արտահանման գործընկեր երկրների շարքում փոքր մասնաբաժիններով եղել են նաև ԱՄԷ-ը և Իտալիան: Հատկանշական է 2016-2017թթ.-ին դեպի Շվեյցարիա արտահանման կտրուկ աճը: 2013-2016թ-ին Հայաստանի Հանրապետությունից խոշոր ներկրող է եղել Կանադան, սակայն 2017թ-ից արտահանումը դեպի տվյալ երկիր դադարել է:

Գծապատկեր 3.4.7

Անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի արտահանումն ըստ երկրների, 2013-2018թթ.



Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի հանքաքարի արտահանում իրականացնում են երկու ընկերություններ՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ը և «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ը: Խոշոր արտահանող է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ը, որի արժեքային մասնաբաժինը ընդհանուր արտահանման մեջ կազմել է 98%:

Աղյուսակ 3.4.7

2018թ.-ին ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազար ԱՄՆ դոլար
Կոտայքի մարզ	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Շվեյցարական Համադաշնություն	2,828 տոննա	1,575	3,262
Գեղարքունիքի մարզ	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	Շվեյցարական Համադաշնություն	4,518 կգ	78,260	162,019

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Աղյուսակ 3.4.8

2018թ.-ին արտահանված ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի մեջ վճարվող համարվող մետաղների վերջնական պարունակությունը

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Մետաղը	Ծավալը	Խտանյութի/համաձուլվածքի ծավալը
Կոտայքի մարզ	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	ոսկի	114 կգ	2,828 տոննա
Գեղարքունիքի մարզ	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	ոսկի	3,975 կգ	4,519 կգ
		արծաթ	543 կգ	

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Ընդերքօգտագործող ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացած տեղեկատվության համեմատություն

Վերոնշյալ տեղեկատվության վերլուծության ընթացքում արձանագրվեց ԱՃԹՆ հաշվետու հանքարդյունաբերող կազմակերպությունների, ՀՀ ՎԿ-ի և ITC Comtrade-ի կողմից տրամադրված արտահանման տվյալների նկատելի տարբերություն (ի դեպ, սույն երկու ծառայությունների կողմից արտացոլված տեղեկատվությունը համընկնում է): Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է 2018թ.-ին Հայաստանից արտահանված պղնձի, ցինկի և մոլիբդենի խտանյութի ծավալային արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ համաձայն ՎԿ-ի և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվության:

Աղյուսակ 3.4.9

2018թ. Հայաստանից արտահանված պղնձի, ցինկի և մոլիբդենի խտանյութի ծավալային արժեքը

Արտադրատեսակը	2018թ. արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ ՀՀ ՎԿ-ի, մլն ԱՄՆ դոլար	2018թ.-ի արտահանման ընդհանուր արժեքը՝ ըստ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների, մլն ԱՄՆ դոլար
Պղնձի խտանյութ	525.5	406.3
Ցինկի խտանյութ	20.5	20.5
Մոլիբդենի խտանյութ	7.6	6.5
Անմշակ և կիսամշակ ոսկի և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութ և հանքաքար	180	162

Աղբյուրը՝ *Ընդերքօգտագործող ընկերություններ և ՀՀ ՎԿ*

Վերը նշված երկու աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման արդյունքում, առկա է էական տարբերություն պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալների միջև՝ արտահայտված դրամային համարժեքով: Սույն տարբերությունը կազմում է 29.3%: Մոլիբդենի խտանյութի տարբերությունը կազմում է 16.9%, իսկ անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի և հանքաքարի տարբերությունը՝ 10%: Բացահայտված տարբերությունները մեծամասամբ պայմանավորված են այն փաստով, որ ընկերությունների՝ ներքին շուկայում իրացրած արտադրատեսակների մի մասը նույնպես արտահանվում է այլ ընկերությունների կողմից ուղղակիորեն կամ որոշ վերամշակումից հետո:

Պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալների տարբերությունը մեծամասամբ բացատրվում է նրանով, որ մեկ արտահանող ընկերություն՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՍՊԸ-ն, չի հանդիսանում ընդերքօգտագործող և հետևաբար չի ներառվել Հայաստանի ԱՃԹՆ 2018թ-ի. զեկույցի շրջանակում: ՀՀ ՊԵԿ-ից արված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ 2018թ.-ին սույն ընկերությունն արտահանել է շուրջ 116.4 մլն ԱՄՆ դոլար (տարբերության շուրջ 98%-ը) արժողությամբ պղնձի հանքաքար և խտանյութ: Մնացած տարբերությունը բացատրվում է մեթոդաբանական տարբեր լուծումների հետ, որոնք կիրառվել են ընկերությունների և ՎԿ-ի կողմից թվերի հաշվման ընթացքում:

Մոլիբդենի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալների տարբերությունը ամբողջությամբ բացատրվում է նրանով, որ մոլիբդենի հանքաքար և խտանյութ արտահանող մեկ ընկերություն՝ «Ալափմետ» ՓԲԸ-ն, որը նույնպես չի հանդիսանում ընդերքօգտագործող, ուստի ևս չի ներառվել Հայաստանի ԱՃԹՆ 2018թ.-ի զեկույցի շրջանակում: ՀՀ ՊԵԿ-ից արված հարցումները թույլ են տվել պարզել, որ 2018թ.-ին սույն ընկերությունն արտահանել է շուրջ 1.1 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ մոլիբդենի հանքաքար և խտանյութ:

Ընկերություններից և Վիճակագրական կոմիտեից ստացված մեկնաբանությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ցուցանիշների մնացյալ տարբերությունը կապված է մեթոդաբանական տարբեր լուծումների հետ, որոնք կիրառվում են ընկերությունների և ՎԿ-ի կողմից:

3.4.2 Ներքին իրացում

Մետաղական հանքաքարերի և խտանյութի ներքին իրացումը 2018թ.-ին կազմել է 5.2 մլրդ ՀՀ դրամ կամ 10.7 մլն ԱՄՆ դոլար: Համեմատության համար հարկ է նշել, որ արտահանման շուկայի ծավալը նույն թվականին կազմել է 856.4 մլն ԱՄՆ դոլար: Ինչպես արտահանման մեջ, այնպես էլ ներքին շուկայում, պղնձի իրացումը ավանդաբար զբաղեցրել է շուկայի գերակշիռ մասը: Ներքին շուկայում պղնձի խտանյութի վաճառք իրականացրել են հիմնականում «Թեղուտ» ՓԲԸ-ը և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ը: Պղնձի խտանյութից զատ, ներքին շուկայում իրացվել են ոսկի և արծաթ պարունակող հանքաքարեր:

Աղյուսակ 3.4.2.1

2018 թ.-ին ներքին շուկայում վաճառք իրականացրած ընկերությունները, իրացրած մետաղական արտադրանքը, ծավալը և դրամային արժեքը

Ընդերքօգտագործող ընկերությունը	Արտադրատեսակը	Չափման միավորը	Ծավալը	Վճարվող համարվող մետաղների պարունակությունը	Ընդամենը իրացման արժեքը, մլն ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն	ՀՎՀՀ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ	Գործունեության տեսակ
«Թեղուտ» ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	4,173	պղինձ - 933 տոննա	2,851	«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ	06605968	C24.44.0	Պղնձի արտադրություն
«Զանգեզուրի պղնձամոլիբդենայի ն կոմբինատ » ՓԲԸ	Պղնձի խտանյութ	թմտ	2,426	պղինձ – 507 տոննա արծաթ – 59,870 գ ոսկի – 2,185 գ	1,447	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	06602309	B07.29.1	Պղնձի հանքաքարի արդյունահանում
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	տոննա	16.6	ոսկի – 373.5 մգ	4.8	Ասսաթ ՍՊԸ	03807664	C24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն
«Վայք գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	կգ	5,500	ոսկի – 110 կգ	0.688	Ասսաթ ՍՊԸ	03807664	C24.41.1	Թանկարժեք մետաղների արտադրություն
«Լիճքվազ » ՓԲԸ	Ոսկի, արծաթ և պղինձ պարունակող հանքաքար	տոննա	40,031	46.1 կգ ոսկի	881	«Չաարատ Կապան» ՓԲԸ	09416902	B07.29.1	Պղնձի հանքաքարի արդյունահանում

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

4 ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

4 ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

4.1 Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը պետական բյուջե

Ընդերքօգտագործող ընկերություններն, ի թիվս այլ հարկերի և վճարների, պետական բյուջե են վճարում շահութահարկ, ավելացված արժեքի, ակցիզային և բնապահպանական հարկեր, ռոյալթի, մաքսատուրքեր, բնօգտագործման վճարներ: Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 1,1%-ով՝ կազմելով 78.3 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 6%-ը:

Գծապատկեր 4.1.1

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները.



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Ստորև ներկայացված է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2018թ.-ին պետական բյուջե վճարված հարկերը և վճարներն՝ ըստ հարկատեսակների:

Գծապատկեր 4.1.2

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները մլն ՀՀ դրամ.



*Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ

** Ներկայացված է ԱԱՀ և ներմուծման ԱԱՀ հանրագումարը

Աղբյուր՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ և ՇՄՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեջ ամենամեծ մասնաբաժինն ունի ռոյալթին: Տվյալ հարկատեսակի մասնաբաժինը վճարված ընդհանուր հարկերի մեջ կազմել է 43%: Ռոյալթիի վճարներին հաջորդում է եկամտային հարկը, որի մասնաբաժինը կազմել է 22%: Այնուհետև հաջորդում է շահութահարկը՝ 20% մասնաբաժնով: Պետական բյուջե վճարված այլ հարկատեսակների և վճարների մասնաբաժիններն առանձին վերցված չեն գերազանցել 8%-ը: Ընդհանուր առմամբ՝ 2018թ.-ին նախորդ տարվա համեմատ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարված վճարումները նվազել են թե՛ բացարձակ թվով և թե՛ համեմատական մասնաբաժնի տեսանկյունից, որը կարելի է բացատրել հաշվետու տարում «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության դադարեցմամբ: Աճել են միայն եկամտային հարկից և շահութահարկից ստացված եկամուտները, որը պայմանավորված է հաշվետու տարում արտահանման ծավալների աճով:

Աղյուսակ 4.1.1

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները.

Հարկի կամ վճարի տեսակը	Մասնաբաժինն ընդհանուրի մեջ	Ծավալը մլն ՀՀ դրամ
Պետական բյուջեի եկամուտները[255]	100%	1,341,690.5
Ռոյալթի	2.57%	34,545.8
Եկամտային հարկ	1.33%	17,847.5
Շահութահարկ	1.18%	15,880.5
Ներմուծման ԱԱՀ	0.45%	5,243.8
ԱԱՀ		870.1
Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ	0.15%	2,054.5
Մաքսատուրք, մաքսավճարներ	0.08%	1,125.6
Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք	0.01%	260.1
Ներմուծման ակցիզային հարկ	0.01%	186.9
Բնապահպանական հարկեր՝ ըստ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների	0.00%	50.5
Բնօգտագործման վճարներ	0.00%	65.7
ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի	0.00%	24.7
ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի	0.00%	7.4
Մշտադիտարկումների իրականացման վճար	0.00%	22.6
Տուգանքներ	0.00%	0.7
Ընդհանուր	5.8%	78,286.5

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ և ՇՄՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

2018թ.-ին պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումներով առաջատար ընկերությունն է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, որին բաժին է ընկել ընդերքօգտագործող ընկերություններից բոլոր հաշվարկված վճարումների 54%-ը: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 3.2% կամ 42.5 մլրդ ՀՀ դրամ:

Պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երկրորդն է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ը, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերություններից 2018թ.-ի բոլոր հաշվարկված վճարումների 19.9%-ը: «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ»

[255] Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի հաշվետվության http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2018_t_tarekan_

ՍՊԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 1.2% կամ 15.6 մլրդ ՀՀ դրամ:

2018թ.-ին պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երրորդն է «Զաարատ Կապան» ՓԲԸ-ն, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերությունների 2018թ.-ի բոլոր վճարումների 8.3%-ը, իսկ դրամային արտահայտությամբ՝ 6.5 մլրդ ՀՀ դրամ: Տվյալ ընկերության հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է 0.4%:

Հարկ է նշել, որ վերջին երեք տարիներին պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումներով իրենց դիրքերը պահպանել են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն և «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն: Սակայն, 2018թ.-ին իր դիրքերը նկատելիորեն զիջել է «Թեղուտ» ՓԲԸ-ն, որը 2016-2017թթ.-ին երրորդ ընկերությունն էր բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարներով: Հաշվետու տարում, ընկերության՝ պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարները կազմել են 1.7մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է ընդերքօգտագործող ընկերություններից բոլոր հաշվարկված վճարումների 2.1%-ը: Այս փաստը կարելի է բացատրել 2018թ.-ի սկզբին տվյալ ընկերության գործունեության դադարեցմամբ:

Հաջորդող գծապատկերները ներկայացնում են 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների կառուցվածքն՝ ըստ դրամական ծավալի, մասնավորապես՝ առանձնացնելով և դասակարգելով էականության շեմը հաղթահարած ընդերքօգտագործող ընկերությունների կատարած վճարումները:

Գծապատկեր 4.1.3

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, մլն ՀՀ դրամ.



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ և ՇՄՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

4.2 Ընդերքօգտագործող ընկերություններից մուտքերը համայնքային բյուջեներ

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ԱՃԹՆ-ի զեկույցի համար տրամադրած տեղեկությունների՝ 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 200 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 1.1 մլրդ ՀՀ դրամ կամ համայնքային բյուջեների ընդհանուր եկամուտների 1%-ը: Տարբերությունը մեծամասամբ պայմանավորված է ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտադիր սոցիալ-տնտեսական վճարումների հաշվետվությամբ: ՏԿԵՆ-ի կողմից լրացուցիչ պարզաբանումների արդյունքում բացահայտվել է, որ հաշվետու տարում ներկայացված պարտադիր սոցիալ-տնտեսական ներդրումներից 439 մլն ՀՀ դրամը հանդիսանում է կամավոր ներդրում:[256]

Գծապատկեր 4.2.1

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների հիմնական մասը գույքի վարձակալությունից է, որը կազմում է սույն կազմակերպությունների հաշվարկված վճարումների 80.2%-ը: Սոցիալ-տնտեսական

[256] Տե՛ս ընդերքօգտագործողի կողմից համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունները https://www.eiti.am/hy/%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC-%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/

վճարները ևս ունեն մեծ մասնաբաժին, որը 2018թ.-ին կազմել է 11.4%: Գույքահարկի, հողի ձեռքբերման և հողի հարկը միասին վերցրած ունեցել են 5.4% մասնաբաժին: Հաջորդիվ ներկայացվում է 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարների կառուցվածքն՝ ըստ վճարների տեսակի:

Գծապատկեր 4.2.2

2018թ.-ին համայնքների եկամուտները ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարներից՝ ըստ հոսքերի կառուցվածքի, մլն ՀՀ դրամ.



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարված վարձակալական վճարների մեծ մասը կազմել են հողամասերի վարձակալության վճարները՝ 99.5%: Վարձակալական վճարներում փոքր մասնաբաժին ունեն անշարժ գույքի վարձակալության վճարները ՝ 0.5% մասնաբաժնով:

Սոցիալ-տնտեսական վճարները, որոնք երկրորդն են համայնքային բյուջե կատարված վճարների մեջ, ապահովվել են հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների վճարումներից:

Հարկ է նշել, որ ինչպես և նախորդող տարիներին, այս տարի ևս որոշ հանքարդյունահանող ընկերություններ բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները ներկայացրել են որպես պարտադիր սոցիալ-տնտեսական վճարներ: Մասնավորապես, համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրած հաշվետվության, 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարվել է 611 մլն ՀՀ դրամի պարտադիր սոցիալ-տնտեսական վճարումներ, մինչդեռ, ըստ ՏԿԵՆ-ի վերջնական հաշվետվության, այդ թիվը կազմում է 133 մլն ՀՀ դրամ:

Հայաստանի ԱՃԹՆ վավերացման շրջանակներում ՏԿԵՆ-ի կողմից իրականացվել է հավելյալ ուսումնասիրություն սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարման վերաբերյալ. Մասնավորապես՝ վերջինս ընդերքօգտագործող ընկերություններից և համայնքներից պաշտոնապես հայցել է սոցիալական պարտավորությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն: Արձանագրվել է զգալի տարբերություն ընդերքօգտագործող ընկերությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված տվյալների մեջ: Տարբերությունները հիմնականում պայմանավորված են հետևյալով՝

- Մի քանի ընկերություններ համայնքների հետ կնքած առանձին պայմանագրերերից բխող պարտավորությունները ևս ներկայացրել են որպես պարտադիր սոցիալ-տնտեսական վճարներ, մինչդեռ դրանք հանդիսանում են կամավոր վճարումներ: Մասնավորապես՝ «Լիճքվազ» ՓԲԸ-ը Մեղրի համայնքի հետ 29/12/2016թ. կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության շրջանակային համաձայնագրի հիման վրա կատարված հատկացումները ներկայացրել է որպես ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտադիր սոցիալ-տնտեսական հատկացում, մինչդեռ այն պետք է ներկայացնել որպես բարեգործական հատկացում:
- Հաշվետվությունների ձևաչափերի մեջ բացակայում է երրորդ կողմին պայմանագրով ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարումը պարտադիր սոցիալ-տնտեսական վճարումների դաշտում ներկայացնելու հնարավորությունը: Արդյունքում դրանք ներկայացվում են որպես կամավոր ներդրումներ: Մասնավորապես՝ «Ղարագույլաններ» ՓԲԸ-ի դեպքում ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած 250,000 ՀՀ դրամ ուսանողի կիսամյակային ուսման վճարի տրամադրման և գյուղի դպրոցի և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներին 500,000 ՀՀ դրամի չափով մասնակցության պարտավորությունները ընկերությունների կողմից ներկայացվել են որպես կամավոր ներդրումներ, մինչդեռ դրանք հանդիսանում են պարտադիր սոցիալ-տնտեսական վճարներ:
- Ոչ ֆինանսական ներդրումների դեպքում տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն կատարած աշխատանքների, մատուցված ծառայությունների, տրամադրված ապրանքների, իրականացված ծրագրերի նկարագրությունը և դրանց արժեքային գնահատականը: Սրանով կարելի է բացատրել այն փաստը, որ հաշվետու տարում համայնքների կողմից չեն ներկայացվել «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած պարտադիր սոցիալ-տնտեսական ներդրումները, որոնք սույն զեկույցում ներկայացված են որպես կամավոր ներդրումներ:

Ստորև ներկայացված գծապատկերը արտացոլում է պարտադիր սոցիալ-տնտեսական վճարումների վերաբերյալ ՏԿԵՆ-ի ուսումնասիրության արդյունքում համայնքների կողմից ստացված տեղեկատվության տարբերությունը:

Գծապատկեր 4.2.3

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված սոցիալ-տնտեսական վճարների տարբերություն, մլն ՀՀ դրամ.



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

Ընդերքօգտագործման պայմանագրերում շարադրված սոցիալական պարտավորությունները համառոտ ներկայացված են 2.3.3 աղյուսակում, իսկ ստորև ներկայացնում ենք հաշվետու տարում կատարված պարտադիր սոցիալ-տնտեսական վճարները:

Աղյուսակ 4.2.1

2018թ. ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարներ.

N	Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Կատարված փաստացի վճարներ, ՀՀ դրամ
1	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ[257]	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5	33,000,000
2	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	Կիրառելի չէ
3	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	Կիրառելի չէ
4	«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	0
5	«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	0
6	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	0
7	«Գեղի Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	500,000
8	«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20	0

[257] Հրապարակային հաշվետվության մեջ թե՛ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ -ի կողմից և թե՛ համայնքների կողմից ներկայացված սոցիալ-տնտեսական պարտադիր ներդրումները մեկնաբանվում են նաև որպես ընդերքօգտագործման պայմանագրից ու համայնքի հետ կնքած պայամանագրից բխող պարտավորությունների կատարում: Այդ պատճառով հստակ հնարավոր չէ առանձնացնել ընդերքօգտագործման պայմանագրից բխող փաստացի հատկացումները համայնքին հաշվետու տարում:

N	Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Կատարված փաստացի վճարներ, ՀՀ դրամ
9	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	Կիրառելի չէ
10	«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11	11,030,000
11	«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11	12,000,000
12	«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	Կիրառելի չէ
13	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	Կիրառելի չէ
14	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26	0
15	«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	0
16	«Չաարատ Կապան» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	Կիրառելի չէ
17	«Ղարագույաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	1,250,000
18	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	Կիրառելի չէ
19	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	Կիրառելի չէ
20	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	Կիրառելի չէ
21	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	60,172,400
22	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	Կիրառելի չէ
23	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	Կիրառելի չէ
24	«Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	0
25	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	15,000,000
26	«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	Կիրառելի չէ
27	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	Կիրառելի չէ
	Ընդհանուր՝		**132,952,400**

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

Ընդերքօգտագործողների կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները չեն ներառվել հաջորդիվ ներկայացվող մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կողմից համայնքային բյուջեներ կատարած վճարումներում:

Հավելված 8-ը ներկայացնում է հաշվետու տարում ընդերքօգտագործող ընկերությունների՝ համայնքներում կամավոր սոցիալ-տնտեսական ներդրումների մանրամասն նկարագիրը: Հարկ է նշել, որ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին կատարած կամավոր վճարումները կազմել են 2.7 մլրդ ՀՀ դրամ՝ մոտ երկու անգամ գերազանցելով հաշվետու տարում համայնքների բյուջեների եկամուտները ընդերքօգտագորող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից ու վճարներից:

Քաջարանի համայնքին բաժին է ընկել կամավոր վճարումների 38%-ը կամ 1 մլրդ ՀՀ դրամ՝ ձևավորվելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից կատարված վճարումների հաշվին: Վերջինիս, ինչպես նաև «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի կողմից կատարված կամավոր վճարումներից Կապանի համայնքը ստացել է 288 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր վճարումների 11%-ը: Մեղրի համայնքը ստացել է ընդհանուր վճարումների 4%-ը կամ 122 մլն ՀՀ դրամ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային

կոմբինատ» ՓԲԸ-ի և «Լիճքվազ» ՓԲԸ-ի վճարումների հաշվին: Շնող համայնքը կամավոր վճարումներ է ստացել «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից 98 մլն դրամի կամ ընդհանուր վճարումների 4%-ի չափով, իսկ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ը կատարել է 65 մլն ՀՀ դրամի կամ ընդհանուր կամավոր վճարումների 3%-ի չափով ներդրում Ջերմուկ, Զառիթափ և Գորայք համայնքներում:

Գծապատկեր 4.2.4

2018թ. Ընդերքօգտագործողների կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

2018թ.-ին Ջերմուկ համայնքն ընդերքօգտագործող ընկերություններից հաշվարկված հարկերից ու վճարներից ստացված եկամուտների չափով առաջատարն է: Համայնքի եկամուտները հաշվետու տարում ձևավորվել են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կատարված վճարումների հաշվին՝ կազմելով ընդհանուր վճարումների 15.8%-ը կամ 185 մլն դրամ: Քաջարանի խոշորացված համայնքին հաշվետու տարում բաժին է ընկել համայնքների ընդհանուր եկամուտների 14.3%-ը կամ 168 մլն դրամ՝ ձևավորվելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Գեղի Գոլդ» ՍՊԸ-ի և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի կողմից կատարված վճարումների հաշվի: Վերոնշյալ համայնքներին հաջորդում է Կապան խոշորացված համայնքը, որի եկամուտները կազմել են ընդհանուր եկամուտների 13.8%-ը կամ 162 մլն ՀՀ դրամ:

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերություններից ստացած եկամուտների ընդհանուր պատկերն, ըստ համայնքների դասակարգման, ներկայացված է ստորև՝

Գծապատկեր 4.2.5

2018թ.-ին համայնքային բյուջեների եկամուտներն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարներից՝ ըստ առաջատար համայնքների, մլն ՀՀ դրամ

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարումների մասնաբաժինը սույն բյուջեներում տարբերվում է և կախված է համայնքի բյուջեի և ընկերություն վճարումների ծավալներից: Կարելի է առանձնացնել այն փաստը, որ ընկերությունների համայնքային բյուջեների նկատմամաբ հաշվարկված վճարումներն ունեն խոշոր տոկոսային մասնաբաժին համայնքներից վեցի՝ Գեղարքունիքի մարզի Մասրիկ (81.9%), Սյունիքի մարզի Գորայք (65%) և Քաջարան (30%), Վայոց Ձորի Ջերմուկ (41%) քաղաքի և Զառիթափ գյուղի (44%), Լոռվա մարզի Շնող գյուղի (33%) բյուջեներում: Կարելի է եզրակացնել, որ ընդերքօգտագործող ընկերությունների վճարումներն ունեն զգալի, երբեմն առանցքային դեր սույն համայնքների զարգացման ծրագրերի իրականացման մեջ: Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է համայնքների բյուջեների և ընդերքօգտագործող ընկերությունների վճարումների և այդ համայքների բյուջեների մասին տեղեկատվությունը:

Աղյուսակ 4.2.2

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների մասնաբաժինը համայնքների բյուջեներում, հազար ՀՀ դրամ

Համայնք	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Ընդերքօգտագործող ընկերության հաշվարկած վճարումները	Բյուջեի %-ը
Ախթալա	227,538,000	8,263,224	3.6%
Առինջ	197,607,000	4,954,117	2.5%
Արարատ	56,327,600	4,110,954	7.3%
Արարատ գյուղ	211,039,000	2,940,542	1.4%
Արջուտ	31,251,000	1,212,000	3.9%

Համայնք	Համայնքի իրական տարեկան եկամուտները	Ընդերքօգտագործող ընկերության հաշվարկած վճարումները	Բյուջեի %-ը
Գեղամասար	362,536,000	124,726	0.03%
Գորայք	188,728,000	121,870,875	64.57%
Երևան	82,134,086,000	11,566,330	0.01%
Զառիթափ	303,585,000	133,781,508	44.07%
Լոռի Բերդ	189,304,000	47,920	0.03%
Ծաղկահովիտ	260,617,000	35,200	0.01%
Կապան	1,866,487,000	162,026,527	8.68%
Մասրիկ	82,963,000	68,000,000	81.96%
Մեղրաձոր	178,622,000	41,763,998	23.38%
Մեղրի	639,899,000	88,463,636	13.82%
Շնող	270,753,000	90,075,018	33.27%
Ջերմուկ	456,374,000	185,408,665	40.63%
Սիսիան	1,101,624,000	60,176,014	5.46%
Սպիտակ	382,048,000	439,204	0.11%
Ստեփանավան	422,556,000	5,746,796	1.36%
Վայք	233,097,000	10,000,000	4.29%
Տորֆավան	13,097,000	227,004	1.73%
Քաջարան	563,355,000	168,087,579	29.84%
Օձուն	219,264,000	2,508,816	1.14%
Ընդամենը՝	**90,592,757,600**	**1,171,830,653**	**1.29%**

Աղբյուր՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*[258]

Համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկած վճարումներով առաջատար ընկերություն է հանդիսանում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ը, որին բաժին է ընկնում 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների 37.4%-ը:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի՝ 2018թ.-ին հաշվարկած վճարումների բաժինը ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումներում կազմել է 15.4%, իսկ «Զաարատ Կապան» ՓԲԸ-ի հաշվարկած վճարումների մասնաբաժինը կազմել է 9.8%:

[258] Ընդերքօգտագործող ընկերությունների հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարները հաշվարկվել են համաձայն ՏԿԵՆ-ի կողմից իրականացրած հավելյալ ուսումնասիրությունների: Տե՛ս https://www.eiti.am/hy/%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC-%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/

Գծապատկեր 4.2.6

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները, մլն ՀՀ դրամ



Աղբյուր՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար*

4.3 Հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված եկամուտներ (պահանջ 5.1,5.2,5.3)

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի[259]՝ բնապահպանական հարկերից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Շահառու համայնքների ցանկը և բնապահպանական հարկերից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով, իսկ մասհանումներն առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում:

Համաձայն նույն օրենքի 1-ին հոդվածի՝ նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների միջև բնապահպանական հարկի (վճարի) բաշխման համամասնությունների հաշվարկն իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

- մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման մասով համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները (%-ով ընդհանուրի նկատմամբ) որոշվում են աղտոտվածության գծով տարածքային նորմավորման նախնական

[259] «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55110

արդյունքների հիման վրա: Համամասնությունները ազդակիր համայնքների միջև բաշխվում են՝ հիմք ընդունելով աղտոտվածության ծավալները և համայնքների (խոշորացված համայնքների դեպքում՝ ազդակիր բնակավայրերի) բնակչության թվաքանակը,

- ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի մասով և ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրման կամ պահման մասով համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները սահմանելիս հիմք են ընդունվում համապատասխան համայնքների (խոշորացված համայնքների դեպքում՝ ազդակիր բնակավայրերի) բնակչության թվաքանակը և նրանց վարչական տարածքում ջրային ռեսուրսի աղտոտման ծավալները,
- համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները սահմանվում են՝ հիմք ընդունելով «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով մի շարք համայնքների խոշորացումը:

Ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաների տրամադրման գործընթացի նկարագրություն:

Ազդակիր համայնքներին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաների տրամադրման գործընթացի շրջանակում լիազոր մարմինների կատարման ենթակա աշխատանքներն ու միջոցառումները և դրանց կատարման ժամկետները սահմանվում են իրականացվելիք տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման (ընդունվում են տարեկան) հավելվածում:

Համաձայն որոշման՝

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը սահմանված ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարություն (ներկայացվում է բյուջեն պլանավորելու համար), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ է ներկայացնում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 1-ին հոդվածում նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկը (այն դեպքում, երբ ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թիվը մեկից ավելի է, նաև ընկերության կողմից վճարվող բնապահպանական հարկի գումարի՝ այդ համայնքների միջև բաշխման համամասնությունները և դրանց հաշվարկման սկզբունքները):
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարություն (ներկայացվում է բյուջեն պլանավորելու համար), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացնում Օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից բնապահպանական հարկի գումարների վերաբերյալ տեղեկատվությունը:

- Օրենքի գործողության շրջանակներում ընդգրկված համայնքների ղեկավարները՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինների միջոցով, համապատասխան տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացնում Օրենքի պահանջների համաձայն ՀՀ համապատասխան համայնքների կողմից ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված և համայնքի ավագանու կողմից հաստատված բնապահպանական ծրագրերը և դրանց գծով իրականացման համար նախատեսված տարում պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու մասին հայտերը:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և ՀՀ առողջապահության նախարարությունը ՀՀ կառավարության 2002թ.-ի սեպտեմբերի 26-ի N1544-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում բնապահպանական ծրագրեր ներկայացրած համապատասխան համայնքներին տեղեկացնում են համաձայն Օրենքի պահանջների՝ համապատասխան համայնքների կողմից ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացված բնապահպանական ծրագրերով նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնայնությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունների վերաբերյալ իրենց դիրքորոշումների մասին:

Յուրաքանչյուր համայնքին բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար մասհանումների չափերը հաշվարկվում է համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված (2018 թվականի հունվարի 1-ից սկսած՝ միասնական հաշվից բնապահպանական հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին հաշվեգրված) բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով:

Համաձայն օրենքի Հոդված 3-ի՝ բնապահպանական ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության հաստատված փաստաթղթերի հիման վրա:

Համաձայն «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման[260]՝ ծրագիրը մշակվում է նախապես հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա, որը ներառում է կառուցվածքային նշված ենթաբաժինները՝

1. ծրագրի նպատակը,
2. ծրագրի իրավական հիմքերը,
3. պետական մարմնի լիազորությունները ծրագրի իրականացման հարցում,
4. ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները,
5. ծրագրի խնդիրները և դրանց կապը ծրագրի նպատակի հետ,
6. ծրագրի կառուցվածքը (միջոցառումները),
7. ծրագրի իրականացման եղանակը (միջոցները և իրականացնող կազմակերպությունների շրջանակը),
8. ծրագրի կատարողական ցուցանիշները (ծավալային ցուցանիշները բնահիրեղեն ծավալներով՝ ըստ առանձին միջոցառումների կամ ենթածրագրերի)՝
   ա) վերջնական արդյունքը,
   բ) ուղղակի արդյունքները.
9. ծրագրի իրականացման նկարագրությունը՝
   ա) ծրագրի ներկա վիճակի նկարագրությունը,
   բ) ծրագրի վերջնական արդյունքների պլանավորումը/կանխատեսումն՝ ըստ իրականացման փուլերի (ժամանակահատվածների):

Նույն որոշման համաձայն՝ ծրագրի ֆինանսական արժեքը գնահատվում է ծրագրի նախահաշվային արժեքի հաշվարկման միջոցով: Նախահաշվային ծախսերը հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նորմատիվների հիման վրա, իսկ ՀՀ կառավարության կողմից հաստատված նորմատիվների բացակայության դեպքերում ծրագրերի նախահաշվային արժեքը հաշվարկվում է տվյալ տարվա բյուջետային ծախսերի հաշվարկման համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաստատված պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումներին համապատասխան:

Թեմատիկ բնույթի բնապահպանական ծրագրերի գծով ծախսերը հաշվարկվում են համապատասխան բանաձևով, որը հաշվի է առնում և գնահատում համապատասխան մասնագետների աշխատավարձի դրույքը, վերջիններիս աշխատանքի աշխատատարությունը և կիրառում որոշակի գործակիցներ՝ նյութածախսի, ծառայությունների ծախսի, վերադիր ծախսերի և շահութաբերության մակարդակի գծով, ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ օրենքով սահմանված հարկերը՝ հաշվարկված նույն օրենքով սահմանված կարգով:

[260] Տե՛ս «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=88963

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի[261]՝ ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը: Աղյուսակ 7.5.1-ը ներկայացնում է համայնքների կայքերում հրապարակված 2018թ.-ի ծրագրերի հղումները: Հրապարակման կոնկրետ ձևերը, սակայն, սահմանվել են միայն 2020թ.-ի մայիսի 27-ի օրենսդրական բարեփոխումների արդյունքում, որոնց համաձայն ծրագրերը յուրաքանչյուր տարի հրապարակվում են համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և (կամ) համապատասխան մարզպետարանի կայքում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ[262]:

Համաձայն «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման[263]՝ մինչև ծրագրի նախագծային փաստաթղթերի հաստատումը՝ բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմինը [264] 15 օրվա ընթացքում իրազեկում է հասարակությանը զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով (տեղական և պետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր), ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, ինտերնետային կայքերում տեղադրմամբ և հասարակական քննարկումներով: Բնապահպանական ծրագրեր իրականացնող պետական մարմիններն այդ ծրագրերի և դրանց իրականացման մասին հասարակությանն իրազեկում են՝ համապատասխան համայնքների ղեկավարներին տրամադրելով նշված ծրագրերին վերաբերող փաստաթղթերը:

Բոլոր դեպքերում ծրագիրն իրականացնողը պարտավոր է մինչև ծրագրի իրականացման սկիզբը, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում, համաձայնության գալ ծրագրի իրականացման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

Ծրագրի նախագծային փաստաթղթերը հաստատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի համար՝ ծրագիրն իրականացնող Առողջապահության և/կամ Շրջակա միջավայրի նախարարությունների կողմից.

2) համայնքային բյուջեներից ֆինանսավորվող ծրագրերի համար՝ ծրագիրն իրականացնող համապատասխան համայնքի ղեկավարի կողմից:

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի՝ ընկերություններն, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական այլ անձինք ծրագրի նախագծի վերաբերյալ կարող են համայնքի ղեկավարին

[261] Տե՛ս «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55110

[262] Տե՛ս «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-278-Ն (27 մայիսի 2020թ.), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032:

[263] Տե՛ս «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=88963

[264] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=91223

ներկայացնել գրավոր առաջարկություններ դրա հրապարակումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

Ծրագիրը ներառում է՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողային, ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումներ, ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումները, ծրագրային միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները:

Ներկայացվող ծրագիրը պետք է կազմված լինի տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման մեթոդական ցուցումներին համապատասխան և ներառի նաև իրականացման ենթակա միջոցառումների խնդիրները, նպատակները և կենսագործման անհրաժեշտությունը, համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, իրագործման փուլերը (ժամանակացույցը), իրականացման համար անհրաժեշտ ծախսերը և ակնկալվող արդյունքները:
Լիազորված մարմինները ծրագիրը քննարկում են ներկայացվելու օրվանից՝ տասնօրյա ժամկետում: Համայնքի ավագանին իրավասու է ծրագիրը վերադարձնել համայնքի ղեկավարին՝ ավագանու սահմանած ժամկետում այն լրամշակելու նպատակով:
Լիազորված մարմինները ներկայացված ծրագրի լրամշակված հավելվածը քննարկում են ներկայացվելու օրվանից եռօրյա ժամկետում, և եթե ծրագրի հավելվածում ամբողջապես հաշվի են առնված լինում դրան համաձայնություն չտալու համար պատճառ հանդիսացած՝ լիազորված մարմինների կողմից կատարված բոլոր դիտողությունները և առաջարկությունները, ապա համաձայնություն են տալիս, իսկ եթե նշված բոլոր դիտողություններն ու առաջարկություններն ամբողջապես հաշվի առնված չեն լինում, վերադարձնում են լրամշակված ծրագրի հավելվածը:
Համաձայնություն չի տրվում, եթե՝

ա) ծրագրի համաձայն իրականացման ենթակա բնապահպանական միջոցառումները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային բնապահպանական ու առողջապահական կոնվենցիաներին և այլ իրավական ակտերին,

բ) ծրագրի փաթեթում բացակայում են համապատասխան փաստաթղթերը (տեղեկանքներ, հաշվարկներ), կամ դրանցում ներկայացված տեղեկությունները (հաշվարկները) չեն համապատասխանում իրականությանը:

Համաձայնություն տալու ժամկետը խախտելը, ինչպես նաև համաձայնություն տալը մերժելը կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:
Նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները, մինչև ծրագրի հաստատումը, համաձայնեցվում են Շրջակա միջավայրի և առողջապահության բնագավառներում լիազորված պետական մարմինների հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության լիազոր պետական մարմինը,

ստացված ծրագրերի հիման վրա, հաշվի առնելով այդ ծրագրերի ֆինանսավորման համար առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում նախատեսվելիք հատկացումների ընդհանուր գումարները, կազմում է առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեից ծրագրերի ֆինանսավորման համար մասհանումներ ստացող համայնքների ցանկի նախագիծը:

Աղյուսակ 4.3.1

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները, 2018թ.

Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
Շրջակա միջավայր (ջրային ավազան) վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարների գծով		
Սյունիքի մարզ		
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	50% 30% 10% 10%	ք. Քաջարան ք. Կապան գ. Սյունիք գ. Լեռնաձոր
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	ք. Մեղրի
«Զաարատ Կապան» ՓԲԸ	90% 10%	ք. Կապան գ. Աճանան
Գեղարքունիքի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	100%	գ. Սոթք
Լոռու մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	57% 5.5% 7% 2.5%	ք. Ախթալա գ. Ճոճկան գ. Շնող գ. Մեծ Այրում
Տավուշի մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	19% 2% 7%	ք. Այրում գ. Կողբ ք. Նոյեմբերյան
Շրջակա միջավայր (օդային ավազան) վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարների գծով		
Սյունիքի մարզ		
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	70% 10% 20%	ք. Քաջարան գ. Լեռնաձոր գ. Քաջարան

Ընկերությունների անվանումը	Համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)	Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	100%	ք. Մեղրի
«Զաարատ Կապան» ՓԲԸ	80%	ք. Կապան
	20%	գ. Աճանան
Արարատի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	15%	ք. Արարատ
Գեղարքունիքի մարզ		
«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ	85%	գ. Սոթք
Ընկերությունների անվանումը	**Համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունը (%-ով ընդհանուրի նկատմամբ)**	**Ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների անվանումը**
Շրջակա միջավայր (օդային ավազան) վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարների գծով		
Լոռու մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	100%	ք. Ախթալա
Շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման գծով		
Սյունիքի մարզ		
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	30%	ք. Քաջարան
	10%	գ. Աճանան
	20%	գ. Սյունիք
	20%	գ. Արծվանիկ
	10%	գ. Սևաքար
	10%	գ. Չափնի
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	50%	ք. Մեղրի
	50%	ք. Մեղրի
«Զաարատ Կապան» ՓԲԸ	50%	ք. Կապան
	50%	գ. Գեղանուշ
Լոռու մարզ		
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	40%	ք. Ախթալա
	30%	ք. Շամլուղ
	30%	գ. Մեծ Այրում

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՇՄՆ-ի կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման շրջանակներում և հրապարակվածէ Հայաստանի ԱՃԹՆ կայքում*

ՀՀ պետական բյուջեից բնապահպանական ծրագրերի իրականացման համար «ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրի շրջանակներում սուբվենցիաներ ստացող համայնքների գծով ճշտված բյուջեների և դրանց փաստացի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է պետական բյուջեի տարեկան հաշվետվություններում: Հաշվետվությունները նույնպես հասանելի են ՀՀ ֆինանսների նախարարության կայքում[265]:

Աղյուսակ 4.3.2

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2018թ.-ի ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաներ և համապատասխան բնապահպանական և առողջապահական ծրագրերը

2018թ. իրականացված առողջապահական միջոցառումների Անվանումը	*Գումարը /հազ. դրամ/*
ՀՀ Լոռու մարզ	***66,870***
Ընդամենը Ալավերդի համայնք	*66,870*
Ընդամենը ք. Ալավերդի	*65,243*
Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	***9,542***
Առողջության ամրապնդման նպատակով համայնքի երեխաներին ամառային ճամբարների ուղեգրերի տրամադրում	***7,754***
Համայնքի հղիներին լրացուցիչ սննդի տրամադրում	***3,490***
Առողջության ամրապնդման նպատակով համայնքի բնակիչներին առողջարանների ուղեգրերի տրամադրում	***14,882***
Համայնքի նորածիններին հիգիենայի պարագաների տրամադրում	***2,563***
Համայնքի երկու հատվածներում (վերին և ստորին) մարզասարքերի տեղադրում	***12,299***
Համայնքի կազմակերպությունների, բազմաբնակարան շենքերի աղբատարների և աղբամանների, կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի տարածքներում կրծողասպան և միջատասպան աշխատանքներ	***2,070***
Համայնքի Բաղրամյան թաղամասի թիվ 10 դպրոցի խաղահրապարակի նորոգում	***5,558***
Համայնքի Սայաթ-Նովա փողոցի նախկին զբոսայգու հարակից տարածքում շուկայի կառուցում	***7,083***

[265] Տե՛ս պետական բյուջեի հաշվետվություն 2018թ. http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2018_t_tarekan_

Ընդամենը գ.Աքորի	*715*
Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	***715***
Ընդամենը գ.Հաղպատ	*912*
Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	***912***
ՀՀ Սյունիքի մարզ	***1,254***
Ընդամենը Մեղրի համայնք	*1,254*
Համայնքի <<Ագարակի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	***198***
Համայնքի <<Մեղրիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	***1,056***
ԸՆԴԱՄԵՆԸ	*68,124*

2018թ. իրականացված բնապահպանական միջոցառումների	***Գումարը /հազ. դրամ/***
ՀՀ Լոռու մարզ	***104,732***
Ընդամենը Ալավերդի համայնք	*104,732*
Ընդամենը ք. Ալավերդի	*104,240*
Համայնքի կարիքների համար երկու աղբատար մեքենայի ձեռքբերում	*52,900*
Համայնքի կանաչապատ տարածքների վերականգնում, ընդլայնում և բարեկարգում	*3,182*
Համայնքի կարիքների համար աղբարկղերի ձեռքբերում և տեղադրում	*2,973*
Համայնքի փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնում	*1,288*
Համայնքի Երիտասարդական և Սանահին Սարահարթ թաղամասի Գայի փողոցների ճեմուղիների վերանորոգում	*15,589*
Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների ներկապատում	***5,093***
Համայնքի հեղեղատարների մաքրում	***2,255***
Էներգախնայող լուսատուների ձեռքբերում և տեղադրում	***5,329***
Արևային ֆոտովոլտային կայանի ձեռքբերում և տեղադրում	***12,586***
Նախագծա-նախահաշվային աշխատանքներ	***3,045***
Ընդամենը գ.Աքորի	*492*
Աքորի համայնքի 1-ին և 4-րդ փողոցների հեղեղատարների վերանորոգում	***492***
ՀՀ Սյունիքի մարզ	***11,056***
Ընդամենը Կապան համայնք	*11,056*
Կապան քաղաքի Ա. Մանուկյան փողոցի մայթերին ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	***11,056***

ՀՀ Կոտայքի մարզ	***10,406***
Ընդամենը Չարենցավան համայնք	***9,384***
Համայնքի Գանգրահեր փղա, Եսայան, Երիտասարդության, Չարենցի և Շահումյան փողոցների լուսավորության համակարգերի լուսատուները լուսադիոդայինով փոխարինելու աշխատանքներ	***9,384***
Ընդամենը Ծաղկաձոր համայնք	***1,022***
Ծաղկաձորի համայնքային զբոսայգու կանաչապատման կազմակերպում	***1,022***
ՀՀ Արարատի մարզ	***5,844***
Ընդամենը Արարատ համայնք	***5,844***
Համայնքի կանաչապատ տարածքների ոռոգման նպատակով 505 գմ ոռոգման ցանցի կառուցում	***5,844***
ԸՆԴԱՄԵՆԸ	***132,038***

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՇՄՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման համար*

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2018թ.-ի ընթացքում համապատասխան բնապահպանական ծրագրեր իրականացվել են նաև Ծաղկաձոր և Արարատ համայնքներում, ինչպես նաև՝ Աքորի գյուղում: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ օրենքի շրջանակներում 2018թ.-ի համայնքներին հատկացվել է 200,163,000 դրամ, որից՝ 132,038,000 դրամը բնապահպանական միջոցառումների համար և 68,125,000 դրամը առողջապահական միջոցառումների համար:

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, Բյուջեի հավելվածները հասանելի են ՀՀ ֆինանսների նախարարության կայքում[266]:

ՀՀ բյուջեով նախատեսված համայնքներին հատկացվելիք գումարը գերազանցում է համայնքներին փաստացի հատկացված ընդհանուր գումարը 13,129,000 դրամով: Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տվյալների՝ տնտեսման հիմնական պատճառ են հանդիսացել մրցույթի արդյունքում աշխատանքների և գնումների իրականացման ցածր գները: Տնտեսմանը ոչ էականորեն նպաստել է նաև իրականացված աշխատանքների և գնումների ծավալի և նախատեսված ծավալի միջև առկա փոքր տարբերությունը:

ԱՃԹՆ-ի 2016-2017 թվականների զեկույցում և Հայաստանում վավերացման առաքելության հանդիպումների ժամանակ արձանագրվել են գործող կարգավորումների մի շարք բացեր: Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի՝[267] կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Նախկինում մետաղական հանքաքար արդյունահանող ընդամենը 4 ընկերության փոխարեն ամրագրվել է, որ մասհանումներ են կատարվում ՀՀ-ում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունների (ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից սահմանվող այլ ընկերությունների) կողմից վճարվող բնապահպանական հարկից: Այլ ընկերությունների ցանկը սահմանում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա: Ընդ որում, այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները Կառավարությունը պետք է սահմանի օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեցամսյա ժամկետում, այն է՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը:
- Համայնքների և (կամ) բնակավայրերի ցանկի կազմումը և ըստ համայնքների և (կամ) բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկումն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: ՀՀ կառավարությունը պետք է սահմանի համայնքների և (կամ) բնակավայրերի ցանկի կազմման և համայնքների կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի

[266] Տե՛ս http://www.minfin.am/hy/page/byuje_2018
[267] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032

հաշվարկման կարգը՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեցամսյա ժամկետում, այն է՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը:

- 2021 թվականից մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կկատարվեն այն համայնքներում ծրագրերի իրականացման համար, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն:
- Ընթացիկ տարվա Ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարը կազմում է հաշվետվություն և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: Համայնքի ավագանու հաստատած հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը հրապարակվում է համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և (կամ) համապատասխան մարզպետարանի կայքում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Հաշվետվության ձևը պետք է հաստատվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում, այն է՝ մինչև սեպտեմբերի 15-ը:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ ԱՃԹՆ-ի 2016-2017 թվականների զեկույցում արձանագրված օրենսդրական բացերը հիմնականում կարգավորվել են վերոգրյալ օրենսդրական փոփոխությունների միջոցով, սակայն, այնուամենայնիվ, առավել համապարփակ գնահատական հնարավոր կլինի տալ միայն ՀՀ կառավարության կողմից նշված որոշումներն ընդունելուց հետո:

5 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

5 ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է պղնձով, մոլիբդենով, կապարով, ցինկով, ոսկիով և արծաթով, և հանքարդյունաբերության ոլորտը ավանդաբար էական կշիռ է ունեցել Հայաստանի տնտեսության մեջ:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն՝ 2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը կազմել է ՀՆԱ-ի 2.9%-ը, որը 2013թ.-ից ի վեր բարձր է միջին ցուցանիշից (2.6%): Հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ նվազել է 2014թ.-ին, այնուհետ գրանցել է հաստատուն աճ մինչև 2017թ.-ը՝ արձանագրելով համեմատական բարձր ցուցանիշ՝ 3.3%: Սակայն, 2018թ.-ին ոլորտի մասնաբաժինը՝ 2.9%, նվազել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ, ինչը մասամբ կարելի է բացատրել Լոռու մարզում գտնվող Թեղուտի հանքի շահագործման դադարեցմամբ:

Այսպիսով՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտն՝ ընդհանուր ՀՆԱ-ում ներկայացված 20 ոլորտների մեջ, հաշվետու տարում զբաղեցրել է տասներեքերորդ հորիզոնականը:

Գծապատկեր 5.1.1

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն*[268]

[268] Տ'ես https://armstat.am/file/article/sv_03_20a_112.pdf

Հարկ է նշել, որ 2016թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը բացարձակ արժեքով կազմել է ՀՆԱ աճի հիմնական բաղկացուցիչը. ՀՆԱ-ն աճել է 23.7 մլրդ ՀՀ դրամով, այնինչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը աճել է 23.1 մլրդ ՀՀ դրամով: 2017թ.-ին ՀՆԱ-ն աճել է 497 մլրդ ՀՀ դրամով, որից 55 մլրդ ՀՀ դրամը եղել է մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ներդրումը: 2018թ.-ին պատկերն այլ է, չնայած նրան, որ ՀՆԱ-ն աճել է 441 մլրդ ՀՀ դրամով, ոլորտի համախառն ավելացված արժեքը նվազել է 12.3 մլրդ ՀՀ դրամով:

Բացարձակ արժեքով, 2013-2018թթ.-ի ընթացքում անվանական ՀՆԱ-ն զգալիորեն աճել է, մինչդեռ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը շարունակել է տատանվել և աճել է 2013թ.-ին 103 մլրդ ՀՀ դրամից մինչև 173 մլրդ ՀՀ դրամ 2018թ.-ին:

Գծապատկեր 5.1.2

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տարեկան դինամիկա



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն*[269]

Ակնկալվում է, որ Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում բացակայում է արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանումը: Քանի որ Հայաստանում չկան հանրությանը հասանելի արժանահավատ գնահատականներ երկրի հանքարդյունաբերությունում առկա ոչ ֆորմալ ոլորտի վերաբերյալ, սույն գործունեության վերլուծության նպատակով ուսումնասիրվել են ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող հասանելի համապատասխան դատական ակտերը և վարչական մարմինների որոշումները: Ուսումնասիրության արդյունքում, հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող դատական գործեր չեն բացահայտվել: Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները, ներառյալ դրա մասշտաբը, օրենսդրական կարգավորումները, վերահսկողությունը և հաշվետվողականության պահանջները՝ ակնկալվում է, որ այս ոլորտում ոչ ֆորմալ գործունեություն չկա:

Ստորև ներկայացվում է 2011-2018թթ.-ին հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում՝ առաջատար հինգ ոլորտների հետ համեմատությամբ:

[269] *Ibid*

Աղյուսակ 5.1.1

2018թ. ընդհանուր արդյունքը և մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում

Տնտեսական գործունեության տեսակ, մլն ՀՀ դրամ	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ՀՆԱ արտադրություն, մլն ՀՀ դրամ	3,777,946	4,266,500	4,555,638	4,828,626	5,043,633	5,067,293	5,564,493	6,017,035
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	767,880	763,941	839,821	872,631	868,671	830,553	834,355	838,914
ՀՆԱ-ի մասնաբաժին	*20.3%*	*17.9%*	*18.4%*	*18.1%*	*17.2%*	*16.4%*	*15%*	*13.9%*
Շինարարություն	491,082	497,985	476,564	448,772	474,107	393,176	404,403	397,355
ՀՆԱ-ի մասնաբաժին	*13.0%*	*11.7%*	*10.5%*	*9.3%*	*9.4%*	7.8%	7.3%	6.6%
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	476,695	508,630	548,613	570,369	551,485	499,043	614,987	692,654
ՀՆԱ-ի մասնաբաժին	*12.6%*	*11.9%*	*12.0%*	*11.8%*	*10.9%*	*9.8%*	*11.1%*	*11.5%*
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	412,324	458,234	506,428	546,335	535,801	508,804	572,075	639,224
ՀՆԱ-ի մասնաբաժին	*10.9%*	*10.7%*	*11.1%*	*11.3%*	*10.6%*	*10.0%*	*10.3%*	*10.6%*
Մշակող արդյունաբերություն	399,271	397,549	441,103	466,755	464,326	521,153	591,568	678,235
ՀՆԱ-ի մասնաբաժին	*10.6%*	*9.3%*	*9.7%*	*9.7%*	*9.2%*	*10.2%*	10.6%	11.3%
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	102,847	114,327	102,687	102,553	107,718	130,836	185,510	169,795
ՀՆԱ-ի մասնաբաժին	*2.7%*	*2.7%*	*2.3%*	*2.1%*	*2.1%*	*2.6%*	*3.3%*	*2.8%*

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն*[270]

[270] *Ibid*

5.2 Զբաղվածությունը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների՝ Հայաստանի տնտեսության մեջ իր մասնաբաժնով արդյունաբերությունը զբաղվածության ցուցանիշներով ավանդաբար երրորդն ճյուղն է՝ ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներից հետո: 2017թ.-ին մոտ 132.9 հազար մարդ աշխատել է արդյունաբերության ոլորտում, ինչը կազմել է ընդհանուր զբաղվածության 13.1%-ը: 2018թ.-ին ոլորտում աշխատել է 125.2 հազար մարդ կամ ընդհանուր զբաղվածության 13.8%-ը: Հարկ է նկատի ունենալ, որ 2018թ.-ից վերանայվել է աշխատուժի վիճակագրության մեթոդաբանությունը՝ օբյեկտիվորեն հանգեցնելով ցուցանիշների ժամանակային շարքերի որոշակի խզման: Նոր ստանդարտի համաձայն՝ սեփական սպառման համար ապրանքների արտադրությունը և ծառայությունների տրամադրումը չի համարվում զբաղվածություն: Ըստ այդմ՝ նախկին սահմանման համեմատ, վերջինս բացառվել է զբաղվածությունից՝ հանգեցնելով զբաղվածների ընդհանուր թվաքանակի նվազման:[271]

Ըստ Վիճակագրական կոմիտեի համապատասխան տարեգրքի՝ 2017 և 2018թթ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ընդհանուր արդյունաբերության զբաղվածության մեջ կազմել է համապատասխանաբար 6.9% և 7.3%, իսկ աշխատակիցների ընդհանուր քանակը՝ 9.2 հազար մարդ: Զբաղվածների մեծամասնությունը աշխատել է մետաղական հանքաքարերի արդյունահանման աշխատանքներում (7.7 հազար մարդ վերջին երկու տարիների ընթացքում): Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հաշվետու տարում մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում աշխատողների թիվը գրեթե չի փոխվել: Նույն տվյալների հիման վրա վերլուծությունները ցույց են տալիս, որ մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի մասնաբաժինը ընդհանուր զբաղվածության մեջ 2013-2018թթ.-ի ընթացքում տատանվել է աճի միտումով 0.6%-0.8% ցուցանիշների միջև՝ կազմելով 0.8%՝ 2017 և 2018թթ.:

Աղյուսակ 5.2.1

Ընդհանուր զբաղվածություն, զբաղվածությունն արդյունաբերության ու մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ընդհանուր զբաղվածություն, հազար մարդ	1,175.1	1,172.8	1,163.8	1,133.5	1,072.6	1,006.2	1,011.7	907.6
Ընդհանուր զբաղվածությունը արդյունաբերությունում, հազար մարդ	128.7	138.3	131.9	131.0	120.8	121.4	132.9	125.2
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, հազար մարդ	110.4	10.0	9.4	7.9	9.3	8.8	9.2	9.2

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր*[272]

[271] https://www.armstat.am/file/doc/99516743.pdf

[272] 2011-2012 https://www.armstat.am/file/article/trud_13_6.pdf
2012-2013 https://www.armstat.am/file/article/trud_14_6.pdf
2014-2015 https://www.armstat.am/file/article/9.trud_2016_4.1.pdf

Գծապատկեր 5.2.1
2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինն արդյունաբերական զբաղվածության մեջ, հազար մարդ



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ-ի հրապարակած համապատասխան տարեգրքեր* [273]

Համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկությունների՝ մետաղական հանքարդյունահանման ոլորտում զբաղվածների շուրջ 98% ՀՀ քաղաքացիներ են, 92%-ը ունեն անժամկետ աշխատանք և շուրջ 83%-ը տղամարդ են: Ներկայացված 26 ընկերություններից 12-ի ղեկավար կազմում ներկայացված է առնվազն մեկ կին: Ղեկավար կազմում տասից ավել կին ներկայացված է միայն երեք ընկերությունում, որոնք են՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն և «Զաարատ Կապան» ՓԲԸ-ն: Ղեկավար կազմում ներկայացված կանանց ընդհանուր թիվը 88 է, որը կազմում է կին զբաղվածների շուրջ 5%-ը:

Աղյուսակ 5.2.2
2018թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորում զբաղվածների ընդհանուր թիվը և բաշխվածությունն՝ ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության

	Ընդամենը	Տղամարդ	Կին	ՀՀ քաղաքացի	Օտարերկրյա քաղաքացի	Ժամկետային	Անժամկետ
Զբաղվածների թիվը	9,791	8,073	1,718	9,581	210	799	8,992

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Ստորև ներկայացված է ընկերությունների կողմից տրամադրված զբաղվածների բնութագիրն՝ ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության:

2016-2017 https://www.armstat.am/file/article/trud_18_4.1.pdf
2018 https://armstat.am/file/doc/99516743.pdf
[273] *Ibid*

Գծապատկեր 5.2.2
2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների բաշխվածությունն՝ ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃՐԹՆ-ի զեկույցի համար*

Ոլորտի ստեղծած աշխատատեղերի մեծամասնությունը՝ շուրջ 91%-ը, բաժին է ընկնում վեց ընկերությունների: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են ստեղծած աշխատատեղերի քանակով առաջատար 10 ընկերությունները և դրանց կողմից ապահովվող աշխատատեղերի քանակը:

Գծապատկեր 5.2.3
2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների բաշխվածությունն ըստ սեռի, 2017-2018թթ.



Աղյուսակ 5.2.3
2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերություններում աշխատատեղերի քանակը

	Ընկերության անվանումը	Աշխատատեղերի քանակը
1	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	4,435
2	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	1,380
3	«Զաարատ Կապան» ՓԲԸ	1,075
4	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	1,022
5	«Թեղուտ» ՓԲԸ	517
6	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	492
7	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	237
8	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	223
9	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	141
10	«Լեռ-Էքս»ՍՊԸ	58

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում զբաղվածության տեղաբաշխումը զգալիորեն տարբերվում է Հայաստանում ընդհանուր զբաղվածության տեղաբաշխումից: Համաձայն պաշտոնական տվյալների՝ 2018թ.-ին ընդհանուր զբաղվածների գրեթե 30%-ը կենտրոնացած է եղել Երևանում: 12% մասնաբաժնով երկրորդ տեղն է զբաղեցրել Արմավիրի մարզը, իսկ Արարատի մարզում աշխատել է զբաղվածների 11%-ը: Համեմատության համար պետք է նշել, որ մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում զբաղվածների միայն 5%-ն է

կենտրոնացված եղել Երևանում, ինչը բացատրվում է տվյալ գոտում մետաղական հանքաքարերի արդյունահանման գործունեության բացակայությամբ: Զբաղվածների շուրջ 69% կենտրոնացված է Սյունիքի մարզում: Սյունիքի մարզում են գտնվում մետաղական հանքաարդյունաբերական ոլորտի երեք խոշորագույն քաղաքները՝ Քաջարանը, Կապանը և Մեղրին: Այս երեք քաղաքներում զբաղվածների գումարային թիվը գերազանցում է 6 հազարը: Ոլորտում զբաղվածությամբ Սյունիքի մարզին հաջորդում են Լոռու և Արմավիրի մարզերը համապատասխանաբար 8% և 7% մասնաբաժնով: Հարկ է նշել, որ 2017թ.-ին Լոռու մարզում ոլորտում զբաղվածների մասնաբաժինը կազմել է 18%: Տվյալ ցուցանիշի նվազումը կարելի է մասամբ բացատրել «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատողների քանակի նվազմամբ:

Գծապատկեր 5.2.4

2018թ.-ին բոլոր ոլորտներում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումն՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի



Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ-ի 2019թ.-ի «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» հրապարակում*[274]

Գծապատկեր 5.2.5

[274] https://www.armstat.am/file/article/marzer_2019_17.pdf

2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումն՝ ըստ մարզերի և մայրաքաղաքի



Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Հարկ է նշել, որ ՀՀ ՎԿ-ի տրամադրած տեղեկությունները՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության մասին, տարբերվում են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրած տեղեկատվությունից: Ըստ վերջինների՝ 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերություններում աշխատել է 9.8 հազար մարդ, մինչդեռ ՀՀ ՎԿ-ի տվյալների համաձայն այդ թիվը կազմում է 9.2 հազար մարդ: Այս տարբերությունը պայմանավորված է տեղեկությունների հավաքագրման մեթոդաբանությամբ: Մասնավորապես, ՀՀ ՎԿ-ի կազմած զբաղվածության վիճակագրությունը հենվում է տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության վրա, մինչդեռ ընկերությունների զբաղվածության ցուցանիշն աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակն է հաշվետու տարվա կտրվածքով (հաշվետու տարվա 12 ամիսներից յուրաքանչյուրի միջին ցուցակային թվաքանակների գումարի միջինը): Նման տարբերություններ արձանագրվել են նաև նախորդող հաշվետու տարիների ընթացքում:

Հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն առկա չէ: Սակայն, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մի շարք առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ հանրային ուշադրության առարկա լինելը, ոլորտի օրենսդրական կարգավորումները, վերահսկողությունը և հաշվետվողականության պահանջները, այս ոլորտի ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը, ընդհանուր արդյունաբերության ոլորտի համեմատ, դարձնում են գրեթե ոչ ռիսկային:

5.3 Հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց հատկացվող նվիրատվություններ

ԱՃԹՆ-ի 2019թ.-ի ստանդարտի 5.1 պահանջը նախատեսում է, որ ստանդարտն իրականացնող երկրները պետք է պարզաբանեն արդյունահանող ոլորտի այն եկամուտների հատկացումները, որոնք չեն մուտքագրվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներ:

2019 թվականի ապրիլի 16-ին տեղի ունեցած ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի նիստի[275] ընթացքում, որը հաստատում էր Հայաստանի 2019թ.-ի ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, անդրադարձ չկատարվեց հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հիմնադրված (դրանց փոխկապակցված) հիմնադրամների ընդգրկման և հաշվետվությունների ներկայացման հարցին: Ուստի, առաջնորդվելով 2017թ.-ի հոկտեմբերի 10-ի[276] ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ նիստի ժամանակ հիմնադրամների ընդգրկման և հաշվետվությունների ներկայացման հարցի շուրջ կայացրած որոշումներով, զեկույցի շրջանակում բավարարվել ենք ընկերությունների կողմից հիմնադրամներին, հասարակական կազմակերպություններին և ֆիզիկական անձանց (ագրեգացված, ոչ անվանական կերպով) կատարված վճարումների կամավոր բացահայտմամբ:

2018թ.-ի ընթացքում հաշվետու 26 ընկերություններից ընդամենը 10 ընկերություններն են հիմնադրամներին և ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով անհատույց օտարումներ կատարել և միայն 7 ընկերություններ՝ ֆիզիկական անձանց:

Համաձայն ընդերքօգտագործողների կողմից ԱՃԹՆ-ի շրջանակներում տրամադրված հաշվետվության՝ 2018թ.-ին հիմնադրամներին և ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների ընդհանուր չափը կազմել է 5.4 մլրդ ՀՀ դրամ, իսկ ֆիզիկական անձանց տրամադրված ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվությունները, նվիրաբերությունները և այլ ձևով կատարած օտարումները՝ 123 մլն ՀՀ դրամ: Հատկանշական է, որ նախորդ հաշվետու տարիների համեմատ այս ցուցանիշը գրանցել է զգալի աճ:

Համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի[277]՝ յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ, հիմնադրամը՝ http://www.azdarar.am հղմամբ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվող անձի (աուդիտորի) եզրակացությունը: Աուդիտորական եզրակացության հրապարակումը պարտադիր է, եթե հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը

[275] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf
[276] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_10_10_%202017.pdf
[277] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75486

գերազանցում է 10 մլն ՀՀ դրամը: Հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը: Սահմանված ժամկետում հաշվետվությունը չհրապարակելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն այդ մասին չծանուցելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, որոնցից առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաշվետվության հրապարակման և ծանուցման պահանջը պատշաճ չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը դիմում է դատարան՝ հիմնադրամը լուծարելու պահանջով:

2018թ.-ին հիմնադրամներին կատարված ֆինանսական և ոչ ֆինանսական հատկացումները կազմել են 4.8 մլրդ ՀՀ դրամ և կատարվել են ընդամենը յոթ հանքարդյունահանող ընկերության կողմից: Հաշվետու տարվա ընթացքում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից նվիրատվություն, նվիրաբերություն կամ անհատույց օտարում ստացած տասներկու հիմնադրամներից 10-ին տրամադրված հատկացումները հատել են համադրման համար էական 1 մլն ՀՀ դրամի շեմը: Ստորև ներկայացված աղյուսակը արտացոլում է այդ 10 հիմնադրամների հրապարակային հաշվետվության ուսումնասիրությունն՝ ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության հետ համադրելու նպատակով:

Աղյուսակ 5.3.1

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կատարած վճարումները հիմնադրամներին (պահանջ 5.1)

Ընկերություններ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության	Տարբերություններ	Հիմնադրամների կողմից հրապարակված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
«ԳեոՊրոՄայնինգԳոլդ» ՍՊԸ	«Գարի Քեսայան» մշակութային հիմնադրամ	1,440,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամ	4,258,181,287	4,376,695,422	118,514,135	https://www.azdarar.am/announcments/org/131/00472246/	https://www.azdarar.am/announcments/org/131/00472246/
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման» հիմնադրամ	217,000,000	217,000,000	0	https://www.azdarar.am/announcments/org/131/00472044/	https://www.azdarar.am/announcments/org/131/00472044/
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Քրոնիմետ» Բարեգործական հիմնադրամ	180,000,000	180,000,000	0	https://www.azdarar.am/announcments/org/45/00465277/	https://www.azdarar.am/announcments/org/45/00465277/
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հայաստան համահայկական» հիմնադրամ	84,915,250	Հասանելի չէ	-	https://www.azdarar.am/announcments/org/131/00528486/	https://www.azdarar.am/announcments/org/131/00528486/

Ընկերություններ	Հիմնադրամներ	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ-տնտեսական ներդրումը՝ ըստ հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվության	Տարբերություններ	Հիմնադրամների կողմից հրապարակված հաշվետվության հղում	Մեկնաբանություններ աուդիտի վերաբերյալ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Սիթի օֆ սմայլ» Բարեգործական հիմնադրամ	51,000,000	Հասանելի չէ	-	https://www.azdarar.am/announcments/org/131/00471298/	https://www.azdarar.am/announcments/org/131/00471298/
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	«Առողջ համայնքներ» հիմնադրամ	15,000,000	15,000,000	0	https://www.azdarar.am/announcments/org/131/00468576/	Առկա չէ
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	«Հյուման դիգնիթի ընդ փիս» բարեգործական հիմնադրամ	11,526,397	9,129,726	2,396,671	https://www.azdarar.am/docs/149534/	Առկա չէ
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ	1,500,000	1,500,000	-	https://www.azdarar.am/announcments/org/131/00470879/	https://www.azdarar.am/announcments/org/131/00470879/
«Լիճքվազ» ՓԲԸ	«Մեղրի-Ագարակ» հիմնադրամ	2,000,000	Հասանելի չէ	-	https://www.azdarar.am/announcments/org/133/00469972/	Առկա չէ

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը գրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք*

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի համաձայն, եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել հաշվետվությունը: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն, եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է 5 մլն և ավելի ՀՀ դրամի չափով, ապա, օրենքով սահմանված կարգով, պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան մինչև հաջորդող տարվա մայիսի 15-ը, հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության ժողովի ընտրած Անկախ ադմինիստրատորի կողմից: Հատկանշական է, որ 2019թ.-ի դեկտեմբերի 4-ին «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում վերը նշված հոդվածը վերախմբագրվել է հետևյալ կերպ. եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ Լիազոր մարմնի սահմանած հաշվետվությունը, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ենթակա է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն:

Հաշվետու տարվա ընթացքում, համաձայն ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության, հատկացումներ են իրականացվել 30 հասարակական կազմակերպությունների՝ ընդհանուր 637 մլն ՀՀ դրամի չափով: Ընդերքօգտագործող ընկերությունների տրամադրած տեղեկատվության պատշաճությունը հաստատելու համար, կատարվել է 1 մլն ՀՀ դրամից ավել հատկացումներ ստացած 17 հասարակական կազմակերպությունների հրապարակային հաշվետվությունների վերլուծություն:

Ստորև ներկայացված աղյուսակը արտացոլում է հաշվետու տարում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրած էական հատկացումների համադրումը.

Աղյուսակ 5.3.2

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (պահանջ 5.1)

Ընկերություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձ	Սոցիալ-տնտեսական ներդրումն՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ-տնտեսական ներդրումն՝ ըստ հկ-ի կողմից ներկայացված հաշվետվության	Տարբե-րություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից հրապարակված հաշվետվության հղում	Մեկնաբա-նություններ աուդիտի վերաբերյալ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	«Մեղրիի տարածաշրջանի պտղաբուծության զարգացման» ՀԿ	1,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զաարատ Կապան» ՓԲԸ	«Ազատամարտ» կոմիտե	2,400,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զաարատ Կապան» ՓԲԸ	«Հայկական կարմիր խաչի ընկերություն» ՀԿ	2,880,000	Հասանելի չէ	-	https://www.redcross.am/resources/redcross/pdf/7129d7c0491b07819b1e078dc013a93f.pdf	https://www.redcross.am/resources/redcross/pdf/7129d7c0491b07819b1e078dc013a93f.pdf
«Զաարատ Կապան» ՓԲԸ	«Սյունիքի մարզի սիրողական և պրոֆեսիոնալ քիք-բոքսինգի մարզական ակումբ» ՀԿ	3,762,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ	4,512,100	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	«ՀՀ շախմատի ֆեդերացիա» ՀԿ	3,500,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հանրային Դիվանագիտություն» ՀԿ	420,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Միավորում» Բարեգործական ՀԿ	33,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ

Ընկերություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձ	Սոցիալ-տնտեսական ներդրումն՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ-տնտեսական ներդրումն՝ ըստ հկ-ի կողմից ներկայացված հաշվետվության	Տարբե-ություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից հրապարակված հաշվետվության հղում	Մեկնաբա-նություններ աուդիտի վերաբերյալ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հայաստանի շախմատային ֆեդերացիա» ՀԿ	30,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Պառնաս» Մշակութային ՀԿ	28,009,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիա» ՀԿ	26,400,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հայ առաքելական սուրբ եկեղեցու» Սյունյաց թեմ	25,200,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Առաքելություն Հայաստան» Բարեգործական ՀԿ	11,000,000	Հասանելի չէ	-	http://mission.am/en/reports/Report_on_MA_activity_2018_am.pdf	http://mission.am/en/reports/Annual_Report_2018_am.pdf
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Ազատամարտ» բարեգործական ՀԿ	9,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Երկրապահ կամավորականների միություն» ՀԿ	7,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ

Ընկերություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձ	Սոցիալ-տնտեսական ներդրումն՝ ըստ հանքարդյունահանող ընկերության կողմից ներկայացված հաշվետվության	Սոցիալ-տնտեսական ներդրումն՝ ըստ հկ-ի կողմից ներկայացված հաշվետվության	Տարբե-ություններ	Ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից հրապարակված հաշվետվության հղում	Մեկնաբա-նություններ աուդիտի վերաբերյալ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի եկեղեցասիրաց եղբայրություն» ԿԿ	5,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն» իրավաբանական անձանց միություն	5,600,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ	4,788,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Էս Թի Ար» մարդասիրական ՀԿ	4,000,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Հույսի և հավատի օջախ» բարեգործական ՀԿ	3,300,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոն» ՀԿ	2,700,000	Հասանելի չէ	-	Առկա չէ	Առկա չէ

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք*

Աղյուսակ 5.3.3

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային ֆիզիկական անձանց ֆինանսական և ոչ ֆինանսական նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (պահանջ 5.1)

Ընկերություններ	Ֆիզիկական անձանց քանակը	Ֆինանսական հատկացումներ	Ոչ ֆինանսական հատկացումներ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	17	4,973,745	-
«Լիճքվազ» ՓԲԸ	140	-	678,160
«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	5	3,065,700	-
«ԳեոՊրոՄայնինգԳոլդ» ՍՊԸ	271	11,196,000	-
«Չաարատ Կապան » ՓԲԸ	58	9,927,954	-
«Չաարատ Կապան» ՓԲԸ	243	-	1,314,080
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	354	91,020,801,3	-
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	-	-	331,736,11
«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	4	400,000	-

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

5.4 Մետաղական հանքարդյունաբերության բնապահպանական ազդեցությունը և այդ ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ առկա տեղեկատվությունը (պահանջ 6.4)

ԱՃԹՆ-ի 2019թ.-ի ստանդարտի 6.4 պահանջը խրախուսում է ստանդարտն իրականացնող երկրներին բացահայտել արդյունահանող ճյուղերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության կառավարման և մոնիտորինգի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընդերքօգտագործողների պայմանագրային պարտավորությունները, այդ թվում նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ, առավել մանրամասն ներկայացված են սույն զեկույցի 2.3 բաժնում:

Համաձայն ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնելու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության N 191-Ն որոշման [278] ընդերքօգտագործող ընկերությունները պարտավորվում են Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկումների արդյունքների մասին:

Շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումները վերաբերում են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով (ՇՄԱԳ), հիմնական գնահատման հաշվետվությամբ և բնապահպանական կառավարման պլաններով նշված բացասական ազդեցությունների տեսակներին: Մշտադիտարկումների ծրագիրը կազմվում է ըստ շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների՝ հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ:

Մշտադիտարկման արդյունքները եռամսյակային և տարեկան կտրվածքով ներկայացվում են լիազոր մարմին՝ ՇՄՆ: Ամփոփ տարեկան հաշվետվությունն ընդերքօգտագործողները ներկայացնում են մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով: Լիազոր մարմինը եռամսյակային հաղորդումներն ու ամփոփ տարեկան հաշվետվություններն ստանալուց հետո ամփոփում է դրանք և 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում լիազոր մարմնի պաշտոնական կայքում:[279]

Ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում գնահատված արդյունքների վերաբերյալ ամփոփ տարեկան հաշվետվությունը տեղադրվում է նաև այդ կայքում:

[278] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120135
[279] http://mnp.am/am/pages/233

Յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ ընդերքօգտագործողները պարտավոր են վերանայել և լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները:

2018թ. ի ընթացքում ԱՃԹՆ հաշվետու 26 ընկերություններից միայն 4-ն են ներկայացրել բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն:[280]

Աղյուսակ 5.4.1 2018թ.-ի ընդերքօգտագործող ընկերությունների կողմից բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություններ

	Ընկերության անվանումը	i. եռամսյակ	ii. եռամսյակ	iii. եռամսյակ	iv. եռամսյակ	Տարեկան հաշվետվու-թյուն
1	«Լիճքվազ» ՓԲԸ	-	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է
2	«Լիդիան Արմենիա» ՍՊԸ	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	-
3	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է	Ներկայացված է
4	«Թեղուտ» ՓԲԸ	-	Ներկայացված է	Ներկայացված է	-	-

Աղբյուրը՝ *Շրջակա միջավայրի նախարարություն*[281]

Հատկանշական է, որ «Լիդիան Արմենիա»-ՓԲԸ-ն միակ ընկերությունն է, որ հրապարակել է մշտադիտարկումների արդյունքները նաև իր կայքէջում:[282]

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ [283] գնահատման և փորձաքննության կառավարումն իրականացնում են ՀՀ կառավարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնը (ՇՄԱՓԿ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առանց ՇՄԱԳ փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրութային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը:

[280] http://mnp.am/am/pages/233
[281] http://mnp.am/am/pages/233
[282] https://www.lydianarmenia.am/index.php?m=publications&lang=arm&p=116
[283] https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594

Նախատեսվում է, որ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը 7 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:[284] Կայքում հասնելի է նաև ՇՄԱԳ հայտը:[285] Հարկ է նշել, որ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը նախարարության կայքէջում տեղադրված չէ հանրամատչելի կերպով. առանձնացված չեն ընդերքօգտագործողների կողմից ներկայացված ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունները, 2016թ. և դրան նախորդող տարիներին հրապարակված եզրակացությունները հասանելի չեն որոնման կոճակով, քանի որ արխիվացված փաստաթղթերի տեսքով են ներկայացված, փաստաթղթերը ներկայացված են pdf ձևաչափով միայն: ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունների հասանելիության վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 5.4.2

ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունների հասանելիությունը ՇՄՆ կայքում, 2020թ օգոստոսի դրությամբ

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ փորձաքննական եզրակացություն	Հրապարակման ամսաթիվը
1	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Արջուտի ոսկու հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի կառուցման և շահագործման աշխատանքային նախագծի հաշվետվություն	06.08.2014
		Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի հաշվետվություն	19.09.2015
2	«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ	Ներկայացված չէ	-
3	«Ասսաթ» ՍՊԸ	Ներկայացված չէ	-
4	«Թաթսթոուն» ՍՊԸ	Լիճքի պղնձի հանքավայրի արդյունահանման հաշվետվություն	21.12.2015
5	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Հանքասարի պղինձ- մոլիբդենային հանքավայրում 2015-2017թթ.-ի ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների նախնական գնահատման հայտ	14.12.2015
6	«Գեղի գոլդ» ՍՊԸ	Գեղի գետի ավազանի հանքային դաշտում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ժամկետի երկարաձգման նախնական գնահատման հայտ	28.12.2015
7	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն	29.04.2016
8	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տարածքում 2017-2019թթ.-ի երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախնական գնահատման հայտ	04.10.2017
9	«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Ներկայացված չէ	-

[284] http://www.mnp.am/am/pages/66
[285] http://www.mnp.am/am/pages/230?Posts_page=4

N	Ընկերության անվանումը	ՇՄԱԳ փորձաքննական եզրակացություն	Հրապա-ռակման ամսաթիվը
10	«Թեղուտ» ՓԲԸ	Ներկայացված չէ	-
11	«Ատ-մետալս» ՍՊԸ	Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման աշխատանքային նախագծի վերաբերյալ	18.11.2014
12	«Վայք գոլդ» ՍՊԸ	Ներկայացված չէ	-
13	«Ղարագուլյաններ» ՓԲԸ	Ներկայացված չէ	-
14	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Ներկայացված չէ	-
15	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Ներկայացված չէ	-
16	«Լիճքվազ» ՓԲԸ	Ներկայացված չէ	-
17	«Մարջան մայնինգ» ՍՊԸ	Ներկայացված չէ	-
18	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Մեղրաձորի ոսկու կորզման ֆաբրիկայի աշխատանքային նախագծի վերաբերյալ	22.04.2014
19	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման հաշվետվություն	14.11.017
20	«Մեգո գոլդ» ՍՊԸ	Թուխմանուկի ոսկու (կենտրոնական տեղամաս) հանքավայրի շահագործման փոփոխված աշխատանքային նախագծի վերաբերյալ	11.12.2014
21	«Սագամար» ՓԲԸ	Արմանիսի ոսկի բազմամետաղային հանքավայրի ընդլայման աշխատանքային նախագիծ	22.05.2015
		Դեղին և Սև գետերի ավազանում երկրաբանահետախուզական աշխատանքների վերաբերյալ	26.03.2018
22	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Քաջարանի պղնձամոլիմդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխության հաշվետվություն	16.12.2016
23	«Մուլտի գրուպ» կոնցեռն ՍՊԸ	Էրթիչի քվարցիտների հանքավայրի արդյունահանման հաշվետվություն	13.04.2018
24	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Ներկայացված չէ	-
25	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տարածքում պաշտպանիչ բնամասի փ լուզման հետևանքի վերացման հաշվետվություն	22.01.2019
		Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ստորգետնյա մշակման տեխնիկական նախագծի (փոփոխության) հաշվետվություն	18.11.2019
26	«Պարամաունտ գոլդ մայնինգ» ՓԲԸ	Ներկայացված չէ	-

Աղբյուրը՝ *Շրջակա միջավայրի նախարարություն*[286]

[286] http://www.mnp.am/am/pages/66

6 ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

6. ՀԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

6.1 Համադրման գործընթացի մեթոդաբանությունը և շրջանակները

Ընկերությունների վճարումների և պետության եկամուտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը կարող է նպաստել հանքարդյունահանող ճյուղերի կառավարման վերաբերյալ տեղեկացված հանրային քննարկումներին: Համաձայն ԱՃԹՆ ստանդարտի 4-րդ՝ «Եկամուտների հավաքագրումը» պահանջի՝ անհրաժեշտ է իրականացնել ընկերությունների վճարումների և հանքարդյունահանող ճյուղերից ստացված կառավարության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների համակողմանի համադրում: Այդ նպատակով ՀՀ ՊԵԿ-ը, ՀՀ ՏԿԵՆ-ը (համայնքները), ՀՀ ՇՄՆ-ն, ինչպես նաև, օրենքով սահմանված մետաղական հանքաքարի արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները պարտավոր են համակողմանիորեն բացահայտել եկամուտների և վճարումների վերաբերյալ տեղեկատվություն՝ լրացնելով ՀՀ Կառավարության 2018թ. Հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ սահմանված (փոփոխված 2019թ. հուլիսի 11–ի N 871-Ն ՀՀ կառավարության որոշմամբ [287]) հաշվետվությունը: Անկախ ադմինիստրատորը իրականացնում է եկամուտների և վճարումների վերաբերյալ պետական մարմիններից և ընկերություններից ստացված տեղեկատվության համադրում և ներկայացնում է համադրման արդյունքները և բացահայտված անհամապատասխանությունները ԱՃԹՆ զեկույցում:

6.1.1 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում համադրվող ընկերությունների ցանկի որոշում

ՀՀ ԱՃԹՆ ԲԾԽ-ի՝ 16.04.2019թ. տեղի ունեցած նիստի արդյունքում կազմված N12 արձանագրությամբ[288] ընդհանուր համաձայնությամբ հստակեցվել է, որ ԱՃԹՆ-ի զեկույցի համար հաշվետվություններ պետք է ներկայացնեն մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները: Կատարված վերլուծության արդյունքում պարզվել է, որ 150 մլն դրամին համարժեք կամ դրանից ավել հարկեր և վճարումներ շեմ կիրառելիս համադրվող ընկերությունների ցանկում կհայտնվեն այն կազմակերպությունները, որ իրականացրել են ակտիվ գործունեություն, և նրանց կողմից վճարված հարկերն ու վճարումները էական են: Համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8 N 666-Ն որոշման (փոփոխված 11 հուլիսի 2019թ. N 871-Ն ՀՀ կառավարության որոշման)՝ [289] սնանկ ճանաչված կազմակերպություններն ազատվում են հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունից, որն

[287] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/ https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/
[288] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf
[289] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/ https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/

ամրագրված է նաև «ՀՀ Ընդերքի մասին» օրենսգրքում՝[290] 2019 թվականի ապրիլի 23-ին կատարված փոփոխություններով և լրացումներով: ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի պատրաստման նպատակով հրապարակային հաշվետվություն ներկայացնող ընկերությունները 26-ն են[291]: Հաշվետվության կազման նպատակով հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ կատարող ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ (ընդունվել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի 16.04.2019թ. N12 արձանագրությամբ[292]):

Ստորև ներկայացված աղյուսակը պատկերում է 26 ընկերությունների համար էականության շեմի կիրառումը 2018թ.-ի համար՝ հիմնված ՀՀ ՊԵԿ-ի և ՀՀ ՇՄՆ-ի կողմից ներկայացված տվյալների վրա:

Տեղեկատվական նպատակով աղյուսակի առաջին սյունակում ներկայացված են նաև ՀՀ պետական բյուջե ուղղված եկամտային հոսքերի տվյալներն՝ ըստ ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության:

[290] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130250
[291] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf
[292] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

Աղյուսակ 6.1 Էականության շեմի կիրառումը

N	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերություն-ների տվյալների, 2018թ., հազար ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ պետական մարմինների տվյալների, 2018թ., հազար ՀՀ դրամ	Ընկերության մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում, %[293]	Էականության շեմը գերազանցող
1	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ » ՓԲԸ	42,499,111	42,499,101	54.29%	Գերազանցում է
2	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	15,585,782	15,566,559	19.88%	Գերազանցում է
3	«Զաարատ Կապան» ՓԲԸ[294]	6,499,008	6,502,918	8.31%	Գերազանցում է
4	«Ագարակի պղնձամոլիբդենային» ՓԲԸ	3,170,582	5,317,934	6.79%	Գերազանցում է
5	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	4,434,164	4,820,575	6.16%	Գերազանցում է
6	«Թեղուտ» ՓԲԸ	2,028,645	1,685,205	2.15%	Գերազանցում է
7	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	921,149	913,004	1.17%	Գերազանցում է
8	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	327,204	327,204	0.41%	Գերազանցում է
9	«Լեռ-էքս» ՍՊԸ	185,809	185,807	0.24%	Գերազանցում է
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը գերազանցող ընկերություններից	**75,651,454**	**77,818,307**	**99.40%**	
10	«Լիճքվազ» ՓԲԸ	234,724	95,402	0.12%	
11	«Սագմար» ՓԲԸ	63,088	68,479	0.09%	
12	«Մուլտի գրուպ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ	61,545	61,050	0.08%	
13	«Մեգո գոլդ» ՍՊԸ	18,088	28,088	0.04%	
14	«Մարջան մայնինգ քոմփանի» ՍՊԸ	17,477	27,477	0.04%	
15	«Թաթսթոուն» ՍՊԸ	50,037	36,864	0.05%	
16	«Գեղի գոլդ» ՍՊԸ	(146,160)	25,027	0.03%	
17	«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ	19,748	19,748	0.03%	
18	«Պարամաունտ գոլդ մայնինգ» ՓԲԸ	61,086	19,094	0.02%	
19	«Ատ-մետալս» ՍՊԸ	16,102	16,152	0.02%	

[293] Հաշվարկվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացված տվյալների հիման վրա
[294] Նախկինում՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

N	Ընկերության անվանում	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ ընկերություն-ների տվյալների, 2018թ., հազար ՀՀ դրամ	Պետական բյուջե ընդհանուր եկամտային հոսքեր ըստ պետական մարմինների տվյալների, 2018թ., հազար ՀՀ դրամ	Ընկերության մասնաբաժինն ընդհանուր եկամտային հոսքերում, %[293]	Էականության շեմը գերազանցող
20	«Ասսաթ» ՍՊԸ	10,000	14,395	0.02%	
21	«Վայք գոլդ» ՍՊԸ	10,362	10,522	0.01%	
22	«Բակտեկ էկո» ՍՊԸ	10,287	10,287	0.01%	
23	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	10,659	10,659	0.01%	
24	«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	10,171	10,171	0.01%	
25	«Ղարագուլյաններ» ՓԲԸ	10,263	10,263	0.01%	
26	«Ֆորչն դիզորսիս» ՍՊԸ	4,476	4,476	0.01%	
	Ընդամենը եկամտային հոսքեր էականության շեմը չանցած ընկերություններից	**461,953**	**468,154**	**0.60%**	
	Ընդամենը եկամտային հոսքեր բոլոր ընկերություններից	**76,113,407**	**78,286,461**	**100.00%**	

Այսպիսով, էականության շեմի կիրառման արդյունքում պարզ դարձավ, որ հաշվետու 26 ընկերություններից միայն 9 ընկերություն են հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ կատարել: Համաձայն ՀՀ ՊԵԿ-ից և ՀՀ ՇՄՆ-ից ստացված տվյալների՝ 2018թ.-ին պետական բյուջե հանքարդյունահանող հաշվետու ընկերությունների կողմից կատարված ընդհանուր վճարումները կազմում են 78,286,461 հազար ՀՀ դրամ, որից նշված 9 ընկերությունների կողմից կատարված հարկային և այլ վճարումների մասնաբաժինը կազմում է 99.40%-ը (կամ 77,818,307 հազար ՀՀ դրամ):

Ըստ պետական մարմինների կողմից տրամադրված տվյալների՝ այս 9 համադրվող ընկերությունների կողմից 2018թ.-ին եկամտային հոսքերը ՀՀ պետական բյուջե և համայնքների բյուջե կազմել են 79,247,710 հազար ՀՀ դրամ, որից 78,282,194 հազար ՀՀ դրամը էական վճարումներ են: Համադրվող ընկերություններից ստացվող եկամտային հոսքերի մասնաբաժինը՝ հանքարդյունահանող հաշվետու ընկերություններից ստացվող ընդհանուր բոլոր տեսակի եկամտային հոսքերի (80,163,825 հազար ՀՀ դրամ) մեջ, կազմում է 99.19%:

Այսպիսով՝ ԱՃԹՆ ստանդարտի պահանջներին համապատասխան եկամտային հոսքերի էականության գնահատման արդյունքների տվյալներով 2018թ.-ի ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում ներառվեցին էականության շեմը գերազանցող 9 ընկերություններ իրենց էական վճարումների 7 տեսակներով (78,282,194 հազար ՀՀ դրամ), որոնց մասնաբաժինը հանքարդյունահանող հաշվետու բոլոր ընկերություններից ստացված ընդհանուր եկամտային հոսքերի մեջ կազմում է 97.65% (Տե՛ս Աղյուսակ 6.3):

6.1.2 ԱՃԹՆ զեկույցի համադրման շրջանակներում եկամտային հոսքերի որոշում

Համաձայն ԱՃԹՆ 2019թ. ստանդարտի 4-րդ պահանջի 4.1 «Հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտումը» կետի՝ ԲՇԽ-ն պարտավոր է սահմանել, թե որ վճարումներն ու եկամուտներն են համարվում էական, որոնք են էականության պատշաճ սահմանումներն ու շեմերը: Նույն կետը պարզաբանում է նաև, որ վճարումներն ու եկամուտները համարվում են էական, եթե դրանց մասին տեղեկատվության բացթողումը կամ սխալ տեղեկատվության հաղորդումը կարող է ազդել ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիության վրա: Սույն պահանջի բավարարման նպատակով՝ մինչև հաշվետվությունների ներկայացման գործընթացի մեկնարկը, ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից հստակեցվել է էականության շեմը, որպեսզի յուրաքանչյուր եկամտային հոսք նկարագրվի համապատասխան էականության սահմանումներով և շեմերով: Համաձայն ԲՇԽ որոշման՝ արդյունահանվող ճյուղերից ստացվող այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը հանքարդյունահանող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1 տոկոս և ավելի, էական են և պետք է համադրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում (ԲՇԽ նիստի N12 արձանագրություն[295], 16.04.2019թ.): Որոշումը հիմնված է եղել ԱՃԹՆ ԲՇԽ-ի համար ՀԱՀ-ի

[295] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի կողմից կատարված նախնական ուսումնասիրության վրա, ըստ որի, շեմը առաջարկվել է ԲԴՈ աուդիտորական ընկերության կողմից՝ որպես գործարար սովորույթ, քանի որ չկա հաշվապահական որևէ ստանդարտ կամ չափանիշ:

Էական եկամտային հոսքերի ցանկը, որին անդրադարձ է կատարվելու համադրման գործընթացի շրջանակներում, որոշվել է՝ համաձայն պետական մարմինների (ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ՇՄՆ) կողմից դեպի պետական և համայնքների բյուջեներ եկամտային հոսքերի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության (Աղյուսակ 6.2): Աղյուսակ 6.2 ներառում է հանքարդյունահանող ընկերությունների կողմից եկամտային հոսքերի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունն՝ ըստ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից սահմանված հաշվետու ընկերությունների ցանկի:

Աղյուսակ 6.2 Պետական և համայնքների բյուջեների եկամտային հոսքեր հանքարդյունահանող հաշվետու ընկերություններից, 2018թ. (պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա)

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2018թ. եկամտային հոսքեր, հազար ՀՀ դրամ	Մասնաբաժինը ընդհանուր եկամտային հոսքերում, %	Պետական մարմին
1146 714612	Ռոյալթի	34,545,800	43.09%	ՊԵԿ
1111 711100	Եկամտային հարկ	17,847,545	22.27%	ՊԵԿ
1112 711200	Շահութահարկ	15,880,462	19.81%	ՊԵԿ
1141 714110	Ավելացված արժեքի հարկ[296]	6,113,921	7.63%	ՊԵԿ
1112 711200	Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ	2,054,461	2.56%	ՊԵԿ
1151 715100	Մաքսատուրք և մաքսավճար	1,225,600	1.53%	ՊԵԿ
1415 741520	Հաշվետու տարում վճարված վարձավճարներ (ներառյալ տույժերը և տուգանքները)	939,395	1.17%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
Ընդամենը էականության շեմը գերազանցող հոսքեր		**78,607,184**	**98.06%**	
կիրառելի չէ	Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարներ	551,996	0.69%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
կիրառելի չէ	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	286,453	0.36%	ՇՄՆ
1145 714522	Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք	260,050	0.32%	ՊԵԿ
1141 714110	Ակցիզային հարկ	186,941	0.23%	ՊԵԿ
1146 714612	Բնօգտագործման վճարներ	65,723	0.08%	ՊԵԿ

[296] Համաձայն ՀՀ կառավարության N 666Ն (փոփոխված 11 հուլիսի 2019թ. N 871Ն ՀՀ կառավարության որոշմամբ) որոշման Ավելացված արժեքի հարկն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ գումարը (դրական մեծություն) կամ ՀՀ պետական բյուջեից վերադարձման ենթակա գումարը (բացասական մեծություն). Էականության շեմի կիրառման, ինչպես նաև համադրման հետագա գործընթացի տեսանկյունից հաշվի են առնվել միայն ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ գումարները: Սույն հոդվածը ներառում է ԱԱՀ և ներմուծման ԱԱՀ հանրագումարը:

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2018թ. եկամտային հոսքեր, հազար ՀՀ դրամ	Մասնաբաժին ը ընդհանուր եկամտային հոսքերում, %	Պետական մարմին
1131 713121, 1136 713611	Գույքահարկ	60,123	0.08%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
1145 714523	Բնապահպանական հարկեր՝ ըստ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների	50,486	0.06%	ՊԵԿ
1145 714523	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի	24,721	0.03%	ՊԵԿ
1131 713122	Հողի հարկ	23,157	0.03%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
կիրառելի չէ	Մշտադիտարկումների իրականացման վճար	22,577	0.03%	ՇՄՆ
կիրառելի չէ	Հողի օտարում	16,240	0.02%	ՏԿԵՆ (ՏԻՄ)
1145 714523	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի	7,474	0.01%	ՊԵԿ
կիրառելի չէ	Տուգանքներ	700	0.00%	ՇՄՆ
կիրառելի չէ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճար	-	0.00%	ՇՄՆ
1145 714522	Ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք	-	0.00%	ՊԵԿ
կիրառելի չէ	Տույժեր	-	0.00%	ՇՄՆ
Ընդամենն այլ (ոչ էական) հոսքեր		**1,556,641**	**1.94%**	
Ընդամենը բոլոր հոսքերը		**80,163,824**	**100.00%**	

Աղբյուրը՝ *ԱՃԹՆ շրջանակներում պետական մարմիններից տրամադրվող հաշվետվություն*

ՀՀ ՊԵԿ-ի և ՇՄՆ-ի կողմից ներկայացված հոսքերը, բացառությամբ «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» հոսքի, ուղղվում են ՀՀ պետական բյուջե, իսկ ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից ներկայացված հոսքերը՝ համայնքային բյուջեներ:

Հաշվի առնելով ԱՃԹՆ ստանդարտի պահանջները, ներառյալ թիվ 13 ուղեցույցը (Էականության շեմը, հաշվետվությունը ներկայացնելու շեմը և հաշվետու ընկերությունները սահմանող), ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 16.04.2019թ. աշխատանքային նիստի արդյունքում կազմված N12 [297] արձանագրությունը, եկամուտների՝ ըստ վճարումների տեսակների, տեղեկատվության վերլուծությունը՝ համապատասխան ընկերությունների համար որոշվել է եկամտի էական (եկամտային ընդհանուր հոսքերում 1 տոկոս և ավելի կազմող) հոսքերի ցանկը, որը պետք է ներառվի Հայաստանի 2018թ.-ի ԱՃԹՆ-ի զեկույցում՝ համադրման շրջանակներում:

N	Եկամտային հոսքի անվանումը
1	Ռոյալթի
2	Շահութահարկ
3	Եկամտային հարկ
4	Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ*
5	Ավելացված արժեքի հարկ
6	Մաքսատուրք և մաքսավճար
7	Վարձակալական վճարներ

*«Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ» եկամտային հոսքը գերազանցում է սահմանված էականության շեմը և համարվում է Էական հոսք, սակայն այն չի համադրվում՝ համաձայն ԲՇԽ որոշման:

Այսպիսով, 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերություններից ստացված եկամուտներն, ըստ վճարումների էականության, կազմել են 78,607,184 հազար ՀՀ դրամ, որը կազմում է հանքարդյունահանող ընկերությունների կողմից ստացված ընդհանուր վճարումների 98.06%-ը:

Աղյուսակ 6.3

Համադրվող ընկերություններից ՀՀ պետական բյուջե և համայնքների բյուջեներ ուղղված եկամուտներն՝ ըստ վճարումների էական տեսակների, 2018թ. (պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա)

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2018թ.-ի եկամտային հոսքեր համադրվող ընկերություններից	
		Հազար ՀՀ դրամ	%
1146 - 714612	Ռոյալթի	34,545,773	44.13%
1111 - 711100	Եկամտային հարկ	17,599,978	22.48%
1112 - 711200	Շահութահարկ	15,880,303	20.29%

[297] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

Բյուջետային դասակարգման կոդ	Բյուջետային դասակարգման անվանում	2018թ.-ի եկամտային հոսքեր համադրվող ընկերություններից	
		Հազար ՀՀ դրամ	%
	Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ	2,053,365	2.62%
1141 - 714110	Ավելացված արժեքի հարկ	6,071,990	7.76%
1151 - 715100, 1422 - 742212, 1145 - 714511	Մաքսատուրք և մաքսավճար	1,221,915	1.56%
1415 - 741520	Վարձակալական վճարներ	908,870	1.16%
Ընդամենը էական վճարումներ		**78,282,194**	**100.00%**

Այլ ոչ հարկային վճարներ

ՀՀ ԱՃԹՆ զեկույցը պատրաստելիս բացահայտվել է էականության շեմը գերազանցող միայն մեկ ոչ հարկային վճարման տեսակ՝ վարձակալական վճար: Վարձակալական վճարների երեք ենթատեսակների (անշարժ գույքի, փոխադրամիջոցի և հողի) վերաբերյալ տեղեկատվություն է հավաքագրվել ընկերություններից: ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից հրապարակված հաշվետվություններից ստացված տեղեկատվությամբ՝ 2018թ.-ի համայնքների բյուջեներ ուղղված ընդհանուր վարձակալական վճարները հաշվետվություն ներկայացրած 26 ընկերությունների համար կազմել են 939,395 հազար ՀՀ դրամ, որոնցում համադրվող ընկերությունների մասնաբաժինը կազմում է 96.75% կամ 908,870 հազար ՀՀ դրամ:

Տվյալների հավաքագրում

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքը մշակվել է «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից: Պետական մարմիններից և ընկերություններից տվյալների հավաքագրման գործընթացի իրականացման նպատակով ստեղծվել է առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակ՝ **reports.eiti.am/hy:** 2019 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ կատարվել են կայքի և առցանց հաշվետվությունների հարթակի զարգացման աշխատանքներ:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 7-րդ պահանջի «Հանրային բանավեճը»՝ 7.1-ի կետը, պահանջում է, որ ԲՇԽ-ն ապահովի ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիությունը, ակտիվորեն խթանի դրա հրապարակայնությունը, հասանելիությունը հանրությանը և նպաստի հանրային երկխոսությանը: Այս պահանջն իրականացնելու հարցում էական նշանակություն ունի ԱՃԹՆ-ի տվյալների հասանելիության և համադրելիության ապահովումը և բարելավումը: Հաշվետվությունների առցանց համակարգի կիրառման հիմնական առավելությունը հանրության համար

տեղեկատվության հասանելիության բարձրացումն է, որն էլ, իր հերթին, պետք է բարելավի ԱՃԹՆ զեկույցի թափանցիկությունը:

ԱՃԹՆ-ի համատեքստում բաց են համարվում այն տվյալները, որոնք կարող են ազատորեն օգտագործվել, վերաօգտագործվել և տարածվել յուրաքանչյուրի կողմից՝ պահպանելով հեղինակային իրավունքները: Բաց տվյալների սկզբունքին համապատասխան՝ ԱՃԹՆ-ի տեղեկատվության հասանելիության ապահովումը կարող է անհատներին, քաղաքացիական հասարակությանը, լրատվամիջոցներին, գործարարներին և գիտակրթական հաստատություններին իրազեկել հանքարդյունաբերության ոլորտի մասին և ձևավորել տեղեկացված բանավեճի հարթակ:

ՀՀ ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականությամբ (2017թ. դեկտեմբեր)[298] սահմանվել են ԱՃԹՆ-ի շրջանակում հավաքագրված տվյալների հրապարակման հիմնական սկզբունքներն են՝տվյալների ամբողջականություն, աղբյուրների ներկայացում, արդիականություն, մատչելիություն, մեքենայաընթեռնելիություն, ոչ խտրական օգտագործում, տվյալների կայունություն, օգտագործման բաց լիցենզիա, անվճար օգտագործում և հետադարձ կապ: Դրանցով է առաջնորդվում ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը և ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերի իրականացման, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցների հրապարակման, ԱՃԹՆ-ի շրջանակում տեղեկատվության և տվյալների հասանելիության ապահովման ընթացքում, ինչպես նաև պատասխանատու պետական մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին խրախուսում է համապատասխան տեղեկատվություն հրապարակելիս նույնպես առաջնորդվել բաց տվյալների սկզբունքով:

Էլեկտրոնային հարթակի օգտագործումը պետք է նվազեցներ տվյալների հավաքագրման համար պահանջվող ժամանակը և հաշվետվություններում սխալ տվյալների հավանականությունը: Համակարգում ներդրվել էին տեխնիկական սխալների հնարավորինս նվազեցման կարգավորումներ, օրինակ՝ թվանշան կամ տառ լրացնելու սահմանափակում, պարտադիր և ոչ պարտադիր դաշտերի սահմանում, փոխկապակցված դաշտերի լրացման տրամաբանություն և այլն: Այնումանեյնանիվ, մի շարք ընկերություններ բախվել են մի շարք տեխնիկական խնդիրների հաշվետվությունների վերբեռնման ընթացքում (արտադրատեսակների ծավալները նշելիս հաստատելուց հետո պահպանվում էին միայն մի տեսակի տվյալները, հաշվետվությունը հաստատելուց հետո հաշվետվության .pdf տարբերակում չէին երևում որոշ վճարների գումարները և այլն), որոնց հընթացս տրվել են լուծումներ, և ինչը զգալիորեն դանդաղեցրել է տվյալների հրապարակումը հարթակում:

Հարթակում հաշվետվությունների հրապարակման գործընթացը.

Պետական մարմինների և ընկերությունների՝ հաշվետվությունները ստորագրելու լիազորություն ունեցող պատասխանատու անձինք գրանցվում են առցանց հարթակում՝ ընտրացանկից ընտրելով իրենց կազմակերպության կամ պետական մարմնի անվանումը և լրացնելով գրանցման համար պարտադիր բոլոր դաշտերը: «Գրանցվել» հրահանգը սեղմելուց հետո գրանցման ժամանակ նշված

[298] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/EITI_Open_Data_Policy_Armenia_arm.pdf

էլեկտրոնային հասցեին ավտոմատ նամակ է ուղարկվում՝ հրահանգելով հաստատել էլեկտրոնային հասցեի ճշգրտությունը և ակտիվացնել հաշիվը: Գրանցման վերաբերյալ հաղորդագրություն է ուղարկվում նաև համակարգը վարողին, որը ստուգում է տվյալների հավաստիությունը, հաստատում է գրանցումը՝ տալով մուտքի թույլտվություն: Մուտքի թույլտվության ստացումից հետո պետական մարմիններն ու ընկերությունները կարող են արդեն լրացնել էլեկտրոնային հաշվետվությունները: Էլեկտրոնային հաշվետվությունների ձևանմուշները մշակվել են՝ հիմնվելով Կառավարության N 666-Ն որոշմամբ (փոփոխված 11 հուլիսի 2019թ. N 871Ն ՀՀ կառավարության որոշմամբ[299]) հաստատված ձևաթղթերի և հրահանգների վրա:

Հանքարդյունաբերական ընկերություններից և պետական մարմիններից տեղեկությունների հավաքագրման գործընթացի հաջորդ փուլը ներառում է ընկերությունների և պետական մարմինների պատասխանատու անձանց կողմից հաշվետվությունների էլեկտրոնային օրինակների լրացումը՝ հաստատելով և վավերացնելով ներդրված տվյալների ճշգրտությունը էլեկտրոնային ստորագրության միջոցով: Այնուհետև ներկայացված հաշվետվությունները հավաքագրվում են CMS պորտալում՝ հասանելի դառնալով Անկախ ադմինիստրատորին: Հաշվետվությունները պետական մարմինների և ընկերությունների պատասխանատու անձանց կողմից էլեկտրոնային ստորագրվելուց հետո այլևս ենթակա չեն խմբագրման: Տվյալների հավաքագրման փուլի ժամանակ Անկախ ադմինիստրատորը տվյալների բազայից Microsoft Excel և PDF ձևաչափերով պատրաստում է համադրվող տվյալներ: Անկախ ադիմիստրատորի կողմից վերբեռնված հաշվետվությունների հաստատումից հետո, դրանք անմիջապես հրապարակվում են ՀՀ ԱՃԹՆ պաշտոնական կայքում[300] և դառնում հասանելի հանրությանը:

Անկախ ադմինիստրատորը իրականացնում է ներկայացված հաշվետվությունների սկզբնական ստուգում և սահմանված ժամկետում հաշվետվություն հանձնած ընկերությունների ցանկը տրամադրում է ՀՀ ՏԿԵՆ[301], որը վերահսկում է հաշվետվությունների ներկայացման և ժամկետների պահպանման օրենսդրական պահանջը: ՏԿԵՆ-ը, հիմնվելով Անկախ ադմինիստրատորից ստացված տեղեկատվության վրա, վարույթներ է իրականացնում հաշվետու և սահմանված ժամկետներում հաշվետվություն չներկայացրած ընկերությունների նկատմամբ:

Ըստ ԱՃԹՆ ստանդարտների՝ Անկախ ադմինիստրատորից չի պահանջվում կատարել նախնական փաստաթղթերի մանրամասն ստուգում բացթողումները հայտնաբերելու համար: Անկախ ադմինիստրատորը հաշվետու կազմակերպություններից և պետական մարմիններից համապատասխան հարցման արդյունքում ստացված տեղեկատվությունը համարում է համապարփակ և վստահելի, առ այն, որ վերջինս հաստատված է պետական մարմինների ղեկավարների, կազմակերպությունների ղեկավարների կամ գլխավոր հաշվապահների կողմից, կամ վերջիններիս կողմից հաստատման լիազորությամբ օժտված անձանց կողմից, և վավերացված է նրանց էլեկտրոնային ստորագրությամբ:

[299] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/ https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/
[300] https://reports.eiti.am/hy/ https://reports.eiti.am/hy/
[301] Նախկինում այդ ցանկը տրամադրվում էր Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը (ԷԲՊՆ)

Վերը նշված անձինք համապատասխան պատասխանատվություն են կրում նաև հարկային վերահսկողության գործընթացի նպատակով ՊԵԿ-ին հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով հարկային հաշվետվություններ ներկայացնելու համար, ինչը նույնպես երաշխավորում է Անկախ ադմինիստրատորին տրամադրած տվյալների ճշտությունը և իրավական հենքին համապատասխանությունը:

Հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ում:

Անկախ ադմինիստրատորը համեմատում է պետական մարմինների և ընկերությունների կողմից ստացված տվյալները՝ հավաքված վերոհիշյալ հաշվետվության ձևաթղթի հիման վրա: Երկկողմանի ստացված տվյալների համեմատության արդյունքում հայտնաբերվում են սկզբնական անհամապատասխանություններ:

Ինչպես ԲՇԽ-ի հետ համաձայնեցվել է մեկնարկային հաշվետվության շրջանակներում՝ Անկախ ադմինիստրատորը համադրման ենթակա տվյալների հայտնաբերման համար կիրառում է հետևյալ շեմերը.

> հանքարդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները պետք է ներառվեն ԱՃԹՆ-ի զեկույցում, իսկ հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե 150 մլն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ կատարող ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ:
> Հանքարդյունահանող ճյուղերից ստացվող այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը հանքարդյունահանող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1 տոկոս և ավելի, էական են, և պետք է համադրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում:

Անկախ ադմինիստրատորը պատրաստել է համադրման տարբերությունների ձևաթուղթ, որը ներառում է համադրման ենթակա յուրաքանչյուր ընկերության վերաբերյալ ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված նախնական հաշվետվության տվյալները, և պահանջում է ընկերություններից և պետական մարմիններից հաստատել, թե արդյոք լրացուցիչ հաղորդակցման ձևաթղթում նշված թվերը համապատասխանում են յուրաքանչյուր ընկերության, պետական մարմնի կողմից նախապես տրամադրված թվերին: Տեղեկատվության բացերը կամ անհամապատասխանությունների պատճառները պարզելու նպատակով, ԱՃԹՆ ստանդարտի համաձայն, Անկախ ադմինիստրատորը անմիջականորեն կապվում է համադրվող ընկերությունները և պետական մարմինները ներկայացնող պատասխանատու անձանց հետ՝ համադրման ենթակա եկամտային հոսքերի մասով ներկայացված հայտարարությունների և հաշվարկների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու հարցումով՝ անհամապատասխանության պատճառները պարզելու համար:

Երկկողմանի ներկայացված ֆինանսական հոսքերում անհամապատասխանությունների բացահայտման դեպքում խորհրդատուն պետք է վեր հանի և բացատրություններ ներկայացնի, երբ

անհամապատասխանության չափը կազմում է ֆինանսական տվյալի 4 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան 1 մլն ՀՀ դրամը: Տվյալ հաշվարկի հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացված տվյալը, որն ավելի փոքր է:

Երբ Անկախ ադմինիստրատորը բացահայտում է վերոնշյալ չափանիշներին բավարարող անհամապատասխանություններ, CMS հարթակում մերժում է հաշվետվությունները՝ դրանք հետ վերադարձնելով համադրվող ընկերություններին և պետական մարմիններին: Հաշվետվությունների հետ վերադարձի արդյունքում համապատասխան ընկերությունը կամ պետական մարմինը առցանց հարթակում հնարավորություն է ստանում խմբագրման և համապատասխան ճշգրտումներ կատարելու: Կիրառելի դեպքերում շեղումների սահմանաչափը գերազանցող նախնական տարբերությունները ճշգրտվել են՝ ըստ ընկերությունների կողմից տրամադրված լրացուցիչ բացատրությունների:

Ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների համադրման արդյունքում առաջացող անհամապատասխանությունների մասին բացատրությունները դասակարգվել և ներկայացվել են Հավելված 4-ում:

Զեկույցի կազմման շրջանակներում առկա էին որոշակի սահմանափակումներ: Գործընթացի արդյունավետության վրա ազդեցություն են ունեցել հաշվետվությունների լրացման ընթացքում էլեկտրոնային հարթակի որոշ տեխնիկական խնդիրները: Այնուամենայնիվ, նշված նկատառումներն ազդեցություն չեն ունեցել հաշվետվությունների և տվյալների համապարփակության վրա՝ Քարտուղարության հետ համագործակցման և սույն գործոնների ազդեցությունը նվազեցնելու նպատակով իրականացված միջոցառումների շնորհիվ:

6.2 Համադրման գործընթացի ամբողջականություն

Հանքարդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը մասնակցող բոլոր 26 հաշվետու հանքարդյունահանող ընկերությունները ներկայացրել են 2018թ.-ի հաշվետվությունները մինչ սահմանված վերջնաժամկետը:

Համադրվող ընկերություններից բոլորը տեղեկատվության հավաքագրման ընթացքում տեղեկատվություն են տրամադրել իրենց կողմից պետական և համայնքների բյուջեներ փոխանցված բոլոր հարկերի և կատարած վճարումների վերաբերյալ: Ելնելով ստացված տեղեկատվությունից՝ համադրվող ընկերությունների կողմից պետությանը կատարված վճարումները 2018թ.-ին կազմել են 78,282,194 հազար ՀՀ դրամ և ամբողջությամբ համադրվել են: Նախնական համադրման արդյունքում բացահայտվել են էական անհամապատասխանություններ պետական մարմիններից ստացված տվյալների՝ ընդհանուր 9 ընկերություններից 6-ի միջև: Արդյունքում ուղարկվեց երկրորդ հարցումը տեղեկատվության հետագա հստակեցման և ճշգրտման նպատակով:

6.3 Համադրման գործընթացի արդյունքները

Պետական մարմինների նախնական հաշվետվությունների տվյալներով՝ պետական և համայնքների բյուջեներ 9 համադրվող ընկերություններից ստացված եկամուտները կազմել են 76,125,949 հազար ՀՀ դրամ, մինչդեռ, ըստ ընկերությունների տրամադրված տվյալների, այդ թիվը կազմում է 73,479,267 հազար ՀՀ դրամ: Զուտ անհամապատասխանությունները կազմել են 3.60% (կամ 2,646,682 հազար ՀՀ դրամ): Համախառն գումարային անհամապատասխանությունները կազմել են՝ 4.17% (կամ 3,061,895 հազար ՀՀ դրամ):

Համադրման գործընթացից հետո պետական մարմինների կողմից ներկայացված տվյալներով՝ պետական և համայնքների բյուջեներ 9 համադրվող ընկերություններից ստացված եկամուտները կազմել են 76,228,830 հազար ՀՀ դրամ, մինչդեռ ըստ ընկերությունների տրամադրված տվյալների՝ այդ թիվը կազմում է 73,698,136 հազար ՀՀ դրամ:

Ըստ համադրման արդյունքների և տեղեկատվության հետագա ճշգրտման՝ անհամապատասխանությունները կազմում են զուտ արտահայտմամբ՝ 3.43% (կամ 2,530,694 հազար ՀՀ դրամ) և 3.49% (կամ 2,570,965 հազար ՀՀ դրամ)՝ համախառն գումարային արտահայտմամբ: Եթե առանձնացնենք անհամապատասխանությունների այն գումարները, որոնք բողոքարկվել են դատական կարգով, ապա անհամապատասխանությունները կազմում են զուտ արտահայտմամբ՝ 0.05% (կամ 37,061 հազար ՀՀ դրամ) և 0.10% (կամ 77,332 հազար ՀՀ դրամ)՝ համախառն գումարային արտահայտմամբ: Յուրաքանչյուր հանքարդյունահանող ընկերության դեպքում հայտնաբերված անհամապատասխանությունները և ճշգրտումների պատճառների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 4-ում:

Առավել հաճախ հանդիպող անհամապատասխանությունները և դրանց ճշգրտման պատճառները հետևյալն էին.

Ավելացված արժեքի հարկի հաշվարկման համար ընկերությունները և ՀՀ ՊԵԿ-ը կիրառել էին տարբեր մոտեցումներ, մասնավորապես, ներկայացվել են փաստացի վճարված գումարները՝ հայտարարագրված գումարների փոխարեն:

Որոշ ընկերությունների կողմից նախնական հաշվետվություններում չէին ներառվել ստուգման ակտերով սահմանված գումարները, քանի որ վերջիններս վիճարկվել էին դատարանում, և նախնական ատյաններում կայացվել են վճիռներ՝ հօգուտ ընկերությունների:

Մաքսատուրքի և մաքսային վճարների գումարները հաշվարկելիս պատահաբար բաց էին թողնվել որոշ վճարումներ, մեխանիկական սխալների հետևանքով ներկայացել էին սխալ գումարներ:

ՀՀ ՏԿԵՆ-ի և/կամ ընկերությունների կողմից որոշ համայնքների գծով վարձակալական վճարները ներկայացվել էին հաշվեգրված գումարի չափով, այլ ոչ թե հաշվետու տարում վճարված գումարի չափով կամ պատահաբար ներառվել էին վարձակալության այլ հոդվածի տակ:

Համադրման գործընթացի արդյունքում ներկայացված վերջնական հաշվետվություններում ընկերության և ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված տվյալների միջև առկա էին էականության շեմը

գերազանցող մի քանի տարբերություններ: Նմանատիպ բոլոր դեպքերն իրենց համապատասխան բացատրություններով նույնպես ներկայացվել են Հավելված 4-ում:

Աղյուսակ 6.4՝

2018թ.-ի պետական և տեղական բյուջեների էական եկամուտների հոսքերի համադրման արդյունքներն՝ ըստ տեսակների

Վճարման տեսակ	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ			Վերջնական տվյալներ, հազար ՀՀ դրամ		
	Տրամադրված պետական մարմնի կողմից	Տրամադրված ընկերություն-ների կողմից	Անհամա-պատաս-խանու-թյուն	Տրամա-դրված պետական մարմնի կողմից	Տրամա-դրված ընկերու-թյունների կողմից	Անհամա-պատաս-խանու-թյուն
Ռոյալթի	34,545,773	32,542,668	2,003,105	34,545,773	32,542,668	2,003,105
Եկամտային հարկ	17,599,978	17,223,346	376,632	17,599,978	17,208,175	391,803
Շահութահարկ	15,880,303	15,781,579	98,724	15,880,303	15,781,579	98,724
Ավելացված արժեքի հարկ	6,071,990	5,814,184	257,806	6,071,990	6,086,195	(14,205)
Մաքսատուրք և մաքսավճար	1,119,009	1,240,317	(121,308)	1,221,915	1,221,015	900
Վարձակալական վճարներ	908,896	877,173	31,723	908,871	858,504	50,367
Ընդամենը	**76,125,949**	**73,479,267**	**2,646,682**	**76,228,830**	**73,698,136**	**2,530,694**

Աղբյուրը՝ *Համաձայն ԱՃԹՆ շրջանակներում տրամադրված հաշվետվությունների*

Ռոյալթի

Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրած նախնական տվյալների՝ համադրվող ընկերությունների գծով ռոյալթիի գումարը 2018թ.-ի համար կազմել է 34,545,773 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 32,542,668 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 2,003,105 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո մնացել է անփոփոխ: Տարբերությունն ամբողջությամբ վերաբերվում է մեկ ընկերության և իրենից ներկայացնում է հարկային ստուգման ակտերով արձանագրված խախտում: Վերոնշյալ ակտերով արձանագրված խախտումները՝ ռոյալթիի գծով, ընկերության կողմից բողոքարկվել են դատական կարգով և չեղարկվել՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումներով: Այժմ կողմերը սպասում են վճռաբեկ/վերջին ատյանի դատարանի վճռին:

Ռոյալթի, 2018թ.			**հազար ՀՀ դրամ**
	Նախնական տվյալներ	**Ճշգրտումներ**	**Համադրման արդյունքում տվյալներ**
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	34,545,773	-	34,545,773
Ընկերությունների կողմից տրամադրված	32,542,668	-	32,542,668
Անհամապատասխանություններ	2,003,105	-	2,003,105

Եկամտային հարկ

Ըստ ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալների՝ համադրվող ընկերությունների գծով եկամտային հարկի գումարը 2018թ.-ի համար կազմել է 17,599,978 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 17,223,346 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 376,632 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 391,803 դրամ: Տարբերության գերակշիռ մասը վերաբերվում է երկու ընկերության և իրենից ներկայացնում է հարկային ստուգման ակտերով արձանագրված խախտում: Վերոնշյալ ակտերով արձանագրված խախտումները՝ եկամտային հարկի գծով, ընկերությունների կողմից բողոքարկվել են դատական կարգով և չեղարկվել՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումներով: Այժմ կողմերը սպասում են վճռաբեկ/վերջին ատյանի դատարանի վճռին:

Եկամտային հարկ, 2018թ.			հազար ՀՀ դրամ
	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ, հազար ՀՀ դրամ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	17,599,978	-	17,599,978
Ընկերությունների կողմից տրամադրված	17,223,346	(15,171)	17,208,175
Անհամապատասխանություններ	376,632	15,171	391,803

Շահութահարկ

ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալներով՝ համադրվող ընկերությունների գծով շահութահարկի գումարը 2018թ.-ի համար կազմել է 15,880,303 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 15,781,579 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 98,724 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո մնացել է անփոփոխ: Տարբերությունն ամբողջությամբ վերաբերվում է մեկ ընկերության և իրենից ներկայացնում է հարկային ստուգման ակտերով արձանագրված խախտում: Վերոնշյալ ակտերով արձանագրված խախտումները՝ շահութահարկի գծով, ընկերության կողմից բողոքարկվել են դատական կարգով և չեղարկվել՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումներով: Այժմ կողմերը սպասում են վճռաբեկ/վերջին ատյանի դատարանի վճռին:

Շահութահարկ, 2018թ.			հազար ՀՀ դրամ
	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ, հազար ՀՀ դրամ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	15,880,303	-	15,880,303
Ընկերությունների կողմից տրամադրված	15,781,579	-	15,781,579

Անհամապատասխանություններ	98,724	-	98,724

Ավելացված արժեքի հարկ

ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրած նախնական տվյալներով՝ համադրվող ընկերությունների գծով ավելացված արժեքի հարկի գումարը 2018թ.-ի համար կազմել է 6,071,990 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 5,814,184 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ-ի և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 257,806 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո՝ (14,205) հազար ՀՀ դրամ: Տարբերության գումարը թե՛ համադրումից առաջ և թե՛ համադրումից հետո ամբողջովին վերաբերվում է ներմուծման ավելացված արժեքի հարկին:

Ավելացված արժեքի հարկ, 2018թ.

հազար ՀՀ դրամ

	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ, հազար ՀՀ դրամ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	6,071,990	-	6,071,990
Ընկերությունների կողմից տրամադրված	5,814,184	272,011	6,086,195
Անհամապատասխանություններ	257,806	(272,011)	(14,205)

Մաքսավճար և մաքսատուրք

ՀՀ ՊԵԿ տրամադրած նախնական տվյալներով՝ համադրվող ընկերությունների գծով մաքսավճարի և մաքսատուրքի գումարը 2018թ.-ի համար կազմել է 1,119,009 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 1,240,317 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՊԵԿ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է (121,308) հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո՝ 900 հազար ՀՀ դրամ:

Մաքսավճար և մաքսատուրք, 2018թ.

հազար ՀՀ դրամ

	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ, հազար ՀՀ դրամ
ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված	1,119,009	102,906	1,221,915
Ընկերությունների կողմից տրամադրված	1,240,317	(19,302)	1,221,015
Անհամապատասխանություններ	(121,308)	122,208	900

Վարձակալական վճարներ

ՀՀ ՏԿԵՆ տրամադրած նախնական տվյալներով՝ համադրվող ընկերությունների գծով վարձակալական վճարների գումարը 2018թ.-ի համար կազմել է 908,896 հազար ՀՀ դրամ, իսկ ըստ համադրվող ընկերությունների տվյալների՝ 877,173 հազար ՀՀ դրամ: ՀՀ ՏԿԵՆ և ընկերությունների նախնական տվյալների միջև անհամապատասխանությունը կազմել է 31,723 հազար ՀՀ դրամ, իսկ համադրումից հետո կազմել է 50,367 հազար ՀՀ դրամ:

Վարձակալական վճարներ, 2018թ.

հազար ՀՀ դրամ

	Նախնական տվյալներ, հազար ՀՀ դրամ	Ճշգրտումներ	Համադրման արդյունքում տվյալներ, հազար ՀՀ դրամ
ՏԿԵՆ կողմից ներկայացված	908,896	(25)	908,871
Ընկերությունների կողմից տրամադրված	877,173	(18,669)	858,504
Անհամապատասխանություններ	31,723	18,644	50,367

7 ԱՃԹՆ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7 ԱՃԹՆ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ԱՃԹՆ 2018թ.-ի զեկույցը կազմելու համար դիտարկվել է ԱՃԹՆ նոր՝ 2019թ. ստանդարտը, քանի որ 2020թ.-ի հունվարի 1-ից հետո հրապարակված ԱՃԹՆ զեկույցների վավերացումը կատարվելու է համաձայն նոր ստանդարտի:

2019թ.-ի ստանդարտի նոր պահանջների կատարողականը ներկայացնում ենք ստորև՝

- ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1-ին պահանջով խրախուսվում է, որ պետական մարմիններն և ընկերություններն, հաշվետվությունները թղթային տարբերակով հրապարակելուց բացի, համապատասխան կայքերում տեղադրեն նաև դրանց էլեկտրոնային հրապարակումը: Քանի որ Հայաստանի ԱՃԹՆ ազգային զեկույցի տեխնիկական առաջադրանքը հաստատելիս ԲՇԽ-ն 2019թ. ապրիլի 16-ի նիստում[302] արձանագրել է, որ 2018թ. ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները կներկայացվեն ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակի միջոցով, ուստի այս զեկույցի համար ստանդարտի վերոնշյալ կետը կիրառելի չէ:
- Երկրորդ փոփոխությունը տեղեկատվության և ֆինանսական հոսքերի բացահայտումն է ծրագրի՝ ընկերության մակարդակով՝ համաձայն ստանդարտի 4.7 պահանջի: Այս նոր պահանջի նպատակն է բացահայտել վճարումներն՝ ըստ ծրագրերի, այսինքն՝ ծրագրի մակարդակով ապաագրեգացված: Օրինակ՝ ընկերությունների կողմից վճարվող շահութահարկի մասով գործնականում հնարավոր չէ ապաագրեգացանել, թե շահույթը որ ծրագրից է գոյացել: Այս պահանջը վերաբերում է միայն այն եկամտային հոսքերին ու վճարներին, որոնք հնարավոր է ապաագրեգացնել: Ստանդարտի այս պահանջը ներկայացված է 7.4 բաժնում:
- Երրորդ փոփոխությունը վերաբերում է ստանդարտի 2.4 պահանջին՝ պայմանագրերի թափանցիկությանը: 2021 թվականի հունվարի 1-ից պետք է բացահայտվեն բոլոր նոր կնքված պայմանագրերը կամ պայմանագրերում փոփոխությունները: Ըստ այս փոփոխության՝ օրինակ, Հայաստանի դեպքում խրախուսվում է նկարագրել, թե ինչպիսի պայմանագրեր կան, գործող պայմանագրերով սահմանված գործընթացներն ինչպես են ընթանում, ինչպիսի թույլտվություններ պետք է ստանալ և այլն: Ստանդարտի այս պահանջը մանրամասն ներկայացված է 2.3 բաժնում:
- Չորրորդ փոփոխությունը ստանդարտի 6.3 պահանջի երրորդ կետում վերաբերում է գենդերին: Կանայք, ինչպես նաև մարգինալ խմբերը, փոքր ազդեցություն ունեն այս ոլորտի կառավարման գործընթացում՝ ունենալով տոկոսային մեծ տարբերությամբ մասնակցություն: Ուստի ոլորտում նրանց ազդեցության բացահայտումն էական նշանակություն ունի երաշխավորելու, որ ոլորտը լավ կառավարվում է, և գործընթացն օգուտ

[302] Տե՛ս ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ նիստի N 12 արձանագրություն https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

է բերում ողջ հասարակությանը: Հարկ է նշել, որ 2019թ ապրիլի 16-ի ԲՇԽ նիստում[303] արձանագրվել է, որ Հայաստանի ԱՃԹՆ-ն 2018 ֆինանսական տարվա զեկույցում կներկայացվի ԱՃԹՆ-ի ստանդարտի սպասվող փոփոխություններով սահմանվող պահանջը՝ բացի գենդերային բաշխվածությունից կներկայացվի նաև զբաղվածության տեսակը՝ կառավարչական գործառույթներ կատարող և այլ աշխատանք կատարող: Այս պահանջի կատարումը ներկայացվել է 5.2 բաժնում:

- Հինգերորդ փոփոխությունը վերաբերում է բնապահպանական հաշվետվողականությանը: Փոփոխություն է կատարվել ԱՃԹՆ-ի ստանդարտի 6.1-ին պահանջում, որի էությունը կայանում է նրանում, որ եթե կան բնապահպանական վճարներ, որոնք պարտադիր են, օրինակ՝ ամրագրված պայմանագրերում, օրենսդրությամբ, և եթե ԲՇԽ-ն դրանք համարում է էական, ապա այդ վճարները պետք է բացահայտվեն, ինչպես նաև ԲՇԽ-ն է որոշում՝ արդյոք ուզում է դրանք համադրել, թե ոչ: Եթե բնապահպանական վճարները կամավոր են, և ԲՇԽ-ն որոշում է, որ դրանք նույնպես էական կամ նշանակալից են, ուստի խրախուսվում է, որ դրանք ևս բացահայտվեն: Ստանդարտի այս պահանջին մանրամասն անդրադարձ է կատարվել զեկույցի 4.3 և 5.4 բաժիններում:

Հիմք ընդունելով Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի բացահայտումները, 2017 թվականին իրականացված նախնական ուսումնասիրությունը և այլ վերլուծություններ ու քննարկումներ՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն որոշեց[304], որ Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներն ու ֆինանսական հոսքերն են՝

1. Հայաստանի մետաղական հանքարդյուբերության ոլորտում գործող պետական կամ պետական բաժնեմասով կազմակերություններ առկա չեն, հետևաբար, պետության և պետական կազմակերպությունների (ՊԿ) միջև գործող ֆինանսական հարաբերություններին առնչվող կանոններին ու պրակտիկային առնչվող ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները (2.6.ա) Հայաստանում կիրառելի չեն:
2. Ոլորտից բնաիրային եկամուտները,
3. քվազի-ֆիսկալ ծախսերը, ենթակառուցվածքներին վերաբերող դրույթները և ապրանքափոխանակության կարգավորումները (4.3)
4. փոխադրումներից ստացվող էական եկամուտները (4.4)
5. արտիզանային և փոքրամասշտաբ հանքարդյունահանումը:

Հետագա վերլուծությունները վերահաստատեցին Հայաստանի ԱՃԹՆ 2016-2017թթ.-ի զեկույցում վերոնշյալ ֆինանսական հոսքերը ոչ կիրառելի համարելու հիմնավորումները: [305]

7.1 Առաջարկներ՝ հաջորդող տարիների հաշվետվությունների ծևաչափերի լրամշակման համար

[303] Ibid
[304] Ibid
[305] Տե՛ս ՀՀ ԱՃԹՆ զեկույց 2016-2017թթ էջ. 252-253 https://www.eiti.am/hy/annual-reports/2018/

Հայաստանի ԱՃՐԹՆ 2-րդ զեկույցի հաշվետվությունների ձևանմուշները փոփոխվել են ՀՀ հարկային օրենսդրության փոփոխության, առաջին ԱՃՐԹՆ-ի զեկույցում Անկախ ադմինիստրատորի կողմից ներկայացված առաջարկությունների և ԱՃՐԹՆ-ի երկրորդ զեկույցի վերաբերյալ ԲՇԽ որոշումների հիման վրա: Սույն փոփոխությունները հաստատվել են ՀՀ կառավարության 11.07.2019թ. թիվ 871Ն որոշմամբ[306]:

ՀՀ ԱՃՐԹՆ 2018թ.-ի մեկնարկային հաշվետվությունում խորհրդատուի կողմից իրականացվել է 2016-2017թթ.-ի ԱՃՐԹՆ հաշվետվությունում ներկայացված առաջարկությունների կատարողականի գնահատում, և ներկայացվել են նոր առաջարկություններ հաջորդող տարիների հաշվետվությունների ձևանմուշների լրամշակման համար:

Ստորև ներկայացված են ԱՃՐԹՆ նախորդ զեկույցում հաշվետվությունների ձևանմուշների վերաբերյալ ներկայացված առաջարկությունների կատարողականի գնահատումը և նոր առաջարկությունները՝ հաջորդող տարիների ձևանմուշների լրամշակման համար.

[306] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/ https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/

Ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության ձևը

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
1.	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը	Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ աուդիտորական հաշվետվությունը կազմվում է աուդիտ իրականացնող անձի նախաձեռնությամբ կամ պայմանագրով նախատեսված դեպքերում: Միաժամանակ, համաձայն նույն օրենքի 16-րդ հոդվածի աուդիտորական հաշվետվությունն առևտրային գաղտնիք պարունակող փաստաթուղթ է: Ուստի առաջարկվում է նշված կետը վերաշարադրել հետևյալ կերպ՝ ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Մանրամասների համար տես 2-րդ կետը:	կիրառելի չէ
2.	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը	Խորհուրդ ենք տալիս հարցը ձևափոխել հետևյալ կերպ՝ «Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը, փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը կամ, հաշվետվության տպագիր մամուլում հրապարակված լինելու դեպքում, վերջինիս էլեկտրոնային պատճենը»:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Համաձայն ՀՀ Կառավարության 2019 թ. հուլիսի 11-ի N 871Ն որոշման (1-ին կետ, 5-րդ ենթակետ) հարցը փոփոխվել է հետևյալ կերպ. «ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը, իսկ հաշվետվության տպագիր մամուլում հրապարակված լինելու դեպքում, վերջինիս էլեկտրոնային պատճենը»: Չնայած մեր առաջարկության ընդունմանը և համապատասխան փոփոխության հաստատմանը՝ ՀՀ կառավարության	Առաջարկում ենք փոփոխել հարցի ձևակերպումը հաշվետվության ձևանմուշում՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման:

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
			որոշմամբ, հաշվետվության ձևանմուշով հարցը մասնակիորեն փոփոխվել է հետևյալ կերպ՝ «Ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը»:	
3.	Վարձակալության վճարներ	«Հաշվետու տարում վճարված» վարձակալության վճար դաշտի ձևակերպումը փոխարինել «Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)» ձևակերպմամբ, ինչպես նշված է համայնքի ղեկավարի կողմից Տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տրամադրվող հրապարակային ձևում:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Ձևակերպումը փոխարինվել է «Հաշվետու տարվա ընթացքում վճարված (ներառյալ տույժերն ու տուգանքները)» ձևակերպմամբ:	կիրառելի չէ
4.	Սոցիալ-տնտեսական ներդրում	Սոցիալ-տնտեսական ներդրում դաշտում ավելացնել «Վճարման ամսաթիվ (յուր. վճարման դեպքում)» և «Վճարումը հավաստող փաստաթղթի համարը, ամսաթիվը» դաշտերը, ինչպես նշված է համայնքի ղեկավարի կողմից տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տրամադրվող հրապարակային ձևում:	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	Ընկերությունների և ՏԿԵՆ ներկայացված տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք կատարել տվյալ փոփոխությունը հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում:
5.	-	Այլ աղբյուրներից տվյալների բացակայության դեպքում, խորհուրդ ենք տալիս հաշվետվության ձևաչափին ավելացնել հարցադրումներ՝ ընկերության իրական սեփականատերերի վերաբերյալ:	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	կիրառելի չէ

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
6.	«Ավելացված արժեքի հարկ» և «Ակցիզային հարկ»	Տվյալների հավաքագրման գործընթացը դյուրացնելու նպատակով տարանջատել և առանձնացված տողերով ներկայացնել մաքսային մարմնից և պետական եկամուտների կողմից ստացված հարկերին վերագրվող տվյալները:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Համաձայն ՀՀ կառավարության 2019 թ. հուլիսի 11-ի N 871-Ն որոշման՝ հարկեր և վճարներ սյունակում ավելացված արժեքի հարկը և ներմուծման ավելացված արժեքի հարկը, ինչպես նաև ակցիզային հարկը և ներմուծման ակցիզային հարկը ներկայացված են առանձին:	կիրառելի չէ
7.	«Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)»	Հաշվի առնելով, որ 2018թ.-ից գործում է միասնական հարկային համակարգ՝ խորհուրդ ենք տալիս հաշվետվության ձևաչափից և ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշման ձևակերպումից դուրս բերել փաստացի վճարներին վերաբերող սյուները և ավելացնել տող՝ «Միասնական հաշվին կատարված վճարում՝ ըստ վճարման ժամանակաշրջանի»:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Համաձայն ՀՀ Կառավարության 2019 թ. հուլիսի 11-ի N 871Ն որոշման՝ տրվել է հետևյալ ձևակերպումը. «Հաշվետու տարում միասնական հաշվից և գանձապետական այլ հաշիվներից մարված (վճարված), ինչպես նաև մաքսային մարմնում վճարված (ներառյալ տույժերը և տուգանքները)»	կիրառելի չէ
8.	-	Ուղեցույցում խորհուրդ ենք տալիս պարզաբանել հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված գումարը ներկայացնելու կարգը, որպեսզի այն ընդգրկի հարկային հաշվարկով հաշվարկված հարկային պարտավորության (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի դեպքում՝ զրո), մաքսային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության և հարկային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության հանրագումարը: Ընդ որում, հաշվետու տարվա հաշվարկում պետք է	**Առաջարկությունը հաշվի է առնված մասնակի ձևափոխմամբ:** Ուղեցույցում կատարվել են մեր կողմից առաջարկված բոլոր պարզաբանումները, միակ տարբերությամբ, որ «Ավելացված արժեքի հարկ» տողում փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի դեպքում զրոյի փոխարեն լրացվում է համապատասխան գումարը (բացասական մեծություն): Եկամտային հոսքերի նկատմամբ էականության շեմի կիրառման ժամանակ հաշվի են առնվել միայն վճարման ենթակա	Առաջարկում ենք հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում Ավելացված արժեքի հարկի գումարը ներկայացնել երկու տողով. 1. Վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար և 2. Փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումար:

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
		ներառվեն միայն տվյալ տարվա ընթացքում վճարման ենթակա հայտարարագրված հետաձգված ԱԱՀ գումարները:	ԱԱՀ-ի գումարները՝ որպես ԱԱՀ-ի գծով պարտավորության մեծություն:	
9.	«Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում»	Սույն դաշտը հրապարակային հաշվետվությունների այլ աղյուսակներում հաշվետու տարում կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվության լրացման սկզբունքին համապատասխանեցնելու համար առաջարկում ենք «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար» ձևակերպումը փոխարինել «Հաշվետու տարում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարումը» ձևակերպմամբ:	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	Առաջարկում ենք կատարել տվյալ փոփոխությունը հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում:
10.	Շահութահարկ	Խորհուրդ ենք տալիս առանձնացնել Ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների համար դաշտեր:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարները ներկայացնելու համար հաշվետվությունների ձևանմուշում ավելացվել է հետևյալ ձևակերումը. «Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ»:	կիրառելի չէ
11.	-	Խորհուրդ ենք տալիս պարզաբանում ավելացնել, որպեսզի ընդերքօգտագործողների կողմից հրապարակային հաշվետվությունում	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	Առաջարկում ենք կատարել տվյալ փոփոխությունը հետագա տարիների

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
		ներառված հարկերի և վճարների ճշգրտված հաշվարկի առկայության դեպքում հրապարակային հաշվետվության մեջ ներառվեն վերջին ճշգրտված հաշվարկի տվյալները:		հաշվետվությունների ձևանմուշներում:
12.	-	Հաշվետվության ձևաչափերում ներառել հարց ընկերությունների աշխատակիցների՝ ըստ մարզերի բաշխվածության վերաբերյալ:	**Առաջարկությունը հաշվի է առնված:**	կիրառելի չէ

Հաջորդող տարիների ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևանմուշների լրամշակման համար նոր առաջարկությունները ներկայացված են ստորև աղյուսակում.

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	-	Համաձայն ՀՀ Կառավարության N 666Ն որոշմամբ սահմանված (փոփոխված 2019թ. հուլիսի 11-ի N 871Ն որոշմամբ) Ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության լրացման ուղեցույցի 2-րդ կետի 5բ) և 5դ) ենթակետերի՝ բնօգտագործման վճարների և բնապահպանական հարկերի գումարները լրացվում են առանց տույժերի և տուգանքների: Մինչդեռ համաձայն Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության լրացման ուղեցույցի (3-րդ կետ, 3-րդ և 5-րդ ենթակետեր)՝ բնօգտագործման վճարներն ու բնապահպանական հարկերը ներառում են տույժերն ու տուգանքները: Ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Կառավարության N 666Ն որոշման (փոփոխված 2019թ. հուլիսի 11-ի N 871Ն որոշմամբ)՝ ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության լրացման ուղեցույցում կատարել համապատասխան փոփոխությունները:
2.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճար	Առաջարկում ենք Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճարի աղյուսակում «Վճարված գումարը» արտահայտությունը փոխարինել «Հաշվետու տարում վճարված գումարը» արտահայտությամբ:
3.	Սոցիալ-տնտեսական ներդրում	Ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրված սոցիալ-տնտեսական պարտավորություններն ամփոփ ներկայացնելու նպատակով առաջարկում ենք սոցիալ-տնտեսական ներդրում դաշտում ավելացնել «Երրորդ կողմին կատարված պարտադիր սոցիալ-տնտեսական ներդրումներ» դաշտ:
4.	Արտադրություն (ըստ արտադրատեսակների)	Խորհուրդ ենք տալիս համապատասխան սյունակում թվարկել բոլոր հնարավոր արտադրատեսակները, որպեսզի ընկերությունն ինքնուրույն ավելացնելու փոխարեն կարողանա ընտրել համապատասխան տարբերակը ցուցակից: Այսպիսով, հնարավոր կլինի ընդհանրացնել ընկերությունների մոտեցումներն ապրանքների որոշման տեսանկյունից և դյուրացնել տեղեկատվության համախմբման գործընթացը:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության ձևը

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
1.	«Հարկեր և վճարներ» աղյուսակ	Առաջարկում ենք քննարկել և վերանայել հաշվետվության ձևը և, համապատասխանաբար, որոշման մեջ նշել յուրաքանչյուր հարկատեսակի տվյալների ներկայացման պարբերականությունը, և, համապատասխանաբար, տվյալների լրացման համար առանձնացված դաշտերի քանակը: Ստորև ներկայացնում ենք նկատառումներից մի քանիսը՝ 1. Շահութահարկ՝ 1 տող 2. Ավելացված արժեքի հարկ՝ 12 տող 3. Ակցիզային հարկ՝ 12 տող Ռոյալթի՝ 1 տող	**Առաջարկությունը հաշվի է առնված մասնակի:** Հաշվետվության ձևանմուշում մեր առաջարկությամբ նշված հարկատեսակների համար ավելացվել են տվյալների ներկայացման պարբերականությանը համապատասխան դաշտերի քանակ, բացառությամբ ռոյալթիի: Այնուամենայնիվ, տվյալների ներկայացման պարբերականության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման մեջ լրացումներ չեն կատարվել:	Առաջարկում ենք կատարել տվյալ փոփոխությունը ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ: Ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով խորհուրդ ենք տալիս նաև կատարել նմանատիպ փոփոխություններ ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում:
2.	Շահութահարկ	Ավելացնել ենթադաշտ՝ Ոչ ռեզիդենտների համար վճարվող շահութահարկ:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարները ներկայացնելու համար հաշվետվությունների ձևանմուշում ավելացվել է հետևյալ ձևակերումը. «Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ	կիրառելի չէ

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
			վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ»:	
3.	Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված; Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների); Հաշվետու տարում հաշվանցված	Քանի որ կարող է առկա լինել ժամանակահատվածային տարբերություն վճարման և հաշվարկման և/կամ հաշվանցման միջև, պետք է հստակեցվի համապատասխան ժամանակահատվածը, որին վերագրելի են հարկերը: Հետևաբար, առաջարկում ենք սույն դաշտերում ավելացնել «բացված ըստ հաշվետու ժամանակաշրջանի» բառակապակցությունը:		
4.	«Ավելացված արժեքի հարկ» և «Ակցիզային հարկ»	Սույն տողերում առանձնացնել դաշտեր՝ մաքսային մարմինների կողմից հաշվարկված գումարները առանձին կերպով լրացնելու նպատակով:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Համաձայն ՀՀ Կառավարության 2019թ. հուլիսի 11-ի N 871Ն որոշման՝ հաշվետվության ձևանմուշում ավելացվել են համապատասխանաբար «Ներմուծման ավելացված արժեքի հարկ» և «Ներմուծման ակցիզային հարկը» դաշտերը: Առաջարկությունն ամբողջությամբ հաշվի է առնվել:	կիրառելի չէ

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
5.	-	Ուղեցույցում խորհուրդ ենք տալիս պարզաբանել հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված գումարը ներկայացնելու կարգը, որպեսզի այն ընդգրկի հարկային հաշվարկով հաշվարկված հարկային պարտավորության (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի դեպքում՝ զրո), մաքսային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության և հարկային հայտարարագրերում արտացոլված հարկային պարտավորության հանրագումարը: Ընդ որում, հաշվետու տարվա հաշվարկում պետք է ներառվեն միայն տվյալ տարվա ընթացքում վճարման ենթակա հայտարարագրված հետաձգված ԱԱՀ գումարները:	**Առաջարկությունը հաշվի է առնված մասնակի ձևափոխմամբ:** Ուղեցույցում կատարվել են մեր կողմից առաջարկված բոլոր պարզաբանումները, միակ տարբերությամբ, որ «Ավելացված արժեքի հարկ» տողում փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի դեպքում զրոյի փոխարեն լրացվում է համապատասխան գումարը (բացասական մեծություն): Եկամտային հոսքերի նկատմամբ էականության շեմի կիրառման ժամանակ հաշվի են առնվել միայն վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները՝ որպես ԱԱՀ-ի գծով պարտավորության մեծություն:	Առաջարկում ենք հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում Ավելացված արժեքի հարկի գումարը ներկայացնել երկու տողով. 1. Վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար և 2. Փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումար:
6.	Արտահանումը ըստ արտադրատեսակների	Ուղեցույցում խորհուրդ ենք տալիս ճշտել տեղեկատվության տրամադրման կարգը՝ արտահանման վերաբերյալ տվյալները ներկայացնելով ըստ արտահանման երկրի:	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	Առաջարկում ենք կատարել տվյալ փոփոխությունը հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում:
7.	Տույժեր և տուգանքներ	Խորհուրդ ենք տալիս ավելացնել լրացման դաշտ, որ կհստակեցնի, թե որ հարկի կամ վճարի գծով է նշանակված տույժը և տուգանքը: Ստուգման ակտի, ուսումնասիրության կամ արձանագրության մասին տեղեկությունների բացակայության դեպքում՝ պարտադիր դաշտում	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:** Միասնական հարկային հաշվի ներդրմամբ և հաշվետվությունների ձևանմուշների թարմացված տարբերակների կիրառմամբ (երբ	կիրառելի չէ

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
		առաջարկում ենք նշել իրավախախտման ամսաթիվը:	առանձին հարկատեսակները արդեն ներկայացվում են ներառյալ տույժերն ու տուգանքները), սույն առաջարկությունը այլևս արդի չէ:	
8.	Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)	Առաջարկում ենք դիտարկել մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների ազդեցությունը եկամտային հոսքերի վրա, այդ վճարների՝ հաշվետվության մեջ ներառելու նկատառումներով, այդպես օրինակ. ՀՀ ՊԵԿ վճարվող տուրքերի տվյալների մեջ հաշվի առնել հակագնակցման վճարները և օդային ավազան վնասակար նյութերի արտանետման բնապահպանական վճարները:	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	Առաջարկում ենք ամեն տարի դիտարկել մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների ազդեցությունը եկամտային հոսքերի վրա և ներառել այդ վճարները հաշվետվության մեջ, եթե դրանք դառնան էական:

Հաջորդող տարիների պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևանմուշների լրամշակման համար <u>նոր առաջարկությունները ներկայացված են ստորև աղյուսակում.</u>

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	Տուրքեր	Ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով խորհուրդ ենք տալիս Տուրքերին վերաբերող աղյուսակում ավելացնել հետևյալ սյունյակները. «Ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված», «Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը (ամսաթվերը)» և «Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը (համարները)»:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության ձևը

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
1.	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	Խորհուրդ ենք տալիս ընդհանրացնել Շրջակա միջավայրի նախարարության և ընկերությունների համար նախատեսված հարցաթերթիկները: Առաջարկում ենք Շրջակա միջավայրի նախարարության հարցաթերթիկում հեռացնել «Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» և «Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» հարցերը:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Համապատասխան դաշտերը հեռացված են Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացվող հաշվետվության ձևանմուշից:	կիրառելի չէ
2.	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը	Առաջարկում ենք հեռացնել վճարումների ամսաթվերին վերաբերվող հարցը:	**Առաջարկությունը հաշվի առնված չէ:**	Առաջարկում ենք կատարել տվյալ փոփոխությունը հետագա տարիների հաշվետվությունների ձևանմուշներում կամ վճարումների ամսաթվերին վերաբերող սյունյակ ավելացնել ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևանմուշում:
3.	Մշտադիտարկումների իրականացման վճար	Խորհուրդ ենք տալիս ընդհանրացնել Շրջակա միջավայրի նախարարության և ընկերությունների հարցաթերթիկները: Առաջարկում ենք հեռացնել Շրջակա միջավայրի նախարարության հարցաթերթիկում «Վճարման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Համապատասխան դաշտերը հեռացված են Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացվող հաշվետվության ձևանմուշից:	կիրառելի չէ

N	Դաշտ	Հայաստանի առաջին ԱՃԹՆ զեկույցում ներկայացված առաջարկությունը	Առաջարկության կարգավիճակը 2018թ. համար նախատեսված հաշվետվության ձևանմուշում	Առաջարկություններ
		տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» հարցը:		
4.	-	Առաջարկում ենք հաջորդ տարվա համար հաշվետու մարմինների ցանկում ավելացնել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը՝ տույժերի և տուգանքների մասին տեղեկատվության տրամադրման նպատակով:	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Թեև բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ընդգրկված չէ հաշվետու պետական մարմինների ցանկում, այնուամենայնիվ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 16.04.2019թ. N9 արձանագրությամբ սահմանվել է, որ փոխվարչապետի հանձնարարականով Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը բնապահպանական տույժերի և տուգանքների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ձևաչափով կներկայացնի Շրջակա միջավայրի նախարարություն:	կիրառելի չէ
5.		«Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում»	**Առաջարկությունը հաշվի է առնված:** Հրապարակային հաշվետվությունների այլ աղյուսակներում հաշվետու տարում կատարված վճարումների վերաբերյալ տեղեկատվության լրացման սկզբունքին համապատասխանեցնելու համար առաջարկում ենք «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար» ձևակերպումը փոխարինել «Հաշվետու տարում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարումը» ձևակերպմամբ:	կիրառելի չէ

7.2 Առաջարկներ՝ տվյալների հավաքագրման առցանց համակարգի հետ կապված խնդիրների շտկման համար

N	Դաշտ	Մեկնաբանություն
1.	Համադրման արդյունքում ի հայտ եկած շտկումներ	Խորհուրդ ենք տալիս հաշվետվությունը Անկախ ադմինիստրատորի կողմից մերժվելուց հետո Ընկերության կողմից խմբագրելիս ավելացնել պարտադիր լրացման դաշտ, որը կպարունակի հրապարակային հաշվետվությունների աղյուսակներում համադրման արդյունքում ի հայտ եկած շտկումների պատճառի հակիրճ նկարագրություն:
2.	Էլեկտրոնային համակարգի օգտագործողի ուղեցույց	Խորհուրդ ենք տալիս մշակել և կայքում հասանելի դարձնել օգտագործողների կողմից տեխնիկական խնդիրների վերաբերյալ ուղեցույց, որ կպարունակի կայքում գրանցում անցնելու, անձնական տվյալները վերականգնելու, հաշվետվության դաշտերը լրացնելու, պահպանելու և էլեկտրոնային ստորագրություն կիրառելու հետ կապված հաճախ հանդիպող հարցեր:
3.	Հաշվետվության դիտում	Առաջարկում ենք հրապարակային հաշվետվություն տրամադրողների համար ստեղծել հնարավորություն նախքան էլեկտրոնային ստորագրությամբ հաշվետվությունը հաստատելը՝ այն Excel տարբերակով ևս արտահանել և պահպանել:
4.	https://reports.eiti.am/hy/ կայք	Կայքում «Ընտրել կազմակերպությունը» ընտրացանկից օգտվելիս նախնական տեսանելի տողերից ավելի ներքև իջնելիս, ընկերությունն ընտրելուց հետո, ցանկը կրկին վերև է բարձրանում, հետևաբար օգտատերերը ստիպված են նորից ներքև իջնել հաջորդ ընկերությունն ընտրելու համար: Խորհուրդ ենք տալիս ուղղել տվյալ խնդիրը:
5.	https://reports.eiti.am/hy/ կայք	Խորհուրդ ենք տալիս գումարները ներկայացնել՝ անջատված ստորակետներով, քանի որ թվերի՝ առանց ստորակետի արտացոլումը դժվարեցնում է միանգամից գումարի ընկալումը:
6.	https://reports.eiti.am/hy/ կայք	Խորհուրդ ենք տալիս պատկերված աղյուսակում ավելացնել տեսակավորելու հնարավորություն (մեծից փոքր և հակառակը):
7.	https://reports.eiti.am/hy/ կայք	Խորհուրդ ենք տալիս վարձակալական վճարների դեպքում խմբավորել տվյալներն՝ ըստ համայնքների և վարձակալական վճարների տեսակների՝ յուրաքանչյուր ընկերության կտրվածքով:

7.3 ԱՃԹՆ-ի 2020-2021թթ. աշխատանքային ծրագրի համառոտ ակնարկ և առաջարկներ

1. Գործընթացը դարձնել տրամաբանական և կենտրոնացված: Ըստ լավագույն միջազգային պրակտիկայի և ԱՃԹՆ ուղեցույցի՝ Աշխատանքային գրաֆիկը պետք է հիմնվի երկրին բնորոշ առաջնահերթությունների, ինչպես նաև համապատասխան նպատակների և համաձայնեցված գործողությունների վրա: Օգտակար կլինի ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթությունները համապատասխանեցնել ԱՃԹՆ-ի աշխատանքային պլանի նպատակների հետ: Ի հավելումն, նպատակահարմար կլինի գործողությունները խմբավորել ըստ ԱՃԹՆ Ստանդարտների:
2. Բյուջե և ֆինանսավորման աղբյուրներ. Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր գործողության համար որոշել նախահաշվային բյուջեն և ֆինանսավորման աղբյուրները: Եթե գործողությունը չի պահանջում բյուջե, նպատակահարմար է մտածել այն աշխատանքային պլանից հեռացնելու մասին: Ֆինանսավորման աղբյուրները ճանաչելը բարձրացնում է աշխատանքային պլանի հուսալիությունը և գործնականությունը:
3. ԱՃԹՆ 2019 Ստանդարտ. Նպատակահարմար է աշխատանքային պլանում ներառել այն գործողությունները, որոնք վերաբերում են ԱՃԹՆ-ի պահանջների ավելացումներին, մասնավորապես՝ գենդերին, բնապահպանական հաշվետվությանը և այլն:

7.4 Առաջարկներ Հայաստանում ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդրման վերաբերյալ

ԱՃԹՆ 2019 ստանդարտի համաձայն որոշակի փոփոխություններ են կատարվել 4.7-րդ պահանջում (տրոհման մակարդակ), մասնավորապես, նոր խմբագրությամբ այն սահմանում է հետևյալը.

«Պահանջվում է, որ ԱՃԹՆ-ի տվյալները ներկայացվեն՝ ըստ առանձին ծրագրի, ընկերության, պետական կազմակերպության և եկամտային հոսքի: Ծրագիրը սահմանվում է որպես օպերացիոն գործառնություններ, որոնք կարգավորվում են մեկ պայմանագրով, լիցենզիայի, վարձակալության, կոնցեսիայի կամ նման այլ իրավական համաձայնագրերով, և կազմում է կառավարությանն ուղղված վճարային պարտավորությունների հիմք: Այնուամենայնիվ, եթե մի քանի պայմանագիր էականորեն փոխկապակցված են, բազմաշահառու խումբը պետք է հստակորեն բացահայտի և փաստաթղթավորի, թե որ դեպքերում են դրանք համարվում մեկ ծրագիր: Էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրեր են համարվում կառավարության հետ կնքված և վճարային պարտավորությունների համար հիմք հանդիսացող գործառնական և աշխարհագրական առումով ինտեգրված պայմանագրերը, լիցենզիաները, վարձակալության, կոնցեսիայի կամ փոխկապակցված պայմանագրերը, որոնք ունեն էականորեն համանման պայմաններ: Այդպիսի համաձայնագրերը կարող են կարգավորվել մեկ պայմանագրով, համատեղ

գործունեության պայմանագրով, արտադրության կիսման ռեժիմի պայմաններով կամ այլ հիմնադրույթային իրավական համաձայնագրով: Եթե ԱՃԹՆ-ի շրջանակներում բացահայտվող վճարումները գանձվում են իրավաբանական անձի մակարդակում, այլ ոչ ծրագրի, ապա ընկերությունը կարող է բացահայտել այդ վճարումը իրավաբանական անձի մակարդակում»:

2018 թվականի հուլիսի 31-ի ԲՇԽ նիստի ընթացքում (արձանագրություն N10) [307] որոշում ընդունվեց, որ 2018 թվականի ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում որպես ծրագիր կդիտարկվի ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը:

2019թ. նոյեմբերին (թարմացված 2020 թվականի հունվարին) հրապարակվել է ԱՃԹՆ-ի 29-րդ ուղեցույցը փոփոխություններով, որը պարզաբանում է, որ ԲՇԽ-ն պետք է հետևի հետևյալ քայլերին
.

Քայլ 1. *Բացահայտել, թե «ծրագիր» հասկացության տակ ի՞նչ իրավական համաձայնագրեր են ենթադրվում,*

Քայլ 2. *Բացահայտել, թե որ եկամտի հոսքերի վերաբերյալ պետք է ներկայացվի ծրագրի մակարդակով հաշվետվություն,*

Քայլ 3. *Բացահայտել, թե որոնք են հաշվետու անձինք, և ինչ հաշվետվություններ պետք է ներկայացվեն,*

Քայլ 4. *Համաձայնեցնել հաշվետվությունների ձևեր և շրջանակ:*

Իբրև նախաբան, հարկ ենք համարում նշել, որ հաշվի առնելով մի շարք նկատառումներ, որոնք մանրամասնորեն ներկայացվել են Առաջին Զեկույցում, և որոնք մենք վերահաստատում են սույն Զեկույցում նույնպես, Հայաստանի Հանրապետության համար ծրագրային մակարդակով հաշվետվողականության ներդրման հրատապ անհրաժեշտություն չկա, հետևաբար, մենք կսահմանափակենք մեր վերլուծությունը միայն Քայլեր 1 և 2-ով:

1. ***Քայլ 1. Բացահայտել, թե «ծրագիր» հասկացության տակ ի՞նչ իրավական համաձայնագրեր են ենթադրվում***
   (i) ՀՀ-ում արդյունահանման գործառնությունները կարգավորող իրավական գործիքների տեսակները

Ընդերքի մասին օրենսգրքի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը շնորհվում է հետևյալ գործիքների միջոցով.

- օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն,
- լեռնահատկացման ակտ,
- ընդերքօգտագործման պայմանագիր:

[307] Նիստի արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով՝
https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_31_07_%202018.pdf

Արդյունահանման թույլտվությունն, ի թիվս այլոց, սահմանում է թույլտվության տրման ամսաթիվը, ժամկետը, տրամադրված պաշարների քանակն ըստ կարգերի, հանքի տարեկան արտադրողականությունը, ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները, օգտակար հանածոյի և ուղեկից բաղադրիչների անվանումը: Համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը և լեռնահատկացման ակտը կցվում են ընդերքօգտագործման թույլտվությանը և համարվում են վերջինիս անքակտելի մասը:

Լեռնահատկացման ակտը հավաստում է ընդերքի որոշակի տեղամասում ընդերքօգտագործման գործողություններ իրականացնելու բացառիկ իրավունքները:

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը, լեռնահատկացման ակտը և համապատասխան փորձաքննություններ անցած նախագիծը միասին հանքարդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթեր են:

Ուղեցույց 29-ը հստակեցնում է, որ «*Արտադրության կիսման ռեժիմի շրջանակներում, ծրագիր է սովորաբար համարվում պայմանագիրը, որից բխում են վճարային պարտավորություններ: Հարկային/ռոյալթի ռեժիմի շրջանակներում, ծրագիր է սովորաբար համարվում թույլտվությունը, որից բխում են վճարային պարտավորությունները:*»

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող ռեժիմը բացահայտորեն հարկային/ռոյալթի ռեժիմ է, սակայն «ծրագրային մակարդակի» կապումն օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության հետ տեխնիկապես անօգուտ կլինի, քանի որ ռոյալթիների հաշվարկման բազան մատակարարված խտանյութի, ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունն է, այլ ոչ թե պայմանագրերը կամ թույլտվությունները:

(ii) Արդյո՞ք էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր են Հայաստանում:

Ուղեցույց 29-ի համաձայն՝ էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը նրանք են, որոնք թույլ են տալիս մի քանի իրավական համաձայնագրերի խմբավորումը մեկ ծրագրի շրջանակներում, այն դեպքերում, երբ առկա են բոլոր հետևյալ չափանիշները՝ իրավական համաձայնագրերը թե՛ գործառնական, թե՛ աշխարհագրական առումով ինտեգրված են և ունեն էականորեն համանման պայմաններ:

Բացի այդ, շուկայում առկա է միայն մեկ ընկերություն՝ «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն (գրանցման համար՝ 42.110.01460, ՀՎՀՀ: 03516447), որը հանքարդյունահանման հետ միասին ներգրավված է նաև այլ ձեռնարկատիրական գործունեության մեջ: Այնուամենայնիվ, նախևառաջ, վերջինիս կողմից կատարված առնվազն ռոյալթիի վճարումներն ակնհայտորեն տարբերակելի են բյուջետային այլ պարտավորություններից: Եվ, երկրորդը, ինչպես և «Թաթստոուն» ՍՊԸ-ի դեպքում, «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն 2018 թվականի հարկային տարվա ընթացքում վճարել

է զրո ռոյալթի, այն է՝ հաշվետու տարվա ընթացքում փաստացի չի զբաղվել հանքարդյունահանող գործունեությամբ:

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ մենք եզրակացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության պարագայում էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր չեն:

(iii) Իրավական պայմանագրերի/համաձայնագրերի փաստաթղթավորում

ԱՃԹՆ առաջին զեկույցում արձանագրվել էր, որ Հայաստանի Հանրապետության պարագայում ներկա պահին «ծրագիր» եզրույթի սահմանման հրատապ անհրաժեշտություն առկա չէ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված նկատառումները.

- մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների գերակա մեծամասնությունն ունի ընդամենը մեկ թույլտվություն (հանքարդյունահանման պայմանագիր) և ներգրավված չէ արտադրության որևէ այլ ոլորտներում, ուստի ծրագրերի մեծամասնությունից գոյացող պետական եկամուտները հասարակությանը տեսանելի են, և յուրաքանչյուր ծրագրից գոյացող արդյունքներն, ըստ էության, պարզ են,
- էականորեն փոխկապակցված իրավական համաձայնագրերը խնդիր չեն Հայաստանի Հանրապետությունում,
- չնայած Հայաստանն ունի հարկային/ռոյալթիի ռեժիմ՝ ռոյալթիի հաշվարկման բազան մատակարարված խտանյութի իրացման շրջանառությունն է և ոչ թե պայմանագիրը (կամ թույլտվությունը):

Մինչև հանքարդյունաբերության շուկայում էական փոփոխությունները, Հայաստանում հաշվետվողականությունն ինքնըստինքյան ծրագրային մակարդակի վրա է: Սակայն սա բնականաբար չի բացառում, որ առաջատար հանքարդյունահանողներից մեկի կողմից կարող է ձեռք բերվել երկրորդ թույլտվություն: Ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդնումն այդ դեպքում կպահանջի օրենսդրական զգալի փոփոխություններ, քանի որ ներկայիս կարգավորումների պայմաններում պետական եկամուտների տրոհումը ծրագրային մակարդակում անհնարին է: Այդ փոփոխություններն, ի թիվս այլոց, պետք է անդրադառնան ռոյալթիների հաշվարկման բազային և կապակցեն դրանք հանքարդյունահանման պայմանագրերի հետ (ինչպես նաև փոփոխեն այդ պայմանագրերի օրինակելի ձևերը), ներդնեն ծրագրերի առանձին հաշվապահական հաշվառման պահանջներ և այլն:

Այնուամենայնիվ, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն 2019 թվականի ապրիլի 16-ին տեղի ունեցած նիստի արձանագրության մեջ ներկայացրել է «ծրագիր» եզրույթի հասկացությունը, այն է՝ ***«Ծրագիր է համարվում մեկ ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը»***:[308]

[308] Նիստի արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

2. **Քայլ 2. Բացահայտել, թե որ եկամտի հոսքերի վերաբերյալ պետք է ներկայացվի ծրագրի մակարդակով հաշվետվություն**

Եվս մեկ անգամ արձանագրելով ՀՀ-ում ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդրման ոչ հրատապ անհրաժեշտությունը՝ ստորև, այնուամենայնիվ, ի պատասխան Ուղեցույց 29-ի առաջարկի, ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետությունում արդյունահանման ոլորտում գործող հարկերի և վճարների տեսակները, ինչպես նաև դրանց *տեսականորեն հնարավոր* տարանջատումն ըստ ծրագրի և ըստ ընկերության:

Աղյուսակ 7.4.1

Արդյունահանման ոլորտում կիրառվող վճարումներն ըստ ծրագրերի և ըստ ընկերությունների

Համար	Հարկի կամ վճարի տեսակը	Ըստ ծրագրի	Ըստ ընկերության
1	Ռոյալթի	v	
2	Եկամտային հարկ		v
3	Շահութահարկ		v
4	Ներմուծման ԱԱՀ		v
5	ԱԱՀ		v
6	Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ		v
7	Մաքսատուրք, մաքսավճարներ		v
8	Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք	v	
9	Ներմուծման ակցիզային հարկ		v
10	Բնապահպանական հարկեր՝ ըստ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների	v	
11	Բնօգտագործման վճարներ	v	
12	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի		v
13	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի		v
14	Մշտադիտարկումների իրականացման վճար	v	
15	Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք	v	
16	Տուգանքներ		v

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն 2019 թվականի նոյեմբերի 07-ին տեղի ունեցած նիստի ժամանակ[309], ի թիվս այլնի, քննարկվել են նաև բնապահպանական հարկի տարանջատման հարցը: Մասնավորապես, արտահայտված դիրքորոշման համաձայն բնապահպանական հարկը որոշ չափով ապաագրեգացված է ըստ հետևյալ տեսակների՝ ըստ բնապահպանական հարկի և

[309] Նիստի արձանագրությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/MSG%20Procedures/MSG_meeting_minute_07_11_2019_arm.pdf

բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշիվների, ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի, ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի:

Չնայած նրան, որ բնապահպանական հարկերի հաշվարկները ներկայացվում են առանձին-առանձին, սակայն ինչ վերաբերում է վճարված գումարներին, ապա ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված միասնական հաշվի կիրառումը հնարավորություն չի տալիս տարանջատել բնապահպանական հարկը ըստ առանձին տեսակների, քանի որ դրանք հաշվառվում են որպես մեկ ընդհանուր պարտավորություն, ուստի տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն հաշվարկային ցուցանիշների մասով:

7.5 Առաջընթացը պատասխանատու հանքարդյունաբերության ուղղությամբ

Հայաստանում ԱՃԹՆ ազգային առաջնահերթություններից մեկը Պատասխանատու հանքարդյունաբերությունը, որպես երկրի կայուն զարգացման մաս, վեր հանելն ու ուժեղացնելն է: 2018-2019 թթ.-ին Բազմաշահառու խումբը (ԲՇԽ) մեծ առաջընթաց է արձանագրել Պատասխանատու հանքարդյունաբերության պրակտիկայի կիրառման համապարփակ մոտեցում ձևավորելու մեջ: Մասնավորապես՝ 2018 թվականին ԲՇԽ-ն ձևավորել է Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզ,[310] որը մանրամասն ներկայացնում է գործողությունները, որոնք ուղղված են Հայաստանում Պատասխանատու հանքարդյունաբերության ներկայացմանը: Ճանապարհային քարտեզի իրականացումը 2019-2020 ԱՃԹՆ Զեկույցի աշխատանքային պլանի մաս է կազմելու:

Մարմինը, որը համակարգում է ճանապարհային քարտեզով նախասահմանված գործողությունները, ԲՇԽ պատասխանատու հանքարդյունաբերության (ՊՀ) աշխատանքային խումբն է: Այն մշակել է «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթ [311], որը վեր է հանում է ՊՀ ներկայացման միջազգային լավագույն պրակտիկան, որն ամենամոտն է Հայաստանին՝ հաշվի առնելով հանքարդյունաբերական ոլորտին վերաբերող պատմական և տնտեսական հանգամանքները: Ընդհանուր առմամբ, պատասխանատու հանքարդյունաբերության հայեցակարգը ներառում է հինգ թիրախային ոլորտ, ինչպիսիք են՝ պետության բարեվարքությունը, գործարար միջավայրի բարեվարքություն, դրական ժառանգության ապահովման պլանավորում, սոցիալական պատասխանատվություն և

[310]Տե՛ս Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/MSG%20Procedures/Responsible_Mining_Roadmap_ARM.pdf

[311]Տե՛ս «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Responsible_mining_concept_paper.pdf

բնապահպանական պատասխանատվություն: Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտի համատեքստում վերհանված առաջնահերթությունները հետևյալն են՝

- Հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող օրենսդրության բացերի և հակասությունների վերացում, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի վերացում (թիրախային ոլորտ՝ պետական բարեվարքություն),
- Հանքարդյունաբերության ոլորտի արդյունավետ կառավարում և մարդու իրավունքների պաշտպանություն (թիրախային ոլորտ՝ բարեվարքություն գործարար միջավայրում),
- Հողերի վերականգնման և ականների փակման, ինչպես նաև ազդակիր համայնքներին օժանդակության և նպաստների բաշխման պլանավորում (թիրախային ոլորտ՝ դրական ժառանգության ապահովման պլանավորում),
- Աշխատանքի պատշաճ պայմանների ապահովում, ինչպես նաև ազդակիր համայնքների համար առողջություն և անվտանգություն (թիրախային ոլորտ՝ սոցիալական պատասխանատվություն),
- Հանքարդյունաբերական թափոնների և ջրի կառավարման արդյունավետ կառավարում (թիրախային ոլորտ՝ բնապահպանական պատասխանատվություն):

Ճանապարհային քարտեզի 2020 նպատակներն իրականացնելու նպատակով ակնկալվում է ՊՀ աշխատանքային խմբի աջակցությունը Հանքարդյունաբերական ոլորտի քաղաքականության ձևավորման մեջ և պետական մարմինների հետ համագործակցությունը նոր իրավական ակտերի նախագծման համար:

Չնայած պատասխանատու հանքարդյունաբերության ճանապարհային քարտեզը ուրվագծում է օրենսդրության բացը կարգավորելու ուղղությամբ գործողությունների մի ամբողջ շարք՝ այնուամենայնիվ, այն արտացոլում է հայեցակարգային փաստաթղթում ընդգծված հինգ թիրախային ոլորտներից միայն մեկը՝ բարեվարքությունը: Հետևաբար, Անկախ ադմինիստրատորը խորհուրդ է տալիս ԲՇԽ-ին թարմացնել ճանապարհային քարտեզն այնպես, որ այն ներառի հայեցակարգային փաստաթղթի բոլոր հիմնական բացահայտումները և ձևավորի ներառված գործողությունները՝ համապատասխան թիրախային ոլորտների մնացած մասերի: Առաջարկվում է նաև, որ մանրամասների նույն մակարդակը կիրառվի 2019-2020թթ.-ի ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի պատասխանատու հանքարդյունաբերության բաժնում:

7.6 Տվյալների հրապարակային հասանելիություն

ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման և հասանելիության ուղղությամբ ԱՃԹՆ առաջին Զեկույցի հրապարակումից հետո բազմաշահառու խումբը մի շարք գործընկերների աջակցությամբ իրականացրել է հետևողական քայլեր:

2018 թ-ի փետրվարին ԱՃԹՆ-ի խորհուրդը թիվ 2018-8/BM-39/BP-39-4-A որոշումով[312] ընդունեց առաջարկություններ, որոնցով իրականացնող երկրներին խրախուսում է անցնել համակարգային բացահայտմանը: Համակարգային բացահայտումը ենթադրում է ԱՃԹՆ-ի պահանջների կատարումը կանոնավոր բացահայտումների միջոցով ընկերությունների և պետական մարմինների համակարգերում:

Մասնավորապես, ԱՃԹՆ-ի միջոցով բացահայտված ֆինանսական տվյալները վերլուծելու շահագրգիռ կողմերի հետաքրքրությունը և կարողությունը բարձրացնելու համար Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ 2020թ. մարտի 6-8-ին անցկացվել է «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և ֆինանսական հոսքերի թափանցիկության ԱՃԹՆ-ի պահանջները» խորագրով դասընթաց: Դասընթացը նախատեսված էր ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամների և հանքարդյունաբերության ոլորտի շահառու գերատեսչությունների և կազմակերպությունների պատասխանատու աշխատակիցների համար, որոնց թվում էին ՀՀ Հաշվեքննիչ պալատը, Պետական եկամուտների կոմիտեն, Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ նույնպես իրականացվում է ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրություն:

Վավերացման մեկնարկից հետո ԲՇԽ-ի առաջարկությամբ ազդակիր համայքների կայքերում ապահովվել է 2016-2018թթ.-ին հաստատված բնապահպանական և առողջապահական ծրագրերի հասանելիությունը:

Աղյուսակ 7.6.1

Ազդակիր համայնքներում 2018թ.-ին հաստատված բնապահպանական և առողջապահական ծրագրերի հասանելիությունը:

ՀՀ մարզ	Հղումը	Նշումներ
ՀՀ Լոռու մարզ	http://alaverdi.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=99c3d7f2-1ed0-4b66-9de9-67b9f70aaa21	
ՀՀ Սյունիքի մարզ	http://kapan.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=dcb80711-ac39-4abe-9538-fbec1b5db10d	
ՀՀ Սյունիքի մարզ	http://kapan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=bdf07905-6c90-4139-9bc1-3ab31af630b5	Ավագանու որոշում
ՀՀ Արարատի մարզ	http://araratcity.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=9fd81fd5-77dc-423b-9c92-fa59be270839	
ՀՀ Կոտայքի մարզ	http://37.252.66.134/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=v&g=50c4cd8d-81fe-4b38-a43b-352578a771ae	
ՀՀ Կոտայքի մարզ	http://212.34.229.98/Pages/Misc/Announces/view.aspx?recID=356#.XrRc8mgzZPZ	

[312] https://eiti.org/document/board-agreed-on-recommendations-on-systematic-disclosures

Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը [313] ներկայացնում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերի, «Հանրապետական երկրաբանական ֆոնդի», օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերի, ընդերքօգտագործման ռեգիստրի, ՇՄԱԳ-ի հղումներ, ինչպես նաև մի շարք վերլուծություններ և ինֆոգրաֆիկաներ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ: Սակայն Հայաստանի ԱՃԹՆ կայքում ներկայացված տեղեկատվությունն ամբողջապես չի պատասխանում ԱՃԹՆ-ի ստանդարտի արժեքային շղթայի բոլոր հարցերին: Միասնական առցանց պորտալի ստեղծումն, որը կարող է հանդիսանալ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը, կարող է հեշտացնել օգտագործողների համար տվյալների փնտրելու գործընթացը: Տեղեկատվությունը կամ հղումները այդ հարթակում կներկայացվեն հետևողականորեն:

Աղյուսակ 7.6.2

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից լրացվող հրապարակային հաշվետվության ձևեր

Անվանումը	Իրավական հիմքը	Հղումը
Հրապարակային հաշվետվության ձևեր	ՀՀ Կառավարության 8 N 666-Ն որոշում	https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/7/19-0871.pdf
Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր	«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138750
Մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումները և ամփոփ տարեկան հաշվետվությունները ներկայացնելու ձև	ՀՀ կառավարության N 191-Ն որոշում	https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120135

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն տվյալները և դրանց հատկանիշները, որոնք հրապարակվում են ՀՀ պետական մարմինների կողմից՝

[313] Տե՛ս Հայաստանի ԱՃԹՆկայք https://www.eiti.am/hy/%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80_%D5%B6%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D6%80

Աղյուսակ 7.6.3

ԱՃԹՆ շրջանակում բացահայտվող տեղեկատվություն

Հ/հ	Տվյալների նկարագրություն	Տվյալների սեփականատեր պետական մարմինը	Տվյալների կառուցվածքը (տվյալների նկարագրու-թյունը)	Տվյալների ստացման պարբերականու-թյունը	Տվյալների որակը	Տվյալների հետևողական ներկայա-ցումը	Տվյալների աղբյուրը	Հավաքագրը-ման եղանակը
1	Պայմանագրերի գրանցամատյան	ՀՀ ՏԿԵՆ	Excel ձևաչափով	Կնքելուց հետո մինչև 10 օր	Ոչ կիրառելի	Այո	ՀՀ ՏԿԵՆ	Թղթային
2	Պայամանագրերի հրապարակում	ՀՀ ՏԿԵՆ	սկանավորված, PDF ձևաչափով	Կնքելուց հետո մինչև 10 օր	Ոչ կիրառելի	Այո	ՀՀ ՏԿԵՆ	Թղթային
3	Իրական սեփականատերերի ռեգիստր	ՀՀ արդարադատության նախարարության ԻԱՊԴԳ	Ոչ կիրառելի	Առաջին ներկայացումը պետք է լինի մինչև 20.02.2020թ.	Ոչ կիրառելի	Ոչ կիրառելի	ԻԱՊԴԳ	Ոչ կիրառելի
4	Արդյունահանում	Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
5	Արտադրություն	Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
6	Արտադրության իրացումը ներքին շուկայում	Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային

Հ/հ	Տվյալների նկարագրություն	Տվյալների սեփականատեր պետական մարմինը	Տվյալների կառուցվածքը (տվյալների նկարագրու-թյունը)	Տվյալների ստացման պարբերականու-թյունը	Տվյալների որակը	Տվյալների հետևողական ներկայա-ցումը	Տվյալների աղբյուրը	Հավաքագրը-ման եղանակը
7	Արտահանում	ՊԵԿ, Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՊԵԿ	Էլեկտրոնային
8	Վճարումներ* պետական բյուջե (հարկեր, վճարներ, տուրքեր)	ՊԵԿ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններՊԵԿ	Էլեկտրոնային
9	Շահութահարկ	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Տարեկան մինչև տարին հաջորդող ապրիլի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
10	Ոչ ռեզիդենտի շահութահարկ	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Եռամսյակային մինչև եռամսյակը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
11	Եկամտային հարկ	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Ամսական մինչև ամիսը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
12	Ավելացված արժեքի հարկ	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Ամսական մինչև ամիսը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային

Հ/հ	Տվյալների նկարագրություն	Տվյալների սեփականատեր պետական մարմինը	Տվյալների կառուցվածքը (տվյալների նկարագրու-թյունը)	Տվյալների ստացման պարբերականու-թյունը	Տվյալների որակը	Տվյալների հետևողական ներկայա-ցումը	Տվյալների աղբյուրը	Հավաքագրը-ման եղանակը
13	Ներմուծման ավելացված արժեքի հարկ	ՊԵԿ	ՀՀ մաքսային ծառայության էլեկտրոնային համակարգ	Ըստ ներմուծման	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
14	Ակցիզային հարկ	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Ամսական մինչև ամիսը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
15	Ներմուծման ակցիզային հարկ	ՊԵԿ	ՀՀ մաքսային ծառայության էլեկտրոնային համակարգ	Ըստ ներմուծման	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
16	Ռոյալթի	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Տարեկան մինչև տարին հաջորդող ապրիլի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
17	Բնօգտագործման վճարներ	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Եռամսյակային մինչև եռամսյակը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
18	Բնապահպանական հարկեր	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Եռամսյակային մինչև եռամսյակը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային

Հ/հ	Տվյալների նկարագրություն	Տվյալների սեփականատեր պետական մարմինը	Տվյալների կառուցվածքը (տվյալների նկարագրու-թյունը)	Տվյալների ստացման պարբերականու-թյունը	Տվյալների որակը	Տվյալների հետևողական ներկայա-ցումը	Տվյալների աղբյուրը	Հավաքագրը-ման եղանակը
19	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր	ՊԵԿ	ՊԵԿ էլեկտրոնային համակարգ	Ամսական մինչև ամիսը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
20	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար բնապահպանական հարկեր	ՊԵԿ	ՀՀ մաքսային ծառայության էլեկտրոնային համակարգ	Ըստ ներմուծման	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
21	Մաքսատուրք, մաքսավճար	ՊԵԿ	ՀՀ մաքսային ծառայության էլեկտրոնային համակարգ	Ըստ ներմուծման/ արտահանման	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
22	Տուրքեր	ՊԵԿ ՏԿԵՆ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՊԵԿ	Էլեկտրոնային

Հ/հ	Տվյալների նկարագրություն	Տվյալների սեփականատեր պետական մարմինը	Տվյալների կառուցվածքը (տվյալների նկարագրու-թյունը)	Տվյալների ստացման պարբերականու-թյունը	Տվյալների որակը	Տվյալների հետևողական ներկայա-ցումը	Տվյալների աղբյուրը	Հավաքագրը-ման եղանակը
23	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	ՇՄՆ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՇՄՆ	Էլեկտրոնային
24	Մշտադիտարկումների իրականացման վճար	ՇՄՆ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՇՄՆ	Էլեկտրոնային
25	ՇՄԱԳ փորձաքննության իրականացման վճար	ՇՄՆ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՇՄՆ	Էլեկտրոնային
26	Բնապահպանական տույժեր ու տուգանքներ	ՇՄՆ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՇՄՆ	Էլեկտրոնային
27	Տեղական հարկեր և վճարներ	ՏԿԵՆ/ՏԻՄ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՏԻՄ	Էլեկտրոնային

Հ/հ	Տվյալների նկարագրություն	Տվյալների սեփականատեր պետական մարմինը	Տվյալների կառուցվածքը (տվյալների նկարագրու-թյունը)	Տվյալների ստացման պարբերականու-թյունը	Տվյալների որակը	Տվյալների հետևողական ներկայա-ցումը	Տվյալների աղբյուրը	Հավաքագրր-ման եղանակը
28	Գույքահարկ, հողի հարկ	ՏԿԵՆ/ՏԻՄ	Ձևաթղթերի վրա	Կիսամյակային մինչև կիսամյակը հաջորդող ամսի 20-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Թղթային
29	Սոցիալ-տնտեսական ներդրումներ	ՏԿԵՆ/ՏԻՄ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ ՏԻՄ	Էլեկտրոնային
30	Զբաղվածությունը	Հ-ԱՃԹՆ քարտուղարություն ՎԿ	Excel ձևաչափով	Տարեկան մինչև տարին հաջորդող օգոստոսի 1-ը	2020թ. օգոստոս ամսին պարտադիր աուդիտ չէր պահանջվում	Այո	Ընդերքօգտագործող ընկերություններ	Էլեկտրոնային
31	Մասնաբաժինը ՀՆԱ-ում	ՎԿ	www.armstat.am կայքի միջոցով	Եռամսյակային	Ոչ կիրառելի	Այո	ՎԿ	Էլեկտրոնային
32	Մասնաբաժինը պետական եկամուտների մեջ	ՊԵԿ	Հասանելի չեն	Տարեկան	Ոչ կիրառելի		ՊԵԿ	Էլեկտրոնային
33	Մասնաբաժինը արտահանման մեջ	ՊԵԿ	Հասանելի չեն	Տարեկան	Ոչ կիրառելի		ՊԵԿ	Էլեկտրոնային
34	Մասնաբաժինը զբաղվածության մեջ	ՎԿ	www.armstat.am կայքի միջոցով	Տարեկան	Ոչ կիրառելի	Այո	ՎԿ	Էլեկտրոնային

8 ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

8. ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Սույն ԱՃԹՆ զեկույցի պատրաստման ընթացքում Անկախ ադմինիստրատորի կողմից անդրադարձ է կատարվել Առաջին Զեկույցում վերհանված մի շարք օրենսդրական բացերին և հակասություններին, ինչպես նաև արձանագրվել են որոշ իրավական խնդիրներ՝ կապված հաշվետու տարում ընդունված իրավական ակտերի հետ: Նշված բոլոր բացահայտումները համառոտ ներկայացված են ստորև՝

1. Բնօգտագործման վճարների առնչությամբ առաջացող հարաբերությունների մասնավոր իրավական էության հարցը շարունակում է մնալ արդիական: Ավելին, վերջերս կայացված որոշմամբ Սահմանադրական դատարանը վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ բնօգտագործման վճարը, որպես գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, հանդիսանում է մասնավոր իրավահարաբերությունների տարր: Միևնույն ժամանակ, ՍԴ-ը գտել է, որ պետությունը, որպես ընդերքի սեփականատեր, իրավասու է վերահսկել պայմանագրային պարտավորությունների կատարումը, ի թիվս այլնի, նաև ստուգումների անցկացման միջոցով:

   Բացի դրանից, շարունակում է բաց մնալ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում առկա ներքին հակասությունների հարցը, որը ըստ ՍԴ-ի պետք է լուծում ստանա պրակտիկայում մեկնաբանման կանոնների կիրառմամբ:
2. Չնայած ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման և օտարման առնչությամբ առկա հստակ կարգավորումներին, ընդերքօգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց բաժնեմասերի/բաժնետոմսերի առուվաճառքը որևէ կարգավորման և վերահսկողության չի ենթարկվում ՏԿԵՆ-ի կողմից:
3. Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքն ուղղակիորեն չի մատնանշում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը մերժելու հիմքերը, այլ հղում է կատարում ընդերքօգտագործման իրավունքի հայցերը մերժելու հիմքերին: Սակայն, կարծում ենք, որ այսպիսի էական նշանակություն ունեցող հարցին միայն բլանկետային նորմով անդրադառնալը նպատակահարմար չէ, ուստի առաջարկում ենք նախատեսել առանձին կարգավորում, որն ուղղակիորեն կսահմանի ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը մերժելու հիմքերը:
4. Ակնհայտ պրակտիկ խնդիրներ են առաջանում ընդերքօգտագործողների համար այն պատճառով, որ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը որևէ կերպ չի երաշխավորում այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ այլ իրավունքների (ջրօգտագործման իրավունք, հողի օգտագործման իրավունք) ձեռքբերումը:
5. Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու գործընթացում էական դերակատարություն ունի համայնքի ղեկավարի հայեցողությունը, ինչը չի կարող դրական

համարվել ընդերքօգտագործման ոլորտի և ընդհանրապես ներդրումային միջավայրի զարգացման համար:

6. Թեև տեղական համայնքներն ընդերքօգտագործողների կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների առաջնային շահառուներն են, սակայն օրենսդրությունը համայնքը ներկայացնող ՏԻ մարմինների համար որևէ հստակ մեխանիզմ չի արձանագրում ընդերքօգտագործողների սոցիալ-տնտեսական պարտավորությունների շրջանակի ձևավորման և հստակեցման գործընթացում :

7. Թեև Օրենսգիրքն արձանագրում է, որ աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը կազմվում է «օրենսդրությամբ սահմանված կարգով», սակայն փաստացի աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագրի իրականացման կարգ, միջոցառումների ծավալի որոշակիացման ընթացակարգեր, ինչպես նաև նման միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն և արդյունավետության գնահատման չափանիշներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն:

8. Մի շարք օրենսդրական բացեր առկա են դրամագլխին կատարվող վճարների կարգավորումների համատեքստում: Մասնավորապես՝ Օրենսգիրքը որևէ կերպ չի սահմանում ո՛չ բնապահպանական աշխատանքների ծավալների, ո՛չ ընդերքօգտագործողի կողմից դրանց իրականացված լինելու որոշման չափանիշներ, ո՛չ շրջակա միջավայրին պատճառված վնասների գնահատման չափանիշներ: Ռեկուլտիվացիոն վճարների բազային չափ գործող ընդերքօգտագործման պայմանագրերի զգալի մասում սահմանված չէ, որի արդյունքում առաջանում է իրավական անորոշություն. օրենսդրությունը հղում է կատարում պայմանագրերին (ինչպես նաև նախագծերին/ծրագրերին), իսկ պայմանագրերով որևէ պարտավորություն փաստացի արձանագրված չէ, այլ միայն հղում է կատարվում «օրենսդրությամբ սահմանված չափ»-ին և «վճարման կարգ»-ին:

9. Իրավական որոշակիության է խնդիրներ են առաջանում այն ընդերքօգտագործման պայմանագրերի պարագայում, որոնք կնքվել են ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաների վերաձևակերպման արդյունքում: Հաշվի առնելով, որ 2002-2012թթ. գործած նախորդ Ընդերքի մասին օրենսգիրքը չէր նախատեսում հանքի փակման ծրագիր ներկայացնելու օրենսդրական պահանջ, վերաձևակերպված թույլտվություններից շատերի պարագայում հանքի փակման ծրագրերը բացակայում են: Ուստի՝ բացակայում է մշտադիտարկումների նախահաշվային արժեքը, ինչպես նաև աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը և փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների ծրագիրը: Պայմանագրերից մի քանիսի պարագայում «Հանքի փակման ծրագիր» վերտառությամբ հավելված 2-ը սահմանում է բացառապես աշխատուժի սոցիալական մեղմացման և հանքի ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական միջոցառումներ իրականացնելու պարտականություն (առանց դրանց էության հստակեցման), իսկ մշտադիտարկումների վճարների առնչությամբ

որևէ նշում առկա չէ: Մի խումբ պայմանագրերի պարագայում էլ «հանքի փակման ծրագիր» վերտառությամբ 2-րդ հավելվածում, որտեղ խոսվում է սոցիալական մեղմացման միջոցառումների մասին, հավելվածի վերջում ներկայացված է նաև միջոցառումների ցանկ՝ աղյուսակի տեսքով, որոնք բովանդակային առումով սոցիալական չեն, այլ էկոլոգիական:

10. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝ իրական սեփականատերերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության արժանահավատությունը ստուգելու իրավասության բացակայությունը պրակտիկորեն անհնարին է դարձնում իրական սեփականատերերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունում անճշտությունների, ակնհայտ կեղծիքի կամ թերությունների ստուգումը, և հետևաբար, այդ մասին պատասխանատվություն կիրառող լիազոր մարմնին հաղորդում ներկայացնելը:

Արտադրություն մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Վիճակագրական Կոմիտեի և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ստացված տեղեկատվության համադրումը ցույց է տալիս, որ առկա են տարբերություններ պղնձի, մոլիբդենի, ֆեռոմոլիբդենի և ցինկի արտադրատեսակների ծավալների միջև:

Պղնձի և ցինկի խտանյութերի դեպքում ընկերությունների բացահայտած արտադրական ծավալները գերազանցում են ՀՀ ՎԿ-ի արձանագրած ծավալները՝ համապատասխանաբար 5.8% և 12.6%-ով: ՀՀ ՎԿ-ից արված հարցումների արդյունքում պարզվել է, որ այս տարբերությունը կարելի է վերագրել օգտագործված տարբեր չափման միավորներին: Մասնավորապես՝ ԱՃԹՆ-ի շրջանակում բացահայտված ծավալները հաշվարկվել են թաց մետրիկ տոննայով (թմտ), իսկ ՀՀ ՎԿ-ի հրապարակած ծավալները հաշվարկված են չոր մետրիկ տոննայով (չմտ):

Պատկերը այլ է ֆեռոմոլիբդենի և մոլիբդենի խտանյութի դեպքում: ՎԿ-ի արձնաագրած ֆեռոմոլիբդենի արտադրական ծավալը գերազանցում է ըներ ությունների ներկայացրած ծավալը 55%-ով, իսկ մոլիբդենի խտանյութի դեպքում՝ շուրջ 14 անգամ: Տարբերություններն առաջացել են նրանից, որ ԶՊՄԿ-ն ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում բացահայտել է միայն ֆեռոմոլիբդենի ծավալները՝ որպես արտադրանքի վերջնական արդյունք, մինչդեռ ՀՀ ՎԿ-ին ներկայացրել է արտադրված մոլիբդենի խտանյութի ծավալը: ԶՊՄԿ-ն ներգրավել է երրորդ կողմի կապալառու ընկերություն մոլիբդենի խտանյութից ֆեռոմոլիբդեն արտադրելու համար: Վերջինս չի ներգրավվել ԱՃԹՆ զեկույցի շրջանակներում, սակայն դրա արտադրած ֆեռոմոլիբդենի ծավալն արձանագրվել է ՀՀ ՎԿ-ի կողմից: Բացի դրանից, ՀՀ ՎԿ-ից կատարած հարցումների արդյունքներում պարզվել է, որ կան ֆեռոմոլիբդեն արտադրող երրորդ ընկերություններ, որոնք չեն ներառվել ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում:

Արտահանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Զեկույցի կազմման ընթացքում արձանագրվեց ԱՃԹՆ հաշվետու հանքարդյունաբերող կազմակերպությունների, ՀՀ ՎԿ-ի և ITC Comtrade-ի կողմից տրամադրված արտահանման տվյալների նկատելի տարբերություն (ի դեպ, սույն երկու ծառայությունների կողմից արտացոլված

տեղեկատվությունը համընկնում է): Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է 2018թ.-ին Հայաստանից արտահանված պղնձի, ցինկի և մոլիբդենի խտանյութի ծավալային արժեքը դրամական արտահայտությամբ՝ համաձայն ՎԿ-ի և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկատվության:

Վերը նշված երկու աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման արդյունքում, առկա է էական տարբերություն պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման ծավալների միջև՝ արտահայտված դրամային համարժեքով: Սույն տարբերությունը կազմում է 29.3%: Մոլիբդենի խտանյութի տարբերությունը կազմում է 16.9%, իսկ անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի և հանքաքարի տարբերությունը՝ 10%: Բացահայտված տարբերությունները մեծամասամբ պայմանավորված են այն փաստով, որ ընկերությունների՝ ներքին շուկայում իրացրած արտադրատեսակների մի մասը նույնպես արտահանվում է այլ ընկերությունների կողմից ուղղակիորեն կամ որոշ վերամշակումից հետո:

Սոցիալ-տնտեսական պարտավորություններ

Արձանագրվել է զգալի տարբերություն ընդերքօգտագործող ընկերությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված տվյալների մեջ: Տարբերությունները հիմնականում պայմանավորված են հետևյալով՝

(1) Մի քանի ընկերություններ համայնքների հետ կնքած առանձին պայմանագրերերից բխող պարտավորությունները ևս ներկայացրել են որպես պարտադիր սոցիալ-տնտեսական վճարներ, մինչդեռ դրանք հանդիսանում են կամավոր վճարումներ: Մասնավորապես՝ «Լիճքվազ» ՓԲԸ-ը Մեղրի համայնքի հետ 29/12/2016թ.-ին կնքված սոցիալ-տնտեսական համագործակցության շրջանակային համաձայնագրի հիման վրա կատարված հատկացումները ներկայացրել է որպես ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտադիր սոցիալ-տնտեսական հատկացում, մինչդեռ այն պետք է ներկայացնել որպես բարեգործական հատկացում:

(2) Հաշվետվությունների ձևաչափերի մեջ բացակայում է երրորդ կողմին պայմանագրով ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների կատարումը պարտադիր սոցիալ-տնտեսական վճարումների դաշտում ներկայացնելու հնարավորությունը: Արդյունքում դրանք ներկայացվում են որպես կամավոր ներդրումներ: Մասնավորապես՝ «Ղարագույաններ» ՓԲԸ-ի դեպքում ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած 250,000 ՀՀ դրամ ուսանողի կիսամյակային ուսման վճարի տրամադրման և գյուղի դպրոցի և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներին 500,000 ՀՀ դրամի չափով մասնակցության պարտավորություններն ընկերությունների կողմից ներկայացվել են որպես կամավոր ներդրումներ, մինչդեռ դրանք հանդիսանում են պարտադիր սոցիալ-տնտեսական վճարներ:

(3) Ոչ ֆինանսական ներդրումների դեպքում տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն կատարած աշխատանքների, մատուցված ծառայությունների, տրամադրված ապրանքների, իրականացված ծրագրերի նկարագրությունը և դրանց արժեքային գնահատականը: Սրանով կարելի է բացատրել այն փաստը, որ հաշվետու տարում համայնքների կողմից չեն ներկայացվել «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից

ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած պարտադիր սոցիալ-տնտեսական ներդրումները, որոնք սույն զեկույցում ներկայացված են որպես կամավոր ներդրումներ:

Հատուկ ծրագրերի կամ աշխարհագրական շրջանների համար նախատեսված եկամուտներ

ԱՃԹՆ-ի 2016-2017 թվականների զեկույցում արձանագրվել էին մի շարք օրենսդրական բացեր, որոնք այժմ հիմնականում կարգավորվել են Բաժին 4.3-ում ներկայացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, սակայն, ինչպես նշվել է վերոգրյալ բաժնում, առավել համապարփակ գնահատական հնարավոր կլինի տալ միայն ՀՀ կառավարության կողմից նշված որոշումներն ընդունելուց հետո:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Ընկերության անվանումը	Արտաքին ֆինանսական աուդիտի առկայությունը	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը
1	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Այո	https://iravunk.com/news/87720
2	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Ոչ	-
3	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Ոչ	-
4	«Ասսաթ» ՍՊԸ	Ոչ	-
5	«ԱՏ-Մետալս» ՍՊԸ	Ոչ	-
6	«Բակտեկ էկո» ՍՊԸ	Ոչ	-
7	«Գեղի Գոլդ ՍՊԸ»	Ոչ	-
8	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Այո	«Գործընթաց» թերթ 26.06.2019թ #259
9	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Այո	https://www.azdarar.am/announcments/cat/261/00512844/
10	«Թաթսթոուն» ՍՊԸ	Ոչ	-
11	«Թեղուտ» ՓԲԸ	Այո	http://vallexgroup.am/vm-about-us/
12	«Լեռ էքս»ՍՊԸ	Այո	https://www.azdarar.am/announcments/cat/129/00512834
13	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Այո	https://www.lydianarmenia.am/img/uploadFiles/57b118e212f420036ae1FS_LydianArmeniaCJSC_2018_arm.pdf
14	«Լիճքվազ» ՓԲԸ	Ոչ	-
15	«Զաարատ-Կապան» ՓԲԸ	Ոչ	-
16	«Ղարագյուլյաններ» ՓԲԸ	Ոչ	-
17	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Ոչ	-
18	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Ոչ	-
19	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Այո	2018 թվականի համար չի իրականացվել արտաքին ֆինանսական աուդիտ, իսկ Ֆինանսական հաշվետվություններն առանց աուդիտորական եզրակացության հրապարակվել են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում՝ թիվ 115(7099), 26-06-2019թ.
20	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Ոչ	2018 թվականի համար չի իրականացվել արտաքին ֆինանսական աուդիտ, իսկ Ֆինանսական հաշվետվություններն առանց աուդիտորական եզրակացության հրապարակվել են «Նովոյե Վրեմյա» թերթում՝ 19/06/2019թ.

N	Ընկերության անվանումը	Արտաքին ֆինանսական աուդիտի առկայությունը	Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը
21	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Ոչ	2018 թվականի համար չի իրականացվել արտաքին ֆինանսական աուդիտ, իսկ Ֆինանսական հաշվետվություններն առանց աուդիտորական եզրակացության հրապարակվել են Azdarar.am կայքում,https://www.azdarar.am/announcments/org/129/00513573/
22	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Ոչ	-
23	«Սագամար» ՓԲԸ	Այո	2018 թվականի համար չի իրականացվել արտաքին ֆինանսական աուդիտ, իսկ Ֆինանսական հաշվետվություններն առանց աուդիտորական եզրակացության հրապարակվել են «Նովոյե Վրեմյա» թերթում՝ 19/06/2019թ.
24	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Ոչ	-
25	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Ոչ	-
26	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Ոչ	-

ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ, ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ և ՏԱՐԵԿԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՉԱՓԵՐՆ՝ ԸՍՏ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Ընդերքօգտագործող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ ընդերքօգտագործող ընկերության, 2018 թ., ՀՀ դրամ			Ըստ Շրջակա միջավայրի նախարարության, 2018թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ
1	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5	428,690,000	26,027,607	-	428,689,820	26,027,607	-	194,441,470	3,833,300
2	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20	190,968,000	32,466,000	32,466,000	190,981,500	32,466,000	89,580,000	58,854,000	2,250,000
3	«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28	379,810	379,880	379,880	11,620,000	379,880	3,415,000	4,022,280	607,350
4	«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6	420,000	420,000	420,000	1,698,800	144,400	-	976,820	-
5	«Ատ-Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16	-	-	-	119,919,500	15,681,780	35,000,000	65,033,270	-

N	Ընդերքօգտագործող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ ընդերքօգտագործող ընկերության, 2018 թ., ՀՀ դրամ			Ըստ Շրջակա միջավայրի նախարարության, 2018թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ
6	«Բակտեկ-Էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22	697,840	697,840	697,840	2,440,000	82 960	697 840	697 840	-
7	«Գեղի Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22	12,224,500	12,224,500	12,224,500	58,597,000	1,717,498	12,224,500	12,224,548	-
8	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20	901,700,000	58,957,300	117,914,600	901,700,000	58,957,300	58,957,300	253,169,600	253,169,600
9	«Զանգեզուրի պղնձնամոլիբդենայի ն Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27	548,751,230	19,434,939	21,264,739	548,751,230	19,434,940	21,264,740	203,495,243	109,313,943
10	«Թաթստոուն» ՍՊԸ	Թիվ Պ-458,Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11	241,245	241,245	271,135	5,830,733	247,125	271,135	2,110,210	1,839,570
11	«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20	20,841,300	2 953,000	2,953,000	20,841,300	2,953,000	2,953,000	23,794,300	26,577,000
12	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16	-	-	-	31,278,420	1,107,780	-	17,985,120	100,000
13	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26	1,864,926,000,	121,938,000	121,938,000	1,864,926,000	121,938,000	121,938,000	523,614,000	525,669,870

N	Ընդերքօգտագործող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ ընդերքօգտագործող ընկերության, 2018 թ., ՀՀ դրամ			Ըստ Շրջակա միջավայրի նախարարության, 2018թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ
14	«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22	32,500,000	1,453,947	1,453,947	10,571,000	480,518	9,236,841	1,916,170	2,190,000
15	«Զաարատ Կապան» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27	105,000,000	2,704,545	23,863,635	-	-	23,863,635	-	-
16	«Ղարագուլաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25	9,891,560	233,511	1,717245	9891,560	233,550	1,717,245	1,950,570	-
17	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7	-	-	-	7,853,000	290,170	-	3,789,480	1,179,000
18	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28	-	-	-	3,070,670	435,000	-	3,505,670	2,325,000
19	«Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22	307,740	307,740	307,740	3,385 200	307,740	615,480	2,354,020	2,416,700
20	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7	16,916,000	1,561,152	1,561,152	-	-	1,561,152	-	10,543,152
21	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20	6,315,000	233,380	-	6,315,000	233,381	2,100,430	3,747,811	1,180,630
22	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12	-	-	-	25,176,600	891,680	6,241,600	10,909,930	3,776,490

N	Ընդերքօգտագործող ընկերություն	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը	Ըստ ընդերքօգտագործող ընկերության, 2018 թ., ՀՀ դրամ			Ըստ Շրջակա միջավայրի նախարարության, 2018թ., ՀՀ դրամ				
			Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ
23	«Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20	-	-	-	46,500,450	1,001,440	-	8,836,240	7,621,000
24	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30	-	-	-	6,826,533	241,780	1,715,900	2,232,880	517,000
25	«Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27	2,616,800	735,000	735,000	2,616,700	171,100	735,000	1,761,300	342,200
26	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20	-	1,028,460	1,028,460	27,829,000	1,028,460	7,084,000	13,430,490	6,345,760

ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Բաժին 3 Արդյունահանումը, արտադրությունը և իրացումը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում

Գծապատկեր 3.3.1 Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տարածքային արտադրանքի ծավալները դրամական արտահայտությամբ, մլն ՀՀ դրամ

	2013	2014	2015	2016	2017	2018
Գեղարքունիք	9,170	8,307	12,877	14,877	15,098	18,943
Լոռի	8,761	10,820	55,013	66,672	79,220	7,416
Սյունիք	169,935	168,343	146,386	167,275	236,940	260,104
Այլ	8,913	5,672	6,294	7,657	9,841	14,282

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը» հրապարակումը համապատասխան տարիների համար*[314]

Գծապատկեր 3.3.3 Պղնձի խտանյութի արտադրությունը և պղնձի միջազգային միջին տարեկան գինը՝ 2012-2018թթ.

	2013	2014	2015	2016	2017	2018
Պղնձի խտանյութի արտադրություն, տոննա	184,494	192,273	315,600	388,500	428,500	317,400
Պղնձի գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/տոննա	7,332	6,863	5,510	4,868	6,170	6,530

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակումը* [315] *համապատասխան տարիների համար, միջազգային գնին վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից*[316]

[314] Տե՛ս https://www.armstat.am/file/article/marzer_2018_11.pdf էջեր 35-43

[315] ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ».
2013թ.՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2135
2014թ.՝ https://www.armstat.am/file/article/bnexen_12_2014.pdf
2015թ.՝ https://armstat.am/am/?nid=82&id=1740
2016թ.՝ https://www.armstat.am/file/article/bnexen_12_2016.pdf
2017թ.՝ https://www.armstat.am/file/article/bnexen_12_2017.pdf
2018թ.՝ https://armstat.am/file/article/bnexen__12_2018.pdf

[316] https://databank.worldbank.org/databases/commodity-price-data

Գծապատկեր 3.3.4 Մոլիբդենի խտանյութի և ֆեռոմոլիբդենի արտադրություն, 2013-2018 թթ., տոննա՝ ըստ Վիճակագրական կոմիտեի

	2013	2014	2015	2016	2017	2018
Մոլիբդենի խտանյութի արտադրություն, տոննա	11,635	11,807	10,440	10,662	10,961	11,110
Ֆեռոմոլիբդենի արտադրություն	6,619	6,528	5,576	6,518	6,588	7,275
Մոլիբդենի գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/տոննա	21,914	24,566	17,547	13,988	14,750	16,006

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակումը համապատասխան տարիների համար, միջազգային գնին վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից*

Գծապատկեր 3.3.5 Ցինկի խտանյութի արտադրությունը և ցինկի միջին տարեկան գինը, 2013 – 2018թթ., տոննա

	2013	2014	2015	2016	2017	2018
Ցինկի խտանյութի արտադրությունը, տոննա	15,950	14,709	11,319	7,891	9,640	10,828
Ցինկի գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/տոննա	1,910	2,161	1,932	2,090	2,891	2,922

Աղբյուրը՝ *ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» հրապարակումը համապատասխան տարիների համար, միջազգային գնին վերաբերող տեղեկատվությունը վերցվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայից*

Գծապատկեր 3.3.6 2013-2018թթ. ոսկու միջազգային միջին տարեկան գինը

	2013	2014	2015	2016	2017	2018
Ոսկու գին, միջին տարեկան, ԱՄՆ դոլար/ տրոյական ունցիա	1,411	1,266	1,161	1,249	1,258	1,269

Աղբյուրը՝ *Համաշխարհային բանկի 2017-2018թթ. «Ապրանքային Շուկաների Նկարագիր» (“Commodity Markets Outlook”) զեկույց*

Գծապատկեր 3.4.1 2018թ. ընդհանուր արտահանումը, մետաղական հանքաքարերի և խտանյութերի մասնաբաժինը արտահանման մեջ , մլն ԱՄՆ դոլար

	2013	2014	2015	2016	2017	2018
Ամբողջ արտահանումը	1,468	1,490	1,483	1,808	2,145	2,383
Պղնձի հանքաքարի և խտանյութի մասնաբաժինը (%)	19.1%	15.8%	21.4%	20.5%	26.6%	22.0%
Ֆեռոմոլիբդենի մասնաբաժինը (%)	7.0%	7.4%	3.7%	3.7%	3.9%	5.3%
Ոսկու մասնաբաժինը (%)	5.0%	5.5%	6.7%	7.8%	6.8%	7.4%
Մոլիբդենի խտանյութի մասնաբաժինը (%)	0.5%	0.6%	0.4%	0.1%	0.4%	0.3%
Ցինկի հանքաքարի և խտանյութի մասնաբաժինը (%)	1.2%	0.9%	0.8%	0.6%	0.8%	0.9%

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.2 2018թ. մետաղական հանքաքարերի և խտանյութերի արտահանումը բնեղեն արտահայտությամբ, հազար տոննա

	2013	2014	2015	2016	2017	2018

Պղնձի հանքաքարի և խտանյութի մասնաբաժինը	173,207	185,089	309,184	402,589	475,759	424,816
Ֆեռոմոլիբդենի մասնաբաժինը	6,659	6,500	5,582	6,660	6,797	7,111
Ոսկու մասնաբաժինը	3	4	3	4	4	5
Մոլիբդենի խտանյութի մասնաբաժինը		900	984	210	1215	0
Ցինկի հանքաքարի և խտանյութի մասնաբաժինը	18,344	14,338	14,137	9,569	10,193	12,473

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.3 2013-2018թթ. պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար

	2013	2014	2015	2016	2017	2018
Բուլղարիա	151	85	79	163	281	214
Կանադա	-	-	-	-	-	22
Չինաստան	65	138	139	68	116	95
Վրաստան	-	-	44	93	87	9
Ռումինիա	-	-	38	23	3	55
Սերբիա	6	13	-	-	-	-
Իսպանիա	9	-	-	-	-	-
Շվեյցարիա	12	-	15	24	84	131
Այլ	-	-	2	0	0	0

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.4 2013-2018թթ. մոլիբդենի խտանյութի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար

	2013	2014	2015	2016	2017	2018
Բելգիա	-	-	-	-	1.4	6.5
Նիդերլանդներ	6.7	8.7	5.8	-	6.4	-
ՌԴ	-	-	-	-	-	1.1
Այլ		-	0.4	0.9	0.8	-

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.5 2013-2018թթ..-ին ֆեռոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ երկրների, մլն դոլար

	2013	2014	2015	2016	2017	2018
Գերմանիա	44.4	47.9	20.1	16.5	3.7	-
Նիդերլանդներ	58.0	61.8	34.6	47.9	75.3	123.6
ՌԴ	-	-	0.8	1.7	5.4	2.3

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.6 2013-2018թթ. ցինկի հանքաքարի և խտանյութի արտահանումն, ըստ երկրների,

	2013	2014	2015	2016	2017	2018
Բելգիա	15.3	11.5	10.1	10.5	15.1	20.5
Չինաստան	-	-	1.0	-	-	-
Նիդերլանդներ	-	2.3	-	-	-	
Հվ. Կորեա	-	-	-	-	1.5	-
Շվեյցարիա	1.6	-	-	-	-	-
Այլ	0.2	-	0.9	-	-	-

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Գծապատկեր 3.4.7 Անմշակ և կիսամշակ ոսկու և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութի և հանքաքարի արտահանումն ըստ երկրների, 2013-2018թթ.

	2013	2014	2015	2016	2017	2018
Կանադա	73	82	97	124	-	-
Իտալիա	-	-	-	-	-	6
ՄԱԷ	-	-	2	-	-	2
Բելգիա	-	-	-	1	-	-
Չինաստան	-	32	24	31	-	-
Ճապոնիա	-	-	3	-	-	-
Մալազիա	-	-	3	-	-	-
Այլ	-	-	-	-	1	-

Աղբյուրը՝ *ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա*

Բաժին 4 Պետության ստացած եկամուտները մետաղական հանքարդյունաբերության ոլորտից և դրանց բաշխումը

Գծապատկեր 4.1.1 Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2018թ.

	Մասնաբաժին
Հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հաշվարկած վճարումները	5.79%
Պետական բյուջեի այլ եկամուտներ	94.21%
Ընդամենը	**100%**

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

Գծապատկեր 4.1.2 Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, 2018թ., մլն ՀՀ դրամ

	Մասնաբաժինն ամբողջի մեջ	Պետության եկամուտներ, ԱՄՆ դոլար[317]	Պետության եկամուտները մլն ՀՀ դրամ
Ռոյալթի	2.57%	71,947,933	34,545.8
Եկամտային հարկ	1.33%	37,170,770	17,847.5
Շահութահարկ	1.18%	33,073,961	15,880.5
ԱԱՀ**	0.45%	12,739,105	6,113.9
Ոչ ռեզիտենդի շահութահարկ*	0.15%	4,278,790	2,054.5
Մաքսատուրք, մաքսավճար	0.08%	2,553,535	1,225.6
Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների հանքավայրի օգտագործման(շահագործման) պետական տուրք	0.01%	541,602	260.1
Այլ	0.01%	760,919	358.6
Ընդհանուր	**5.78%**	163,045,842	**78,286.5**

*Որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողներին վճարված եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկ

** Ներկայացված է ԱԱՀ և ներմուծման ԱԱՀ հանրագումարը

Աղբյուրը՝ *Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՊԵԿ և ՇՄՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար*

